


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՀ ԳԱԱ 2019 թ. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Երևան 2020

Հրատարակվել է ՀՀ ԳԱԱ Նախագահության
18.03.2020 թ. N 1 (1768) որոշմամբ

*Հաշվետվությունը պատրաստել է ՀՀ ԳԱԱ գիտակազմակերպական վարչությունը՝
ՀՀ ԳԱԱ գիտությունների բաժանմունքների, գիտական կազմակերպությունների և
ստորաբաժանումների ներկայացրած նյութերի հիման վրա*

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

2019թ. ԳԱԱ համակարգի գիտական և գիտահետազոտական կազմակերպությունները, պահպանելով բարձր մակարդակի գիտական արդյունքներ ստանալու ավանդույթը, կատարել են հիմնարար և կիրառական տարաբնույթ գիտական մշակումներ:

Համաձայն ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2019-2023թթ. գերակայությունները» որոշման՝ հաշվետու տարվա ընթացքում մշակվել և հաստատվել են ԳԱԱ համակարգի կազմակերպությունների 2021-2025թթ. կատարվելիք գիտահետազոտական աշխատանքների ծրագրերը:

ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպություններում, ԳԱԱ բաժանմունքներում քննարկվել է ԿԳՄՄ նախարարության կողմից ներկայացված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագիծը, ուսումնասիրվել են գիտության ոլորտին վերաբերող դրույթները, արվել են հայեցակարգային և սկզբունքային դիտողություններ, առաջարկներ:

Ակտիվացել է միջազգային դրամաշնորհային, մասնավորապես «Հորիզոն-2020» ծրագրերին ԳԱԱ կազմակերպությունների մասնակցությունը:

Տարին հոբելյանական էր. ինչպես ամբողջ հանրապետությունը, ԳԱԱ նույնպես մեծարել է հանճարեղ իր գավակներին: Կազմակերպվել և անցկացվել են հոբելյանական՝ «Թումանյանագիտության արդի հիմնախնդիրները», «Թումանյան-150», «Կոմիտաս-150» միջոցառումները, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի հետ համատեղ Մոսկվայում՝ «Ազգային դասականությունը համաշխարհային գեղարվեստական համատեքստում» միջազգային գիտաժողովը, հրատարակվել են բազմաթիվ գիտական աշխատություններ, որոնք նոր խոսք են թումանյանագիտության և կոմիտասագիտության ասպարեզում:

ԳԱԱ համակարգի աշխատողների համար սկսվել է 164 բնակարանից բաղկացած բնակելի նոր շենքի շինարարությունը:

2019թ. ԳԱԱ համակարգի գիտահետազոտական կազմակերպությունները կատարել են գիտական աշխատանքներ 6 նպատակային, 45 բազային, 139 թեմատիկ և 287 պայմանագրային ծրագրերով: Ստացված արդյունքներով հրապարակվել են 169 մենագրություն և ժողովածու (14-ն արտասահմանում), 26 ուսումնական ձեռնարկ և դասագիրք (1-ն արտասահմանում), 2240 հոդված (953-ն արտասահմանում), 637 թեզիս (243-ն արտասահմանում):

ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռ.Մ.Մարտիրոսյան

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաթեմատիկա. Դիֆերենցիալ հավասարումների մերոմորֆ լուծումների խնդիրն առաջին անգամ դիտարկվել է ընդհանուր տիրույթների համար, արձանագրվել են մի շարք կարևոր արդյունքներ (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ. Բարսեղյան):

Մեխանիկա. Դիտարկվել է գազի գերձայնային հոսանքով շրջառվող իզոտրոպ գլանային թաղանթի ոչ զծային տատանումների խնդիրը: Հետազոտությունը կատարվել է երկու տիպի՝ քառակուսային և խորանարդային ոչզծայնությունների հաշվառմամբ: Աերո-առաձգական ոչզծայնության հաշվառման շնորհիվ ցույց է տրվել, որ գազի հոսքի արագության պարամետրի փոփոխության որոշակի հատվածներում «ամպլիտուդ-արագություն» կախվածությունը բազմաթեք է: Ցույց է տրվել շրջառման արագության մեծության փոփոխության որոշակի տիրույթների գոյությունը, որտեղ հնարավոր չէ գրգռել չմարող ֆլատերային տատանումներ ինչպես մինչկրիտիկական, այնպես էլ հետկրիտիկական վիճակներում (լուծության տիրույթներ): Ցույց է տրվել, որ թաղանթի երկրաչափական պարամետրերի համապատասխան ընտրությամբ կարելի է դեկավարել ամպլիտուդ-արագություն և ամպլիտուդ-հաճախություն կախվածությունների վարքն ինչպես որակական, այնպես էլ քանակական տեսանկյունից (դեկ.՝ ակ. Գ.Բաղդասարյան, ֆ.-մ.գ.թ. Մ.Միկիլյան):

«Ալիքային և տատանողական պրոցեսների կառավարումը խողովակաշար համակարգերում» թեմայի շրջանակներում (դեկ.՝ տ.գ.թ. Գ.Ավետիսյան) կատարվել են մոլիբդենի սարքավորումներում (պոմպեր, կոմպրեսորներ, մոտոկոմպրեսորներ), նրանց միակցված մասերում և խողովակաշարերում ալիքային և տատանողական պրոցեսների ուսումնասիրման և կառավարման հետազոտություններ: Մշակվել են մեթոդիկա և միջոցներ, որոնք զգալիորեն փոքրացնում են նշված համակարգերում հեղուկի և գազի հոսքի ալիքային և հիդրավիկ դիմադրությունները Ռենոլդսի թվի բավականին մեծ տիրույթում՝ դրական ազդեցով հոսքի սահմանային շերտի հաստության փոքրացման վրա: Մշակված միջոցների արդյունաբերական նմուշների մշակված մեթոդիկայով բնական փորձարկումները, որոնք տեղակայված են հիդրոտուրբինին միակցված խողովակաշարերում, ցույց են տալիս, որ նրանք արդյունավետ գործում են կայանի ինչպես անցումային, այնպես էլ ստացիոնար ռեժիմներում, իջեցնում են ալիքային և հիդրավիկական դիմադրության մեծությունը սպիրալային և աշխատանքային անիվի խցիկներում, ինչպես նաև ուղղորդող ապարատներում 85-90%-ով: Դրանով մեծացնում են տուրբինի թողունակությունը 5-7%-ով, հետևաբար նույնքան տոկոսով էլ մեծանում են հիդրոագրեգատի օ.գ.գ.-ն և հզորությունը:

Բնֆորմատիկա և ավտոմատացման պրոբլեմներ. Կողմնորոշված գրաֆը կոչվում է համիլտոնյան, եթե այն պարունակում է կողմնորոշված ցիկլ, որն անցնում է գրաֆի բոլոր գագաթներով և կոչվում է k – ուժեղ կապակցված, եթե գրաֆի ցանկացած x և y գագաթների կարգավորված զույգի համար գոյություն ունի x –ից դուրս եկող և y մտնող ներքին գագաթներով չհատվող առնվազն k հատ կողմնորոշված ճանապարհ: Ապացուցվել է, որ ճիշտ է Մանոուսակիսի կողմից 1992 թ. առաջադրված (J. of Graph Theory, vol. 16, pp. 51-59, 1992) հետևյալ վարկածը՝ եթե 2-ուժեղ կապակցված n –գագաթանի կողմնորոշված գրաֆում ոչ կից գագաթների ցանկացած երկու տարբեր զույգերի լոկալ աստիճանների գումարը փոքր չէ $4n - 3$ թվից, ապա այդ գրաֆը համիլտոնյան է: Ապացուցվել է նաև, որ եթե կողմնորոշված գրաֆը բավարարում է Մանոուսակիսի վարկածի պայմաններին և այդ գրաֆի ոչ կից գագաթների որևէ զույգի լոկալ աստիճանների գումարը մեծ չէ $2n - 4$ թվից, ապա այդ գրաֆը պարունակում է ցանկացած երկարությամբ կողմնորոշված ցիկլ: Ապացուցված

վարկածից հետևում են սովորական գրաֆների համար Դիրակի (1952), Օրեի (1960) և կողմնորոշված գրաֆների համար (1960), Վուդալի (1972), Կամիոնի (1960), Նեշ-Վիլիամսի (1970) համիլտոնյանության բավարար պայմանները (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Դարբինյան):

Հետազոտվել են համայնքի հայտնաբերման ալգորիթմների գնահատման ամենատարածված միջոցները, դրանց առավելություններն ու թերությունները: Առաջարկվել է համեմատման չափի նոր ինֆորմացիոն-տեսական մեծություն, որը փորձարարական վերլուծության արդյունքում տալիս է առավելություններ նախորդների նկատմամբ (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Մ.Հարությունյան):

Մշակվել են մտավոր ունակությունների կառուցողական մոդելներ՝ *mentals*, որոնք ակնհայտորեն ընդլայնում են ալգորիթմները և օբյեկտ-կողմնորոշված ծրագրերը մինչև բնական լեզվով հաղորդակցությունների ադեկվատ մոդելավորումը, միաժամանակ համատեղելի են դասակարգիչների կապակցվածության վրա հիմնված մենթալ մոդելների՝ «արհեստական նեյրոնային ցանցերի» հետ (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Է.Պողոսյան):

Աստղաֆիզիկա. Կատարվել են V1686 Cyg աստղի բազմակողմանի ուսումնասիրություններ Բյուրականի 2.6 մ աստղադիտակով ստացված լուսաչափական դիտումների և աստղագիտական շտեմարաններից ձեռք բերված տվյալների հիման վրա: Ցույց է տրվել, որ այս օբյեկտը միաժամանակ դրսևորում է UX Ori և EX Ori տիպի աստղերին բնորոշ փոփոխականություն, ինչը հաստատում են նաև զուգահեռ կատարված սպեկտրային դիտումները (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ս.Մադաքյան):

200-ից ավելի ROSAT ռենտգենյան գալակտիկաների SDSS սպեկտրների միջոցով առաջին անգամ որոշվել են դրանց ակտիվության դասերը: Հայտնաբերվել են մոտ 50 թաքնված ակտիվ գալակտիկական միջուկներ (ԱԳՄ) հանդիսացող օբյեկտների թեկնածուներ, որոնք օպտիկական տիրույթում չունենալով ակտիվության դրսևորումներ՝ հզոր ռենտգենյան աղբյուրներ են: Հայտնաբերվել են 149 աստղառաջացման բռնկումով, 42 ակտիվ միջուկներով և 28 բաղադրյալ սպեկտրներով գալակտիկաներ (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

IC 348 երիտասարդ աստղակույտում 127 օբյեկտների EW(H α) փոփոխականության վերլուծությունը ցույց է տվել, որ փոփոխականները, որոնք միջինում ունեն ավելի մեծ զանգվածներ, ակրեցիայով ավելի ակտիվ են, քան ոչ փոփոխականները՝ չնայած ունեն գրեթե նույն էվոլյուցիոն տարիքը: Ստացված արդյունքը հաստատում է աստղերի էվոլյուցիայի տեսության այն ենթադրությունը, որ ակրեցիան ավելի մեծ զանգված ունեցող օբյեկտների մոտ մարում է ավելի դանդաղ (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ե.Նիկողոսյան):

Օգտագործելով «Կեպլեր» տիեզերական աստղադիտակի միջոցով ստացված տվյալները՝ իրականացվել է 76 բռնկվող աստղի բռնկումների վիճակագրական ուսումնասիրություն և ցույց է տրվել, որ բռնկումների հաճախականության ֆունկցիան կարելի է ներկայացնել պարբերական ֆունկցիայի տեսքով, որի պարբերությունը հավասար է տվյալ աստղի՝ իր առանցքի շուրջը պտտման պարբերությանը: Դիտարկված աստղերի մեջ ենթադրաբար կան նաև մոլորակային համակարգ ունեցող աստղեր, որոնց դեպքում նկատվում է մոլորակի/մոլորակների ազդեցությունը բռնկումային ակտիվության վրա (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Հակոբյան):

Հայտնաբերվել է աստղառաջացման նոր տիրույթ, որը խմբավորում է IRAS 05168+3634, 05184+3635, 05177+3636, 05162+3639 և 05156+3643 աղբյուրները: Օգտագործելով բազմալիքային գույնի ցուցիչներն այդ տիրույթում՝ հայտնաբերվել է 240 երիտասարդ աստղային օբյեկտ, որոնք կազմում են ենթակառուցվածքներ յուրաքանչյուր IRAS աղբյուրի շուրջը: K լուսատվության ֆունկցիայի գնահատականով ենթակառուցվածքների տարիքը կազմում է 0.1-3 մլն տարի (դեկ.՝ Ն.Ազատյան):

Գրանցվել է GRB 190114C գամմա բռնկումից առաջին անգամ գերբարձր էներգիաների (ԳԲԷ) գամմա-ճառագայթում MAGIC դիտակների համակարգով: GRB 190114C-ից ԳԲԷ-երի

ֆոտոնները գրանցվել են 0.2-1 ՏԷՎ տիրույթում գամմա-բոնկման առաջացումից մեկ րոպե հետո: Բազմահաճախային տիրույթում (5×10^{-6} մինչև 10^{12} Էլեկտրոն-վոլտ) GRB 190114C-ի դիտումները ցույց են տվել, որ ՏԷՎ տիրույթում ճառագայթումն առանձին բաղադրիչ է, որի լուսատվությունը ցածր տիրույթում ճառագայթման բաղադրիչի լուսատվության կարգի է (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ն.Սահակյան):

Ֆիզիկա. Հետազոտվել է էլեկտրամագնիսականորեն հարուցված թափանցիկության (ԷՀԹ) երևույթն ատոմական գոլորշի պարունակող $L=1500$ նմ գերնեղ բջջում՝ որպես ատոմային Λ - համակարգ առաջին անգամ օգտագործելով ^{87}Rb -ի D_2 զծի $F_g=1 \rightarrow F_e=3$ ($\Delta F=+2$) և $F_g=2 \rightarrow F_e=0$ ($\Delta F=-2$) մագնիսականորեն հարուցված անցումները: ԷՀԹ ռեզոնանսները ձևավորվել են նեղ սպեկտրալ զծով երկու՝ «կապող» և «զննող» անընդհատ դիողային լազերների օգնությամբ, 300-3000 Գս արտաքին երկայնական մագնիսական դաշտում: Ցույց է տրվել, որ ԷՀԹ-ռեզոնանսն առաջանում է $\Delta F=+2$ դեպքում միայն σ^+ , իսկ $\Delta F=-2$ դեպքում՝ σ^- բևեռացած կապող լազերային լույսով՝ դրսևորելով հսկայական դիքրոիզմ: Փորձի արդյունքները հաստատվել են տեսական մոդելով (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Դ.Սարգսյան):

Դիտարկվել է կանոնավոր օպտիկական պատկերների ձևավորումը լազերային փնջի պրոֆիլում՝ Fe-ով լեգիրված լիթիում նիոբատի ֆոտոռեֆրակտիվ բյուրեղի հետ 632.8 նմ ալիքի երկարությամբ և 0.5 մՎտ հզորությամբ լազերային ճառագայթի փոխազդեցության արդյունքում՝ հարուցված պիրոէլեկտրական էֆեկտով: Ստացվել է լազերային փնջի միկրոմետրական չափի ինքնաֆոկուսացում և կորագիծ հետագծով սոլիտոնաձև տարածում, որը ձևավորում է բեկման ցուցիչի ալիքատարային ուղի միջավայրում: Նման դեկավարվող ալիքատարները հեռանկարային են օպտիկական ինֆորմացիայի հասցեագրված տեղափոխման համար (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Դրամփյան):

Պղնձի ֆտալոցիանինի (CuPc , $\text{Pc}=\text{C}_{32}\text{N}_8\text{H}_{16}$) պինդ-ֆազային պիոլիզի եղանակով սինթեզվել են ածխածնային մատրիցում Cu նանոմասնիկներ 2-40 նմ չափային տիրույթում: Ուսումնասիրվել են դրանց կառուցվածքային և մագնիսական հատկությունները՝ կախված Cu նանոմասնիկների չափերից: Հայտնաբերվել են անսովոր ֆեռոմագնիսական և հիպերպարամագնիսական հատկություններ մագնիսացվածության $M_s \approx 2 \text{ emu/g}_{\text{Cu}}$ և մագնիսական թափանցելիության $\chi \approx 1.5 \times 10^{-4} \text{ emu/g}^* \text{Oe}$ արժեքներով (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մանուկյան):

Առաջին անգամ ցույց է տրվել, որ որոշակի պայմանների առկայության դեպքում կարելի է էապես փոփոխել էլեկտրոնների թանձրուկի բնութագրերը և համեմատաբար փոքր արագացնող էլեկտրամագնիսական դաշտերի կիրառմամբ գրանցել էլեկտրոնների էներգիայի աննախադեպ աճ՝ 10^6 և ավելի անգամ: Հետազոտվել է վերջավոր չափերի շերտավոր դիէլեկտրիկ պարունակող ալիքատարի առանցքով հավասարաչափ շարժվող լիցքավորված մասնիկների թանձրուկի ճառագայթումը: Ցույց է տրվել, որ խնդրի պարամետրերի որոշակի արժեքների դեպքում թանձրուկի ճառագայթումն ալիքատարի որոշակի մոդաների վրա կարող է զգալիորեն աճել (առավել ստույգ՝ ինքնաուժեղանալ): Առաջարկվել է ակնառու մոդել, որը բացատրում է ուժեղացման մեխանիզմը և հնարավորություն է տալիս որոշել ինքնաուժեղացման գործակիցը (դեկ.՝ ակ. Ա.Մկրտչյան):

Մշակվել ու ստեղծվել են տարրական մասնիկների (ալֆա մասնիկ, էլեկտրոն, պոզիտրոն, նեյտրոն) նոր դասի գերարագագործ ու գերզգայուն գրանցիչ փոխակերպիչների լաբորատոր նմուշներ (դեկ.՝ թղթ.անդ. Ա.Մկրտչյան):

Փորձարարական եղանակով ցույց է տրվել, որ ռենտգենյան միկրոտոմոգրաֆիայում հարթ ֆիլտրերի փոխարեն օգտագործելով ավելի բարդ տեսքով ֆիլտրեր՝ կարելի է առնվազն երկու անգամ մեծացնել երկրաբանական նմուշների ազդանշան-աղմուկ հարաբերությունը (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյան):

Հետազոտվել են երկչափ դիէլեկտրիկ մետանյութերի էլեկտրադինամիկական հատկությունները: Հաստատվել է, որ տվյալ հաճախականային տիրույթի արգելված գոտու պայ-

մանը բավարարող պարբերականության դեպքում կարելի է իրականացնել բնեռացման հարթության պտտիչ, երբ թիթեղի հաստությունը փոքր է ալիքի երկարությունից: Այդ մետանյութերի հիման վրա մշակվել են մեկզոնային ֆրենելյան ոսպնյակներ, որոնցում համատեղվում են ինչպես ինտենսիվության ուժեղացումը ֆոկալ տիրույթում, այնպես էլ բնեռացման կառավարումը (դեկ. թղթ.անդ. Ա.Հախումյան):

Հետազոտվել են ռադիոհաճախականային պլազմայի էլեկտրական իմպեդանսի բնութագրերը: Ուսումնասիրվել են ունակային կապով «սառը» ռադիոհաճախականային պլազմայի օպտիկական տեսանելի տիրույթի սպեկտրալ առանձնահատկությունները և նրանց փոխկապակցվածությունը պլազմայի սնման ռադիոհաճախականային հզորության հետ, ինչպես նաև պլազմայի իմպեդանսի կախվածությունը սնող գեներատորի հզորությունից և խցիկի գազի ճնշումից: Հայտնաբերվել է պլազմայի իմպեդանսի հզորությունից կախվածության հիստերեզիսային բնույթը: Ուսումնասիրվել են պլազմայում պարպման առաջացման պայմանները և առաջարկվել է որպես պարպման հայտնաբերման չափանիշ օգտագործել պլազմայի էլեկտրական իմպեդանսը: Հետազոտվել են պլազմայի և սնող ռադիոհաճախականային գեներատորի ադապտիվ համաձայնեցումը և համաձայնեցման պրոցեսի կայունությունը: Ցույց է տրվել, որ պլազմայի իմպեդանսի և սնող գեներատորի համաձայնեցումը նպատակահարմար է իրականացնել ոչ թե մեկ փուլում, այլ աստիճանական մոտեցումների եղանակով, ինչի շնորհիվ նվազում է պլազմայում պարպումների առաջացման հավանականությունը (դեկ. ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան, Ն.Պողոսյան):

Դիտարկվել է երկչափ էլեկտրոնային գազի Հոլլի դինամիկ հաղորդականությունն ուղղահայաց մագնիսական դաշտում և խառնուրդների առկայությամբ: Կանխատեսվել է պլատոյանման վարք ինչպես ցածր, այնպես էլ բարձր հաճախությունների դեպքում: Տեսականորեն հետազոտվել է TE ալիքների բնեռացման պտույտը միաչափ նոսր ֆոտոնային բյուրեղներում: Բացահայտվել է բնեռացման պտույտի ռեզոնանսային բնույթը: Դիտարկվել է լույսի տարածումը նոսր ֆոտոնային բյուրեղներում: Ստացվել է անալիտիկ արտահայտություն անցման գործակցի համար: Կանխատեսվել է լույսի ուղղում որոշակի պայմանների առկայության դեպքում: Դիտարկվել է լույսի տարածումն ընդլայնված համաչափությամբ անհամասեռ միջավայրերում: Լույսի հետագծի հավասարումն արտահայտվել է շարժման հաստատուններով: Կանխատեսվել է սպինային Հոլլի երևույթն այդպիսի միջավայրերում (դեկ. ֆ.-մ.գ.դ. Ժ.Գևորգյան):

Տեսականորեն ուսումնասիրվել է մակերևութային վիճակների ազդեցությունը շառավղային p-n անցումով կիսահաղորդչային միայնակ նանոլարի հիմքով արևային տարրերի փոխակերպման արդյունավետության վրա: Ցույց է տրվել, որ սիլիցիումային լարերում մակերևութային ռեկոմբինացիայի ավելի քան 10^5 սմ/վ արագությունների դեպքում արևային տարրերի պարապ ընթացքի լարումը AM1.5 ստանդարտ լուսավորման պայմաններում կարող է նվազել ավելի քան 50%-ով: Այդ պատճառով, լարի մակերևութի պասիվացումը դառնում է շատ կարևոր նման արևային տարրի փորձնական իրականացման ժամանակ:

Օպտիմալ տեսքի ընդունիչ մակերեսով երկկորդինատային ֆոտոընդունիչի հիման վրա ստեղծվել է ինֆրակարմիր ճառագայթման աղբյուրի տեղաշարժին հետևող օպտիկամեխանիկական համակարգ և ավտոմատացվել է տվյալների մշակումը: Ստեղծվել է ինֆրակարմիր ֆոտոընդունիչների գծային շղթա՝ բաղկացած 6 ընդունիչից (դեկ. թղթ.անդ. Ս.Պետրոսյան):

Փորձնականորեն որոշվել են բյուրեղային սիլիցիումի վրա լազերաիմպուլսային եղանակով ստացված ամորֆ ածխածնի նանոչափային թաղանթների բեկման ցուցիչը ($1.92 < n_f < 2.19$) և հաստությունը՝ հիմնված լույսի տեսանելի տիրույթում անդրադարձման սպեկտրերի վրա: Ստացված թաղանթները կարող են կիրառվել որպես հակաանդրա-

դարձնող շերտեր Si և GaAs կիսահաղորդիչային արևային տարրերի համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Կ.Ավջյան):

Ուսումնասիրվել է անանցումային իոնազգայուն դաշտային տրանզիստորների (ԻՈՂՏ) աշխատանքը որպես կենսաքիմիական տվիչի: Կառուցվել է երկփականային և նանոլա-րային անցումային ԻՈՂՏ-ի pH զգայնության անալիտիկ մոդել, որը մեծ ճշգրտությամբ թույլ է տալիս հաշվարկել տվիչի զգայնությունը և վոլտ-ամպերային բնութագրերը: Կատարվել է անալիտիկ և թվային հաշվարկների համեմատում: Հաշվարկները համեմատվել են փորձարարական աշխատանքների արդյունքների հետ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Եսայան):

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կենսաբանություն. Սևանա լճում ջրային ֆլորայի և բուսականության ուսումնա-սիրության նպատակով կատարվել են ջրասուզակային աշխատանքներ, որոնց արդյունքում 7 մետր խորությունից հայտնաբերվել է Հայաստանի համար նոր ընտանիքի (*Ruppiaceae*) և նոր ցեղի (*Ruppia*) պատկանող *Ruppia maritima* տեսակը:

Հայաստանի ֆլորայի կենսակարգաբանական ուսումնասիրությունների արդյունքում Կոտայքի մարզում՝ Դալար գետի ձորի Աղվերան և Արզական գյուղերի միջև, հայտնաբեր-վել է գիտության համար նոր *Crataegus gregorianii* Gabrielian et Sargsyan տեսակը, որն ան-վանվել է ԳԱԱ արտասահմանյան անդամ, Կարենգի հիմնադրամի նախագահ Վարդան Գրեգորյանի պատվին:

Երևանի և Դարալեզիսի ֆլորիստիկ շրջաններից նախկինում արված հավաքների հիման վրա Հայաստանի ֆլորայի համար հայտնաբերվել է նոր *Tanacetum uniflorum* (Fisch. & C. A. Mey ex DC.) Sch. Bip. տեսակը (ղեկ.՝ կ.գ.դ. Մ.Հովհաննիսյան): Դարալեզիսի ֆլորիստիկ շրջանում *Pyrus* ցեղի վայրի տեսակների հետազոտության շրջանակներում իրականացվել է *Pyrus browiczii* Mulk էնդեմիկ տեսակի պոպուլյացիայի ուսումնասիրու-թյուն: Այդ տեսակն առաջին անգամ ուսումնասիրվել է ծաղկման փուլում, հավաքվել է հերբարիումային նյութ, նրա դասական տարածման վայրում (Կեչուտ գյուղի շրջակայքում) կատարվել է կենսաբանական, ֆենոլոգիական և մորֆոլոգիական առանձնահատկություն-ների ուսումնասիրություն:

Գերմանիայի Կասելի համալսարանի և Նովոսիբիրսկի բուսաբանական այգու մասնա-գետների հետ համատեղ կատարվել են Հայաստանի համար հազվագյուտ *Suaeda heterophylla* Bunge ex Boiss տեսակի կարգաբանական ուսումնասիրություններ: Ուսումնա-սիրվել է պտղի մորֆոլոգիան, կատարվել է այս տեսակին մոտ *S. salsa* տեսակի հետ համե-մատական կարիոլոգիական ուսումնասիրություն: Հետազոտության արդյունքում հաս-տատվել է *S. heterophylla* տեսակի տարածվածությունը Հայաստանում (Արարատի աղակա-լած ճահիճներ), որի գոյությունն Անդրկովկասում նախկինում կասկածի տակ էր:

Հայտնաբերվել և հետազոտվել են *Galinsoga parviflora*, *Grindellia squarrosa*, *Helianthus tuberosus*, *Picris echioides*, *Polygonum orientale* ինվազիվ և պոտենցիալ ինվազիվ տեսակների նոր պոպուլյացիաները (ղեկ.՝ կ.գ.դ. Գ.Ֆայվուշ):

ՀՀ տարածքներում տարբեր միջավայրերում/սուբստրատներում պոտենցիալ վտան-գավոր տարրերի էկոլոգաերկրաքիմիական, սանիտարահիգիենիկ, էկոլոգիական և առող-ջական ռիսկերի գնահատմանն ուղղված հետազոտությունների արդյունքում հետազոտված տարրերի շարքում առանձնացել են Cr-ը, As-ը, որոշ դեպքերում՝ նաև Ni-ը, Pb-ը: Մասնա-վորապես ՀՀ տարածքի հողերում ուսումնասիրված նմուշներից մեծամասնությունում As և Cr պարունակությունները գերազանցել են ՀՀ սահմանված թույլատրելի խտությունները,

գրանցվել է այս տարրերի պարունակությունների ոչ քաղցկեղածին ռիսկ երեխաների համար: Հրազդան գետի հատակային նստվածքներում As-ի պոտենցիալ էկոլոգիական ռիսկի ինդեքսի արժեքը տատանվել է չափավորից մինչև բարձր մակարդակ, Pb-ինը՝ չափավորից մինչև նշանակալի, իսկ Ni և As տարրերի քաղցկեղածին ռիսկը գերազանցել է թույլատրելի սահմանը Սյունիքի և Շիրակի մարզերում արտադրված մեղրի մեջ (ղեկ.՝ Ե.-Կ.Գ.Պ. Ա.Սաղաթելյան):

Հրազդան գետի երևանյան հատվածի հարակից տարածքներում նշվել են կաթնասունների 10, թռչունների 105, սողունների 12 և երկկենցաղների 3 տեսակներ: Նկատվել է ճնճղանմանների ներկայացուցիչների տեսակային կազմի և թվաքանակի նվազում, ինչը, հավանաբար, կապված է պուրակների ոչնչացման և այգիներում բուսածածկի փոփոխության հետ (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Մ.Ղասաբյան):

Գրանցվել են սողունների հազվագյուտ և անհետացող տեսակներ՝ *Trachylepis septemtaeniata* առաջավորասիական մաքույան, *Eumeces schneideri* երկարատու սցինկր, *Zamenis hohenackeri* անդրկովկասյան սահնոձը, *Telescopus fallax* կովկասյան կատվածը: Ուսումնասիրվող տարածքում միակ թունավոր օձը կովկասյան գյուրզան է՝ *Vipera lebetina* (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Լ.Աղասյան):

Հայաստանի տարածքից նկարագրվել է գիտության համար թերթիկաբեղավոր բզեզների 7 նոր տեսակ: Բացահայտվել է Հայաստանի ֆաունայի համար նոր ֆիտոֆագ գալամ-լակների 2 տեսակ: Արտերկրյա թանգարանների նյութերի հիման վրա Պալեարկտիկական և Արևելյան կենդանիաբանական մարզերից նկարագրվել է գիտության համար նոր ոսկեբզեզների 8 տեսակ և Հունաստանից *Glaphyrus* ցեղի մեկ նոր ենթացեղ (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Մ.Քալաշյան):

Առաջին անգամ նկարագրվել են *Dorcadion* ցեղի երկարաբեղիկ բզեզների 4 տեսակի կարիոտիպերը, կատարվել են նույն ցեղի 20 տեսակի, *Carabus* ցեղի գնայուկների 15 և Cetoniinae ենթաընտանիքի 34 տեսակների ԴՆԹ-ի հետազոտություններ (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Գ.Կարազյան):

Վաղ բրոնզեդարյան Շենգավիթ, Ուրարտական քաղաքներ Էրեբունի և Թեյշեբաինի, անտիկ բնակավայր Ավան հնագիտական հուշարձանների պեղումներից ստացված ֆաունիստիկ նյութերից մշակվել և տեսակներ են որոշվել 5000-ից ավել ոսկրային մնացորդների համար, որոնց 5%-ը պատկանում են վայրի (նապաստակ, աղվես, կզաքիս, ջրասամույր, այծյամ, մուֆլոն, եղջերու), մնացածը՝ ընտանի կաթնասուններին (հիմնականում խոշոր և մանր եղջերավոր անասուններ): Բրոնզեդարյան բնակավայրերում խոշոր եղջերավոր անասունները զգալիորեն գերակշռել են մանր եղջերավոր անասուններին (ղեկ.՝ Կ.Գ.Պ. Ն.Մանասերյան):

Սևանա լճում ակտիվացել են էվտրոֆացման գործընթացները, ջրային միջավայրում ստեղծվել են էկոլոգիապես անբարենպաստ պայմաններ: Նկատվել է ֆիտոպլանկտոնի քանակական ցուցանիշների աճ, հաճախակի են դարձել «ծաղկման» երևույթները, ինչի պատճառը համակեցությունում ջրիմուռների բուռն զարգացումն է: *Dolichospermum* sp. տեսակով պայմանավորված՝ ցիանոբակտերիալ ծաղկման ընթացքում հայտնաբերվել են 10 խմբի պատկանող ցիանոբակտերիալ երկրորդային մետաբոլիտներ, ներառյալ մարդու և այլ կենդանի օրգանիզմների համար թունավոր հատկություններով միկրոցիստինի 10 տեսակ, ինչպես նաև ջրային օրգանիզմների կենսական կարևոր ֆերմենտների անաբենա պեպտիններ: Սևանա լճի օրգանական աղտոտվածությունը և «ծաղկման» երևույթները խիստ բացասաբար են անդրադարձել լճի հիդրոբիոտների կենսապայմանների վրա: Լճում նկատվել է խեցգետնային պաշարների կտրուկ անկում (ղեկ.՝ Կ.Գ.Պ. Բ.Գաբրիելյան):

Առաջին անգամ իրականացվել է Սևանա լճի պլանկտոնային մանրէների համակեցության բազմազանության գենետիկական ուսումնասիրություն՝ 16S ռՌՆԹ, 18S ռՌՆԹ, կենսաինֆորմատիկայի մեթոդներով կատարվել է լճի պլանկտոնային պրոկարիոտների և էուկարիոտների բազմազանության ուսումնասիրություն (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Գևորգյան):

Pectobacterium carotovorum-ի տարբեր շտամներից իրականացվել է ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների գեների կլոնավորում ու ռեկոմբինանտ ֆերմենտների համեմատական բնութագրում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Համբարձումյան):

L-արգինինի նոր շտամ-արտադրիչների ստացման նպատակով իրականացվել է *G. stearothermophilus* և *T. neapolitana* թերմոֆիլ մանրէների արգինինով արգելակման չենթարկվող օրնիթինացետիլտրանսֆերազը կոդավորվող *argJ* գեների մոլեկուլային կլոնավորումը pACYC184 վեկտորի վրա: Ստացված ռեկոմբինանտ պլազմիդների հիման վրա կառուցվել են արգինին սինթեզող նոր *E. coli* HK ռեկոմբինանտ շտամներ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան):

Docking վերլուծության արդյունքների համաձայն՝ 2 ոչ սպիտակուցային ամինաթթուներ ((S)-2-ամինո-2-(3-(տրիֆտորմեթիլ)-բենզիլ)-պենտ-4-իոնոիկ և (S)-2-ամինո-2-(4-(տրիֆտորմեթիլ)-բենզիլ)-պենտ-4-իոնոիկ թթուներ), ցուցաբերել են առավելագույն փոխազդեցություն ՄՄՊ2 մետաղապրոտեազի հետ և կարող են դիտարկվել որպես ֆերմենտի արգելակիչներ: Բացահայտվել են ճարպեր յուրացնող և բարձր պրոտեոլիտիկ հատկություններով օժտված *Pseudomonas* ցեղին պատկանող տեսակներ: *P. aeruginosa* MDC 9058 շտամի քրոմոսոմում բացահայտվել է կլավուլոնաթթվի նկատմամբ զգայուն բետալակտամազի *bla_{OXA} 10* գենը, իսկ *P. aeruginosa* MDC 5249 շտամի պլազմիդը կրել է կլավուլոնաթթվի նկատմամբ կայուն բետա-լակտամազի *bla_{OXA} 10* գենը (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան):

Լաբորատոր կենսառեակտորում հիստիդինի ոչ սպիտակուցային նմանակի նկատմամբ կայուն *B. flavum* LGS6-ի բարձրակտիվ շտամ-արտադրիչի կիրառմամբ և տեխնոլոգիական ցուցանիշների փոփոխության կարգավորմամբ մշակվել է L-հիստիդինի ստացման արդյունավետ և մրցունակ տեխնոլոգիա: Մշակվել է պրոտեոլիտիկ և մակարդող հատկությունների օպտիմալ հարաբերակցություն ունեցող կաթ մակարդող մանրէային պատրաստուկի՝ բակտոռենինի ստացման տեխնոլոգիա (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Ղոչիկյան):

Հետազոտվել են երեքնուկի, կապառի և բոխու ջրասպիրտային էքստրակտների հակաօքսիդանտային հատկությունները: Որոշվել է հեշտ օքսիդացող ֆունկցիոնալ (-SH, -CH-, -OH) խմբերի ընդհանուր պարունակությունը: Հաստատվել է, որ բնական հակաօքսիդանտների առավելագույն քանակ պարունակում են 96%-ոց էթանոլով ստացված լուծամզվածքները (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Դադայան):

Մշակվել են պրոպարգիլգլիցինային կոմպլեքսի օքսիդիչ հետերոհամակցման ռեակցիայի (Գլազերի ռեակցիա) օպտիմալ պայմանները, որի հիման վրա անջատվել է 4 նոր ոչ սպիտակուցային ամինաթթու (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Մկրտչյան):

AutoDock, Vina և Pass-Online համակարգչային ծրագրերի կիրառմամբ որոշ ոչ սպիտակուցային ամինաթթուների ((S)-β-[4-ալլիլ-3-պրոպիլ-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանին, (S)-α-պրոպարգիլգլիցին և (S)-α-ալիլգլիցին) հենքի վրա իրականացվել է նոր 8 դի- և տրիպեպտիդների սինթեզ, որոնք մի շարք ֆերմենտների պոտենցիալ արգելակիչներ են (ղեկ.՝ ք.գ.թ. Զ.Մարդիյան):

Մշակվել և արտոնագրվել է բուսական հումքի թափոններից բարձր ելքով (17.3%) և մաքրությամբ (>97.8%) ջրալույծ մելանինի ստացման արդյունավետ տեխնոլոգիա (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան):

Պարզաբանվել է, որ «Նարինե» կաթնաթթվային մթերքի ծորունությունը պայմանավորված է թթվային միջավայրում կաթնային սպիտակուցների էլեկտրաստատիկ և հիդրոֆոբ փոխազդեցությամբ: Սելեկցիայի մեթոդով ընտրվել են կաթնաթթվային բակտերիաների

պրոքիոտիկ շտամներ նոր կաթնաթթվային մթերքների ստեղծման և ֆունկցիոնալ սննդի մեջ օգտագործման նպատակով (ղեկ.՝ կ.գ.թ. Կ.Չիտյան):

Ուսումնասիրվել է Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի սուլֆիդային և օքսիդացած հանքանմուշների տարրալուծման գործընթացը՝ մշակված մանրէային կոնսորցիումների միջոցով: Պարզվել են հանքանմուշներից պղնձի մանրէաբանական կորզման գործընթացի օպտիմալ պայմանները: Կենսատարրալուծման գործընթացի փորձարկումները պերկոլյատորներում թույլ են տալիս եզրակացնել, որ պղնձի կենսակորզումը ցածրորակ հանքաքարից կարելի է արդյունավետորեն իրականացնել կուլտային գործընթացի պայմաններում՝ «Կաշեն» ադապտացված կուլտուրայի կիրառմամբ (ղեկ.՝ կ.գ.դ. Ն.Վարդանյան):

Առաջին անգամ լաբորատոր պայմաններում միաբջջի կանաչ միկրոօրգանիզմ *Parachlorella kessleri*-ի հիման վրա ստացվել է կենսադիզելի նմուշ, որի ելքը կազմել է չոր կենսազանգվածի ընդհանուր քաշի 12.25%-ը (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան):

Rhizomix կենսապարարտանյութի կիրառմամբ մշակվել է սիսեռի և ոլոռի աճեցման, հողի հարստացման նոր տեխնոլոգիա: Առաջարկվել է սողակալված աղուտներում լոբազգի մշակաբույսերի աճեցման և հողի պարարտացման նոր եղանակ (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Հակոբյան):

Իրականացվել են նոր մանրէների կուլտուրաների մեկուսացման և դասակարգման համալիր աշխատանքներ, ինչպես նաև մշակվել են նրանց կենսունակության երկարաժամկետ պահպանման եղանակները և ուսումնասիրվել արտադրական կարևոր հատկանիշները: Կատարվել է ՄՄԿ-ում պահպանվող մանրէների կուլտուրաների հավաքածուի շուրջ 2000 հեռանկարային շտամի անձնագրային տվյալների ամփոփում և գնահատում (ղեկ.՝ կ.գ.թ. Հ.Զարգարյան):

Առաջին անգամ ուսումնասիրվել է Հայաստանի կլիմայական պայմաններում աճող վայրի և մշակովի (հողային և հիդրոպոնիկ), ինչպես նաև Չինաստանից ներմուծված միամյա օշինդրի (*Artemisia annua* L.) դեղահումքի տաք ջրային էքստրակտի հակաքաղցկեղային ակտիվությունը: Պարզվել է, որ HeLa բջիջների վրա բարձր, իսկ թոքային առողջ բջջային գծի վրա ցածր ցիտոտոքսիկությամբ աչքի են ընկել հողային բույսերը:

Գանգուր կաղամբի (*Brassica oleracea* var. *Sabellica* L.) բուսահումքում հուլիսին դիտվել է օմեգա-3 պոլիչիզագեցած ճարպաթթվի համապատասխանաբար 1.7-2.1 և 1.1-1.9 անգամ մեծ կուտակում անհող և հողային մշակությամբ: Մշակման պայմանները որոշակիորեն ազդել են գանգուր կաղամբում գումարային ֆենոլային միացությունների կուտակման և հակաօքսիդանտային ակտիվության վրա. հիդրոպոնիկ բուսահումքը նշված ցուցանիշներով համապատասխանաբար 1.1 և 1.2 անգամ գերազանցել է հողային ստուգիչին: Կալեի երիտասարդ, հասուն և ծեր տերևներում Ca-ի կուտակման ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հողում և հիդրոպոնիկայում Ca-ի քանակությունն օգոստոս և սեպտեմբեր ամիսներին 1.3-1.4 անգամ բարձր է ծեր տերևներում՝ համեմատած հասուն և երիտասարդ տերևների հետ, ինչը վկայում է Ca-ի տարիք-կախյալ կուտակման մասին: Տերևներում Ca-ի առավելագույն քանակություն կուտակվել է օգոստոսին:

Առաջին անգամ Հայաստան է ներմուծվել և հողային ու անհող մշակույթների պայմաններում ուսումնասիրվել մոլորակի՝ սննդանյութերով առավել հարուստ բույսերից մեկը՝ յուղատու մորինգան (*Moringa oleifera* Lam.), որը հայտնի է նաև որպես դեղաբույս և «գերսնունդ»: Նախնական հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ մորինգան հիդրոպոնիկական պայմաններում ցուցաբերել է բարձր արդյունավետություն. 1 բույսի տերևների չոր քաշը գերազանցել է հողային ստուգիչին 2.1 անգամ: Տերևների կենսաքիմիական վերլուծությունը ցույց է տվել, որ հիդրոպոնիկ բուսահումքը, հողայինի համեմատ, աչքի է ընկել էքստրակտիվ նյութերի, ֆլավոնոիդների (ըստ կվերցետինի) և C վիտամինի 1.1 անգամ բարձր պարունակությամբ, սակայն նույն համամասնությամբ զիջել է հողային բուսահումքին դաբաղանյութերի և β-կարոտինի կուտակմամբ: Պարզվել է, որ և՛

հողային, և՛ հիդրոպոնիկ տերևները ցուցաբերել են հակաբակտերիալ ակտիվություն ինչպես գրամբացասական (*Escherichia coli* BW 25113), այնպես էլ գրամդրական (*Enterococcus hirae* ATCC 9790) միկրոօրգանիզմների նկատմամբ:

Ռադիոքիմիական ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Արարատյան դաշտում (Հայկական ԱԵԿ-ի տեխնածին ազդեցության 30 կմ շառավղով գոտի), անկախ աճեցման պայմաններից (հիդրոպոնիկա-դասական, ջրաշիթային, օրգանական և հող), մի շարք դեղաբույսերի և բանջարաբույսերի բուսահումքը ռադիոէկոլոգիապես անվտանգ է՝ ըստ գումարային β -ռադիոակտիվության: Ընդ որում, բուսահումքում β -ճառագայթող ռադիոնուկլիդների (տեխնածին- ^{90}Sr , ^{89}Sr , ^{137}Cs , ^{134}Cs , ^{141}Ce , ^{144}Ce և այլն, բնական- ^{40}K , ^{234}Th , ^{231}Th , ^{210}Pb , ^{88}Rb և այլն) ամենամեծ պարունակությամբ առանձնացել են բանջարաբույսերը, որոնք գերազանցել են դեղաբույսերին 1.1-2.5 անգամ: Գեղազարդ ծառաբույս պավլովնիան (*Paulownia*) աչքի է ընկել որպես ռադիոնուկլիդների բնական կուտակիչ, որի տերևները հիդրոպոնիկայում գումարային β -ռադիոակտիվությամբ գերազանցել են հողում աճեցվածի, յուղատու մորինգայի, կաղնու, կենսածառի տերևներին համապատասխանաբար 1.7, 2.3, 1.8, 2.0 անգամ (դեկ.՝ թղթ. անդ. Ս.Մայրապետյան):

Բժշկական կենսաբանություն. Հետազոտվել է գալարմինի և դրա անալոգների կենսաբանական ակտիվությունը մոլեկուլային դոկինգի մեթոդով: Պրոլինով հարուստ bPrp1, bPrp(-Y), bPrp(-VY), GxNH₂ և hPrp5 պեպտիդների կենսաբանական ակտիվության մեխանիզմների բացահայտման նպատակով հետազոտվել է դրանց փոխազդեցությունը մկան բնածին իմունային թղանման ռեցեպտոր 4-ի (TLR4) և մարդու Ca-զգայուն ռեցեպտորի հետ: TLR4 և Ca-զգայուն ռեցեպտորի հետ պրոլինով հարուստ պեպտիդների դոքինգները շատ ուժեղ փոխազդեցություն են դրսևորել, որը վկայում է հետազոտվող նյութերի բարձր կենսաբանական ակտիվության մասին այն գործընթացներում, որոնց մասնակցել են նշված ռեցեպտորները (դեկ.՝ կ.գ.դ. Ս.Չախյան):

Հետազոտվել են ադենոզինդեամինազ ֆերմենտի իզոմերների ակտիվությունները տարբեր արթրիտներով հիվանդների սինովիալ հեղուկներում: Ռևմատոիդ արթրիտով հիվանդների սինովիալ հեղուկում կուտակվել է ցածրամոլեկուլային ադենոզինդեամինազ (gUA), իսկ անկիլոզային սպոնդիլիտ, հոդատապ, դեռահաս իդիոպաթիկ և ռեակտիվ արթրիտով հիվանդների մոտ՝ բարձրամոլեկուլային ադենոզինդեամինազ (rUA): Ռևմատոիդ արթրիտի դեպքում սինովիալ հեղուկում UA-ի բարձր ակտիվությունն ուղեկցվել է gUA-ի բարձր ցիտրուլինացմամբ, մինչդեռ թվարկված բոլոր արթրիտների սինովիալ հեղուկներում rUA-ն ցիտրուլինացված չէ: Ցիտրուլինացված սինովիալ սպիտակուցները ներգրավվել են տեղային հակամարմինների զարգացման գործընթացում, և առաջացող իմունային կոմպլեքսները կարող են նպաստել հոդերի ռևմատոիդային բորբոքմանը: Հակացիտրուլինացված սպիտակուցների հակամարմինները հիվանդության ախտորոշման ու ծանրության աստիճանի կանխատեսման միջոց են, և դրանց ընդլայնումն ակնկալում է բուժման նոր ռազմավարության մշակում: Ստացված տվյալները վկայում են, որ gUA-ն կարող է լինել ախտորոշման համար նոր ցիտրուլին պարունակող աուտոհակածին (դեկ.՝ կ.գ.թ. Ս.Անտոնյան):

Ֆոտոդինամիկ թերապիայում օգտագործվող կատիոնային պորֆիրինները հատուկ տեղ են գրավում չարորակ բջիջներում կուտակման բարձր ընտրողականության պատճառով: Դրանց փոխադրողներից է նաև արյան՝ պղինձ պարունակող սպիտակուց ցերուլոպլազմինը: Հետազոտվել է այս սպիտակուցի միացումը կատիոնային պորֆիրինների, մետաղապորֆիրինների, ինչպես նաև կլինիկայում կիրառվող հայտնի ֆոտոսենսիբիլիզատորներ չեզոք Al-ֆտալոցիանինի և անիոնային պորֆիրին քլորին e6-ի հետ: Կատիոնային պորֆիրինների/մետաղապորֆիրինների կոմպլեքսագոյացումը ցերուլոպլազմինի հետ հանգեցրել է կլանման արժեքի էական նվազմանը և տեղաշարժմանը դեպի երկար ալիքներ, մինչդեռ Al-ֆտալոցիանինի դեպքում նման պատկեր չի դիտվել: Ստացված տվյալները

վկայում են, որ ցերուկուպլազմինը կարող է ֆոտոսենսիբիլիզատորների, հատկապես կատիոնային պորֆիրինների պոտենցիալ կրիչ հանդիսանալ ուռուցքների ֆոտոդինամիկ թերապիայում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Գյուլխանդանյան):

Ամբողջական գենոմի սեքվենավորման տվյալների կենսաինֆորմատիկական վերլուծությամբ ցույց է տրվել հակաքաղցկեղային դեղամիջոցների նշանակման համար կենսամարկեր հանդիսացող *RRM1* գենի նոր ֆունկցիոնալ կապը թելոմերների երկարության հետ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Առաքելյան):

Ցույց է տրվել որ գերարագ/գերկարճ էլեկտրոնային ճառագայթումը դոզա-կախյալ կերպով հանգեցնում է ԴՆԹ-ի չվերականգնվող երկշղթա կտրվածքների, բջջային ցիկլի խաթարման և ապոպտոզի խթանման՝ գենոմային անկայունության բացակայության պայմաններում: Ստացված արդյունքները վկայում են ռենտգենյան ճառագայթման համեմատ էլեկտրոնային ճառագայթման արդյունավետության մասին և կարող են կիրառվել էլեկտրոնային լազերային արագացուցիչների դոզաչափական բնութագրերի բարելավման նպատակով, ինչպես նաև հետագա ռադիոկենսաբանական նախակլինիկական հետազոտությունների ժամանակ (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Բաբայան):

Աֆրիկյան ժանտախտի վիրուսով խոզերի վարակի հնարավոր աղբյուրներ հայտնաբերելու նպատակով ուսումնասիրվել են վիրուսի գոյատևման պայմանները *H. Medicinalis* տզրուկների օրգանիզմում: Ցույց է տրվել, որ երկարատև կուլտիվացումից հետո անջատված վիրուսն ունակ է վարակել խոզերի ավելեռային մակրոֆագերը, ինչը վկայում է, որ տզրուկները կարող են հանդիսանալ տվյալ վիրուսի հնարավոր պահեստարան (ղեկ.՝ կ.գ.դ. Զ.Կարալյան):

Ստուգվել են մարդու արյունից անջատված շիճուկով կուլտիվացված ճարպային մեզենքիմալ ցողունային բջիջների աճի հատկությունները և ուսումնասիրվել է շիճուկի ազդեցությունը ճարպային մեզենքիմալ ցողունային բջիջների կենսունակության և աճման արագության վրա, ինչպես նաև արյան տարբեր խմբերի շիճուկների յուրահատկությունները որպես աճման միջավայր: Նախնական արդյունքները ցույց են տվել, որ մարդու շիճուկը կարող է այլընտրանք լինել կովի պտղի շիճուկին: Կատարվել է AdMSC-ների ստացումը, բնութագրումը, ինչպես նաև AdMSC-ների տարբերակումը մաշկային բջիջների, նեյրոնների և հեպատոցիտների (ղեկ.՝ կ.գ.թ. Զ.Կարաբեկյան):

Հայրենական հումքից բազմաթիրախային բուսական դեղամիջոցների մշակման հեռանկարների հիմնավորման նպատակով իրականացվել է ԿՆՀ ՆԱԴՖ-օբսիդազային ակտիվության և սինապսային պլաստիկության կորելացիոն կապի գնահատում II տեսակի դիաբետի և ֆիտոթերապիայի պայմաններում: Ուսումնասիրվել է Ալցհեյմերի հիվանդության կենդանական մոդելում *Teucrium polium*-ի նյարդապաշտպան արդյունավետությունը հիմնային խոշորաբջիջ կորիզ-հիպոկամպ-նշահամալիր նյարդային ցանցում (ղեկ.՝ կ.գ.դ. Վ.Չավուշյան-Պապյան):

Կատարվել է *Macrovipera lebetina obtusa* օձի թույնի դեմ հակաթույնի ստացում խոյերի իմունիզացիայի արդյունքում, ինչպես նաև ստացված շիճուկի արդյունավետության գնահատում մի շարք *in vivo* և *in vitro* փորձարարական մոտեցումների միջոցով, դրա արդյունավետության գնահատում միջազգային և Հայաստանի բուժհիմնարկներում առկա հակաթույների համեմատ (ղեկ.՝ կ.գ.դ. Ն.Այվազյան):

Մշակվել է SFCO-սենսորների նոր դաս (կատարելագործված ռադիոհաճախականային «մագնիսական զոնդ»)՝ SFCO-մագնիսաչափ, որն ունակ է հայտնաբերել և հետազոտել չափազանց թույլ արտահայտված մագնիսական դաշտերի բնութագրերը: Պոլիգրաֆի կիրառմամբ մշակվել է սպորտի սպեցիֆիկային ադապտացված մարզիկների բնավորության տեսակների հոգեֆիզիոլոգիական որոշման ինտեգրալ մոդիֆիկացված համակարգ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Խաչունց):

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քիմիա. Մշակվել է անիլ-սինթեզի մոդիֆիկացված տարբերակ, որը թույլ է տալիս ստանալ նախկինում անհայտ ապատեղայնացված π -կապերի երկար շղթայով 2,4,6-ետտեղակալված պիրիմիդիններ: (E)-3-ֆենիլ-1-(ω -տոլիլ)պրոպեն-2-են-1-ոնի կամ խալկոնի ու բենզամիդինի և 4-տեղակալված բենզամիդինների հիդրոքլորիդների փոխազդեցությամբ սինթեզվել են 2,4-երկֆենիլ-6-(ω -տոլիլ)պիրի-միդիններ, որոնց հիման վրա ստացվել են 2-{4-[(E)-2-(արիլ)վինիլ]-ֆենիլ}պիրիմիդիններ: Սինթեզված իզոմեր պիրիմիդինների շարքում առկա են կառուցվածքային յուրահատկություններ, նրանք պարունակում են V-աձև փուշ-փուլ համակարգերի հիմնական բաղադրիչներ, ուր առկա է զուգորդում մոլեկուլի π -ակցեպտոր և π -դոնոր հատվածների մեջ π -A/D- π -A- π -A/D ձևով: Պիրիմիդինների երկու շարքերի որոշ ներկայացուցիչներ ցուցաբերում են արտահայտված ֆլուորեսցենսոդ հատկություններ, որոնք անպայմանորեն արդյունք են էլեկտրոնային ամպի բարձր շարժողունակության և հաստատում են սինթեզված միացությունների փուշ-փուլային բնույթը (դեկ.՝ ք.գ.դ. Ա.Հարությունյան):

Արագ տաքացման պայմաններում $Mg+C$ խառնուրդով նիկելի (II) օքսիդի վերականգնման պրոցեսում բացահայտվել է սինթեզիզմի երևույթ. վերականգնիչ խառնուրդով նիկելի ամբողջական վերականգնումն ընթացել է զգալիորեն ավելի ցածր ջերմաստիճանում ($800^{\circ}C$)՝ համեմատած առանձին՝ մագնեզիումով ($1200^{\circ}C$) կամ ածխածնով ($1000^{\circ}C$) վերականգնման հետ (դեկ.՝ թղթ. անդ. Ս.Խառատյան):

Բացահայտվել է, որ միկրոալիքային տաքացման եղանակով սինթեզված անցումային մետաղների (Cr, Mn, Mo, W, Re) կարբիդներից և բորիդներից հիդրազինի քայքայման ռեակցիայում առավել բարձր կատալիտիկ ակտիվություն ցուցաբերում է մոլիբդենի Mo_2C կարբիդը (դեկ.՝ ք.գ.թ. Ռ.Մնացականյան):

Ուսումնասիրվել են սերպենտինային միներալների խմբից ստացված հիդրոսիլիկաժելի (ՀՄԺ) և հողալկալիական մետաղների կատիոններով պայմանավորված միացությունների փոխազդեցությունները ժողտնտեսությունում լայն կիրառություն ունեցող սիլիկատային միացությունների ստացման համար, մասնավորապես երկփուլ սինթեզի պայմաններում՝ սուսպենզիայի եռման գործընթաց և ձևավորված միջանկյալ միացություններից ցածրջերմաստիճանային ($t < 850^{\circ}C$) սինթեզ, իրականացվել է β -վոլաստոնիտի առաջացումը՝ անմիջական փոխազդեցության մեջ դնելով ՀՄԺ-ը $Ca(OH)_2$ -ի հետ: Բացի այդ, $NaOH$ -ի ներկայությամբ ՀՄԺ-ը փոխազդեցության մեջ դնելով $SrCl_2 \cdot 6H_2O$ -ի և $BaCl_2 \cdot 2H_2O$ -ի հետ՝ ստացվել են համապատասխանաբար Sr_2SiO_4 , $BaSiO_3$ և Ba_2SiO_4 միացությունները, որոնք լայն կիրառություն ունեն լյումինաֆորների արտադրությունում (դեկ.՝ ք.գ.դ. Ն.Զուլումյան):

Ուսումնասիրվել են MeO ($Me-Mg, Ca, Ba$)- Al_2O_3 - B_2O_3 - SiO_2 համակարգերի միկրոլիքվա-ցիոն տիրույթները և անընդհատ շարքի $Ca_2Mg(Si_2O_7)$ - $Ca_2Al(AlSiO_7)$ և $CaSiO_3$ - $MgSiO_3$ պինդ լուծույթների առաջացման դաշտերը, ապակիների աստիճանային բյուրեղացումը: Բացահայտվել է ապակեբյուրեղների սինթեզի պրոցեսում ապակեֆազի մոլյար ծավալի և ընդարձակման գործակցի հակադարձ փոխկապվածությունը: Պարզվել է կորդիերիտային ապակեբյուրեղներում կատիոն-անիոնային $Al^{3+}+O^{2-} \rightarrow Mg^{2+}+F^-$ տեղակալման հնարավորությունը և B_2O_3 պարունակող ցածր 9.829 -ով ($\leq 25 \cdot 10^{-7} K^{-1}$) էլեկտրատեխնիկական սիտալների ստացումը: Ուսումնասիրվել է CaO - CaF_2 - Al_2O_3 - SiO_2 և CaO - CaF_2 - B_2O_3 - V_2O_5 համակարգերում արագ ամրացող կապակցվողների և որոշակի ջերմաստիճանային տիրույթում հաղորդականության տիպի փոփոխությամբ ապակեբյուրեղների սինթեզը (դեկ.՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան):

Երկրի մասին գիտություններ. Պարզաբանվել է Սյունիքի և Կապանի հրաբխային առաջացումների երկրաքիմիական և $^{87}Sr/^{86}Sr$ և $^{144}Nd/^{143}Nd$ հարստացված իզոտոպային

բնութագիրը, ինչը տարբերվում է կենտրոնական և հյուսիսային Հայաստանի հրաբխային առաջացումների իզոտոպային բնութագրից: Այդ տարբերությունները պայմանավորված են հարավում լիթոսֆերայի ավելի մեծ հզորությամբ, մանթիական հալման ավելի ցածր աստիճանով, մանթիական աղբյուրում նոնաքարային բաղադրիչի ավելի բարձր մասնաբաժնով, հյուսիսային Հայաստանից տարբերվող ֆլյուիդային հարստացման տիպով՝ պայմանավորված հարավային Նեոթետիսում նախկինում ակտիվ Զագրոսի սուբդուկցիայի ազդեցությամբ (դեկ.՝ ե.գ.դ. Խ.Մելիքսեթյան):

Սևանա լճի ստորգետնյա ավազանից վերցված նմուշների ուսումնասիրությամբ ցույց է տրվել ածխաթթու գազի ծագումնաբանական կապը մագմատիկ օջախի, խորը հիդրոշրջանառության հետ, ինչպես նաև հաստատվել է Փոքր Սևանա լճի ավազանում մոտ 42 մետր խորությունից մեթանի էմիսիան, որը, հնարավոր է, ունի դիագենետիկ ծագում (դեկ.՝ ե.գ.դ. Ա.Ավագյան):

Հաստատվել է Սևանա լճի ափամերձ և ստորգետնյա հատվածներում միկրոբիալիթների (սևանիտներ) առկայությունը (դեկ.՝ ե.գ.դ. Ա.Ավագյան), որոնք առաջացել են մի քանի տասնյակ հազար տարիների ընթացքում՝ ցիանոբակտերիաների գործունեության արդյունքում, ջրի որոշակի քիմիական կազմի և CO₂ գազի առկայության պայմաններում (դեկ.՝ ե.գ.թ. Լ.Սահակյան):

Ամփոփվել են Ծաղկունյաց անտիկլինորիումի տարահասակ գրանիտոիդների երկրաքիմիական և հասակային հետազոտությունների արդյունքները: Գրանիտոիդներն աղեղային տիպի գոյացումներ են, որոնց ներկայությունը կարող է վկայել Պրոտո-Պալեո- և Նեոթետիս ավազաններում հարավ-ուղղված սուբդուկցիայի հնարավորությունը Գոնդվանական հարավ-հայկական միկրոսալի տակ ուշ մինչքեմբրի, ուշ պալեոզոյի և ուշ յուրայի ժամանակաշրջաններում (դեկ.՝ ե.գ.թ. Ղ.Գալոյան):

Քաջարանի պոլինո-մոլիբդենային հանքավայրի բաց հանքի դարավանդների փաստագրմամբ իրականացված հանքաբանաերկրաքիմիական ուսումնասիրությունների արդյունքում որոշվել են հանքանյութում մկնդեղի պարունակությունների տեղաբաշխման օրինաչափությունները, մկնդեղով հարստացված գոտիների տեղաբաշխումը (դեկ.՝ ե.գ.թ. Ա.Հովհաննիսյան):

«TRANSECT» միջազգային նախագծի շրջանակներում իրականացվել է ՀՀ տարածքում արդեն տեղադրված 29 սեյսմիկ կայաններից ստացված ինֆորմացիայի հավաքագրում և արխիվացում, ՀՀ և հարակից տարածքների երկրակեղևի լարվածադեֆորմացիոն վիճակի, կառուցվածքի անհամասեռությունների ուսումնասիրում սեյսմիկ տոմոգրաֆիայի տվյալներով:

Ստեղծվել են ՀՀ քաղաքներում, համայնքներում լայնական ալիքների տարածման միջին արագությունների (Vs30 (մ/վ)) բաշխման քարտեզներ: Կատարվել է Թուրքի, Սպանիայի և Շամբի ջրամբարների պատվարների սեյսմիկ վտանգի և ռիսկի հավանակային և դետերմինիստիկ գնահատում (դեկ.՝ ե.գ.թ. Մ.Գևորգյան):

Մշակվել են Երկրի մասին գիտությունների արդիական խնդիրների սկզբունքները և լուծման եղանակները՝ Երկրի մասին գիտությունների վիրտուալ միջավայրում, Երկրի արբանյակային դիտարկման (Earth Observation) միջոցով ստացված մեծածավալ տվյալների (Big Data) օգտագործմամբ, և «ՀՀ ԳԱԱ ԵԳԻ Էլեկտրոնային գրադարան» ծրագիրը (դեկ.՝ ե.-հ.գ.թ. Արշ.Ավագյան):

Հայաստանի պերմ-տրիասի սահմանային նստվածքներում կոնոդոնտի ապատիտում թթվածնի իզոտոպի տվյալներով վերին պերմի *C. iranica* (*C. meishanensis*) զոնայում արձանագրվել է ծովի մակերևույթի ջրի ջերմաստիճանի բարձրացում 8-10°C-ով, գլոբալ տաքացման սկզբից էքստրապոլացված ժամանակային միջակայքի մոտ 39 հազար տարվա ընթացքում: Ըստ կարբոնատների ածխածնի իզոտոպների ջերմաստիճանի՝ բարձրացման սկիզբը

համընկել է Hg/TOC (ընդհանուր օրգանական ածխածնի) հարաբերակցության զգալի հարստացման հետ, որը կապված է Միբիրյան տրապների նշանակալի հրաբխային իրադարձության հետ: Տաքացումը և մասսայական ոչնչացումներն ընդգրկում են 60 ± 48 հազար տարի ժամանակահատվածը, որը գուցորդվում է հիպոքսիայով և սննդանյութերի մատչելիության նվազմամբ, որոնք Երկրի պատմության ամենամեծ կենսաբանական ճգնաժամի հիմնական գործոններից են (դեկ.՝ ե.գ.թ. Ա.Գրիգորյան):

Ստացվել են տարբեր կոնստրուկտիվ համակարգերի շենքերի տատանման նոր ձևեր բնապայման փորձարկումների միջոցով (դեկ.՝ ե.գ.թ. Ջ.Կարապետյան):

Կառուցվել է ՀՀ տարածքի կառուցվածքատեկտոնական միավորները՝ լինեամենտներն ու բլոկներն արտահայտող առաջին խոշորամասշտաբ (1:100 000) ձևակառուցվածքային շրջանացման սխեման: Համալիր երկրաֆիզիկաերկրաձևաբանական տվյալներով կազմվել է ՀՀ տարածքի երկրակեղևի վերին մասի (բյուրեղային հիմքի մակերևույթ և նստվածքային շերտ) եռաչափ թվային մոդելը (դեկ.՝ ե.գ.թ. Ռ.Սարգսյան):

Նախագծվել, պատրաստվել և փորձարկվել է հորիզոնական ճոճանակային տվիչների 3 տարատեսակ: Ստացվել են 1վրկ, 0.7վրկ, 0.3վրկ սեփական տատանումների հաճախականությամբ փոքրածավալ տվիչներ (դեկ.՝ Ա.Գասպարյան):

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմագիտություն. «Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչև 1918թ.» թեմայի շրջանակներում (դեկ.՝ ալ. Ա.Մելքոնյան) աղբյուրագիտական լայն հենքի վրա ուսումնասիրվել է արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքը 1917-18թթ., մասնավորապես Անդրկովկասի իշխանությունների՝ Կոմիսարիատի և Սեյմի, հայկական ազգային մարմինների, կուսակցությունների, առանձին անհատների վարած ռազմաքաղաքական գործունեության արդյունքով Էրզրումի պաշտպանության և անկման պատճառների հիմնահարցը:

«Հայաստանը և հայությունը նորագույն ժամանակաշրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն» թեմայի շրջանակներում (դեկ.՝ պ.գ.դ. Կ.Խաչատրյան) արխիվային փաստաթղթերի, ականատեսների վկայությունների, մամուլի նյութերի և տարբեր հետազոտողների ուսումնասիրությունների հիման վրա ներկայացվել են ցեղասպանության իրադրժմամբ հայ ժողովրդին հասցված տարածքային, ժողովրդագրական, մշակութային և նյութական կորուստները, որոշակիացվել են դրանց ծավալներն ու հետևանքները, արվել են առաջարկներ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման՝ հատուցման գործընթացի կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերի վերաբերյալ: Աշխատանքն իրականացվել է Հայոց ցեղասպանության 100-ամյակի Համահայկական հոչակագրի ընդունումից հետո, ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությամբ, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներով զբաղվող հետազոտական խմբի կողմից:

«Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը» ծրագրի շրջանակներում (դեկ.՝ ալ. Ռ.Սաֆրաստյան) առաջին անգամ ցույց է տրվել, որ Հայաստանի Հանրապետության դեմ պատերազմի նախապատրաստումը սկիզբ էր առել դեռևս 1920թ. փետրվարին՝ Մուստաֆա Քեմալի անձնական նախաձեռնությամբ: Տրվել են նաև Քեմալի գաղափարական հայացքները և քաղաքական գործունեության այն կողմերը, որոնք հնարավորություն են տալիս առավել հիմնավոր պատկերացում կազմելու նրա

քաղաքականության իրական շարժառիթների մասին: Այս ամենը, թուրքական սկզբնաղբյուրների մանրակրկիտ քննության հիման վրա, տեղ է գտել ալ. Ռ.Սաֆրաստյանի հեղինակած մենագրությունում, որտեղ ներկայացվել է նաև Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի գործունեությունը 1919-21թթ., ամբողջականորեն վեր են հանվել այդ գործչի ընդգծված հակահայկական, ծայրահեղ ազգայնամոլական հայացքները: Մենագրությունը կարևոր ներդրում է նաև Թուրքիայի Հանրապետության հիմնադրի հակահայ գործունեության հետագա, ավելի խորը ուսումնասիրման գործում: Ծրագրի շրջանակներում քեմալիզմի և ֆաշիզմի համեմատական հետազոտումը նույնպես նորույթ է թուրքագիտական գրականության մեջ:

«Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Ն.Հովհաննիսյան) ուսումնասիրման առարկա են դարձել կարևոր արդիական նշանակություն ունեցող մի շարք հիմնախնդիրներ՝ սուննի-շիա հակամարտությունը Մերձավոր Արևելքում, սիրիացի փախստականների ճգնաժամը և մերձավորարևելյան երկրները վերափոխվող տարածաշրջանային գործընթացներում և այլն: Այս հիմնահարցերի վերաբերյալ հրատարակվել են աշխատություններ, անց են կացվել միջազգային գիտաժողովներ, կլոր-սեղան քննարկումներ, որոնց մասնակցել են նաև մերձավորարևելյան տարբեր երկրների գիտնականներ, վերլուծաբաններ, ՀՀ-ում այդ երկրների դեսպանները, ՀՀ պատկան մարմինների ներկայացուցիչները:

«Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարային զարգացման խնդիրներ» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Պ.Ավետիսյան)

- «Հայաստանի պատմամշակութային ժառանգության հնագիտական ուսումնասիրություն» ենթածրագրով Հրազդանի կիրճի քարի դարի քարայրներն ուսումնասիրող միջազգային գիտահետազոտական խումբը երկրաքիմիական անալիզների նորագույն մեթոդների կիրառմամբ առաջին անգամ փաստագրել է, որ նեանդերթալյան մարդը ոչ միայն օգտագործել է կրակը, այլև տիրապետել է այն արհեստականորեն ստանալու հմտությանը: Մինչ այս ընդունված էր այն տեսակետը, որ կրակ ստանալն անատոմիապես ժամանակակից մարդու՝ Homo sapiens-ի «մենաշնորհն» է եղել: Մասնավորապես Լուսակերտ-1 քարայրի մշակութային նստվածքների անալիզներով պարզվել է բազմացիկլիկ անուշաբույր ածխաջրածինների (ԲԱԱ-ներ կամ PAHs) խտությունը, որոնք առաջանում են օրգանական ծագում ունեցող նյութերի այրման ընթացքում: ԲԱԱ-ների մի տիպը, այսպես կոչվող թեթև ԲԱԱ-ները, ցրվում են լայն շառավղով և վկայում են վայրի կամ բնական ծագմամբ հրդեհի մասին, մինչդեռ մյուսները, որոնք կոչվում են ծանր ԲԱԱ-ներ, ավելի սահմանափակ ցրում ունեն և կուտակվում են կրակի օջախին շատ ավելի մոտ: Ինչպես ցույց են տալիս քարայրի նստվածքները, մարդկային գործունեության վկայությունների (կենդանիների ոսկրային մնացորդների կուտակումներ, դրանց հարևանությամբ աշխատանքային գործիքների պատրաստման մասին վկայող գտածոներ) աճող հաճախականությունը համընկնում է կրակի օգտագործման և ծանր ԲԱԱ-ների հաճախականության աճի հետ: Հնակլիմայական տվյալների վերլուծությամբ փաստագրվել է, որ քարայրի հնաբնակները չեն ապրել չոր, բնական հրդեհների համար նպաստավոր պայմաններում: Կրակի հետ նախամարդու փոխհարաբերության հնագիտական, ածխաջրածնային, իզոտոպային և հնակլիմայական տվյալների այս համալիր ուսումնասիրությունը հրատարակվել է «Nature Scientific Reports» ամսագրում և վկայում է, որ նեանդերթալյան մարդն արհեստական կրակ է ստացել, ինչը նոր խոսք է մարդագոյացման հիմնախնդիրների ուսումնասիրության ոլորտում (ղեկ.՝ Բ.Գասպարյան):

- Հայ-գերմանական «Արտաքսատա» ծրագրով (ղեկ.՝ պ.գ.թ. Մ.Զարդարյան) հայտնաբերվել են Արտաշատի ջրամատակարարման համակարգի մաս կազմող ակվեդուկի հիմնամույթերը: Շուրջ 1 կմ գծի երկայնքով փաստագրված 20 կամարակալները վկայում են աննա-

խաղեպ ծավալներ ունեցող ինժեներական կառույցի մասին, որը, ըստ ամենայնի, կառուցվել է 114-117թթ.-ին, Հռոմի Տրայանոս կայսեր կողմից:

«Շիրակի հնագիտական և պատմագագաթական ուսումնասիրություններ-2» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ պ.գ.թ. Ա. Հայրապետյան)

-Մեծ Մեպասարում պեղումների արդյունքով հայտնաբերվել են ամպրոպի աստծուն և պտղաբերության աստվածուհուն խորհրդանշող կոթողներ, որոնց ծխական խորհուրդը աշխարհի բնականոն և անխափան գոյատևման ապահովումն էր, ինչն իրականացվում էր առ երկինք ուղղված նվիրաբերում-գոհաբերություններով երկրի վրա մարդկանց, կենդանիների ու հողի համար պտղաբերում և հովանավորություն ստանալու նպատակով:

Ազատանի ամրոց-բնակավայր-դամբարանադաշտի արևելյան հատվածում հայ-գերմանական համատեղ արշավախմբի կատարած պեղումների արդյունքով հայտնաբերվել են աքեմենյան ժամանակաշրջանին բնորոշ բարձրորակ ջարդված խեցեղեն և բաժակներ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Աքեմենյան թագավորության վերելքի շրջանում ազատանցիների վերնախավը փորձել է ընդունել գավթիչների կենսակերպը:

- Հիմնովին ժխտվել է արևելագիտության մեջ իշխող այն կարծիքը, թե Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան կեսի բնակիչ ցեղերի մեծ մասը նախաուրարտական և ուրարտական դարաշրջաններում ունեցել են խուռիական ծագում կամ ազգակից են եղել խուռի-ուրարտական ցեղերին, նույնիսկ ունեցել են (գոնե մասամբ) քարթվելական ծագում: Տեղանվանական տվյալները և դրանցում արտացոլված պաշտամունքային ոլորտի պատկերացումները խոսում են տեղի բնակչության հնդեվրոպական ծագման մասին:

«Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը հրատարակել է «Հայ երաժշտության հանրագիտարանը» (ղեկ.՝ ք.գ.դ. Հ.Այվազյան):

Բանասիրություն. «Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ.Համբարձումյան) քննության են ենթարկվել հայերենի և կելտական լեզուների առնչությունները, մասնավորապես հնչյունական և բառային գուգաբանությունները՝ ըստ հրապարակի վրա եղած ուսումնասիրությունների տվյալների: Հայ-կելտական լեզվական առնչություններին նման անդրադարձը խիստ կարևոր է հնդեվրոպական լեզուների համեմատական և տիպաբանական ուսումնասիրության համար, մանավանդ՝ հայերենի նախագրային շրջանի պատմության շատ հարցերի նորովի լուսաբանման տեսանկյունից: Հետազոտության արդյունքներն ամփոփվել են «Հայերենը և կելտական լեզուները» աշխատությունում:

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ.Կատվայան) մեծ ծավալի աշխատանք է կատարվել բարբառային միավորների ուսումնասիրությունը համալրելու ուղղությամբ. հետազոտվել և նկարագրվել են Ակնի բարբառը, Տրապիզոնի, Բալլուի, Խուռնավուլի, Կարբիի խոսվածքները, առաջադրվել է բարբառային հայերենում հարացուցային հնաբանությունների առանձնացման և մեկնաբանման հարցը, կարևորվել է գեղարվեստական խոսքն իբրև բարբառային լեզվի ուսումնասիրության աղբյուր:

«Հայ գրականության պատմություն» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ.Դևրիկյան) ուսումնասիրվել և առանձին մենագրությամբ հրատարակվել է «Нахичеван в записках европейских путешественников (XIII-XVII вв.)» աշխատանքը: Գրքում ցույց է տրվել, թե ուղեգրողներն ինչպես են որպես սկզբնաղբյուրներ օգտագործել հայ միջնադարյան գրականության և ժողովրդական ավանդությունների տվյալները: Ընդգծվել է հատկապես այն միտքը, որ եվրոպական ճանապարհորդները Նախիջևանը համարել են պատմական Հայաստանի մաս:

Հավաքվել և առանձին գրքով տպագրվել են հայոց այբուբենին նվիրված հայ միջնադարյան գրականության մեջ եղած բնագրերը՝ ըստ ժամանակագրական ընթացքի և ժանրա-

յին բաժանման: Ներկայացվող բնագրերը ենթարկվել են պատմագիտական, գրականագիտական և աստվածաբանական վերլուծությունների, ուսումնասիրվել են ժամանակի ազգային-քաղաքական ըմբռնումների և միջնադարյան սիմվոլիկայի տեսանկյունից:

Կազմվել և առաջին անգամ հրատարակվել է Հովհ.Թումանյանի ամբողջական կենսագրությունը (ռուսերեն) բանաստեղծի տոհմի մասին տեղեկություններից մինչև վախճանմանը հաջորդած հիշատակի խոսքերը: Գրքում Թումանյանի գործունեությունը և գրական ժառանգությունը վերլուծվել է ժամանակի պատմության համատեքստում, որով աշխատանքը ձեռք է բերել նաև պատմագիտական կարևորություն, քանի որ Թումանյանի գործունեության միջոցով ներկայացվել են ժամանակի պատմամշակութային, այդ թվում՝ հայ-ռուսական և հայ-վրացական գրական կապերի մի շարք կարևոր իրադարձություններ:

Տնտեսագիտություն. «Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության հետևանքների գնահատումը և հետագա հնարավոր զարգացումները» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Լ.Սարգսյան) վերլուծվել է ՀՀ արտահանումը դեպի ԵՏՄ շուկա՝ ըստ ապրանքների մրցունակության, ինչի արդյունքով բացահայտվել է արտահանման դինամիկայի հստակ արտահայտված միտում. նոր իրողության պայմաններում, շնորհիվ մաքսային և այլ փոփոխությունների, մեծացել են ՀՀ ապրանքների համեմատական և մրցակցային առավելությունները ԵՏՄ ընդհանուր շուկայում, ընդլայնվել է ՀՀ արտահանման ծավալը և դիվերսիֆիկացիան: Վերլուծվել է նաև ՕՈՒՆ ներհոսքի դինամիկան ԵՏՄ անդամակցությունից առաջ և հետո, ինչի արդյունքով պարզվել է, որ ԵՏՄ անդամակցությունը դեռևս որևէ որոշակի ազդեցություն չի ունեցել ՕՈՒՆ ներգրավման վրա և ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների ներհոսքը կրում է անկայուն բնույթ:

«Հայաստանի էներգետիկ անվտանգության հիմնախնդիրներն արդի տնտեսական և աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Հ.Սարկոսյան) վերլուծվել են տնտեսական անվտանգության համակարգում էներգետիկ անվտանգության հայեցակարգը, ՀՀ էներգետիկ անվտանգության մարտահրավերները, զարգացման հեռանկարները և կապն էներգետիկ անվտանգության ապահովման հետ: Բացահայտվել են էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացման գործիքակազմի կիրառման հնարավոր հեռանկարները Հայաստանում: Կարևորվել է էներգաարդյունավետության և էներգիայի պահանջարկի նվազեցմանն ուղղված ոչ տնտեսական մեխանիզմների ներդրումը:

Փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավագիտություն, քաղաքագիտություն. «Հայ իրականության պատմափիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական ուսումնասիրություններ» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ իր.գ.թ. Լ.Ղազանչյան) կատարվել են հետազոտություններ գիտական 4 ուղղություններով՝ փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք, քաղաքագիտություն:

Իրականացվել են միջգիտակարգային հետազոտություններ՝ նվիրված արդի «անհատ-պետություն-հասարակություն» փոխհարաբերություններում առկա հիմնախնդիրներին, այդ թվում՝ դատաիրավական բարեփոխումներին, միգրացիոն գործընթացներին, հայ ընտանիքի ինստիտուտի կայունացմանը, նոր կառավարության քաղաքականության նկատմամբ հասարակական կարծիքի բացահայտմանը, տարածաշրջանում առկա գեոստրատեգիական զարգացումների խորքային գործընթացների վերլուծությանը:

Համակարգված տեսական վերլուծության են ենթարկվել լեզվի և իմաստի կառուցվածքային և գործառնության լեզվաբանական դրսևորումները տարբեր խոսույթներում:

Արդյունավետ աշխատանքներ են իրականացվել՝ նվիրված հայ փիլիսոփայության ականավոր գործիչների ժառանգության հայեցակարգերի բացահայտմանն ու հանգամանակից վերլուծությանը: Մասնավորապես բազմամյա գիտական հետազոտությունների և մշակումների արդյունքով գիտական հանրությանն են ներկայացվել հայ մանկավարժական

մտքի գոհարները՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարը: Հրատարակվել է «Հայ մանկավարժական մտքի անթոլոգիա» մենագրությունը, որտեղ քննարկված, համակարգված և վերլուծաբար ներկայացվել են ինչպես հայտնի, այնպես էլ անհիմն մոռացության տրված հայ հոգևոր և աշխարհիկ մտավորականության ներկայացուցիչների մանկավարժական գաղափարները:

Արվեստագիտություն. «Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Աղասյան) հայ ականավոր երաժիշտ Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանի կապակցությամբ հրատարակվել և հրատարակության են նախապատրաստվել մի շարք գիտական աշխատություններ, որոնց արդյունքները նոր խոսք են կոմիտասագիտության ասպարեզում: «Կոմիտասական» ժողովածուի III հատորում, ինչպես նախորդ երկու հատորներում, ընդգրկվել են հոդվածներ և ուսումնասիրություններ՝ նվիրված Կոմիտասի կյանքին, ստեղծագործությանը, երաժշտագիտական հետազոտություններին ու կատարողական արվեստին: Արժևորվել է Կոմիտասի ժառանգության դերն ու նշանակությունը հայ երաժշտարվեստի հետագա զարգացման գործում, բացահայտվել է Կոմիտասի կերպարը ոչ միայն հայ երաժշտության, այլև գրականության մեջ և կերպարվեստում: Հայ արվեստաբանության մեջ առաջին անգամ հանգամանորեն ուսումնասիրվել են հայ կերպարվեստում Կոմիտասին նվիրված մի քանի տասնյակ ստեղծագործություններ, այդ թվում՝ Հայաստանում և այլ երկրներում տեղադրված, նրա հիշատակը հավերժացնող հուշարձանները: Լույս է տեսել «Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատկերագիրքը, որտեղ ներկայացված աշխատանքներն ունեն ինչպես գեղարվեստական, այնպես էլ պատմամշակութային և վավերագրական ակնհայտ արժանիքներ:

Հրատարակվել է «Հայկական մանրանկարչություն. սկզբնավորումն և զարգացման ընթացքը» մենագրությունը, որտեղ հեղինակներն անդրադարձել են հայկական մանրանկարչության առավել արժեքավոր նմուշներին, բացահայտել դրանց թեմատիկ, պատկերային ու ոճական առանձնահատկությունները, շրջանառության մեջ դրել նորահայտ նյութեր:

ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

2019թ. սեպտեմբերին Երևանում անցկացվել է «Դատափորձագիտական գործունեության արդի հարցերը, դատական փորձագիտության և քրեագիտության ժամանակակից խնդիրները, զարգացման միտումներն ու հեռանկարները» միջազգային գիտաժողովը՝ նվիրված «Փորձաքննությունների ազգային բյուրո»-յի հիմնադրման 15-ամյակին: Հոբելյանի կապակցությամբ առաջին անգամ ՀՀ դատափորձագիտության ոլորտում հիմնադրվել է «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» գիտական պարբերականը:

Դեկտեմբերին կազմակերպությունում անցկացվել է «Դատափորձագիտական ոլորտի զարգացմանն ուղղված իրավական, կազմակերպական և գիտագործնական ապահովման խնդիրները (հայաստանյան և արտասահմանյան երկրների փորձը)» միջազգային աշխատաժողովը, որին մասնակցել են դատափորձագիտական հետազոտության իրականացման հետ առնչվող հայաստանյան և արտասահմանյան երկրների դատական փորձագետներ, դատախազներ և քննչական մարմինների ներկայացուցիչներ:

Կազմակերպությունը Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC) ֆինանսավորմամբ սկսել է «Միջազգային համապատասխանության մոդելներ միջուկային, քիմիա-

կան, կենսաբանական և ռադիոլոգիական ոլորտներում» ծրագիրը, որն ավարտվելու է 2021թ.:

Առաջին անգամ Հայաստանում կիրառվել է «Leica Geosystems» ընկերության վերջին սերնդի բարձր արագության (տարածաշրջանում եզակի) Leica RTC360 3D լազերային սկաները՝ սֆերիկ պատկերավորման HDR և վիզուալ (ակնադիտական) իներցիոն (VIS) ներկառուցված համակարգերով՝ իրական ժամանակում տվյալների գրանցման համար, արբանյակային տեղորոշման կայան GPS Leica GS07/CS20 և 3D լազերային հեռաչափ Leica DISTO S910 սարքավորումները, որոնց և բացառիկ մշակված արդիական մեթոդիկայի կիրառումը հնարավորություն է տալիս կրճատել փորձաքննությունների իրականացման ընթացքը և ստանալ գիտականորեն հիմնավորված և հավաստի արդյունքներ:

Առաջին անգամ հանրապետությունում իրականացվում են հետազոտական աշխատանքներ «PC Crash» համակարգչային ծրագրի և VZM 300 դետեկտորետր սարքի կիրառմամբ՝ ապահովելով փորձագիտական արդյունքների բարձր հավաստիություն:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ շինարարական նորմերում («Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ») ճշգրտվել է բետոնի հաշվարկային դիմադրության մեծության վրա բեռնվածքների ազդեցության երկարատևությունը հաշվի առնող գործակցի (γ_{Ft}) արժեքը. թեթև բետոնների համար այն ենթարկվել է փոփոխության՝ 0.9-ից դառնալով 0.85 (դեկ.՝ տ.գ.դ. Կ.Կարապետյան):

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մշակվել և ստեղծվել են IMAP connector-ների միջոցով eduroam ծառայության մուտքի մեխանիզմը և LetsEncrypt հավաստագրերի կենտրոնացված տարաբաշխման համակարգը, որի օգնությամբ տրվել է eduroam WiFi անլար միջավայրում freeradius IMAP connector-ների ավտոմատացված լուծում: Մշակվել և ստեղծվել է LetsEncrypt սերվերային SSL հավաստագրերի wildcard տարբերակի ավտոմատացված կարգավորումը մի քանի դոմենների համար:

Իրականացվել է «eduroam log-analysis ELK Dashboard» համակարգը, որի օգնությամբ հնարավոր է վերլուծել eduroam WiFi անլար միջավայրում գործող freeradius սերվերների աշխատանքը: Մշակվել և ստեղծվել է LetsEncrypt սերվերային SSL հավաստագրերի wildcard տարբերակի ավտոմատացված կարգավորում մի քանի դոմենների համար: Մշակվել և ներդրվել են վեբ-կայքերի և վեբ-սերվերների պաշտպանության առաջադեմ մեթոդներ: Ստեղծվել է վեբ-փոստ միջավայրի նոր տարբերակ (Rainloop փաթեթի հիման վրա):

Ստեղծվել է մոնիթորինգային սերվերից ստացված տվյալների վիճակագրական SSL սերտիֆիկացման համակարգ: Կատարվել է ներդրում NextCloud համակարգի ընդհանուր օգտագործման ցանցային միջավայրում: Տեղադրվել են ծրագրային փաթեթներ աստղաֆիզիկայի ոլորտում բարձր արտադրողականություն պահանջող հաշվարկներ իրականացնելու համար (դեկ.՝ տ.գ.թ. Ա.Պետրոսյան):

Նախապատրաստվել է «Ինքնակազմակերպվող համակարգերում բարդ դինամիկական պրոցեսների կոլեկտիվ հետազոտական և ղեկավարման համար բազմաօգտատեր համապիտանի ծրագրային հարթակի ստեղծում» նախագիծը, մշակվել և իրականացվել են համակարգի մի շարք կոմպոնենտների փորձնական տարբերակները (դեկ.՝ տ.գ.թ. Ս.Պողոսյան):

Մշակվել և իրականացվել է համայնքների հայտնաբերման վրա հիմնված նոր խորհրդատվական միջավայր, որն արդյունավետ է որոշ կիրառություններում, որտեղ այլ մոտեցումները ձախողվում են (դեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Մ.Հարությունյան):

RGT Solverների տիրույթի հետագա զարգացումը ներառում է նոր ինտերֆեյսների կառուցում տարբեր RGT խնդիրների ներմուծման համար, ինչը, հիմնվելով ներդրումային ցանցերի վրա, RGT իրավիճակները փոխակերպում է սիմվոլիկ նկարագրությունների, ինչպես նաև նոր միջոցներ է ստեղծում սիստեմիկ դասակարգիչների ներկայացման և մշակման համար: Նոր RGT Solverները հաջողությամբ փորձարկվել են շախմատում և ռազմադաշտի խնդրի որոշակի ներկայացուցիչ հանդիսացող ռազմական ստրատեգիա “Generals: Command and Conquer” խաղում (դեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Է.Պողոսյան):

Զարգացվել են ցանցի մոնիթորինգ իրականացնող մասնագիտացված PostMaster և Nagios գործիքների հետ համագործակցման հնարավորությունները: Իրականացվել է UniMail համակարգի ժամանակային բնութագրերի գնահատում ռեգրեսիոն վերլուծության միջոցով: Ստեղծվել են համակարգի կիրառության մասի ավտոմատացված կերպով ստատիստիկ տվյալների դուրսբերման գործիքներ (ղեկ.՝ տ.գ.դ. Ա.Նանասյան):

Ստեղծվել է աշխարհագրական տվյալների Հայկական խորանարդը (Armenian Data Cube), որը տրամադրում է ինտեգրված աշխարհագրական տվյալների միասնական միջավայր (տես՝ <http://datacube.sci.am>)՝ ներառելով Հայաստանի տարածքին վերաբերող արբանյակային մուլտիսպեկտրալ նկարներ: Տվյալները պարբերաբար համալրվում են ամերիկյան (Landsat 7, 8) և եվրոպական (Copernicus Sentinel-2) Երկրի դիտարկման արբանյակներից ստացվող նկարներով: Արբանյակային նկարների վերլուծության համար մշակվել է ծրագրային հարթակ՝ օգտագործելով Python ծրագրավորման լեզուն և Jupyter միջավայրը: Հարթակի աշխատանքը փորձարկվել է ջրային մակերեսի վերլուծության խնդիրների համար:

Հայկական վիրտուալ աստղադիտարանի համար մշակվել է աստղագիտական տվյալների փնտրման համակարգ SIA (Simple Image Access) արձանագրության հենքի վրա: Միջավայրի իրականացման համար մշակվել է ձևաչափերի ձևափոխման գրադարան, որը փորձարկվել է Բյուրականի թվայնացված առաջին շրջահայության սպեկտրալ տվյալների համար (ղեկ.՝ տ.գ.թ. Հ.Ասցատրյան):

Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎ. ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ

Հայ-ռուսական համատեղ կայանում 230 դիտողական գիշերների ընթացքում ընդհանուր առմամբ արվել է 450.000 չափում և վերականգնվել 640 ուղեծիր արհեստական արբանյակների համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Հարությունյան):

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Շառավղի քառակուսային թողանցման ապոդիզացիոն գտիչի հիման վրա մշակվել է օպտիկական մշտադիտարկման նոր մեթոդ՝ որոշելու դիսկրետ կամ տարածականորեն բաշխված օբյեկտների ինտեգրալ բնութագրերը (բաշխման կենտրոն, կենտրոնի դրեյֆ և դրեյֆի արագություն, շառավղային ստանդարտ շեղում և փոփոխման արագություն, դիֆուզիա) առանց մատրիցական դետեկտորների օգտագործման: Մեթոդը կիրառվել է հողածածկ մանրակերտի վրա արհեստական ձյան մակերեսի նվազման հեռահար չափումների համար: Հիմնավորվել է առաջարկված մեթոդի կիրառման պարզությունը և ոչ գծային սխալի փոքր արժեքը՝ համեմատած տեսանելիացման հայտնի տեխնոլոգիաների հետ (ղեկ.՝ ակ. Ռ.Կոստանյան, ֆ.-մ.գ.դ. Ա.Մարտիրոսյան):

ՖՀԻ-ում մշակված կառուցվածքային և օպտիկական բարձր որակի $\text{LuAlO}_3:\text{Yb}^{3+}$ բյուրեղների հիման վրա մշակվել է բարորակության ակտիվ մոդուլյացիայով լազեր՝ 999.6 նմ ալիքի երկարությամբ, 11.5 նվ իմպուլսների տևողությամբ, 29 կՎտ պիկային հզորությամբ և մինչև 50 կՀց հաճախությամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Պետրոսյան):

ZnO -ի թաղանթի դոնորային (Ga) և ակցեպտորային (Li) խառնուկներով լոկալ դիֆուզիոն լեզիրման մշակված տեխնոլոգիայի հիման վրա ստեղծվել է ո-տիպի ուղետարով օպտիկապես թափանցիկ դաշտային տրանզիստոր՝ որպես փականի մեկուսիչ օգտագործելով

MgF₂-ի թաղանթներ: Հետազոտվել են ստացված դաշտային ֆոտոտրանզիստորի ֆոտո-էլեկտրական և աղմկային բնութագրերը, առաջարկվել է դրանցում ֆոտոէլեկտրական ուժեղացման մեխանիզմը: Հայտնաբերվել է, որ ակցեպտորային խառնուկի փոքր կոնցենտրացիաների դեպքում դիտվում է 1/f-աղմուկ, իսկ կոնցենտրացիայի մեծացման դեպքում գերակշռում է պատահական «պայթյունաձև» ազդանշանը (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Հովսեփյան):

Հետազոտվել են YAlO₃ պերովսկիտի ցանցում Li⁺ իոնների մուտքի մեխանիզմները: Սպեկտրալ չափումներով ցույց է տրվել, որ անիոնային թափուրքների հետ համեմատելի կոնցենտրացիաների դեպքում Li⁺ իոնները զբաղեցնում են միջհանգուցային դիրքեր: Արդյունքները կօգտագործվեն սցինտիլյացիոն YAlO₃:Ce բյուրեղների օպտիմալացման համար: YAlO₃ բյուրեղներում բացահայտվել են 53Cr³⁺ պարամագնիսական կենտրոններ, ինչպես նաև 95Mo³⁺ և 97Mo³⁺ կենտրոններ, որոնց առկայությունը պայմանավորված է սկզբնական նյութի մաքրությամբ և բեռնարկերի կիրառմամբ: Այդ կենտրոնները լիցքավորված մասնիկների թակարդներ են և դրանց հետազոտումը կարևոր է սցինտիլյացիոն բյուրեղների օպտիմալացման համար (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Պետրոսյան):

Միկրոչիպում ներառված ջերմաէլեկտրական գեներատորի և Պելտիեի հովացուցչի ստեղծման նպատակով պատրաստվել և հետազոտվել են ծծմբի խառնուկներով Sb₂Te₃ միացության ~100 նմ հաստությամբ թաղանթներ: Ստացվել են ջերմաէլեկտրի բարձր արժեքներ լայն՝ 5-350 Կ ջերմաստիճանային տիրույթում (դեկ.՝ Գ.Բադալյան):

Պղնձի ֆտալոցիանինի (CuPc, Pc=C₃₂N₈H₁₆) պինդ-ֆազային պիոլիդի եղանակով սինթեզվել են ածխածնային մատրիցում Cu նանոմասնիկներ 2-40 նմ չափային տիրույթում: Ուսումնասիրվել են դրանց կառուցվածքային և մագնիսական հատկությունները՝ կախված Cu նանոմասնիկների չափերից: Հայտնաբերվել են անսովոր ֆեռոմագնիսական և հիպերպարամագնիսական հատկություններ՝ մագնիսացվածության $M_s \approx 2$ emu/gCu և մագնիսական թափանցելիության $\chi \approx 1.5 \times 10^{-4}$ emu/g*Oe արժեքներով (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մանուկյան):

«Փի Էս Այ» ընկերության և ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի համագործակցությամբ SFCO սենսորների հիման վրա ձեռնարկվել է նոր տիպի մագնիսաչափի մշակում: Լաբորատոր մանրակերտի աշխատանքի արդյունավետության գնահատումը (զգայունությունն առայժմ կազմում է ~1 նՏլ) թույլ է տալիս ենթադրել, որ կատարելագործումից հետո այն ունակ կլինի գրանցել կենսամագնիսական դաշտեր (20-100 պՏլ)՝ առանց մագնիսական էկրանավորման անհրաժեշտության (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ս.Գևորգյան):

ՖԻԶԻԿԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մշակվել ու ստեղծվել են ալֆա մասնիկների և էլեկտրոնների նոր տիպի գերաբազազործ գրանցիչ փոխակերպիչների լաբորատոր նմուշներ: Մշակվել ու ստեղծվել են ջերմային նեյտրոնների նոր տիպի գերզգայուն գրանցիչ փոխակերպիչների լաբորատոր նմուշներ: Կատարելագործվել են ինստիտուտում մշակված գերթույլ ակուստիկական և էլեկտրամագնիսական ալիքների գրանցիչ փոխակերպիչ սարքավորումները (դեկ.՝ թղթ.անդ. Ա.Մկրտչյան):

Մշակվել է մեթոդ երկրաբանական նմուշների ռենտգենյան միկրոտոմոգրաֆիայի համար, որը հնարավորություն է տալիս վերջնական տոմոգրամներում ավանդական մեթոդների համեմատ ազդանշան-աղմուկ հարաբերությունը մեծացնել առնվազն երկու անգամ: Մշակվել և պատրաստվել է 1÷10 ՄՀց տիրույթի էլեկտրամագնիսական ազդանշանների ուժեղացուցիչ, որն ապահովում է 1÷200Վ էլեքային լարում (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյան):

Միլիցիումի և ալյումիումի բարձրաստիճան կարգավորված մատրիցաների բազայի վրա սինթեզվել են AIBIV խմբի քիմիական միացություններով ու մետաղական օքսիդներով

հարստացված կոմպոզիցիոն տարբեր հարաբերական խտության նոր միջավայրեր (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Նալբանդյան):

ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Շարունակվել են երկչափ դիէլեկտրիկ մետաղյութերի էլեկտրադինամիկական հատկությունների հետազոտությունները: Հաստատվել է, որ տվյալ հաճախականային տիրույթի արգելված գոտու պայմանը բավարարող պարբերականության դեպքում կարելի է իրականացնել բևեռացման հարթության պտտիչ, երբ թիթեղի հաստությունը փոքր է ավիքի երկարությունից: Այդ մետաղյութերի հիման վրա մշակվել են մեկգոնային ֆրենելյան ոսպնյակներ, որոնցում համատեղվում են ինչպես ինտենսիվության ուժեղացումը ֆոկալ տիրույթում, այնպես էլ բևեռացման կառավարումը (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Հախումյան):

Հիմնվելով վոլտ-ամպերային բնութագրի ուղիղ ճյուղի վերլուծության վրա՝ փորձնականորեն հաստատվել է լազերային-իմպուլսային մեթոդով ստացված p-InSb-n-CdTe հետերաանցումում լիցքի տեղափոխման երկու մեխանիզմի առկայությունը՝ պայմանավորված հետերասահմանի մոտ ինվերսիոն շերտի առաջացմամբ: Համեմատաբար փոքր (0,03 Φ < U < 0,15 Φ) արտաքին շեղումների դեպքում հոսանքը բավարար նկարագրվում է $I \sim \exp(qU/\eta kT)$ առնչությամբ $\eta=1$ իդեալականության գործակցով: 0,18 Φ -ից բարձր լարումների դեպքում վոլտամպերային բնութագիրը ենթարկվում է $I \sim U^{3/2}$ օրենքին՝ աստիճանաբար անցնելով գծային հարթության (կտրման լարումը 0,47 Φ): Առաջարկվել է հոսանքի անցման նոր մեխանիզմ, ինչը հաշվի է առնում հետերաանցումում գոտիների ծովածության առանձնահատկությունները և բաժանման սահմանի մոտ ինվերսիոն շերտից նաև ոչ հիմնական լիցքակիրների ինժեկցիան դեպի p-InSb ծավալային տիրույթներ: Կառուցվել է երևույթի տեսությունը և այն համեմատվել է փորձի հետ:

Օպտիմալ տեսքի ընդունիչ մակերեսով երկկորդինատային ֆոտոընդունիչի հիման վրա ստեղծվել է ինֆրակարմիր ճառագայթման աղբյուրի տեղաշարժին հետևող օպտիկամեխանիկական համակարգ և ավտոմատացվել է տվյալների մշակումը: Ստեղծվել է ինֆրակարմիր ֆոտոընդունիչների գծային շղթա՝ բաղկացած 6 ընդունիչից (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Լազերային-իմպուլսային փոշեցրման եղանակով ստեղծվել են InSb-Sb Շոտկի արգելքային դիոդներ, որոնք ցուցաբերել են մեծ ֆոտոզգայնություն 3-5 մկմ տիրույթում: Համեմատելով տեսության հետ՝ գնահատվել են նման դիոդների բոլոր պարամետրերը, այդ թվում՝ մակերևութային վիճակների խտությունը և արագագործությունը: Ցույց է տրվել նման ֆոտոընդունիչների հեռանկարայնությունը կոորդինատագայուն սարքերում կիրառելու համար:

p-InSb-n-CdTe հետերաանցումային ֆոտոընդունիչի հիման վրա ստեղծվել է գազային տվիչի մակետ, որը հնարավորություն է տալիս գրանցել մթնոլորտում առկա ածխաթթու գազի առկայությունը մինչև 100 ppm կոնցենտրացիաների դեպքում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Կ.Ավջյան):

Աշխատանքներ են տարվել կերամիկական նյութերի ստացման համար լաբորատորիայի ենթակառուցվածքի ընդլայնման ուղղությամբ: Մոդեռնիզացվել է վառարանը, որը թույլ է տվել թրծել նմուշները մինչև 1550° C ջերմաստիճանում: Մշակվել են նյութի ստացման տեխնոլոգիական ռեժիմները: Որպես էլքային բաղադրիչներ՝ օգտագործվել են Nb₂O₅, Al₂O₃, TiO₂ նյութերը: Մամլիչի օգնությամբ ստացված 300-700 ՄՊա ճնշման պայմաններում ստացվել են 10 մմ, 16 մմ, 20 մմ տրամագծով, 1-2 մմ հաստությամբ կերամիկական նմուշներ: Չափվել է ստացված կառուցվածքի ունակության կախվածությունը

սինթեզման ժամանակ օգտագործված ճնշման մեծությունից, ջերմաստիճանից (30-170°C) և հաճախությունից (մինչև 1 ԳՀց): Ստացվել են նմուշներ, որոնց դիէլեկտրիկական թափանցելիությունը գերազանցում է 10^3 արժեքը (դեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Մշակվել է միկրոալիքային շերտավոր սենսոր օպտիմիզացված կրկնակի քառակուսային պրոֆիլով: Լազերային արյացիայի և միկրոալիքային էլեկտրամագնիսական փոխազդեցության միջոցով իրական ժամանակում կատարվել են ջրային լուծույթներում ստացված Ag-ի նանոմասնիկների խտության չափումներ մոտակա դաշտերում: S11 սենսորի միկրոալիքային անդրադարձման գործակիցը ռեզոնանսային հաճախության վրա փոփոխվել է ջրային լուծույթներում՝ կախված Ag խտությունից: Աշխատանքային 2 ԳՀ հաճախության վրա հնարավոր է չափել Ag-ի նանոմասնիկների խտությունները 0-50 մկգ/լ սահմաններում: Մինիմալ գրանցված ազդանշանի և մինիմալ խտության դեպքում համապատասխանաբար գրանցվել են 0,03 գր(մկգ/լ) և 1 մկգ/լ: Այդպիսի սիստեմների էլեկտրամագնիսական անդրադարձը բացատրվում է ջրային լուծույթներում Ag լազերային արյացիայի ժամանակ ջրի մոլեկուլների կլաստերային կառուցվածքի փոփոխությամբ: Պարզ կառուցվածքի և ցածր ինքնարժեքի շնորհիվ այդպիսի սիստեմները հնարավորություն են տալիս մշակել սենսորներ հեղուկ միջավայրերում ոչ ինվազիվ մեթոդով մետաղների խտությունները չափելու համար (դեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ռ.Խաչատրյան):

Մշակվել է բժշկական սարք՝ նախատեսված մարդու կենսահյուսվածքներում ախտորոշման հետազոտությունների համար, որը հնարավորություն է տալիս հետազոտել ջերմաստիճանից կախված մարդու կենսադիմադրությունը մաշկի տարբեր կետերում: Նախատեսվել է նաև ծրագրային ապահովում. համակարգչի միջոցով կատարվում է ազդանշանի թվային մշակում, պահպանվում են բժշկական տվյալները, ինչն էլ ապահովում է երկարաժամկետ հետազոտությունների շարք յուրաքանչյուր այցելուի համար:

Ստացվել և ուսումնասիրվել են ջերմային ազդեցությունների միջոցով մարդու մաշկի մեջ ձևավորված կենսահոսանքների և ազդանշանների հաճախականային սպեկտրները: Հետազոտվել է ազդանշանների մոդուլյացիաների ավտոմատ ճանաչման խնդիրը, տրվել է խնդրի լուծումն անալոգային մոդուլյացիաների համար արհեստական նեյրոնային ցանցի միջոցով (դեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Ղուլյան):

Առաջարկվել է մագնիսական հեղուկի ֆերոհիդրոդինամիկական շարժման էներգիան էլեկտրականի փոխակերպելու նոր մեթոդ (դեկ.՝ Խ.Մանասեյան):

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԷԿՈԼՈԳԱՆՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Մշակվել է շրջակա միջավայրի բաղադրիչների ցածր ակտիվությամբ նմուշների գամմա-սպեկտրաչափական միջլաբորատոր ծրագիր՝ դրա ներդրման խորհրդատվական ծառայություն մատուցելու հեռանկարով: ՀՀ-ի տարածքում ստեղծված ռադիոէկոլոգիական մոնիթորինգի ցանցը 2019թ. ներառվել է Ring of Five ռադիոակտիվ աղտոտիչների մթնոլորտային մոնիթորինգի եվրոպական ցանցի մեջ (դեկ.՝ Կ.գ.թ. Օ.Բեյլանա):

Շարունակվել են սննդամթերքում քիմիական վտանգների և դրանցով պայմանավորված ռիսկի գնահատման աշխատանքները: Իրացվող հավի, ձկան և մեղրի մեջ հայտնաբերված հակամանրէային նյութերի ներազդեցությամբ պայմանավորված առողջական ռիսկը գտնվել է թույլատրելի տիրույթում: Սննդակարգային ուսումնասիրությունների շրջանում ստեղծվել է կաթ-կաթնամթերքի և միս-մսամթերքի սպառման վերաբերյալ տվյալ-

ների հենք քիմիական վտանգներով պայմանավորված առողջական ռիսկի գնահատման համար (ղեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

ՀՀ բնական արոտների և խոտհարքերի հետազոտությունների արդյունքում ստեղծվել է տվյալների բազա մոդելային տարածքների արդյունավետության, բուսածածկի կազմի, էներգետիկ-սննդային արժեքի, հողերում հիմնական մակրոտարրերի (N, P, K) վերաբերյալ: Տվյալների նման բազան հնարավորություն է տալիս վիճակագրական վերլուծության միջոցով բացահայտել բերքատվության և նշված ցուցանիշների միջև առկա համահարաբերակցական (կորրելացիոն) կախվածությունը և մշակել բազմագործոն ռեգրեսիոն մոդել: Կերահանդակների գնահատման տվյալ մաթեմատիկական մոտեցումը կարող է օգտագործվել արդյունավետության հետագա փոփոխությունների կանխատեսման նպատակով (ղեկ.՝ գյուղ.գ.դ. Բ.Մեծունց):

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՂԻՈՒԿՈՒՈՑԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ուսումնասիրվել է ծառայողական և որսորդական շների իքսոդային տզերի ակտիվությունը, տգակալության աստիճանը, տեսակային կազմը: Շները վարակված էին հիմնականում *Rhipicephalus sanguineus* տեսակի տզերով: Նշվել է նաև շների վարակվածություն արյան մակաբույծներով՝ պիրոպլազմաներով և թեյլերիաներով: Հետազոտվել է բիոհեմիկոնների միջանկյալ տեր հանդիսացող ցամաքային և քաղցրահամ ջրերի փափկամարմինների տեսակային կազմը և դերը կենսացենոզներում: Հաստատվել է *Theodoxus pallasi*, *Ancylus fluviatilis*, *Lymnaea truncatula*, *Helicella derbentina*, *Deroceras caucasica* տեսակների վարակվածությունը դիկրոցելի, ֆապցելի և պրոտոստրոնգիլիդի թրթուրներով (ղեկ.՝ ակ. Ս.Մովսեսյան):

Մակաբույծ և վիրուսակիր նեմատոդների հայտնաբերման և ուսումնասիրության նպատակով հետազոտվել են ավելի քան 40 պտղատու և դեկորատիվ բուսատեսակներ: Հրազդանի կիրճում ուսումնասիրված 9 դեկորատիվ ծառատեսակի արմատամերձ հողում հայտնաբերված մակաբույծ տեսակների գերակշռող մասը կազմել են *Xiphinema index* և *X. vuittenezi* տեսակի վիրուսակիր նեմատոդները (100 սմ³ հողում 30-ից ավելի առանձնյակ): Փոքր քանակությամբ հայտնաբերվել են նաև *Macroposthonia*, *Helicotylenchus*, *Rotylenchus* ցեղերի ներկայացուցիչներ: Երևանյան լճի շրջակայքում ծիրանի, կեռասի, թթենու, թզենու, ընկուզենու, խաղողի վազի արմատամերձ հողում հայտնաբերվել են *Helicotylenchus*, *Xiphinema* ցեղերի և *Criconeematidae* ընտանիքին պատկանող վնասակար նեմատոդներ: Ավելի հաճախ հանդիպել են *Helicotylenchus* ցեղի վնասակար նեմատոդները, հատկապես *H. xenoplax* տեսակը, որի քանակը 100 սմ³ հողում կազմել է 25-ից ավելի: Հաղթանակի այգում հացենին և կտակենին ախտահարված էին *Macroposthonia* և *Helicotylenchus* ցեղերի նեմատոդներով (40 նեմատոդ/100 սմ³ հողում) (ղեկ.՝ կ.գ.թ. Հ.Մկրտչյան):

Հրազդան գետի երևանյան հատվածի և Երևանյան լճի տարածքում ուսումնասիրվել են մակաբույծ տզերի տեսակային կազմը, կենսաբանական առանձնահատկությունները, տնտեսական նշանակությունը (ղեկ.՝ կ.գ.դ. Կ.Դիրարյան): Ստացված տվյալները կարող են կիրառվել գյուղատնտեսության, անասնապահության և առողջապահության բնագավառներում արտաքին միջավայրի մակաբուծաբանական աղտոտման գնահատման, կենդանիների և բույսերի մակաբուծային հիվանդությունների կանխարգելման, մշակաբույսերի և մակաբույծների դեմ արդյունավետ և էկոլոգիապես անվտանգ պայքար կազմակերպելու նպատակով:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պայմանագրի շրջանակներում (ղեկ.՝ կ.գ.թ. Է.Ղուկասյան) իրականացվել են Սևանա լճի ձկան և խեցգետնի պաշարների գնահատման

աշխատանքներ: Լճում արդյունագործական չափերի խեցգետինների կենսազանգվածը կտրուկ նվազել է. այն 11 անգամ պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: Վերջինս մի շարք գործոնների համատեղ ազդեցության արդյունք է՝ խեցգետնի պաշարների վատ կառավարումը և խեցգետնի պոպուլյացիայում ժանգախտ (ржаво пятнистая болезнь) քրոնիկ սնկային հիվանդության ներկայությունը, որն առավելապես տարածված է գյուղատնտեսական և կենցաղային հոսքաջրերով աղտոտված ջրակալներում: Նախարարություն է ներկայացվել Սևանա լճում խեցգետնի որսն արգելելու առաջարկ:

Գնահատվել են Սևանա լճի ձկնային պաշարները: Նախորդ տարվա համեմատ դիտվել է սիգի ընդհանուր պաշարների նվազում մոտ 9.5%-ով: 2019թ. ձկան պաշարները պելագիալում հասել են 2668տ: Արդյունագործական նշանակության պաշարների աճը ձվադրման ակտիվ փուլի մեկնարկից առաջ մնացել է ցանկալի մակարդակից ցածր և կազմել է շուրջ 667տ (ղեկ.՝ կ.գ.դ. Բ.Գաբրիելյան):

Հ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԱՆՎ. ԿԵՆՍԱՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱԱ ՆՕՔ ինստիտուտում սինթեզված նոր երրորդային ամինալկոհոլային միացություններից ֆենիլ և հելիոտրոպին խմբեր պարունակողներն առավել արդյունավետ են ընկճում ցուլի թոքերից մաքրած ԱԴԱ-ի ակտիվությունը *in vitro*: GGN 322*HC-ով և PO191*2HCl-ով ցածրամոլեկուլային և բարձրամոլեկուլային ԱԴԱ իզոմերների ընկճումը մրցակցային բնույթի է: ԳԱԴԱ և ԲԱԴԱ իզոմերների ընկճման կատալիտիկ պարամետրերի երկու կարգով տարբերությունը ԴՊՊIV-ի հետ ԱԴԱ-ի փոխազդեցության արդյունք է: Ռեմատոիդ արթրիտով հիվանդների սինովիալ հեղուկում PO191*2HCl-ով ԱԴԱ-ի *ex vivo* ընկճման ցածր IC₅₀ արժեքը (40 մգ/մլ) վկայում է, որ այս միացությունը կարելի է առաջարկել որպես հիվանդության բուժման խոստումնալից միջոց կլինիկայում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Անտոնյան):

Հետազոտվել է պաթոգեն սնկերի որոշման հնարավորությունը լեկտին սենսիբիլիզացված անիզոտրոպ արծաթի նանոմասնիկների օգտագործմամբ: Քանի որ սնկերի բջջապատը հարուստ է խիտինային պոլիսախարիդներով, լեկտինների (ածխաջուր սպեցիֆիկ սպիտակուցներ) օգտագործումն այդպիսի միաբջջ օրգանիզմների որոշման համար առավել արդյունավետ է: Լեկտինը սենսորի ճանաչող բաղադրիչն է, իսկ արծաթի նանոմասնիկները՝ օպտիկական սենսորները: Փորձարկվում են տարբեր ածխաջրային սպեցիֆիկությամբ օժտված լեկտիններ՝ մեթոդի մաքսիմալ զգայնության և սպեցիֆիկության համար: Կատարվում են սենսիբիլիզացված ցածրամոլեկուլային լիգանդներով անիզոտրոպ արծաթի նանոմասնիկների օգնությամբ ֆոսֆոօրգանական թունաքիմիկատների որոշման աշխատանքներ: Մեթոդը ֆերմենտային սենսորների (ացետիլխոլինեսթերազ և տրիպսին) համեմատ ունի առավել մեծ կայունություն, որով և արժևորվում է դրա գործնական կիրառությունը:

Մշակվում են մթերքի որակական գնահատման թեստ-համակարգեր: Մթերքների փչանալուց առաջացած հիստամինի քանակական որոշմամբ գնահատվում է մթերքի որակը: Մեթոդի հիմքում ընկած է դիամինաօքսիդազա ֆերմենտի օգնությամբ հիստամինի քանակական որոշումը (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Գասպարյան):

«ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Շարունակվել է մի շարք օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների արտադրությունը և իրացումը եվրոպական շուկայում, որոնք ունեն կարևոր բժշկական, դեղագործական և ախտորոշիչ նշանակություն (դեկ.՝ ակ. Ա.Սադյան):

Շարունակվել է *Lactobacillus acidophilus* ՄԱԿ 9602 կաթնաթթվային բակտերիայի կուլտուրայի օգտագործմամբ «Նարինե» կաթնաթթվային մթերքի արտադրությունը: Կազմակերպվել է մրգային և ըմպելի «Նարինե»-ի արտադրություն բնական օշարակների (ծիրան, դեղձ, սև թուրք և բայ) կիրառմամբ: Միաժամանակ կազմակերպվել է լիոֆիլիզացված (դեղափոշի) «Նարինե»-ի արտադրությունը: Այս արտադրանքներն իրացվում են Երևանի առաջատար դեղատներում և սուպերմարկետներում (դեկ.՝ Ռ.Հայրապետյան):

Շարունակվել է գյուղատնտեսության համար անհրաժեշտ համալիր կենսապարար-տանյութերի՝ «Էկոբիոֆիդ»-ի և «Էկոբիոֆիդ+»-ի արտադրությունը: Հաշվետու ժամանակահատվածում արտադրվել է շուրջ 2,5 տ կենսապարարտանյութ, որն իրացվել է հանրապետության տարբեր ֆերմաներում (դեկ.՝ կ.գ.թ. Գ.Ավետիսովա):

Շարունակվել է Հայաստանի դեղագործական շուկայում պահանջարկ ունեցող պատրաստուկների (3% և 30% ջրածնի պերօքսիդ, բորաթթու, մագնեզիումի սուլֆատ, կալիումի պերմանգանատ, ամոնիումի ջրային լուծույթ, գերչակի յուղ, գլիցերին, 5% յոդի լուծույթ) արտադրությունը: Պայմանագրային հիմունքներով վերոհիշյալ պատրաստուկներն իրացվում են «Նատալի-Ֆարմ», «Վագա-Ֆարմ», «Ֆարմ-Դոմ», «Յունիֆարմ», «Սանուս», «Արմֆարմացիա», «Ալտա» և այլ մեծածախ ցանցերում (դեկ.՝ ք.գ.թ. Գ.Հովսեփյան):

Շարունակվել է «Նարինե» կաթնաթթվային արտադրանքի մեջ որպես բնական համալիր հավելանյութեր օգտագործվող պտղամրգային օշարկների (դեղձ, ծիրան, սև թուրք), սառը մամլման եղանակով չիչխանի, կտավատի, պուտավոր կաթնափուշի, նշի, սև և սպիտակ քունջութի, դեղձի, ծիրանի բնական բուսահումքերից ստացվող բնական յուղերի արտադրությունը, կազմակերպվել է նոր արժեքավոր բուսայուղերի (սև չամանի, դդմի, սև սալորի) արտադրությունը, որոնք ունեն, սննդային, բուժկանխարգելիչ և գեղարարական (կոսմետոլոգիական) նշանակություն (դեկ.՝ ք.գ.դ. Ս.Դադայան):

Գ.ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎ. ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱՅԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առաջին անգամ կառուցվել և փորձարկվել են ուղղաձիգ աերոպոնիկ և խորը ջրային (DWC) հիդրոպոնիկ մոդուլներ, որտեղ աճեցվել է մի շարք տերևային բանջարեղեն: Վաճառվել է ելակի տարբեր սորտերի 500 սածիլ (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Թադևոսյան):

ՀՓԿ-ում պահպանվել և հարստացվել է տարբեր եթերայուղատու, դեղատու, սննդային բույսերի հիդրոպոնիկ բանկը (դեկ.՝ թղթ. անդ. Ս.Մայրապետյան):

Մեծ Բրիտանիայից ներմուծվել է մեղրախոտի նոր կենսատեսակ (գերմանական), որի վրա կատարվել են փորձնական աշխատանքներ (դեկ.՝ գ.գ.դ. Մ.Բաբախանյան):

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու համագործակցության պայմանագրեր են կնքվել Իրանի անհող ասոցիացիայի և Ռաֆսանջանի Վալի-է-Ասր համալսարանի, Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի, «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի հետ (դեկ.՝ կ.գ.թ. Խ.Մայրապետյան):

Վաճառվել է շուրջ 1000 հատ տարբեր ծառաթփերի տնկի՝ 1 100 000 դրամ արժեքով (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան):

Պահպանվել և լրացվել է բույսերի *in vitro* հավաքածուն (դեկ.՝ կ.գ.դ. Է.Սարգսյան):

Մշակվել են գործնական ռադիոպաշտպանիչ առաջարկներ, որոնց կիրառումն ագրո-
համակեցություններում և հիդրոպոնիկայում թույլ է տալիս ստանալ ռադիոէկոլոգիապես
առավել անվտանգ բուսահումք և կունենա բնապահպանական նշանակություն (ղեկ՝ Գ.Գ.Թ.
Լ.Ղալաչյան):

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ Խաղողի ազգային կոլեկցիոն այգու գենետիկական ռեսուրսների մոլեկուլային
նույնականացման և փաստագրման *VITIS* տվյալների շտեմարանը (www.vitis.am)
ինտեգրվել է եվրոպական www.vivc.de տվյալների շտեմարանին՝ ապահովելով խաղողի
հայկական սորտերի մասին տեղեկատվության ավելի լայն հասանելիություն (ղեկ՝ Կ.Գ.Թ.
Կ.Մարգարյան):

Ստեղծվել է սննդածին վարակիչ հիվանդությունների պատճառ հանդիսացող բակ-
տերիալ հարուցիչների հավաքածու, որը պարունակում է *Shigella*, *Klebsiella*, *Staphylococcus*
aureus ցեղերին, ինչպես նաև *Pseudomonas aeruginosa* և ոչ տիֆոիդ *Salmonella* տեսակներին
պատկանող 85 կլինիկական կուլտուրա: Հավաքածուն կարող է օգտագործվել նոր հակա-
մանրէային դեղամիջոցների թեստավորման համար (ղեկ՝ Կ.Գ.Թ. Ա.Սեդրակյան):

Մշակվել է դեղերի վերաթիրախավորման կենսաինֆորմատիկական ալգորիթմ, որը
գեների ֆունկցիոնալ կլաստերների էքսպրեսիայի փոփոխությունների հիման վրա թույլ է
տալիս արդեն իսկ գրանցված դեղերի համար բացահայտել նոր նշանակումներ (ղեկ՝ Կ.Գ.Թ.
Ա.Առաքելյան):

ԼՕՐԲԵԼՈՒ ԱՆՎ. ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մշակվել և կիրառվում է նատիվ թույնի և արգելակված ֆերմենատիվ ակտիվությամբ
թույնի ներարկմամբ պայմանավորված առնետի ուղեղի վնասման քանակական գնահատ-
ման մեթոդը, որը հիմնված է միկրոգլիայի բջիջների body size/cell size հարաբերության
վիճակագրական մշակման վրա և հաշվի է առնում գլխուղեղի կտրվածքի հետազոտվող
մասի օպտիկական խտությունը (հիստոլոգիական կտրվածքների համար կիրառվել է ImageJ
ծրագիրը): Ամբողջովին մշակվել և ներդրվել է առնետների մոտ գյուրգայի թույնի ներ-
ուղեղային ներարկման միջոցով հեմորագիկ ինսուլտի մոդելավորման մեթոդը (թույնի
ստերիոտաքսիկ ներարկման մեթոդ միկրոէլեկտրոդ/ներարկիչ համակարգով, ջրային
լուծույթ/յուղ աշխատանքային միջավայրում), կրծողների մոտ հեմորագիկ ինսուլտի
մոդելավորումից հետո վարքագծի հետազոտման համար անհրաժեշտ սարքավորումների և
միջոցների նախապատրաստումը (բարձրադիր խաչաձև լաբիրինթ անհանգստության,
թափանցիկ գլան առջևի վերջույթների շարժման անհամաչափության գնահատման համար,
անկյունային արգելապատնեշ շարժողական անհամաչափության և հորիզոնական
հարթակներ հավասարակշռության համակարգի աշխատանքի գնահատման համար) (ղեկ՝
Կ.Գ.Թ. Ա.Ոսկանյան):

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎ. ՔԻՄԻԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Միկրոալիքային եղանակով սինթեզվել է որոշակի բաղադրությամբ բորի կարբիդ-ռենիումի երկբորիդ կոմպոզիտ, որն ըստ Վիկերսի միկրոկարծրության ցուցանիշի (48,5 GPa, 5 N ճնշման տակ) դասվում է գերկարծր նյութերի շարքում (ղեկ.՝ ք.գ.թ. Ռ.Մնացականյան):

«Եվրամիության ջրային նախաձեռնությունն պլյուս Արևելյան համագործակցության (EUWI+4 EaP) և ջրի միջազգային գործակալության» ծրագրով «Հայաստանում Սևանի և Հրազդան գետի ավազանում մակերևութային ջրային մարմինների տարանջատում» դրամաշնորհի շրջանակներում, ԵՄ ջրի շրջանակային դիրեկտիվի մեթոդաբանությամբ և մոտեցումների հիման վրա իրականացվել է Սևանի և Հրազդանի գետավազանների ջրային մարմինների տարանջատում և գնահատում՝ ըստ ջրաքիմիական, ջրակենսաբանական, ջրաբանական և ջրամորֆոլոգիական ցուցանիշների (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Մինասյան):

Տեխնոլոգիական յուղերով աղտոտված պղնձի օքսիդային (I) թափոնների և նիկելի օքսիդի (II)՝ ամոնիումի նիտրատով հարուցված այրման ռեժիմում մշակվել է համատեղ վերականգնմամբ Cu-Ni համաձուլվածքի ստացման տեխնոլոգիական պրոցես (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Խառատյան):

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ուսումնասիրվել են կոմպոզիցիոն սորբենտների ծակոտկեն և սորբցիոն հատկությունները, որոնք պոլիմերային ծածկույթով անօրգանական տակդիրներ են (կերամիկական մոնոլիտ և սիլիկատ): Պոլիմերները սինթեզվել են *ալ*-ֆենիլենային և 1,6-հեքսամեթիլենային խմբեր պարունակող մոնոմերային և օլիգոմերային բիս-ակրիլամիդներից: Ցույց է տրվել, որ սինթեզված սորբենտներն օժտված են օգտակար հատկություններով՝ մետաղների իոնների, սպիտակուցի (ցուլի շիճուկի ալբումինի-ՅՄԱ օրինակով), ՌՆԹ-ի (վանադիլային ռիբոնուկլեոզիդային կոմպլեքսի օրինակով) պահումով, իսկ էլյուատներն ունեն բարձր օպտիկական թափանցիկություն (OD₂₈₀), որոնց շնորհիվ ստացված սորբենտները կարող են օգտագործվել տարբեր միջավայրերից ԴՆԹ-ի անջատման և մաքրման գործընթացների համար (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Գրիգորյան):

Մ.ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ԱՆՎ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Սինթեզվել են ցածր կապակցման և սիտալիզացման ջերմաստիճաններով նիտրատային ապակիներ հղկող գործիքներ պատրաստելու համար, որոնք բարձր ջերմաստիճաններում անջատում են թթվածին և նպաստում բարձր աստիճանի հղկմանը (ղեկ.՝ տ.գ.դ. Ն. Կնյազյան):

Սինթեզվել են վանադիում-դիոպսիդ, երկաթ-դիոպսիդ, կոբալտ-դիոպսիդ, ինչպես նաև նիկել-մոլիբդ, կոբալտ-մոլիբդ կերամիկական պիզմենտներ միկրոալիքային եղանակով: Խոշոր լաբորատոր սարքավորումներում ստացվել են նշված պիզմենտների փորձնական նմուշները: Հաստատվել է, որ միկրոալիքային եղանակը թույլ է տալիս 2-3 անգամ կրճատել վերոնշյալ պիզմենտների ստացման ժամանակը, ինչպես նաև 200-250°C աստիճանով

իջեցնել դիոպսիդային և մուլիտային կառուցվածքի ձևավորման ջերմաստիճանը (դեկ.՝ տ.գ.թ. Վ.Բադրամյան):

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կատարվել են ուժեղ երկրաշարժերի ($M \geq 7.0$) հետցնցումների տեղաբաշխման հետազոտություններ: Առաջարկվել է հետաքննել հետաբաշխման տարածքի մակերեսի մեծության որոշման նոր բանաձև՝ կախված հիմնական երկրաշարժից Երկրի մակերևույթի վրա առաջացած խզվածքի երկարությամբ L և նրան ուղղահայաց ուղղությամբ հարաբերական տեղաշարժի միջին \bar{u} մեծությամբ՝ պայմանավորված R հեռավորությունից: Արդյունքները համեմատվել են Կասախստանի կողմից առաջարկված համանման բանաձևի արդյունքների հետ, որոնք կախված են միայն երկրաշարժի մագնիտուդից:

Մշակվել է «Երկաշարժադինամիկայի շինարարություն. նախագծման նորմեր» նորմատիվային փաստաթուղթ՝ ներառյալ ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գնահատման նոր քարտեզը՝ մշակված 2017թ. Միջազգային կոնսոլիդացիոն (ԱՄՆ, Իտալիա, Հայաստան) մասնագետների կողմից (դեկ.՝ ալ. Է.Խաչիյան):

Հավաքագրվել են Վայոց ձոր մարզի վտանգավոր երկրաբանական պրոցեսները ԱՏՀ-ում (դեկ.՝ ե.գ.թ. Դ.Առաքելյան):

Ստացված նոր տվյալների հիման վրա կառուցվել է Դիլիջան քաղաքի, Մեծ Թալա սողանքային մարմնի՝ որպես հակասողանքային միջոցառում, կառուցված թունելի ջրահեռացման և ցամաքուրդային կառույցների (մակերեսային ու ստորգետնյա) թվային եռաչափ մոդելը, ինչը թույլ է տվել առավել հստակ ուրվագծել սողանքի ներկա վիճակը և առկա խոչընդոտները թունելի և ամբողջ ցամաքուրդային համակարգի արդյունավետ աշխատանքի համար (դեկ.՝ ե.գ.թ. Մ.Գևորգյան):

Լոռու մարզի Շամուտ-Աթան H22 ավտոճանապարհի սողանքային տեղամասում և Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահմանի ա/ճ 82կմ քարաթափման հատվածում իրականացված երկրաբանաերկրաֆիզիկական աշխատանքների արդյունքում, ելնելով սողանքային զանգվածի խորքային կառուցվածքից, երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմաններից, ինչպես նաև սողանքային մարմնում ներկայումս դիտվող դեֆորմացիաների և դրանց հետևանքով առաջացած խորաբաց ճեղքերի դինամիկայից, տրվել են եզրակացություններ և առաջարկություններ (դեկ.՝ ե.գ.թ. Մ.Գևորգյան):

Գիտափորձարարական աշխատանքների միջոցով հրաբխադիատոմիտային վնասակար խառնուրդ ապարներից (որոնք տասնյակ տարիներ համարվել են դիատոմիտային հանքավայրերի շահագործմանը խանգարող հանգամանք) ստացվել են ֆիլտրացիոն, սորբցիոն, թեթև շինարարական աղյուսներ, տարբեր տեսակի և գույնի ապակիներ, ֆոսֆորային պարարտանյութեր, բիոգեն կարբոնատային և այլ տեսակի միներալային հումքեր (դեկ.՝ ե.-հ.գ.դ. Թ.Ավագյան):

Մշակվել է «ՀՀ ԳԱԱ ԵԳԻ Էլեկտրոնային գրադարան» ծրագիրը, որի միջոցով հնարավոր է որոնել տեղեկատվություն՝ հարցումներ կատարելով լաբորատորիայի կողմից 2019թ. ընթացքում կազմված ԵԳԻ գրադարանի գրքերի, հաշվետվությունների և քարտեզների տվյալների բազային: Ծրագիրը հասանելի է ԵԳԻ ներքին ցանցում <http://10.77.0.222:5000/> հասցեով (դեկ.՝ ե.-հ.գ.թ. Արշ.Ավագյան):

Երկրի մասին գիտությունների վիրտուալ միջավայրում (<http://vgse.geology.am>) կազմվել են թեմատիկ վեբ-քարտեզներ, ինտեգրվել է ջրամբարների պատվարների փլուզումից ձևավորվող ջրհեղեղի մոդելը, համալրվել է վիրտուալ միջավայրի բովանդակային

կազմը (տարածական շերտեր և դրանց մետատվյալներ), բարելավվել է օգտագործողի ինտերֆեյսը (դեկ.՝ տ.գ.թ. Ա.Առաքելյան):

Ա.ՆԱԶԱՐՈՎԻ ԱՆՎ. ԵՐԿՐԱՏԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՏԵՆՆԵՐԱՅԻՆ ՄԵՅՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Նախագծվել, պատրաստվել ու կազմակերպվել են մեկ սեյսմիկ կայան Նոր Ամբերդում և երկու կայան Վլադիկովկասում՝ իրենց թվայնացման բլոկներով:

Նախագծվել և պատրաստվել է մինչև 100մ խորությամբ հորատանցքերում ջրի մակարդակի տատանումների գրանցման մակարդակաչափ՝ իր էլեկտրոնային գրանցիչով (դեկ.՝ Ե.Գ.Թ. Ջ.Կարապետյան):

Նախագծվել, պատրաստվել է ջրի հորատանցքային ստացիոնար մակարդակաչափ՝ ստացված տվյալները GSM ցանցով փոխանցելու հնարավորությամբ (դեկ.՝ Ս.Շահպարտյան):

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բնաստիտուտի գիտաշխատողները պարբերաբար պատկան մարմիններին են ներկայացրել ՀՀ արտաքին քաղաքականության մի շարք հիմնական ուղղությունների (մասնավորապես մերձավորարևելյան և տարածաշրջանային) մշակմանը և իրականացմանը նպաստող, ՀՀ ազգային անվտանգությանը վերաբերող գիտական և գիտավերլուծական նյութեր: Բնաստիտուտի տնօրենը բազմաթիվ հանդիպումներ է ունեցել Հայաստանում տեղակայված արտասահմանյան դիվանագետների հետ, հիմնվելով հետազոտական աշխատանքի արդյունքների վրա՝ նրանց են ներկայացվել ՀՀ արտաքին և ներքին քաղաքականության, տարածաշրջանային զարգացումների հիմնական միտումները: Բնաստիտուտի աշխատակիցներն ակտիվորեն ներգրավված են եղել ՀՀ արտաքին քաղաքականության շուրջը ծավալվող խոսույթում՝ հայաստանյան և արտասահմանյան հեղինակավոր ԶԼՄ-ներին տրված փորձագիտական հարցազրույցների ընթացքում ներկայացնելով իրենց գիտական պրպտումների արդյունքները:

Բնաստիտուտը գիտական դիվանագիտության հաջող քաղաքականության շնորհիվ շարունակել է պայմանագրային հիմունքներով իրականացնել գիտական լայն համագործակցություն աշխարհի տարբեր հեղինակավոր գիտակրթական հաստատությունների հետ:

Կովկասագիտության բնագավառում մի շարք աշխատությունների միջոցով և բազմաթիվ սկզբնաղբյուրների օգտագործմամբ ճշտվել են հայ-վրացական, Ադվանքի պատմության կարևոր հարցեր, ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքում ապրող բնիկ ժողովուրդների պատմության հիմնահարցերը, ինչը հնարավորություն է տալիս ավելի հիմնավոր պատասխանելու հայ ժողովրդի պատմության խեղաթյուրումներին:

Բնաստիտուտում շարունակվել են չինագիտական և ճապոնագիտական հետազոտությունները: Մասնավորապես Չինաստանի կողմից առաջ քաշված Մետաքսի ճանապարհի հայեցակարգի համակողմանի հետազոտումը հնարավորություն է տվել հիմնավորելու այդ ծրագրի շրջանակներում Հայաստանի կարևոր դերակատարման մասին թեզը:

Աղբյուրագիտության ոլորտի մասնագետների ուշադրության կենտրոնում են եղել պարսկական, արաբական և օսմանյան, ինչպես նաև սեպագիր վավերագրերի հրատարակումը և վերլուծությունը, ինչը հնարավորություն է տվել նորովի մեկնաբանելու հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության մի շարք հարցեր:

Կարևոր ձեռքբերում է ինստիտուտի աշխատակիցների կողմից դպրոցական և բուհական դասագրքերի հրատարակումը, մասնավորապես եզդիական դպրոցների համար պատրաստված և տպագրված դասագրքերը:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ավարտին են հասցվել Արենի 1 քարայրի՝ որպես զբոսաշրջության օբյեկտի, թանգարանացման աշխատանքները (ղեկ.՝ Բ. Գասպարյան):

«Կանխատեսելի հնագիտության մոդել (հետազոտություն)»՝ Կոտայքի տարածաշրջանում ուրարտական ժառանգության հնագիտական հետազոտություն» հայ-իտալական նախագիծը 2019թ. արժանացել է «Եվրոպա Նոստրա»՝ Եվրոպական ժառանգության մրցանակաբաշխություն պարգևին (ղեկ.՝ Ա. Պետրոսյան):

Պեղվել և վերականգնման համար նախապատրաստվել է եկեղեցական 4 համալիր:

Վերականգնվել և թանգարանացման համար նախապատրաստվել է 500 միավոր պատմամշակութային մեծ արժեք ունեցող գտածո՝ բրոնզից, երկաթից, ապակուց, ոսկրից, քարից պատրաստված իրեր և առարկաններ (ղեկ.՝ թղթ. անդ. Պ. Ավետիսյան):

Ավարտվել է Ա. Ղանալանյանի ֆոնդի կատալոգացումը, թվայնացվել են Վ. և Գ. Սանասարյանների («Կարինի ազգագրություն»), Ա. Ղարիբյանի («Շապին-Գարահիսարի պատմություն և ազգագրություն») անվանական ֆոնդերը:

Նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության պետական գրանցման, պահպանության, հանրահռչակման նպատակներով կառավարման մարմինների են տրամադրվել ավելի քան 50 փորձագիտական եզրակացություն և առաջարկ:

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎ. ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ինստիտուտում կատարվող գիտահետազոտական աշխատանքների և ուսումնասիրությունների արդյունքները կարևոր նյութեր են պարունակում ընդհանուր լեզվաբանական առումով, արժեքավոր են հարակից մի շարք գիտաճյուղերի համար: Լեզվի ինստիտուտում կատարված շատ աշխատանքներ ունեն նաև գիտագործնական, կիրառական նշանակություն: Ինստիտուտի գիտաշխատողների մասնակցությամբ պատրաստվել են այդ կարգի հետևյալ աշխատանքները՝ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ», «Լեզվագործածության սխալներ (տեսագործնական ձեռնարկ)», «Գործառական հայերեն (գործնական աշխատանքների ձեռնարկ)»:

Ստեղծվել է համացանցային առանձին կայքում գործող «Հայերենի բառապաշարի էլեկտրոնային շտեմարան» (հեղ.՝ Բ. Գ. Ֆ. Հակոբյան): Հայերենը համացանցային լեզու դարձնելու, այն տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում հաջողությամբ գործածելու համար առաջին հերթին անհրաժեշտ է նկարագրել և ներկայացնել բառապաշարը՝ օգտագործելով նորագույն տեխնոլոգիաների անընդհատ և շարունակական զարգացումները: Էլեկտրոնային շտեմարանում ներկայացվում են բառերի հասկացական և իմաստային հարաբերությունները, տրվում են գլխաբառի հնչյունական, բառակազմական, բառիմաս-

տային և քերականական սպառիչ բնութագրերը: Լեզվաբանական նպատակներով շտեմարանի կիրառությունը զարգացման միանգամայն նոր աստիճանի կհասցնի հայերենի գործածությունը տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում:

Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Վ.Հարությունյան) առաջարկվել են միջոցառումներ, որոնց արդյունքով մեր երկիրը կարելի է դարձնել նաև կարճատև զբոսաշրջային այցերի հանգրվան: Անհրաժեշտ է տարբեր գնողունակություն ունեցող զբոսաշրջիկների համար մշակել մատչելի փաթեթներ և իրագործել արդյունավետ մարքեթինգային քաղաքականություն, նաև զբոսաշրջության ոլորտն անընդհատ համալրել արդիական նորարարական լուծումներով: Բացի այդ՝ առաջարկվել է դիվանագիտական գործիքակազմերով ընդգծել Հայաստանի Հանրապետության հեղինակությունն ու վարկանիշը, հետևողականորեն նպաստել դեպի ՀՀ զբոսաշրջային հոսքերի ավելացմանը և ցուցաբերել առանձնահատուկ վերաբերմունք ՀՀ այցելած յուրաքանչյուր զբոսաշրջիկի հանդեպ:

«Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության հետևանքների գնահատումը և հետագա հնարավոր զարգացումները» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Լ.Սարգսյան) բացահայտվել են ՀՀ տնտեսության այն ոլորտները, որոնք կարող են միջնաժամկետ հեռանկարում գրավիչ լինել օտարերկրյա ներդրողների համար: Դրանք են մսից, ձկնից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանքի, օձառի, մաքրող միջոցների արտադրությունը և այլն: Բացի այդ՝ Էկոնոմետրիկ մոդելով հաշվարկվել է նաև ՀՀ-ից ԵՏՄ արտահանման ազդեցությունը ՀՀ ՀՆԱ-ի աճի վրա: Պարզվել է, որ դեպի ԵՏՄ արտահանման աճի 1 միավորով աճը նպաստում է ՀՀ ՀՆԱ-ի աճին 2.5 միավորով: Այս հիմնավորմամբ էլ առաջարկվել են դեպի ԵՏՄ շուկա արտահանման աճը խթանող մեխանիզմներ՝ ցուցահանդեսների մասնակցության վճարների մասնակի փոխհատուցում, ՌԴ Ֆուդ-Սիթիի մշտական գործող տաղավարի վճարների աջակցության մեխանիզմ և այլն:

«Միջազգային հարկային հարաբերությունների կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Ք.Բաղդասարյան) առաջարկվել է առաջիկա տարիներին հարկային քաղաքականության տեսանկյունից առանձնակի կարևորություն տալ գործող հարկային արտոնությունների շրջանակի կրճատմանը, հարկման բազայի ընդլայնմանն ու ամրապնդմանը, ինչը հնարավորություն կընձեռի աստիճանաբար բարելավելու հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը և ամրապնդելու հարկման հորիզոնական արդարության սկզբունքը: Մասնավորապես արդար հարկումը հավասարների նկատմամբ կիրառվող հավասար մոտեցումն է:

«Վարկավորման դերը ՀՀ ագրարային ոլորտի զարգացման գործում և դրա բարելավման ուղիները» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Մ.Մանուչարյան) առաջարկվել է կիրառել վարկերի մատչելիության, հասանելիության ու վարկային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված վարկավորման տարբեր մեխանիզմներ և տեխնոլոգիաներ, որոնք նաև կնպաստեն գյուղատնտեսական վարկերի վերադարձմանը, ճյուղում վարկային ռիսկի մեղմացմանը, գյուղատնտեսության ապահովագրության ներդրմանը և դրա հետագա զարգացմանը: Առաջարկվել է ներգրավել օտարերկրյա ուղղակի ներդրումներ և նպաստել լիզինգի զարգացմանը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա իրականացնել ծառայությունների մատուցման խրախուսում և պետության աջակցությամբ առկա բարձրորակ կադրային ներուժի արդյունավետ օգտագործում աշխատուժի արտահոսքը կանխելու համար:

«Բարձր տեխնոլոգիական ոլորտի ձեռնարկությունների գործունեության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Ս.Դավթյան) առաջարկվել է ապահովել բարձր տեխնոլոգիական ձեռնարկությունների գործունեության խթանման միջոցառումներ, մասնավորապես արտաքին առևտրային, հարկային, ֆինանսական, վարչական արտոնություններ:

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Շարունակվել են էմպիրիկ սոցիոլոգիական ուսումնասիրությունները՝ նվիրված հետ-հեղափոխական Հայաստանում ձևավորվող հասարակական կարծիքի բացահայտմանը: Ուսումնասիրություններն իրականացվել են հանրահայտ միջազգային Gallup/BalticSurvey կազմակերպության հետ համատեղ (ղեկ՝ ակ. Գ.Պողոսյան):

ՀՀ-ում փաստաբանական գրասենյակների, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հետ համատեղ իրականացվել են կիրառական հետազոտություններ՝ նվիրված սահմանադրաիրավական և դատաիրավական բարեփոխումներին, կառավարման պառլամենտական ձևին անցմանը, որոնց արդյունքները ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարությանն ու շահագրգիռ կազմակերպություններին: Միջազգային համագործակցության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության դատարանին տրամադրվել են իրավաբանական խորհրդատվություններ և եզրակացություններ վիճահարույց, կոլլիզիոն իրավական նորմերի և խնդիրների վերաբերյալ (ղեկ՝ իր.գ.թ. Լ.Ղազանչյան):

Առաջին անգամ վերլուծվել են տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացները, Հարավկովկասյան պետություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության, «փափուկ ուժ» կառուցակարգի ներդրման հնարավորությունները: Հետազոտության արդյունքները ներկայացվել են ՀՀ կառավարությանը, ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչություններին և արժանացել դրական արձագանքի (ղեկ՝ քաղ.գ.դ. Լ.Շիրինյան):

ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

2019թ. իրականացվել է 8145 դատական փորձաքննություն: Կառավարության պահուստային ֆոնդի հաշվին հատկացված լրացուցիչ ֆինանսավորման և լրացուցիչ կնքված պետական գնման պայմանագրի շրջանակներում իրականացվել է նաև 2464 դատական փորձաքննություն՝ տարվա կտրվածքով կատարելով 10609 դատական փորձաքննություն: 2019թ. ընթացքում ՀՀ-ում գործող քրեադատավարական օրենսդրության շրջանակներում փորձաքննություններն իրականացվել են 27 փորձագիտական տեսակների շրջանակներում՝ շուրջ 130 փորձագիտական ենթատեսակներով:

Կազմակերպությունը դատարանների կողմից կայացրած որոշումների հիման վրա իրականացրել է 174 փորձաքննություն քաղաքացիական դատավարության շրջանակներում, 20 փորձաքննություն՝ վարչական դատավարության շրջանակներում, 128 փորձաքննություն՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում:

Կուրչատովյան ինստիտուտի սինքրոտրոնային աղբյուրի «PKΦM» կայանի վրա ուսումնասիրվել է կվարցի միաբյուրեղներից պատրաստված ռենտգենյան ակուստա-օպտիկական էլեմենտներում ակուստիկական ալիքների լայնության կախված դիֆրակցված ռենտգենյան ճառագայթման ճոճման կորերի, ինտենսիվության և բյուրեղական ցանցի վաքքը: Ցույց է տրվել, որ բյուրեղի կենտրոնից դեպի մակերևույթները դեֆորմացիան մեծանում է, իսկ տրամագծի ուղղությամբ այն ունի պարբերական տեսք, այնինչ դեֆորմացիայի բաշխումը միաբյուրեղի մակերևույթին ունի ավելի բարդ տեսք: Ցույց է տրվել, որ ակուստիկական ալիքների առկայության պայմաններում կվարցի միաբյուրեղի (1011) ատոմական հարթություններից ռենտգենյան ճառագայթների անդրադարձման գործակիցն անդրադարձման վեկտորին ուղղահայաց ուղղությամբ ունի պարբերական բնույթ: Ցույց է տրվել, որ մեկ ձեռք ունեցող հարթ էկրանից լույսի դիֆրակցիան կախված է անցման ուղղությունից, երբ տարբեր կողմերում միջավայրերի բեկման ցուցիչները տարբեր են և որոշվում է բեկման ցուցիչների հարաբերությամբ:

Կատարվել են ակուստիկական դաշտի և ջերմային գրադիենտի ազդեցությամբ ռենտգենյան կարճալիքային տիրույթում տարածաժամանակային կառավարելի բնութագրիչներով փնջերի ձևավորման փորձարարական հետազոտություններ (դեկ.՝ ակ. Ա.Մկրտչյան):

Կատարվել են որոշակի պարբերականությամբ և ամորֆ միջավայրերի հետ տարրական լիցքավորված մասնիկների փոխազդեցության արդյունքում ի հայտ եկող կանալացման, անցումային, Ղարիբյանի, կոհերենտ և ոչ կոհերենտ արգելակային, ինչպես նաև միջավայրում առկա ատոմների բնութագրական ճառագայթումների տարածաժամանակային բնութագրիչների ուսումնասիրություններ արտաքին դաշտերի (էլեկտրամագնիսական և ակուստիկական դաշտեր, ջերմաստիճանային գրադիենտ և այլն) առկայության պայմաններում: Տեսական ու փորձարարական հետազոտությունների արդյունքում ցույց են տրվել

վերոհիշյալ ճառագայթումների տարածաժամանակային բնութագրիչների կառավարման ու նրանց, որպես այլընտրանքային հզոր աղբյուրների օգտագործման հնարավորությունները:

Կատարվել են կարգավորվածության որոշակի աստիճան ունեցող ու տարբեր հարաբերական խտությամբ սինթեզված նոր բազմակոմպոնենտ միջավայրերի հետ իոնացնող ճառագայթների և տարրական մասնիկների փոխազդեցության արդյունքում ի հայտ եկող դելտա էլեկտրոնների ծնման, դրեյֆի և բազմացման երևույթների ուսումնասիրություններ արտաքին արագացնող էլեկտրամագնիսական դաշտերի առկայության պայմաններում: 1մմ հաստությամբ սիլիցիումի և ալյումինի բարձր կարգավորվածության օքսիդների մատրիցաների հիման վրա տարբեր քիմիական կապակցություններով հավելված նոր սինթեզված միջավայրերում գրանցվել է դելտա էլեկտրոնների 10^{12} և ավելի բազմացման գործակից:

Կատարվել են տարբեր միջավայրերում (վակուում, պլազմա, կոնդենսացված միջավայրեր ու հեղուկներ) լիցքավորված տարրական մասնիկների և իոնների արագացման երևույթի ուսումնասիրություններ: Հեղուկ միջավայրերում դիտվել է ջրածնի, թթվածնի և երկաթի իոնների արագացում մինչև 10^3 անգամ իրենց նախնական էներգիայի նկատմամբ, Յմ-ից մինչև 5սմ տարածության վրա: Ակուստապլազմայում դիտվել է տարբեր ծանր և թեթև իոնների արագացում մինչև 10^6 անգամ իրենց նախնական էներգիայի նկատմամբ, 5սմ-ից մինչև 25սմ տարածության վրա:

Կատարվել են տարբեր բազմաշերտ ու բազմակոմպոնենտ միջավայրերում ակուստիկական ալիքների գրգռման, տարածման ու կուտակման երևույթների ուսումնասիրություններ: Փորձականորեն որոշվել են Սևանա ու Պարզ-լիճ լճերի, ինչպես նաև ՀՀ տարածքում առկա որոշ արհեստական ջրամբարների սեփական հաճախությունները և նրանց ֆոնային հաճախային սպեկտրները: Ցույց է տրվել, որ Սևանա լիճն իր երկրաբանական ու տարածական կառուցվածքի հետևանքով ունի ակուստիկ ալիքների կուտակման և ուժեղացման հատկություններ, որոնք հաստատվել են ստեղծված նմանատիպ լաբորատոր ջրավազանի վրա: Որոշվել են նաև որոշ շարժվող օբյեկտների սեփական հաճախությունները: Կատարվել են կենսաբանական օբյեկտների հետ ակուստիկական ալիքների փոխազդեցության ուսումնասիրություններ: Գրանցվել են այդ փոխազդեցության արդյունքում ի հայտ եկող ակուստիկական արձագանքները: Ցույց է տրվել, որ գրանցված ակուստիկական արձագանքների մշակման արդյունքում կարելի է որոշել սկզբնական ակուստիկական ալիքների աղբյուրների բնութագրերը: Գրանցվել են նաև փորձարկվող օբյեկտներում առկա անհամասեռությունները բնութագրող ակուստիկական արձագանքները, ինչը հնարավորություն է ընձեռում եզրակացնել նրանց ֆիզիոլոգիական վիճակի մասին (դեկ. թղթ. անդ. Ա.Մկրտչյան):

Փորձականորեն ցույց է տրվել, որ ծավալային ակուստիկական ալիքների առկայության պայմաններում AT-կտրվածքով կվարցի միաբյուրեղից ստացված տարածական մոդուլացված ռենտգենյան փնջերի միջև հեռավորությունը կարելի է կառավարել լայն տիրույթում, մինչև մի քանի միլիմետր՝ օգտագործելով խիստ ասիմետրիկ Բրեգգյան անդրադարձում:

Փորձականորեն ցույց է տրվել, որ ռենտգենյան ճառագայթների դիֆրակցիայի դեպքում եզրային և դիֆրակցիոն կիզակետման երևույթները միաժամանակ կարելի է դիտել հատուկ դիֆրակցիոն համակարգի օգտագործմամբ: Բացահայտվել է երկբլոկ համակարգում կիզակետման և եզրային երևույթների միջև գործող կապը:

Ուսումնասիրվել են աերոզոլ OS (դիօկտիլ սուլֆո սուլֆինատ)-ջուր համակարգի լամելյար հեղուկ բյուրեղական փուլի կառուցվածքային փոփոխությունները, կախված կոնցենտրացիայից և մեզոմորֆ անցումներից, փոքր անկյունների տակ ցրված ռենտգենյան ճառագայթների գրանցման միջոցով: Հաստատվել է լամելյար «հարթ» փուլի իրականացում, պարզաբանվել են բնութագրական պարամետրերը և կառուցվածքային առանձնահատկոթ-

յունները: Փորձարարական եղանակով հետազոտվել է բարդ տեսքով այլումինե կոմպենսացիոն ֆիլտրերի ազդեցությունը երկրաբանական նմուշների ռենտգենյան միկրոտոմոգրաֆիայում ազդանշան-աղմուկ հարաբերության վրա: Ցույց է տրվել, որ այդպիսի ֆիլտրն ապահովել է օգտակար ազդանշանի առավելագույն լուծողունակություն ռենտգենյան կոորդինատագրայուն դետեկտորի ամբողջ դինամիկ տիրույթում: Մեր կողմից մշակված կոմպենսացիոն ֆիլտրը հնարավորություն է տվել վերջնական տոմոգրամներում հարթ այլումինե ֆիլտրերի համեմատ ազդանշան-աղմուկ հարաբերությունը մեծացնել առնվազն երկու անգամ (դեկ. ֆ.-մ.գ.թ. Վ. Քոչարյան):

Ուսումնասիրվել են դիէլեկտրիկ կամ հաղորդիչ գնդի շուրջը նրա հասարակածային հարթության մեջ հավասարաչափ պտտվող ռեյաստիվիստիկ էլեկտրոնի ճառագայթման անկյունային բաշխման առանձնահատկությունները: Տեսականորեն հետազոտվել է հարվածող ալիքի տարածումը մթնոլորտում և ցույց է տրվել, որ որոշակի պայմանների առկայության դեպքում այն կարող է ուղեկցվել 1-2ՄՀց հաճախություններով էլեկտրամագնիսական ալիքների առաքմամբ (դեկ. ֆ.-մ.գ.դ. Լ.Գրիգորյան):

Ուսումնասիրվել է դիէլեկտրական ալիքատարի շուրջը պտտվող լիցքավորված մասնիկի կողմից մակերևութային պոլարիտոնների ճառագայթումը: Ցույց է տրվել, որ տրված հարոնիկի վրա ճառագայթված մակերևութային պոլարիտոնների քվանտների թիվը կարող է էապես մեծ լինել ալիքատարի ներսում տարածվող համապատասխան ծավալային ալիքների քվանտների թվի համեմատ: Հետազոտվել է դիէլեկտրական գլանի շուրջ պտտվող լիցքավորված մասնիկի ճառագայթումը համապատասխան սեփական մոդերի վրա: Արտածվել է տվյալ հարմոնիկի համար ճառագայթման ինտենսիվության բանաձևը (դեկ. ֆ.-մ.գ.դ. Ա.Սահարյան):

Հետազոտվել է արևային ճառագայթման ազդեցության տակ տիեզերանավից դուրս ծնված էլեկտրոնների ճառագայթումը: Արդյունքները կարող են օգտագործվել վնասակար աղմուկի դեմ պայքարելու համար, այդ ճառագայթումները կարող են հանգեցնել սարքերի շարքից դուրս գալուն: Մյուս կողմից, այս արդյունքները կարող են օգտագործվել արևային ակտիվությունն ուսումնասիրելու, նոր սարքեր ստեղծելու նպատակով (դեկ. ֆ.-մ.գ.թ. Ա.Արամյան):

Կատարվել են հիմնարար հետազոտություններ ակուստապլազմայում փուլային անցումների վերաբերյալ արտաքին ազդակների առկայության դեպքում (այդ թվում՝ ոչ թերմոդինամիկ և տոպոլոգիական): Մշակվել են ակուստապլազմային մագնիսական դիողներ՝ նոր տիպի մինիմալիզացիաներ փոշենստեցման համար: Մշակվել և պատրաստվել է վակուումային սարքավորում փոշենստեցման և նոր նանոյութերի սինթեզման համար:

Առաջարկվել է փորձնականորեն ստացված գերհզոր էմիսիոն սպեկտրալ գծերի տեսական բացատրությունը (դեկ. ֆ.-մ.գ.թ. Ա. Աբրահամյան):

Մշակվել և պատրաստվել է փոփոխելի չափերով մոնադիսպերս մասնիկների ստացման (միկրոփաթիլների և բյուրեղական մասնիկների) լաբորատոր գործող սարք 10-100 մկմ տիրույթում կաթիլների և 2-25 մկմ պինդ մասնիկների համար: Իրականացվել են փորձարարական հետազոտություններ ստացված մասնիկներից պարբերական կառուցվածքներ ստեղծելու համար: Կատարվել են մասնիկների վրա լույսի ցրման (Լորենց-Միի) տեսության հիման վրա մասնիկների չափերը որոշող օպտիկական սարքի (սպեկտրոմետրի) մշակման հետազոտություններ (դեկ. ֆ.-մ.գ.թ. Գ. Հարությունյան):

Կատարվել են ամինաթթուների խառնուկային քանակությունների առկայությամբ, շերտավոր և փուլային սինխրոնիզմի ուղղությամբ լիթիում յոդատի միաբյուրեղների աճեցում և նրանց ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրություններ: Կատարվել են ամինաթթուների աղերի հիման վրա նոր բյուրեղների ստացման, բյուրեղների աճեցման,

տատանողական սպեկտրասկոպիկ և ոչ գծային օպտիկական հատկությունների հետազոտման աշխատանքներ (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա. Աթանեսյան):

Կատարվել են սիլիցիումի և ալյումինի բարձրաստիճան կարգավորված մատրիցաների հիմքով AIBIV խմբի քիմիական միացություններով ու մետաղական օքսիդներով հարստացված կոմպոզիցիոն, տարբեր հարաբերական խտությամբ սինթեզված նոր միջավայրերի ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրման և որոշման հետազոտություններ (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ. Նալբանդյան):

Կատարվել են գլխուղեղի տարբեր մասերում տեսողական տեղեկատվության վերլուծության և կոդավորման մեխանիզմների ուսումնասիրության հետազոտություններ: Կենդանային մակարդակում ուսումնասիրության օբյեկտ եղել են էքստրաստրիար ասոցիատիվ 21ա դաշտը, ենթակեղևային մակարդակում՝ պրետեկտալ շրջանը և դորզալ հիպպոկամպը (դեկ.՝ կ.գ.թ. Դ.Խաչվանքյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Մշակվել և պատրաստվել են նոր տիպի ակուստաօպտիկական էլեմենտներ կվարցի բաղադրյալ (մոնոլիտ) և միաբյուրեղական նմուշներով, համապատասխան ռեզոնատորներ, բոնիչներ և որոշ դետալներ միաժամանակ երկայնական և լայնական ակուստիկական ալիքներ գրգռելու համար, որոնք հնարավորություն են տալիս յուրովի կառավարել ռենտգենյան փնջերի բնութագրիչները: Կատարվել են սինքրոտրոնային և լաբորատոր աղբյուրների վրա այդպիսի էլեմենտներում դիֆրակցիոն երևույթների ուսումնասիրման գիտափորձեր: Ուսումնասիրվել է տարբեր կտրվածքով կվարցի միաբյուրեղներում արտաքին երկայնական և լայնական ակուստիկական ալիքների առկայության պայմաններում դեֆորմացիայի բաշխումը X, Y և Z առանցքներով:

Ուսումնասիրվել է ռենտգենյան ճառագայթների դիֆրակցիան պարաթելուրիտի բյուրեղում (TeO_2) ցածր հաճախականությամբ ակուստիկական ալիքների առկայության պայմաններում: Ցույց է տրվել, որ բյուրեղային ցանցի մոդուլյացիան հնարավորություն է տալիս ճշգրիտ սկանավորել կամ կարգավորել ռենտգենյան բազմալիքային փոխազդեցության տիրույթը:

SiO_2 և LiNbO_3 միաբյուրեղներից պատրաստվել են փորձարարական նմուշներ՝ X-կտրվածքի տարբեր հաստությամբ կլոր և ուղղանկյունաձև թիթեղներ: Ռենտգենյան ճառագայթման լաբորատոր աղբյուրների վրա ուսումնասիրվել են այդ նմուշներից անդրադարձած ռենտգենյան փնջի անկյունային և սպեկտրալ բաշխումները ջերմային գրադիենտի և ակուստիկական տատանումների առկայության պայմաններում: Տեսականորեն հետազոտվել է կվարցի միաբյուրեղում ինդուկցված արտաքին ազդակների (ջերմային գրադիենտի և ակուստիկական ալիքների) պարամետրերից կախված անդրադարձած ջերմային նեյտրոնների փնջի ֆոկուսացման, անկյունային և էներգետիկ լայնության վարքը (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյան):

Հետազոտվել է վերջավոր չափերի շերտավոր դիէլեկտրիկ պարունակող ալիքատարի առանցքով հավասարաչափ շարժվող լիցքավորված մասնիկների թանձրուկի ճառագայթումը: Ցույց է տրվել, որ խնդրի պարամետրերի որոշակի արժեքների դեպքում թանձրուկի ճառագայթումն ալիքատարի որոշակի մոդաների վրա կարող է զգալիորեն աճել (առավել ստույգ ինքնաուժեղանալ): Առաջարկվել է ակնառու մոդել, որը բացատրում է ուժեղացման մեխանիզմը և հնարավորություն է տալիս որոշել ինքնաուժեղացման գործակիցը: Հետազոտվել են դիէլեկտրիկ գնդի կենտրոնով անցնող լիցքավորված մասնիկների թանձրուկների շղթայի ճառագայթման առանձնահատկությունները: Հիմնավորվել է քվազիկոհերենտ, ինտենսիվ և մոնոքրոմատիկ ճառագայթման առաջացման հնարավորությունը խնդրի պա-

րամետրերի որոշակի արժեքների դեպքում: Դիտարկվել է դիէլեկտրական թափանցելիության բացասական իրական մասով դիէլեկտրական գլանի շուրջը պտտվող լիցքավորված մասնիկի սինքրոտրոնային ճառագայթումը: Ցույց է տրվել, որ խնդրի պարամետրերի որոշակի արժեքների դեպքում գլանի առկայությունը կարող է էապես մեծացնել ճառագայթման ինտենսիվությունը տվյալ հարմոնիկի վրա (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Լ.Գրիգորյան):

Հայտնաբերվել է տարբեր ամինաթթուներ պարունակող աղերի 9 տիպ: Հայտնաբերված աղերի ընդհանուր թիվը գերազանցել է 50-ը: Դրանցից 28-ն ունեն ոչ կենտրոնասիմետրիկ կառուցվածք և կարող են ցուցաբերել ոչ գծային օպտիկական հատկություններ, որոնցից 21-ն ունեն բևեռային սիմետրիա և, հետևաբար, պոտենցիալ պիրոէլեկտրիկներ են (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Պետրոսյան):

Հրապարակումներ

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

1. Հարթենյան Ջ.Գ., Թեմաների փոխհաղորդման մեթոդիկայի կիրառությունը 7-8 դասարանների ֆիզիկա առարկայի ուսուցման գործընթացում, Ե., «Աստղիկ» գրատուն, 2019, 171 էջ:

Հոդվածներ, գեկուցումներ

2. Արամյան Կ.Ս., Շփման ուժերի հետ կապված որոշ խնդիրներ, Ստ., «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N1, 2019, էջ 77-84:
3. Խաչատրյան Ա.Ժ., Աղաբեյան Վ.Ն., Հակոբյան Ա.Ս., Գազագեներատորային կայանների կիրառումը կարկտային երևույթների դեմ պայքարելու համար, Ե., «Հայկական բանակ», N3 (101), 2019, էջ 69-78:
4. Հարթենյան Ջ.Գ., Ուսուցման սկզբունքների դասավանդման կարևորությունը, Ե., «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ», հ.14, N1, 2019, էջ 185-190:
5. Սողոմոնյան Ա., Միջառարկայական կապի մասին մի խնդրի օրինակով, Ստ., «ԱրՊՀ Գիտական տեղեկագիր», N2, 2019, էջ 75-77:
6. Артеян Дж.Г., Коэффициент активной вовлеченности учащегося в учебный процесс, М., «Педагогический журнал», т. 9, N 4, 2019, с. 114-122.
7. Хачатрян А.Ж., Суренян Г.Г., Хоецян А.В., Агабекян В.Н., Акопян А.С., Мосоян Д.О., Исследование эффективности применения газогенераторных станций в качестве инструмента борьбы с градовым явлением, М., «Вестник науки и образования», N 3 (57), 2019, с. 6-14.
8. Саргсян А.Г., Джомардян Ц.М., Григорян С.М., Мирзоян В.К., Шагинян А.А., Рентгенографическое исследование лиотропного мезомorfизма системы Аэрозоль-ОТ (диоктилсульфосуцинат), Гюмри, «Учёные записки ШГУ», N 1, 2019, с. 43-53.
9. Чистяков С.Г., Филатов Н.А., Кочарян В.Р., Гоголев А.С., Рукавишников В.С., Рентгеновская микротомография с использованием компенсационных фильтров сложной формы, Ер., «Изв. НАН Армении, Физика», т. 54, N 4, 2019, с. 519-525.
10. Abrahamyan A., Chilingaryan R.Y, Construction of three-dimensional characteristics of acoustoplasma processes, «Armenian Journal of Physics», v. 12, N 2, 2019, pp. 156-162.
11. Abrahamyan A., Chilingaryan R., Control of CO2 laser power by acoustic fields, «Resource-Efficient Technologies», N 1, 2019, pp. 27-34.
12. Abrahamyan A., Mkrtchyan A., Chilingaryan R., Comparison of glow, arc, and magnetron direct current discharges, «Resource-Efficient Technologies», N 2, 2019, pp. 29-35.
13. Aleksanyan Al., Khachatrian A., Parsamyan A., Sghomonyan A., The process of formation and of a quasi-bound state, «Artsakh state university proceedings», N 1, 2019, pp. 63-76.
14. Apreyan R., Atanesyan A., Petrosyan A., Influence of molecular and crystal structure on nonlinear optical properties of hydrated and anhydrous potassium L-2-nitrimino-1,3-diazepane-4-carboxylate crystals, «Resource-Efficient Technologies», N 1, 2019, pp. 1-7.
15. Aramyan A., Aramyan R., Hovhannesian G., Plasma effect on pulse parameters of sound wave, «IEEE Transactions on Plasma Science», v. 47, N 1, pp. 5222-5225.
16. Balakin A., Ilin A., Kotanjyan A., Grigoryan L., Relativistic neutron stars: rheological type extensions of the equations of state, «Symmetry», v. 11, N 2, 2019, pp. 189-202.

17. Drmeyeran H., Use of dependence of the edge Effect and X-Ray focusing for the interpretation of X-Ray diffraction patterns, "Journal of Surface Investigation: X-ray, Synchrotron and Neutron Techniques", v. 13, N 3, 2019, pp. 508–510.
18. Eliovich Ya., Targonskii A., Darinskii A., Prosekov P., Pisarevsky Yu., Blagov A., Akkuratov V., Lomonov V., Kocharyan V., Mkrtchyan A., Kovalchuk M., Multiple-wave interaction of X-Rays in a praterlurite crystal under excitation of ultrasonic vibrations, "Journal of Surface Investigation: X-ray, Synchrotron and Neutron Techniques", v. 13, N 4, 2019, pp. 570-577. DOI: 10.1134/S1027451019040050.
19. Ghazaryan L., Aslanian H., Khachatrian T., Harutiunian-Kozak B., Meliksetyan A., Khachvankian D., Momjian M., Dynamic changes in receptive field sizes of cat's dorsal hippocampal visually driven neurons, "NAS RA Electronic Journal of Natural Sciences", v. 32, 2019, pp. 17-21.
20. Giester G., Ghazaryan V., Fleck M., Tonoyan G., Petrosyan A., L-histidine iodides, "J. Mol. Struct.", v. 1182, 2019, pp. 317-326.
21. Hovhannisyan M., Andreasyan R., Mahtesyan A., Paronyan G., Abrahamyan H., Sargsyan A., Aghadjanyan H., 1. The study of extended extra galactic radio sources: 2. The study of quasar 3c219 as a nearest extended radio source, "Physical Science & Biophysics Journal", v. 3, N 4, 2019, 000137.
22. Hovhannisyan M., Andreasyan R., Paronyan G., Abrahamyan H., Investigations of the extended extragalactic radio sources: The quasars 1502+10 and 0923+39 and their environment, "ComBAO", v. 66, N 2, 2019, pp. 188-193.
23. Khachatrian T., Sargisyan V., Meliksetian A., Harutiunian-Kozak B., Grigorian G., Modulations of receptive field dimensions of pretectal neurons to visual stimuli moving in different orientations, "NAS RA Electronic Journal of Natural Sciences", v. 33, 2019, pp. 24-30.
24. Kotanjyan A., Mkrtchyan A., Saharian A., Kotanjyan V., Generation of surface polaritons in dielectric cylindrical waveguides, "Physical Review Accelerators and Beams", v. 22, N 4, 2019, 040701.
25. Mkrtchyan A., Grigoryan L., Khachatrian H., Bilén S., Parrot M., Sargsyan A., Aramyan A., Shock wave generated megahertz radiation of atmosphere, "IEEE Transactions on Plasma Science", v. 47, N 1, 2019, pp. 118-120.
26. Mkrtchyan A., Aramyan A., Aramyan R., Hovhannesyan G., Harutyunyan G., Discharge quenching by acoustic waves, "Armenian Journal of Physics", v. 12, N 4, 2019, pp. 293-298.
27. Mkrtchyan A., Blagov A., Kocharyan V., Kulikov A., Movsisyan A., Muradyan T., Targonsky A., Eliovich Ya., Darinski A., Pisarevski Yu., Kovalchuk M., Distribution of deformations in the oscillating X-Ray acoustic element based on the X-Cut quartz crystal, "Journal of Contemporary Physics", N 2, 2019, pp. 210–218.
28. Mkrtchyan A., Abrahamyan A., Chilingaryan R., Mikayelyan A., Sahakyan Q., The use of incorrectly posed inverse problems and catastrophe theory in acoustoplasma studies, "Resource-Efficient Technologies", N1, 2019, pp. 20-26.
29. Petrosyan A., Srinivasan B., In fact, L-threonine, "Chinese J. Phys.", v. 61, 2019, pp. 235-237.
30. Petrosyan A., Srinivasan B., "Urea oxalic acid" is not parabanic acid. "Chinese J. Phys.", v.61, 2019, pp.272-273.
31. Petrosyan A., Once again on the existence of *L*-threoninium acetate, "J. Mol. Struct.", v.1176, 2019, pp. 671-672.
32. Petrosyan A., Srinivasan B., Comments on "Co-60 γ -irradiation effect on linear, nonlinear optical and electrical properties of a semiorganic *L*-alanine barium nitrate (LABN) crystal", "Materials Research Innovations", v. 23, 2019, p. 207.
33. Saharian A., Kotanjyan A., Kotanjyan V., Synchrotron radiation from a charge on eigenmodes of a dielectric cylinder, "Journal of Contemporary Physics", v. 54, N 2, 2019, pp. 111-116.
34. Srinivasan B., Parsekar N., Apreyan R., Petrosyan A., On the second harmonic generation activity in centrosymmetric crystals, "Molecular Crystals and Liquid Crystals", v. 680, 2019, pp. 75-84.
35. Sukiasyan R., Suponitsky K., Atanesyan A., Danghyan A., Hovhannisyan A., Petrosyan A., Crystal structures and vibrational spectra of L-argininium(2+) bis(tetrafluoroborate) and L-argininium(2+) bis(perchlorate), "Spectrochimica Acta Part A: Molecular and Biomolecular Spectroscopy", available online 13 November 2019, 117782 (<https://doi.org/10.1016/j.saa.2019.117782>).
36. Tokhmakhchian G., Momjian M., Harutiunian-Kozak B., Khachatrian T., Orientation sensitive properties and receptive field spatial alterations of visually sensitive neurons in area 21a of the cat cortex, "NAS RA Electronic Journal of Natural Sciences", v. 32, 2019, pp. 27-32.
37. Vardanyan J., Hovhannisyan M., Agajanyan H., Nersisyan M., Evolution corundum based detector in UV and VUV spectral region, "Physical Science & Biophysics Journal", v. 3, N 3, 2019, 000127.

38. Vardanyan J., Hovhannisyan M., Mkhitarian S., Agajanyan H., Nersisyan M., Crystal beam technology with special resolution, "Physical Science & Biophysics Journal", v. 3, N 4, 2019, 000136, (<https://medwinpublishers.com/PSBJ/PSBJ16000136.pdf>).
39. Vardanyan J., Agajanyan G., Nersisyan M., Corundum detector converter, "Armenian Journal of Physics", 2019, v. 12, N 2, pp. 213-217, <http://ajp.asj-oa.am/view/year/2019.html>.
Հողվածները հրատարակվել են "VI International Conference on Electron, Positron, Neutron and X-Ray Scattering under External Influences", զեկուցումների ժողովածուում (1-ին մաս), Ե., ՖԿՊԻ, 2019, 260 էջ:
40. Abrahamyan A., Chilingaryan R., Sahakyan Q., Bilateral measurements in electrical circuits with gas-discharge devices, pp. 75-83.
41. Abrahamyan A., Mkrtchyan A., Chilingaryan R., Hakobyan A., Minimagnetrons and their supply, pp. 64-70.
42. Abrahamyan A., Mkrtchyan A., Chilingaryan R., Hovhannisyan H., Mkhitarian S., Petrosyan S., New magnetron equipment, pp. 71-74.
43. Abrahamyan A., Hakobyan K., Sahakyan Q., The interaction of the discharge modules, pp. 157-163.
44. Abrahamyan A., Cavity magnetron spectra, pp. 151-156.
45. Aleksanyan Al., On role of energy transmission in mechanisms of nonradiative energy relaxation in massiv of quantum dots, pp. 211-213.
46. Aramyan A., The study of MF electromagnetic waves radiation caused by the effects of solar radiation on spacecraft, pp. 147-150.
47. Bezhanova L., Atanesyan A., Dynamic processes during phase transitions and structural transformations in oriented liquid crystal systems, pp. 84-91.
48. Drmeyer H., Margaryan H., X-ray diffraction method of investigation of imperfections in crystals based on interpretation of sectional topogram, pp. 193-199.
49. Grigoryan L., Saharian A., Mkrtchyan A., Khachatryan H., Grigoryan M., Petrosyan T., Harutyunyan H., Angular distribution of intensive radiation from a charge rotating around a conductive ball, pp. 49-55.
50. Harutyunyan S., Khachikyan L., Harutyunyan G., Generation of monodisperse particles, pp. 164-169.
51. Khachatryan A., Panosyan Zh., Khachatryan Zh., A wave packet evolution in the field of an one-dimensional potential, pp. 206-210.
52. Kocharyan V., Movsisyan A., Muradyan T., Mkrtchyan A., Investigation of the diffraction phenomena of thermal neutrons in single crystals under the external temperature gradient, pp. 16-20.
53. Kocharyan V., Movsisyan A., Shahverdyan A., Gogolev A., Mkrtchyan A., 2nd focusing of reflected x-rays from quartz single crystal in the presence of external temperature gradient, pp. 21-27.
54. Mkrtchyan A., Mkrtchyan A., Nalbandyan V., Hakopyan A., Babayan I., Papazyan A., Shadyan E., Nalbandyan A., Detector of charged particles based on synthesized new composite mediums (Si)_I (Csj)_{II} (Ag)_{III}, pp. 103-108.
55. Mkrtchyan A., Nalbandyan V., Hakobyan A., Hovhannisyan H., Avetisyan K., Harutyunyan V., Papazyan A., Shadyan E., Research of acoustic responses of biological objects for detection of malignancies, pp. 223-228.
56. Mkrtchyan A., Mkrtchyan A., Atanesyan A., Harutyunyan G., Mkhitarian S., Kotanjyan Kh., Mirakyan S., Agabekyan V., Nalbandyan V., Muradyan H., Mkrtchyan E., Baghdasaryan E., Tokhmaxyan G., Petrosyan S., Papazyan A., Shadyan E., Researches of acoustic properties of some lakes and reservoirs of the RA, pp. 92-102.
57. Mkrtchyan A., Mkrtchyan A., Nalbandyan V., Mkhitarian S., Ayvazyan G., Papazyan A., Shadyan E., Detector of thermal neutrons based on synthesized new composite mediums (Si)_I(LiF)_{II}(Csj)_{III}(Ag)_{IV}, pp. 109-113.
58. Mkrtchyan A., Abrahamyan A., Acoustoplasma state of matter, pp. 56-63.
59. Mkrtchyan A., Lalayan A., Eritsyan H., Margaryan A., Diffraction on an aperture located between media with different refractive indices, pp. 130-137.
60. Mkrtchyan A., Parazian V., Saharian A., Transition radiation of electron bunches on acoustic superlattices, pp. 214-222.
61. Mkrtchyan A., Aleksandrov P., Grigoryan L., Mkrtchyan A., Khachatryan H., Kovalchuk M., Features of radiation generated by bunches of charged particles passing through the centre of a ball, pp. 40-48.
62. Mkrtchyan A., Saharian A., Grigoryan L., Khachatryan H., Kotanjyan A., Features of synchrotron radiation in presence of a medium with negative permittivity, pp. 248-256.
63. Muradyan T., Bagdasaryan E., Petrosyan S., Samsonyan H., Kocharyan V., Parallel x-ray beams with controllable quantity and distances under the external acoustic fields in quartz crystals, pp. 188-192.
64. Saharian A., Mkrtchyan A., Kotanjyan A., Kotanjyan V., Radiation of surface polaritons from a charge rotating around a dielectric cylinder, pp. 229-237.

65. Saharian A., Grigoryan A., Parazian V., Fermionic condensate in two-dimensional rings, pp. 238-247.
66. Sarian V., Mkrtchyan A., Ermakov V., Nazarenko A., Lyubushin A., Meshcheryakov R., Hybrid monitoring systems for global processes. The results of the experiment at the first point of the hybrid system, pp. 28-39.
67. Sargsyan A., Jomardyan S., Grigoryan S., Ghukasyan M., Shahinyan A., X-ray study of the lyotropic mesomorphism of sodium dioctyl sulfosuccinate–water system, pp. 170-177.
68. Sargsyan A., Jomardyan S., Grigoryan S., Ghukasyan M., Shahinyan A., The study of lyotropic mesomorphism of a system of sodium pentadecyl sulfonate–polyethylene glycol –water under the influence of temperature, pp. 178-187.
69. Yeghiazaryan A., Atanesyan A., Bragg's x-ray microscope and x-ray holography development perspectives, pp. 138-140.

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

ՖԿՊԻ-ն և Ա.Մկրտչյանը պարգևատրվել են Պրոխորովի անվան մեդալով, ՖԿՊԻ-ն ստացել է “Terra Incognita Award 2019” միջազգային մրցանակ, Ա.Պետրոսյանը և Գ.Տոնոյանը՝ ԱՐՓԱ հիմնարկի նորարարական մրցույթի երկրորդ մրցանակ:

«ClimateLaunchpad» միջազգային գիտաժողովի և «Grand Final»-ի շրջանակներում կազմակերպված նորամուծությունների Carbon Tech միջազգային մրցանակաբաշխության ենթաբաժնում ՖԿՊԻ-ի ներկայացրած ծրագիրը ներառվել է լավագույն 6 թիմերի/ծրագրերի շարքում:

ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Զաքարյան
 Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Է.Ասմարյան
 Գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Եսայան
 Էլեկտրոնային փոստ՝ office@irphe.am
 Կայքէջ՝ www.irphe.sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Շարունակվել են երկչափ դիէլեկտրիկ մետանյութերի էլեկտրադինամիկական հատկությունների հետազոտությունները: Հաստատվել է, որ տվյալ հաճախականային տիրույթի արգելված գոտու պայմանը բավարարող պարբերականության դեպքում կարելի է իրականացնել բևեռացման հարթության պտտիչ, երբ թիթեղի հաստությունը փոքր է ավիքի երկարությունից: Այդ մետանյութերի հիման վրա մշակվել են մեկգոնային ֆրենելյան ոսպնյակներ, որոնցում համատեղվում են ինչպես ինտենսիվության ուժեղացումը ֆոկալ տիրույթում, այնպես էլ բևեռացման կառավարումը (դեկ.՝ թղթ. անդ. Ա.Հախումյան):

Հետազոտվել են ռադիոհաճախականային պլազմայի էլեկտրական իմպեդանսի բնութագրերը: Ուսումնասիրվել են ունակային կապով «սառը» ռադիոհաճախականային պլազմայի օպտիկական տեսանելի տիրույթի սպեկտրալ առանձնահատկությունները և նրանց փոխկապակցվածությունը պլազմայի սնման ռադիոհաճախականային հզորության հետ, ինչպես նաև պլազմայի իմպեդանսի կախվածությունը սնող գեներատորի հզորությունից և խցիկի գազի ճնշումից: Հայտնաբերվել է պլազմայի իմպեդանսի հզորությունից կախվածության հիստերեզիսային բնույթը: Ուսումնասիրվել են պլազմայում պարպման առաջացման պայմանները և առաջարկվել է որպես պարպման հայտնաբերման չափանիշ օգտագործել պլազմայի էլեկտրական իմպեդանսը:

Իրականացվել է պլազմայի և սնոդ ռադիոհաճախականային գեներատորի ադապտիվ համաձայնեցում, հետազոտվել է համաձայնեցման պրոցեսի կայունությունը: Ցույց է տրվել, որ պլազմայի իմպեդանսի և սնոդ գեներատորի համաձայնեցումը նպատակահարմար է իրականացնել ոչ թե մեկ փուլում, այլ աստիճանական մոտեցումների եղանակով, ինչի շնորհիվ նվազում է պլազմայում պարպումների առաջացման հավանականությունը (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան):

Դիտարկվել է երկչափ էլեկտրոնային գազի Հոլլի դինամիկ հաղորդականությունն ուղղահայաց մագնիսական դաշտում և խառնուրդների առկայությամբ: Կանխատեսվել է պլատոյանման վարք ինչպես ցածր, այնպես էլ բարձր հաճախությունների դեպքում: Տեսականորեն հետազոտվել է TE ալիքների բևեռացման պտույտը միաչափ նոսր ֆոտոնային բյուրեղներում: Բացահայտվել է բևեռացման պտույտի ռեզոնանսային բնույթը: Դիտարկվել է լույսի տարածումը նոսր ֆոտոնային բյուրեղներում: Ստացվել է անալիտիկ արտահայտություն անցման գործակցի համար: Կանխատեսվել է լույսի ուղղումը որոշակի պայմանների առկայության դեպքում: Դիտարկվել է լույսի տարածումն ընդլայնված համաչափությամբ անհամասեռ միջավայրերում: Լույսի հետագծի հավասարումն արտահայտվել է շարժման հաստատուններով: Կանխատեսվել է սպինային Հոլլի երևույթն այդպիսի միջավայրերում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ժ.Գևորգյան):

Առաջարկվել է պլազմայում հոսքային անկայունություններն ուսումնասիրելու նոր մեթոդ, որը տալիս է շատ ավելի ամբողջական և մանրամասն տեղեկատվություն անկայունությունների բոլոր հատկությունների մասին, քան սովորաբար օգտագործվող մեթոդները: Դիտարկումը հիմնված է ամենաընդհանուր նախնական ենթադրությունների վրա (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Է.Ռոստոմյան):

Ցրման քվանտամեխանիկական և ճառագայթման դասական տեսության շրջանակներում կատարվել են անալիտիկ և թվային հետազոտություններ պլազմայում ինտենսիվ լազերային իմպուլսների միջոցով լիցքավորված մասնիկների արագացման և դրանց դինամիկայի և հետագա կոշտ հաճախությունների ճառագայթման վերաբերյալ: Մասնավորապես գերկարճ լազերային իմպուլսների միջոցով պլազմայից մեծ խտության լիցքավորված մասնիկների ուղղորդված փնջերի ստացման հնարավորությունների նպատակով օգտագործվել է Ֆրիդելի գումարման կանոնը պլազմայում խառնուրդային իոնների պարունակության պայմաններում: Անալիտիկ և թվային հետազոտությունների միջոցով ուսումնասիրվել է պլազմայում լիցքային կենտրոնների վրա մասնիկների հարկադրական պոտենցիալային ցրման դինամիկայի վարքն ինտենսիվ կոհերենտ էլեկտրամագնիսական ճառագայթման դաշտում, ինչպես նաև ուժեղ էլեկտրամագնիսական ճառագայթման դաշտում հարկադրական արգելակային կլանման ու ճառագայթման էֆեկտիվ կտրվածքները, որոնցով պայմանավորված են լիցքավորված մասնիկների արդյունաբար արագացումը կամ հակադարձ երևույթը՝ փնջի հարկադրական ճառագայթումը: Ցույց է տրվել, որ լաբորատոր պլազմայի միջին խտությունների և մասնիկների/էլեկտրոնների փնջի ու լազերային դաշտի պարամետրերի իրական արժեքների դեպքում ճառագայթումն ընկած է կեՎ-անոց ռենտգենյան հաճախությունների տիրույթում: Դիտարկվել է Ֆրիդելի գումարման կանոնը Բորնի մոտավորության երկրորդ կարգում ինչպես եռաչափ, այնպես էլ երկչափ քվանտային էլեկտրոնային գազերի դեպքում: Ուսումնասիրվել են հարկադրական արգելակային կլանման ու ճառագայթման էֆեկտիվ կտրվածքները ստատիկ և դինամիկ խառնուրդային իոնների պարունակության դեպքում (ղեկ.՝ թղթ. անդ. Հ.Մաթևոսյան):

Տեսականորեն ուսումնասիրվել է մակերևութային վիճակների ազդեցությունը շառավղային p-ռ անցումով կիսահաղորդչային միայնակ նանոլարի հիմքով արևային տարրերի փոխակերպման արդյունավետության վրա: Ցույց է տրվել, որ սիլիցիումային լարերում մակերևութային ռեկոմբինացիայի ավելի քան 10^5 սմ/վ արագությունների դեպքում արևա-

յին տարրերի պարապ ընթացքի լարումը AM1.5 ստանդարտ լուսավորման պայմաններում կարող է նվազել ավելի քան 50%-ով: Այդ պատճառով լարի մակերևույթի պասիվացումը դառնում է շատ կարևոր նման արևային տարրի փորձնական իրականացման ժամանակ (դեկ. թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Հետազոտվել է իդեալական մետաղ-մեկուսիչ-նանոլար կառուցվածքի վոլտ-ֆարադային բնութագիրը: Փոքր շառավիղների դեպքում նկատվել է վոլտ-ֆարադային բնութագրի զգալի շեղում մետաղ-մեկուսիչ-կիսահաղորդիչ ստանդարտ կառուցվածքի դեպքից. արտաքին լարման աճի հետ մեկտեղ կառուցվածքի ունակությունը ձգտել է ոչ թե մեկուսիչի շերտի հաստատուն ունակությանը, այլ զրոյի (դեկ. Ֆ.-մ.գ.թ. Ս.Ներսիսյան):

Բարակ թաղանթային CZTS և CIS արեգակնային փոխակերպիչների արդյունավետության բարձրացման և նրանց մեջ առկա շերտերի արատների նվազեցման նպատակով կատարվել են ուսումնասիրություններ տեսաձրող էլեկտրոնային մանրադիտակի (SEM) օգնությամբ: Միլիցումային տակդիրների վրա մագնետրոնային փոշեցրմամբ ապակեբյուրեղական տակդիրների վրա նստեցվել են Mo և ZnO միաշերտ և Mo/Cu/Zn/Sn և Mo/Cu/In բազմաշերտ թաղանթներ, որոնց ուսումնասիրման հետևանքով բարելավվել են մագնետրոնային փոշեցրման տեխնոլոգիական պրոցեսները: Մշակվել են քիմիական եղանակով CdS շերտերի նստեցման տեխնոլոգիական ռեժիմները և հետազոտվել են նրանց օպտիկական հատկությունները (կլանման և անդրադարձման սպեկտրները) (դեկ. Ֆ.-մ.գ.թ. Ա.Մուսաեյան):

Փորձնականորեն որոշվել են բյուրեղային սիլիցիումի վրա լազերախմպուլսային եղանակով ստացված ամորֆ ածխածնի նանոչափային թաղանթների բեկման ցուցիչը ($1.92 < n < 2.19$) և հաստությունը՝ հիմնվելով լույսի տեսանելի տիրույթում անդրադարձման սպեկտրերի վրա: Ստացված թաղանթները կարող են կիրառվել որպես հակաանդրադարձնող շերտեր Si և GaAs կիսահաղորդչային արևային տարրերի համար:

Մշակվել է վակուումային գազատրանսպորտային ռեակցիայի միջոցով պերովսկիտային մետաղաօրգանական $\text{CH}_3\text{NH}_3\text{PbCl}_{3-x}\text{I}_x$ թաղանթների ստացման տեխնոլոգիա: Որպես ելման նյութեր օգտագործվել են օրգանական մեթիլամոնիումիքլորիդը ($\text{CH}_3\text{NH}_3\text{PbCl}$) և անօրգանական կապարի յոդիդը (PbI_2): Կատարվել են սինթեզված թաղանթների օպտիկական, ռենտգենյան կառուցվածքային և մորֆոլոգիական հետազոտություններ: Գտնվել են այն տեխնոլոգիական պայմանները, որոնց դեպքում $\text{CH}_3\text{NH}_3\text{PbCl}_{3-x}\text{I}_x$ թաղանթները ստացվում են միաֆազ, առանց հետագա ջերմային թրծման: Օպտիկական սպեկտրերից որոշվել են այդ թաղանթների կլանման գործակիցը, օպտիկական կլանման եզրը, բեկման ցուցիչը և հաստությունը:

Լազերային-խմպուլսային փոշեցրման եղանակով ստեղծվել են InSb-Sb Շոտտկի արգելքային դիոդներ, որոնք ցուցաբերել են մեծ ֆոտոզգայնություն 3-5 մկմ տիրույթում: Համեմատելով տեսության հետ՝ գնահատվել են նման դիոդների բոլոր պարամետրերը, այդ թվում՝ մակերևութային վիճակների խտությունը և արագագործությունը: Ցույց է տրվել նման ֆոտոդիոդների հեռանկարայնությունը կոորդինատազգայուն սարքերում կիրառելու համար:

p-InSb-n-CdTe հետերոանցումային ֆոտոդիոդների հիման վրա ստեղծվել է գազային տվիչի մակետ, որը հնարավորություն է տալիս գրանցել մթնոլորտում առկա ածխաթթու գազի առկայությունը մինչև 100 ppm կոնցենտրացիաների դեպքում (դեկ. Ֆ.-մ.գ.թ. Կ.Ավջյան):

Տարբեր տակդիրների վրա (ապակի, սապֆիր, Si) լազերախմպուլսային փոշենստեցման մեթոդով MoS_2 թիրախից տարբեր տեխնոլոգիական ռեժիմներում նստեցվել են մեկ կամ մի քանի մենաշերտերից բաղկացած և տարբեր հաստության (3նմ-ից 60 նմ) MoS_2 երկչափ գերբարակ թաղանթներ: Գտնվել է թաղանթի հաստության կախումը լազերային իմպուլս-

ների թվից: Կատարված ռենտգենակառուցվածքային, ատոմաուժային միկրոսկոպային և կոմբինացիոն (Ռամանյան) ցրման սպեկտրային ուսումնասիրությունները հնարավորություն են տվել գտնել MoS_2 երկչափ նյութի ստացման տեխնոլոգիական ռեժիմները: Էլեկտրական չափումների համար ստեղծվել են օհմական կոնտակտներ և ուսումնասիրվել է դրանց հատկությունների կախումը մետաղի տեսակից և ջերմաստիճանից:

Օպտիմալ տեսքի ընդունիչ մակերեսով երկկոորդինատային ֆոտոընդունիչի հիման վրա ստեղծվել է ինֆրակարմիր ճառագայթման աղբյուրի տեղաշարժին հետևող օպտիկամեխանիկական համակարգ և ավտոմատացվել է տվյալների մշակումը: Ստեղծվել է ինֆրակարմիր ֆոտոընդունիչների գծային շղթա՝ բաղկացած 6 ընդունիչից:

Կատարվել են կերամիկական նյութերի ստացման համար լաբորատորիայի ենթակառուցվածքի ընդլայնման աշխատանքներ: Մոդեռնիզացվել է վառարանը, որը թույլ է տվել թրծել նմուշները մինչև 1550°C ջերմաստիճանում: Մշակվել են նյութի ստացման տեխնոլոգիական ռեժիմները: Որպես էլքային բաղադրիչներ օգտագործվել են Nb_2O_5 , Al_2O_3 , TiO_2 նյութերը: Մամլիչի օգնությամբ ստացված 300-700 ՄՊա ճնշման պայմաններում ստացվել են 10 մմ, 16 մմ, 20 մմ տրամագծով, 1-2 մմ հաստությամբ կերամիկական նմուշներ: Չափվել է ստացված կառուցվածքի ունակության կախվածությունը սինթեզման ժամանակ օգտագործված ճնշման մեծությունից, ջերմաստիճանից ($30-170^\circ \text{C}$) և հաճախությունից (մինչև 1 ԳՀց): Ստացվել են նմուշներ, որոնց դիէլեկտրիկական թափանցելիությունը գերազանցում է 10^3 արժեքը (դեկ.՝ թղթ.անդ. Ս.Պետրոսյան):

Ուսումնասիրվել է անանցումային իոնազգայուն դաշտային տրանզիստորների (ԻՈՂՏ) աշխատանքը որպես կենսաքիմիական տվիչ: Կառուցվել է երկփականային և նանոլարային անանցումային ԻՈՂՏ-ի pH զգայնության անալիտիկ մոդել, որը մեծ ճշգրտությամբ թույլ է տալիս հաշվարկել տվիչի զգայնությունը և վոլտ-ամպերային բնութագրերը: Կատարվել է անալիտիկ և թվային հաշվարկների համեմատում փորձարարական աշխատանքների արդյունքների հետ (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Եսայան):

Հիմնվելով վոլտ-ամպերային բնութագրի ուղիղ ճյուղի վերլուծության վրա՝ փորձնականորեն հաստատվել է լազերային-իմպուլսային մեթոդով ստացված p-InSb-n-CdTe հետերաանցումում լիցքի տեղափոխման երկու մեխանիզմի առկայությունը՝ պայմանավորված հետերասահմանի մոտ ինվերսիոն շերտի առաջացմամբ: Համեմատաբար փոքր ($0,03 \text{ V} < U < 0,15 \text{ V}$) արտաքին շեղումների դեպքում հոսանքը բավարար նկարագրվում է $I \sim \exp(qU/kT)$ առնչությամբ $\eta=1$ իդեալականության գործակցով: $0,18 \text{ V}$ -ից բարձր լարումների դեպքում, վոլտամպերային բնութագիրը ենթարկվում է $I \sim U^{3/2}$ օրենքին՝ աստիճանաբար անցնելով գծային հարթության (կտրման լարումը՝ $0,47 \text{ V}$): Առաջարկվել է հոսանքի անցման նոր մեխանիզմ, որը հաշվի է առնում հետերոանցումում գոտիների ծովածության առանձնահատկությունները և բաժանման սահմանի մոտ ինվերսիոն շերտից նաև ոչ հիմնական լիցքակիրների ինժեկցիան դեպի p-InSb ծավալային տիրույթներ: Կառուցվել է երկույթի տեսությունը և այն համեմատվել է փորձի հետ:

Հետազոտվել են հոմոէպիտաքսային $\beta\text{-Ga}_2\text{O}_3$ թաղանթների բյուրեղային ցանցում առաջացող ոչ կոհերենտ (non-coherent) կրկնակային սահմանաշերտերի էլեկտրաֆիզիկական հատկությունները: Ուսումնասիրվել է կրկնակային կառուցվածքի էական ազդեցությունը լեգիրման արդյունավետության վրա: Փորձնական տվյալների օգնությամբ հաշվարկվել է սահմանաշերտերում տեղայնացված էլեկտրոնային թակարդների բնութագրական կոնցենտրացիան և գնահատվել է կրկնակային դիսլոկացիաների լիցքավորված վիճակը Sn-ով լեգիրված ($n \approx 10^{18} \text{ սմ}^{-3}$) թաղանթներում: Ստացված արդյունքների հիման վրա նկարագրվել է կրկնակների ուրույն դերն էլեկտրոնների շարժունության կոլապսի երևույթում (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Լ.Հովակիմյան):

Մշակվել է միկրոալիքային շերտավոր սենսոր օպտիմիզացված կրկնակի քառակուսային պրոֆիլով: Լազերային աբլյացիայի և միկրոալիքային էլեկտրամագնիսական փոխազդեցության միջոցով իրական ժամանակում կատարվել են ջրային լուծույթներում ստացված Ag-ի նանոմասնիկների խտության չափումներ մոտակա դաշտերում: S11 սենսորի միկրոալիքային անդրադարձման գործակիցը ռեզոնանսային հաճախության վրա փոփոխվել է ջրային լուծույթներում՝ կախված Ag խտությունից: Աշխատանքային 2 ԳՀ հաճախության վրա հնարավոր է չափել Ag-ի նանոմասնիկների խտությունները 0-50 մկգ/լ սահմաններում: Մինիմալ գրանցված ազդանշանի և մինիմալ խտության դեպքում համապատասխանաբար գրանցվել են 0,03 գբ(մկգ/լ) և 1մկգ/լ: Այդպիսի սիստեմների էլեկտրամագնիսական անդրադարձը բացատրվում է ջրային լուծույթներում Ag լազերային աբլյացիայի ժամանակ ջրի մոլեկուլների կլաստերային կառուցվածքի փոփոխությամբ: Պարզ կառուցվածքի և ցածր ինքնարժեքի շնորհիվ այդպիսի սիստեմները հնարավորություն են տալիս մշակել սենսորներ հեղուկ միջավայրերում ոչ ինվազիվ մեթոդով մետաղների խտությունները չափելու համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ռ.Խաչատրյան):

Մշակվել է բժշկական սարք՝ նախատեսված մարդու կենսահյուսվածքներում ախտորոշման հետազոտությունների համար, որը հնարավորություն է տալիս հետազոտել ջերմաստիճանից կախված մարդու կենսադիմադրությունը մաշկի տարբեր կետերում: Նախատեսվել է նաև ծրագրային ապահովում. համակարգչի միջոցով կատարվում է ազդանշանի թվային մշակում, պահպանվում են բժշկական տվյալները, ինչն էլ ապահովում է երկարաժամկետ հետազոտությունների շարք յուրաքանչյուր այցելուի համար:

Ստացվել և ուսումնասիրվել են ջերմային ազդեցությունների միջոցով մարդու մաշկի մեջ ձևավորված կենսահոսանքների և ազդանշանների հաճախակային սպեկտրները: Հետազոտվել է ազդանշանների մոդուլյացիաների ավտոմատ ճանաչման խնդիրը, տրվել է խնդրի լուծումն անալոգային մոդուլյացիաների համար արհեստական նեյրոնային ցանցի միջոցով (ղեկ.՝ ալ. Ա.Ղուլյան):

Առաջարկվել է մագնիսական հեղուկի ֆերոհիդրոդինամիկական շարժման էներգիան էլեկտրականի փոխակերպելու նոր մեթոդ (ղեկ.՝ Խ.Մանասեյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Փորձական եղանակով որոշվել են միկրոնի չափի կիսաբյուրեղային $\text{CH}_3\text{NH}_3\text{PbI}_{3-x}\text{Cl}_x$ թաղանթների օպտիկական պարամետրերն անցման և անդրադարձման օսցիլացիոն սպեկտրների միջոցով (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ժ.Գևորգյան):

Հրապարակումներ

Հոդվածներ, գեկուցումներ

1. Եզակյան Ն.Դ., Կենսադիմադրության սպեկտրազննումը ջերմային և էլեկտրական ազդեցությունների ժամանակ՝ մշակված ախտորոշիչ սարքի միջոցով, Ե., ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ տեղեկագիր, N 72/3, 2019, էջ 382-391:
2. Ղուլյան Ա.Գ., Սևոյան Օ.Ժ., Թանթուշյան Ա.Մ, Անալոգային մոդուլյացիաների ավտոմատացված ճանաչման խնդրի լուծումը արհեստական նեյրոնային ցանցի միջոցով, Ե., ՀԱՊՀ, «Լրաբեր», մաս 1, 2019, 225-231 էջ:
3. Մարտիրոսյան Ռ.Մ., Ղուլյան Ա.Գ., Եզակյան Ն.Դ., Մկրտչյան Ն.Ս., Համակցված ֆիզիկական ազդեցություններով ախտորոշիչ բժշկական սարք, Ե., ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ տեղեկագիր, N 72/1, 2019, էջ 86-92:
4. Абрамян Т., Хачатрян Р., Амбарян Д., Оганесян Б., Минасян Б., Одабашян Л., Бабаджанян А., Исследование растворов наночастиц Ag в воде с помощью микроволнового полоскового сенсора, Ер., “Изв. НАН Армении, Физика”, т. 54, N 2, 2019, с. 263-271.

5. Пашаян С.Т., Авджян К.Е., Анищик В.М., Импульсное лазерное осаждение наноразмерных пленок из мишени CuO: морфология и оптические свойства, Мат. 13-й междунар. конф. "Взаимодействие излучений с твердым телом", Минск, 2019, с. 477-480.
6. Петросян С.Г., Матевосян Л.А., Авджян К.Э., Нерсисян С.Р., Механизм токопереноса в гетеропереходе p-InSb-n-CdTe, Ер., "Изв. НАН РА. Физика", т. 54, N 2, 2019, с. 198-205.
7. Петросян С., Маргарян А., Матевосян Л., Авджян К., Двухмерные координато-чувствительные инфракрасные фотоприемники, М., "Радиоэлектронные технологии", N 5, 2019, с. 65-68.
8. Dabaghyan G., Matevosyan L., Avjyan K., Determination of refractive index and thickness of nanosized amorphous carbon films via visible range reflectance spectra, Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences), v. 54, 2019, p. 185.
9. Davtyan M., Gevorkian Zh., Resonance polarization rotation in photonic crystals, 2019, J.Contemp.Phys., 54, Issue 3, pp. 267-271, <https://doi.org/10.3103/S106833721903006X>.
10. Gevorkian Zh., Avjyan K., Matevosyan L., et al, Determination of the complete set of optical parameters of micron-sized polycrystalline $\text{CH}_3\text{NH}_3\text{PbI}_{3-x}\text{Cl}_x$ films from the oscillating transmittance and reactance spectra, Materials Research Express, 2019, <https://doi.org/10.1088/2053-1591/ab5c46>.
11. Gevorkian Zh., Gasparian V., Cuevas E., Straightening of light in a one dimensional dilute photonic crystal, Scientific Reports, 2019, 9:14053 <https://doi.org/10.1038/s41598-019-50590-6>.
12. Gevorkian Zh., Farztdinov V., Lozovik Y., Quantum plateaus in dynamical Hall conductivity, Physica E, 2019, 111, pp. 148-151.
13. Hakhoumian A., Sargsyan A., Single zone Fresnel dielectric plate antenna, 44th International Conference on Infrared, Millimeter, and Terahertz Waves (IRMMW-THz), 1-6 Sep, Paris (France). 2019, DOI: 10.1109/IRMMW-THz.2019.8874001.
14. Nikogosyan A., Martirosyan R., Hakhoumian A., Makaryan A., Tadevosyan V., Goltsman G., Antipov S., Effect of absorption on the efficiency of terahertz radiation generation in the metal waveguide partially filled with nonlinear crystal LiNbO₃, Dast or ZnTe. J. of Contemporary Physics (Armenian Ac. Sci.), v. 54, i. 1, 2019, pp. 97-104.
15. Petrosyan S., Yesayan A., Nersesyan S., Khachatryan V., Critical radius of full depletion in semiconductor nanowires caused by surface charge trapping", Semiconductors, v. 52, N 16, 2019, pp. 2022-2025.
16. Petrosyan S., Khachatryan A., Photosensitive Sb-n-InSb Schottky Barrier Diode", Semiconductor Science and Technology, v. 34, N 4, 2019, doi.org/10.1088/1361-6641/ab0a4, 045018.
17. Rostomyan E., The behavior of streaming instabilities in dissipative plasma in Book "Plasma Science. Basic fundamentals and modern applications". Intechopen, 2019, pp. 20-46.
18. Sargsyan S., Investigation of RF originated "Cold" plasma parameters in capacitive coupled reactor, Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences), v. 54, N 1, 2019, pp. 105-109.
19. Yesayan A., Compact transcapacitance model for short-channel FinFET, Proceedings of NAS RA and NPUA, Series of Technical Sciences, v. 72(1), 2019, pp. 93-101.

Պաշտպանվել է 3 թեկնածուական ատենախոսություն:

ԻԿՐԱՆԵՏ ԿԵՆՏՐՈՆ ՄԿ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Ն.Սահակյան
 Էլեկտրոնային փոստ՝ narsahakyan@gmail.com
yerevan.secretariat@gmail.com

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

MAGIC պատկերային մթնոլորտային չերենկովյան դիտակների համակարգով ուսումնասիրվել է GRB 190114C գամմա-բռնկումը: Գամմա-բռնկումները կարճատև հզոր ճառագայթման աղբյուրներ են, որոնք առաջանում են հեռավոր գալակտիկաներում մեծ զանգվածով աստղերի պայթյունից կամ նեյտրոնային աստղերի միաձուլումից: GRB 190114C-ի

ճառագայթումը դիտարկվել է MAGIC դիտակներով գամմա-բոլման առաջացումից մեկ րոպե հետո, ինչի արդյունքում առաջին անգամ գրանցվել են ԳԲԷ-երի ֆոտոնները 0.2-1 ՏԷՎ տիրույթում (առաջին 20 րոպեների ընթացքում գրանցման հուսալիությունն ավելի քան 50% էր): Բազմահաճախային տիրույթում (5×10^{-6} մինչև 10^{12} էլեկտրոն-վոլտ) GRB 190114C-ի դիտումները ցույց են տվել, որ ՏԷՎ տիրույթում ճառագայթումն առանձին բաղադրիչ է, որի լուսատվությունը ցածր տիրույթում ճառագայթման բաղադրիչի լուսատվության կարգի է: Այս բաղադրիչը բացատրվել է սինքրոտրոնային ֆոտոնների հակադարձ կոմպտոնյան ցրման մեխանիզմով:

Պատրաստվել են նորարական գիտական ծրագրեր (science tools) «բազմասուրհանդակային» աստղաֆիզիկայի համար ՄԱԿ-ի Բաց Տիեզերք (Open Universe) նախաձեռնության շրջանակներում, որի նպատակն է միավորել տիեզերքի, նրա մաս կազմող աստղաֆիզիկական աղբյուրների ուսումնասիրությունների արդյունքները, դրանք հասանելի դարձնել գիտական հանրությանը: Մասնավորապես տվյալների մշակման համար պատրաստվել է *Swift-DeepSky* ծրագիրը, որն օգտագործելով *Swift XRTDAS* և *XIMAGE* փաթեթները՝ ներբեռնում է ռենտգենյան տիրույթում գրանցված տվյալները, իրականացնում տվյալների մշակում, հայտնաբերում է ռենտգենյան ճառագայթման աղբյուրներ, գնահատում այդ աղբյուրների ճառագայթման հոսքը և ճառագայթման սպեկտրի պարամետրերը, պատրաստում է գիտական հետազոտությունների համար անհրաժեշտ տվյալների բազա: Որպես նշված ծրագրի կիրառություն՝ վերլուծվել են 14 տարիների ընթացքում *Swift-XRT* դիտակով գրանցված բոլոր բլազարների տվյալները: Համադրելով տարբեր դիտումների ժամանակները՝ աղբյուրների գրանցման ներքին շեմը փոփոխվել է $\sim 1 \times 10^{-12}$ մինչև $\sim 1 \times 10^{-14}$ էրգ սմ $^{-2}$ վրկ $^{-1}$ (0.3–10.0 կԷՎ) տիրույթում, ինչի շնորհիվ հնարավոր է գնահատել 33396 ռենտգենյան աղբյուրների ինտեսիվությունը և սպեկտրը նկարագրող պարամետրերը: Այդ աղբյուրներից 2308-ը բլազարներ են, որոնց պարամետրերը հասանելի են Բաց Տիեզերք նախաձեռնության կայքէջից:

Հաշվարկվել է սպիտակ թզուկ (ՄԹ)-սպիտակ թզուկ միաձուլումից առաջացած էլեկտրամագնիսական ճառագայթումը, որը համեմատվել է kilonova-ի դիտումների հետ: Ցույց է տրվել, որ ՄԹ-երի կրկնակի համակարգի միաձուլումից արտանետված նյութից կարող է առաջանալ ճառագայթում օպտիկական և ինֆրակարմիր տիրույթներում: ՄԹ-երի միաձուլումը, որից առաջանում է ավելի ծանր, արագ պտտվող մեծ մագնիսական դաշտով ՄԹ, մոդելավորվել է՝ օգտագործելով Phantom ծրագիրը: Դիտարկելով նոր առաջացած ՄԹ-ի վրա նյութի ակոեցիան և հաշվի առնելով էներգիայի պահպանումը՝ հաշվարկվել է առաջացած նյութի ջերմային ճառագայթումը և դրա դինամիկ փոփոխությունը: Ցույց է տրվել, որ միաձուլման ժամանակ մագնիսական պրոցեսների արդյունքում կարող է առաջանալ կարճ տևողությամբ (0.1–1 վրկ) մինչև $\approx 10^{46}$ էրգ լուսատվությամբ γ -ճառագայթում: Արտանետված նյութը սկզբից շարժվում է ոչ ռելյատիվիստիկ արագություններով (0.01c), որն ընկնող նյութի ազդեցությամբ արագանում է մինչև 0.1c: Ցույց է տրվել, որ արտանետված նյութից $\approx 10^{41} - 10^{42}$ էրգ վրկ $^{-1}$ լուսատվությամբ օպտիկական ճառագայթումը հնարավոր է գրանցել միաձուլումից մոտավորապես 7 օր հետո, իսկ ռենտգենյան ճառագայթումը՝ $\approx 10^{39}$ էրգ վրկ $^{-1}$ լուսատվությամբ ~ 150 –200 օր հետո:

Ուսումնասիրվել է TXS 0506+056 բլազարի բազմահաճախային տիրույթում ճառագայթման սպեկտրը: IceCube նեյտրինոների դիտակը 2017թ. սեպտեմբերի 22-ին գրանցել է մեծ էներգիայով նեյտրինո (IceCube-170922A), որի ուղղությունը համընկել էր (շեղումը 0.1°) ակտիվ γ ճառագայթման վիճակում գտնվող TXS 0506+056 բլազարի հետ: IceCube դիտակով գրանցված արխիվային տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ 2014–15թթ. նույն ուղղությունից գրանցվել են նաև մեծ թվով նեյտրինոներ (բռնկում): Օգտագործելով բազմա-

հաճախային տիրություն գրանցված տվյալները՝ մանրամասն ուսումնասիրվել են նեյտրինոների ճառագայթման ուղղության երկնային տիրություն գտնվող բոլոր ոչ ջերմային ճառագայթման աղբյուրները: Մասնավորապես օգտագործելով *Fermi*-LAT դիտակով գրանցված տվյալները՝ ցույց է տրվել, որ 2014-15թթ. նեյտրինոների ճառագայթման ընթացքում TXS 0506+056 բլազարը գտնվել է γ -ճառագայթման հանգիստ վիճակում, սակայն այդ ճառագայթումը նկարագրվել է ավելի փոքր ֆոտոնային ցուցիչով 10 ԳԷՎ-ից բարձր էներգիաների տիրություն, իսկ IceCube-170922A նեյտրինոյի ճառագայթման ժամանակ աղբյուրը γ տիրություն գտնվել է ակտիվ ճառագայթման վիճակում: Համադրելով բոլոր տվյալները՝ ցույց է տրվել, որ TXS 0506+056 աղբյուրը նեյտրինոների ճառագայթման հիմնական աղբյուրն է:

MAGIC դիտակներով ուսումնասիրվել է Extreme high-energy-peaked BL Lac (EHL) դասի 2WHSP J073326.7+515354 աղբյուրի ճառագայթումը ՏԷՎ տիրություն: EHL-երը բլազարների ենթադասն են, երբ նրանց էներգիայի սպեկտրալ բաշխվածությունում (ԷՄԲ-ում) սինքրոտրոնային ճառագայթման մաքսիմումը գտնվում է ռենտգենյան տիրություն, իսկ երկրորդ ճառագայթման մաքսիմումը՝ ԳԷՎ և ավելի բարձր էներգետիկ տիրություններում: Աղբյուրի ճառագայթման 2018թ. ԷՄԲ-ն ուսումնասիրվել է՝ օգտագործելով բազմահաճախային տիրություն *Fermi*-LAT, *Swift*-XRT, *Swift*-UVOT և KVA դիտակներով գրանցված տվյալները: Տվյալների մշակման արդյունքերը մոդելավորվել են տարբեր տեսությունների շրջանակում և ցույց է տրվել, որ ԷՄԲ-ն ավելի լավ բացատրվում է spine-layer կամ հաղորդային ճառագայթման մոդելների շրջանակում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ն.Սահակյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ուսումնասիրվել են նեյտրինոների ճառագայթման առաջին կոսմիկական աղբյուրի (TXS 0506+056) երկնային տիրություն մոտ գտնվող PKS 0502+049 բլազարի բազմահաճախային տիրություն ճառագայթման մեխանիզմները՝ վերլուծելով *Fermi*-LAT, *Swift* UVOT և XRT դիտակներով գրանցված տվյալները: 2014-15թթ. նեյտրինոների ճառագայթումից առաջ և հետո PKS 0502+049-ը գտնվել է ակտիվ ճառագայթման վիճակում ռենտգենյան և γ տիրություններում, իսկ այդ տիրություններում աղբյուրի ճառագայթումը նկարագրվել է փոքր ֆոտոնային ցուցիչով համապատասխանաբար $= 1.5 - 1.8$ և ≤ 2.0 արժեքներով: Նեյտրինոների ճառագայթման ընթացքում աղբյուրի ճառագայթումը շեղվել է պարզ աստիճանային օրենքից $E_c = 8.50 \pm 2.06$ ԳԷՎ-ից բարձր տիրություն: PKS 0502+049-ի ԷՄԲ-ը մոդելավորվել է մեկ տիրությից լեպտոնային ճառագայթման տեսության շրջանակում և գրանցված բարձր էներգիաների γ ճառագայթումը բացատրվել է սինքրոտրոնային կամ տորանման տիրությից ճառագայթած ֆոտոնների հակադարձ կոմպտոնյան ցրումով: PKS 0502+049-ի ԷՄԲ-ը մոդելավորվել է նաև հաղորդային տեսության շրջանակում, երբ շիթը փոխազդել է խիտ թիրախի հետ, և ֆոտոնները առաջացել են արագացված պրոտոնների և ցածր էներգիայով պրոտոնների փոխազդեցությունից: Այս դեպքում γ տիրություն ճառագայթումը կարելի է բացատրել, երբ շիթում արագացված պրոտոնների էներգետիկ բաշխումը նկարագրվում է $E^{-2.61}$ օրենքով և եթե այն նույն օրենքով շարունակվում է մինչև $E_c = 10$ ՊԷՎ, պրոտոնների փոխազդեցության հետևանքով առաջացած նեյտրինոների հոսքը IceCube դիտակում կլինի ~ 1.1 դեպք 110 օրվա ընթացքում: Ի տարբերություն լեպտոնային մոդելավորման, հաղորդային մոդելավորման ժամանակ շիթի լուսատվությունը պետք է գերազանցի առավելագույն էդինգտոնյան լուսատվությանը: Հաշվի առնելով պահանջվող էներգիան, ինչպես նաև պարամետրերը՝ ցույց է տրվել, որ նեյտրինոների ճառագայթման ժամանակ PKS 0502+049 աղբյուրից ճառագայթումը պայմանավորված էր արագացված էլեկտրոններով:

Օգտագործելով *Fermi* LAT դիտակով գրանցված տվյալները՝ ուսումնասիրվել է CTA 102 ճառագայթման սպեկտրը γ տիրություն: Աղբյուրը գտնվել է ակտիվ γ ճառագայթման

վիճակում 2016-17թթ. ընթացքում, երբ որոշ դեպքերում աղբյուրի ճառագայթման սպեկտր նկարագրվում է փոքր ֆոտոնային ցուցիչով $\sim(1.8 - 2.0)$, որը շեղվում է աստիճանային օրենքից $\sim(9 - 16)$ ԳէՎ էներգետիկ տիրույթում: Այս շեղումն աստիճանային օրենքից հնարավոր չէ բացատրել լայն գծերով ճառագայթման տիրույթից ճառագայթած ֆոտոնների հետ փոխազդեցության կլանումով և այն ամենայն հավանականությամբ պայմանավորված է ճառագայթող մասնիկների սպեկտրում նման շեղման առկայությամբ: Այդ շեղման բնույթը հետազոտվել է՝ մոդելավորելով ԷՍԲ-ը՝ ենթադրելով ճառագայթման տիրույթի տարբեր հեռավորությունները կենտրոնական աղբյուրից: Ռենտգենյան և ԲԷ γ տիրույթներում գրանցված տվյալները բացատրվել են սինքրոտրոնային կամ արտաքին դաշտերի ֆոտոնների հակադարձ Կոմպտոնային ցրմամբ, ինչը թույլ է տվել գնահատել ճառագայթող էլեկտրոնների էներգետիկ բաշխվածության աստիճանային օրենքը և արագացված էլեկտրոնների առավելագույն էներգիան: Ստացված արդյունքները քննարկվել են շիրում մասնիկների արագացման տեսությունների շրջանակում:

Ռեյաստիվիստական արտանետումներում մասնիկների արագացման և փոխազդեցության մեխանիզմները պարզելու համար հետազոտվել են GRB 130427A γ բռնկումում տեղի ունեցող պրոցեսները: Քննարկվել են այդ աղբյուրի սև խոռոչին մոտ տիրույթներում մասնիկների արագացման մեխանիզմները մինչև գերբարձր էներգիաների տիրույթներ: Ցույց է տրվել, որ GRB 130427A-ում սկզբնավորող աղբյուրն արագացնում է մասնիկները հաջորդական իմպուլսների միջոցով և երբ այդ իմպուլսները տարածվում են բևեռային առանցքով, ապա դրանցում պրոտոններն արագանում են մինչև 10^{21} էՎ: Երբ իմպուլսները տարածվում են ոչ բևեռային առանցքով, ապա արագացված պրոտոնների սինքրոտրոնային ճառագայթումը ԳէՎ, ՏէՎ և ՊէՎ տիրույթներում գրանցված ճառագայթման աղբյուրն է: Ցույց է տրվել, որ այս մեխանիզմով կարելի է բացատրել նաև ակտիվ գալակտիկական միջուկներում գերծանր սև խոռոչներին մոտ տիրույթներում մասնիկների արագացումը (դեկ. ֆ.-մ.գ.թ. Ն.Սահակյան):

Հրապարակումներ

Հոդվածներ, զեկուցումներ

1. Ruffini R., Moradi R., Rueda J., Becerra L., Bianco C., Cherubini C., Filippi S., Chen, Y., Karlica M., Sahakyan N., Wang Y., Xue S., On the GeV emission of the type I BdHN GRB 130427A, The Astrophysical Journal, v. 886, i. 2, 2019, 82, 13 pp.
2. Sahakyan N., Investigation of the Gamma-ray spectrum of CTA 102 during the exceptional flaring state in 2016-2017, Astronomy and Astrophysics, accepted for publication, <https://doi.org/10.1051/0004-6361/201936715>.
3. Giommi P., Brandt C., Barres de Almeida U., Pollock A., Arneodo F., Chang Y., Civitaresse O., De Angelis M., D'Elia V., Del Rio Vera J., Di Pippo S., Middei R., Penacchioni A., Perri M., Ruffini R., Sahakyan N., Turriziani S., Open universe for blazars: a new generation of astronomical products based on 14 years of Swift-XRT data, Astronomy & Astrophysics, v. 631, 2019, id.bA116, 11 pp.
4. Sahakyan N., Origin of the multiwavelength emission of PKS 0502+049, Astronomy & Astrophysics, v. 622, 2019, id. A144, 10 pp.
5. Rueda J., Ruffini R., Wang Y., Bianco C., Blanco-Iglesias J., Karlica M., Lorén-Aguilar P., Moradi R., Sahakyan N., Electromagnetic emission of white dwarf binary mergers, Journal of Cosmology and Astroparticle Physics, i. 03, 2019, id. 044.
6. Glauch T., Padovani P., Giommi P., Resconi E., Arsioli B., Sahakyan N., Huber M., Dissecting the region around IceCube-170922A: the blazar TXS 0506+056 as the first cosmic neutrino source, EPJ Web of Conferences, v. 207, 2019, id.02003.
7. Gasparyan, S., Modeling the multiwavelength spectra of blazars, Armenian Journal of Physics, 12 (1), 2019, pp. 83-95.

8. MAGIC Collaboration; Acciari V., Gasparyan S., Sahakyan N., Teraelectronvolt emission from the γ -ray burst GRB 190114C, *Nature*, v. 575, i. 7783, 2019, pp. 455-458.
9. MAGIC Collaboration; Acciari V., Gasparyan S., Sahakyan N., Observation of inverse Compton emission from a long γ -ray burst, *Nature*, v. 575, i. 7783, 2019, pp. 459-463.
10. MAGIC Collaboration; Acciari V., Gasparyan S., Sahakyan N., Testing emission models on the extreme blazar 2WHSP J073326.7+515354 detected at very high energies with the MAGIC telescopes, *Monthly Notices of the Royal Astronomical Society*, v. 490, i. 2, 2019, pp. 2284-2299.
11. MAGIC Collaboration; Acciari V., Gasparyan S., Sahakyan N., Deep observations of the globular cluster M15 with the MAGIC telescopes, *Monthly Notices of the Royal Astronomical Society*, v. 484, i. 2, 2019, pp. 2876-2885.
12. MAGIC Collaboration; Acciari V., Gasparyan S., Sahakyan N., Measurement of the extragalactic background light using MAGIC and Fermi-LAT gamma-ray observations of blazars up to $z = 1$, *Monthly Notices of the Royal Astronomical Society*, v. 486, i.3, 2019, pp. 4233-4251.
13. MAGIC Collaboration; Acciari V., Gasparyan S., Sahakyan N., Constraints on Gamma-Ray and Neutrino Emission from NGC 1068 with the MAGIC Telescopes, *The Astrophysical Journal*, v.883, i.2, 2019, id. 135, 9 pp.
14. MAGIC Collaboration; Acciari V., Gasparyan S., Sahakyan N., New hard-TeV extreme blazars detected with the MAGIC telescopes, Accepted for publication in *Astrophysical Journal Supplement*, arXiv:1911.06680.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ թղթակից անդամ Ռ.Հարությունյան

Գիտքարտուղար՝ Ս.Աճեմյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Էկոլոգանոսֆերային հետազոտությունների, «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնները, Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության, Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի, Գ.Դավթյանի անվ. հիդրոպոնիկայի պրոբլեմների, Մուլեկուլային կենսաբանության, Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտները:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են 7 ակադեմիկոս, 11 թղթակից և 27 արտասահմանյան անդամներ, 12 պատվավոր դոկտոր:

Հաշվետու տարում անց է կացվել բաժանմունքի 1 ընդհանուր ժողով, բյուրոյի 23 նիստ և աշխատանքային խորհրդակցություններ:

Բաժանմունքի մարտի 25-ի տարեկան ժողովում լսվել է 2018թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության վերաբերյալ ակադեմիկոս-քարտուղար Ռ.Հարությունյանի զեկուցումը, քննարկվել են կազմակերպությունների հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքները, ԳԱԱ արտասահմանյան անդամների՝ միջազգային գիտական կապերի զարգացման գործում ներգրավման հնարավորությունները: Լսվել են բաժանմունքի առաջատար գիտնականների գիտական զեկուցումները՝ թղթ. անդ. Հ.Գալստյանի «Չարորակ ուռուցքների համաճարակաբանության պատկերը Հայաստանում», կ.գ.թ. Օ.Բելյանայի «Հայաստանի շրջակա միջավայրի ռադիոակտիվության գնահատումը», կ.գ.թ. Գ.Գյուլխանդանյանի «Ուռուցքների ֆոտոդինամիկ թերապիան և մանրէների ինակտիվացումը կենսաինժեներիայի մեթոդներով», կ.գ.թ. Ա.Թադևոսյանի և կ.գ.թ. Խ.Մայրապետյանի «Բույսերի հիդրոպոնիկայի հեռանկարները Հայաստանում», կ.գ.թ. Ա.Քերյանի «Ապաքցչային սկաֆֆոլդների ստացում», կ.գ.թ. Ա.Ալեքսանյանի և կ.գ.դ. Գ.Ֆայվուշի «Հայաստանի էկոհամակարգերի պահպանման հեռանկարները», կ.գ.թ. Ք.Կարապետյանի «Նոր սերնդի հակամանրէային պատրաստուկների ստացումը և կիրառումը», կ.գ.թ. Ս.Աղայանի «Մարդու մակաբույծների շրջապտույտը բնության մեջ»:

Բյուրոյի 25 նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի 2019թ. աշխատանքային պլանը, բաժանմունքի գիտական կազմակերպությունների 2018թ. և 2019թ. բազային ֆինանսավորման, ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, պետական նպատակային ծրագրերի մասին հաշվետվությունները, 2019-20 ուստարվա ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելության հարցերը, ԳՀԿ-ների՝ անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման հայտերը և 2019թ. գիտակազմակերպական գործունեության հաշվետվությունները: Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվել է Ա.Ղուկասյանը:

Հաշվետու տարում բաժանմունքը կազմակերպել է մարդու զենոմի ուսումնասիրության հեռանկարներին նվիրված կլոր սեղան, ներկայացվել են ՀՀ կառավարության հետ այդ ծրագրի քննարկման արդյունքները: ՀՀ ԱԳՆ և Սինգապուրի ազգային պարկերի խորհրդի միջև ստորագրվել է Երևանի բուսաբանական այգու բարեկարգման հուշագիր:

ԳԱԱ մրցութային հանձնաժողովի նիստերում քննարկվել են անհրաժեշտ սարքեր ձեռք բերելու համար ինստիտուտներին ֆինանսավորում տրամադրելու, ԳԱԱ համակարգի գիտական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին 17 գիտաշխատողի գործուղման ճանապարհածախս տրամադրելու հարցերը:

Բաժանմունքի ԳՀԿ-ներն անցկացրել են հանրապետական և միջազգային 9 միջոցառում, այդ թվում՝ ուսուցողական սեմինարներ, գիտաժողովներ, գիտարշավներ, որոնց մասնակցել է 642 մարդ (83-ն արտերկրից):

Բաժանմունքի ԳՀԿ-ները տպագրել են 307 հոդված (206-ն արտասահմանում), 182 թեզիս (112-ն արտասահմանում), 5 մենագրություն, 3 ուսումնական ձեռնարկ և ստացել 4 արտոնագիր:

Բաժանմունքի 5 մասնագիտական խորհուրդներում պաշտպանվել են 12 թեկնածուական և 2 դոկտորական ատենախոսություններ:

ԷԿՈԼՈԳԱՆՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ Ե.-հ.գ.դ. Ա.Սաղաթելյան

Փոխտնօրեն՝ աշխ.գ.թ. Լ.Սահակյան

Գիտքարտուղար՝ աշխ.գ.թ. Մ.Ավետիսյան

Էլեկտրոնային փոստ՝ ecocentr@sci.am, info@cens.am

Կայքէջ՝ www.cens.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

ՀՀ տարածքի հողերի «ճանաչողական» հանույթի արդյունքում ստեղծվել է քիմիական տարրերի (Cr, V, Ti, Mo, As, Zn, Cu, Co, Fe, Mn, Pb և Ba) պարունակությունների տվյալների բազա: Հողերում բացահայտվել են Cr-ի (86% նմուշներում) և As-ի (40% նմուշներում) պարունակությունների գերազանցումներ ՀՀ ՍԹԽ նկատմամբ ցածրից գերբարձր մակարդակներով: As, Co, Fe, Mn և Pb տարրերի դեպքում որոշ նմուշներում բացահայտվել է ոչ քաղցկեղածին ռիսկ երեխաների առողջության համար: Երևանի տարածքով հոսող Հրազդան գետի հատակային նստվածքներում Cr, V, As, Zn, Cu, Ni, Co, Mn և Pb տարրերի պարունակությունների հիման վրա հաշվարկված Պոտենցիալ էկոլոգիական ռիսկի ինդեքսի (ՊԵՌԻ) արժեքը հիմնականում գտնվել է ցածր մակարդակում ($E_r < 40$)՝ բացառությամբ As-ի (չափավորից մինչև բարձր մակարդակ) և Pb-ի (չափավորից նշանակալի մակարդակ): Բազմատարր ՊԵՌԻ-ի միջին արժեքը (245.9) բնութագրվել է միջին մակարդակով: Երևանի մշտադալար ծառատեսակների՝ աղտոտիչներ կլանելու և կուտակելու հատկությունները ձմեռային ժամանակահատվածում հետազոտելու նպատակով քաղաքի 9 ընտրված տեղամասերից Թույա արևմտյան, Գիհի վիրգինյան և Եղենի արծաթափայլ նմուշներում որոշվել են 7 ծանր մետաղի, քլորի, ծծմբի և ազոտի պարունակությունները: Հարավային հատվածի եղնու և թույայի նմուշներում հայտնաբերվել են Ni-ի, Mo-ի և Cl-ի կուտակումներ (դեկ.՝ կ.գ.թ. Գ.Տեփանոսյան):

Գնահատվել է Կապանի ու Քաջարանի հողերում բնական ռադիոակտիվության մակարդակի բարձրացումը լեռնահանքային արդյունաբերության ազդեցությամբ: Կապանի հանքագործական թափոնները և լքված բացահանքը բնական ռադիոնուկլիդներով՝ ^{238}U , ^{226}Ra , ^{232}Th , ^{40}K , քաղաքային հողերի հարստացման աղբյուր են, սակայն ռադիոնուկլիդներով պայմանավորված բնակչության քաղցկեղածին ռիսկը Կապանում ցածր է միջին գլոբալ մակարդակից: Քաջարանի հողերի ռադիոակտիվությունը պայմանավորված է երկրաբանական կառուցվածքում ^{238}U , ^{226}Ra ու ^{232}Th պարունակող մոնացիտների առկայությամբ, հողերի ռադիոակտիվության ձևավորման մեջ տեխնածին գործոնի հանքարդյունաբերության դերը մեծ չէ: Երևանի տարածքի հողերում բնական ու արհեստական ռադիոնուկլիդների ակտիվության հետազոտությունների արդյունքների վերլուծությունը բացահայտել է, որ ռադիոլո-

գիական վտանգի ցուցանիշն աննշան է, իսկ բնակչության քաղցկեղածին ռիսկի միջին ցուցանիշը՝ զրոքալ միջին մակարդակի (ղեկ.՝ կ.գ.թ. Օ.Բելյանա):

Բնութագրվել են տարբեր խտության բուսածածկով բնական խոտհարքերի կենսազանգվածի էներգետիկ-սննդային արժեքը և հողերում հիմնական մակրոտարրերի պարունակությունը: Արարատյան գոգահովտի մարգագետնատափաստանային գոտում ընտրված բարձր, միջին և ցածր արդյունավետության փորձնական տարածքների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խախտված բուսածածկով խոտհարքերում դիտվել է բերքատվության, հողերի և բուսազանգվածի որակական ցուցանիշների նվազում, բացառությամբ թաղանթանյութի և ճարպի, որոնց պարունակությունը, ըստ փորձնական տարբերակների, փոփոխվել է ոչ օրինաչափ (ղեկ.՝ գյուղ.գ.դ. Բ.Մեծունց):

Լեռնային էկոհամակարգերում կլիմայական գործոնների (օդի ջերմաստիճան, տեղումներ) և NDVI վեգետացիոն ինդեքսի միջև կորելյացիոն կապերի ուսումնասիրության շրջանակներում Սիսիան, Մեղրի և Քաջարան քաղաքների օդերևութաբանական կայանների մոտ ընտրված համապատասխանաբար լեռնատափաստանային, չոր տափաստանային և ալպյան մարգագետնային բուսականությամբ տարածքներում համադրվել են 1998-2013թթ. ժամանակահատվածում ստացված SPOT/VGT NDVI արբանյակային լուսանկարների և օդի ջերմաստիճանի ու տեղումների վերաբերյալ տվյալները: Արդյունքում բացահայտվել են լեռնային էկոհամակարգերում օդի ջերմաստիճանի և խոնավության (տեղումների)՝ բույսերի վեգետացիայի վրա «ուշացած» ազդեցության առանձնահատկությունները, որի ինդիկատոր են կլիմայական տվյալների 10-օրյա միջին ցուցանիշները: Աղավնաձոր համայնքի խաղողի այգիներում կատարվել է անօդաչու թռչող սարքերով (ԱԹՍ) լուսանկարահանում և տեղում տերևների քլորոֆիլի քանակության չափում, լուսանկարների կապակցում և նախնական մշակում գնահատման հեռազննման մեթոդների մշակման նպատակով (ղեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմայան):

Սյունիքի և Շիրակի մարզերում արտադրված մեղրի մեջ թունավոր տարրերի և կայուն օրգանական աղտոտիչների ռիսկի գնահատման արդյունքում բացահայտվել է, որ Ni և As տարրերի քաղցկեղածին ռիսկը գերազանցում է թույլատրելի սահմանը: Մշակվել է ընդհանուր սննդակարգային ուսումնասիրության վերաբերյալ մեթոդական ձեռնարկ (ղեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոնն աջակցել է «Կրթություն հանուն կայուն զարգացման» գործընթացին և նպաստել գիտության ոլորտի 3 (հետազոտական, ինովացիոն, կրթական) բաղադրիչների ինտեգրմանն ազգային և տարածաշրջանային մակարդակներով: Ամբիոնը ՅՈՒՆԵՍԿՕ-ի բազային դպրոցներում ոչ ֆորմալ կրթության միջոցով սովորողներին ծանոթացրել է բնապահպանության ոլորտին առնչվող գիտական հետազոտություններին, սեմինար-վարժանքների շրջանակներում բարձրացրել դասավանդողների իրավասությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Պողոսյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Էկոլոգաերկրաքիմիական հետազոտությունները որպես որոշումների ընդունման հենք (Ալավերդի քաղաքի օրինակով)» նախագծի շրջանակներում իրականացվել է Ալավերդի քաղաքի տարածքի հողերի, փողոցային փոշու և Դեբեդ գետի հատակային նստվածքների նմուշառում, տարրալուծում (Ti, Fe, Ba, Mn, Co, Pb, Zn, Cu, Cr, Mo և As) և տվյալների հենքի ստեղծում: Իրականացվել է հողերում դիտարկված տարրերի պարունակությունների տարածական բաշխվածության ուսումնասիրություն, քաղաքի տարածքի հողերում քիմիական տարրերի երկրաքիմիական ասոցիացիաների դուրսբերում, պոտենցիալ աղբյուրների նույնականացում և առողջական ռիսկի գնահատում: Ուսումնասիրված քիմիական

տարրերը ձևավորում են 3 տարբեր երկրաքիմիական ասոցիացիաներ՝ բնական, մարդածին և հիբրիդ: Հոդում առկա պարունակությունները մարդու առողջությանն ուղղված ռիսկի գործոն են հատկապես պոնձաձուլարանին կից տարածքներում: Ուսումնասիրված տարրերից ամենառիսկայինը հողերում As-ն է:

«Քաղաքի բազմազենտային էկոլոգատոնտեսական համակարգի կայուն զարգացումն ապահովող մոդելների, մեթոդների և ծրագրերի համալիրի մշակում՝ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի օրինակով» հայ-ռուսական ծրագրի շրջանակներում Էկոլենտրոնի տվյալների հենքի ու պատկան մարմիններից ստացված տվյալների հիման վրա Երևանի օրինակով մշակվել է կանաչապատման ռացիոնալ կառավարմանն ու որոշումների ընդունմանն աջակցող համակարգ: Ազենտային մոդելավորման մեթոդների կիրառմամբ մշակվել է մթնոլորտային արտանետումների ու կանաչ տնկարկների (ծառերի) հետ փոխազդեցության իմիտացիոն մոդել: Մշակված համակարգի կարևոր տարրն է նյութական կողավորման առաջարկված գենետիկական ալգորիթմը, որը ներկառուցված է AnyLogic միջավայրում իրացված արտանետումների տարածման մոդելի մեջ: Իրականացված թվային փորձարկումների արդյունքում ստացվել է ՆՈւՀ-երի շուրջը տնկարկի լավագույն կոնֆիգուրացիան, որն ապահովում է արտանետումների նվազագույն խտություն՝ կանաչապատման ծրագրին հատկացվող սահմանափակ ֆինանսական միջոցների հաշվառմամբ (ղեկ.՝ Ե.-հ.գ.դ. Ա.Սաղաթեյյան):

«Հայաստանի տարածքի ռադիոէկոլոգիական մոնիթորինգ: Փուլ երկրորդ» նախագծի շրջանակներում (ղեկ.՝ կ.գ.թ. Օ.Բեյլասա) ներդրվել է նախագծի աշխատանքների որակի ապահովման ու վերահսկման պլան, վերանայվել ու կատարելագործվել են նմուշառման, in situ չափումների, նմուշների նախնական մշակման ու զամմա-սպեկտրաչափության ստանդարտ օպերացիոն ընթացակարգերը: Շրջակա միջավայրի բաղադրիչների նմուշառման աշխատանքներն իրականացվել են օդային զանգվածների բեռնաթափման տեղամաս հանդիսացող լեռնաշղթաներում (Բազումի, Փամբակի, Գեղամա, Վարդենիսի, Բարգուշատի, Մեղրու, ինչպես նաև Արագած ու Մեծ Իշխանասար լեռնազանգվածներում): Մթնոլորտային չոր նստեցումների նմուշահավաքն ընթացել է Արագածում, 12 ամիսների ընթացքում: Նմուշները համալրել են ՀՀ ռադիոնուկլիդների ֆոնային ու հիմնագծային ակտիվության գնահատման համար ստեղծված արխիվը: Ընթանում են տարրալուծման աշխատանքներ:

«Գերբարձր լուծաչափի տվյալների կիրառմամբ լեռնային լճերի էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդի մշակում» հայ-ռուսական թեմայով Landsat և Sentinel արբանյակային լուսանկարների վերծանմամբ կատարվել է Սևանա լճի ջրի մակարդակի տատանումներով պայմանավորված ափագծի փոփոխության գնահատում: Landsat արբանյակային լուսանկարների ժամանակային շարքի վերծանմամբ կատարվել է լճի ջրի ջերմաստիճանային ռեժիմի ուսումնասիրություն, ջրի պղտորության քարտեզի ստացում, որն այնուհետև համադրվել է լաբորատոր պայմաններում ստացված ջրում կախված նյութերի ընդհանուր քանակության (TSS) տվյալների հետ, ԱԹՍ լուսանկարների գեոմետրիկ կապակցում և խճանկարի ստեղծում հետագա վերծանման նպատակով: Կատարվել է Էկոլենտրոնում առկա գեոսերվերի վերազինում ջրի որակական ցուցանիշների, մասնավորապես ջրի պղտորությունը բնութագրող քարտեզագրական տեղեկատվության արխիվացման և վեբ-հրապարակման համար: Արդյունքում ճշգրտվել են լճի ջրի պղտորության և ծաղկման ցուցանիշների վերծանման հայտանիշները, ջրի մակարդակի տարածաժամանակային փոփոխությունների չափերը և հաշվարկվել են դրա հետևանքով ափամերձ գոտում կրճատված անտառային գոտիների մակերեսները: Կազմվել է 2019թ. Սևանա լճի ծաղկման քարտեզների տարածաժամանակային շարք:

«Երևան քաղաքի տարածքում ջերմային դաշտերի ուսումնասիրության հեռազննման մեթոդի մշակում» թեմայով իրականացված աշխատանքի ընթացքում լրամշակվել է Երևանի հողօգտագործման GIS տեղեկատվական հենքը՝ Եվրոպական CORINE դասակարգման սխեմայի համաձայն: Շարունակվել է *LANDSAT-8 OLI/TIRS* արբանյակային լուսանկարների ժամանակային շարքի վերծանումը, արդյունքում ստացվել է Երևանի տարածքում 2018-19թթ. մակերևութային ջերմաստիճանի (LST) քարտեզների տարածաժամանակային շարք: Ներկայումս շարունակվում են ԱԹՍ ջերմային լուսանկարների մշակման և արդյունքների կլիմայական և հողօգտագործման տվյալների հետ համադրման աշխատանքները (ղեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան):

«Գյուղամերձ արոտների հող-բույս համակարգի հիմնական չափորոշիչները և բուսածածկի վերականգնման կանխատեսման հնարավորությունը» թեմայով (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Նավասարդյան) Արագածոտնի և Կոտայքի մարզերի տափաստանային գոտու արոտների 3 մոդելային տարածքում իրականացվել են դաշտային հետազոտություններ դրանց լերկության աստիճանի, արդյունավետության, բուսական կազմի, տերևային մակերեսի, պիգմենտների քանակության և հողերի խոնավության որոշման նպատակով: Հետազոտությունները ցույց են տվել, որ ընտրված տարածքների լերկությունը կազմել է 0-20, 30-55 և 60-80%, իսկ արդյունավետության միջին արժեքը՝ 305, 153 և 58գ/մ² (այսինքն՝ տարբերությունը 2-5 անգամ է): Թույլ և ուժեղ լերկացած տարածքներում գերակշռել են համապատասխանաբար հացազգի և տարախոտային համակեցությունները (70-80%): Բացի այդ, ուսումնասիրված արոտների բուսածածկի տերևային մակերեսն ըստ տեղամասերի տատանվել է 10-150 դմ²/մ², Ա և Բ քլորոֆիլների գումարային քանակությունը՝ 252-318մգ/100գ թարմ նմուշում, իսկ հողի խոնավության ցուցանիշը՝ 9-12% սահմաններում: Այսպիսով, արոտների մոդելային տարածքներն էապես տարբերվում են հողի լերկության, բույսերի արդյունավետության և տերևային մակերեսի ցուցանիշներով, իսկ հողի խոնավության և քլորոֆիլների պարունակության տատանումներն ունեցել են համեմատաբար փոքր տիրույթ:

«Երևան քաղաքում իրացվող սննդամթերքում ծանր մետաղների ռիսկի գնահատումը» թեմայի շրջանակներում հավաքագրվել և վերլուծվել են բնակչության սննդակարգի վերաբերյալ տվյալները, լայն սպառում ունեցող մթերքներից հաց-հացամթերքի, ձավարեղենի և կաթնամթերքի նմուշներում ուսումնասիրվել են ծանր մետաղների պարունակությունները: Մշակվել է սննդամթերքում ծանր մետաղների ռիսկի գնահատման մեթոդական ձեռնարկ:

«Երևան քաղաքում իրացվող սննդամթերքում տրանսճարպաթթուների ռիսկի գնահատումը» թեմայի շրջանակում ուսումնասիրվել են սննդամթերքում տրանսճարպաթթուներին ներկայացվող իրավական պահանջներն ու ռիսկի գնահատման մեթոդաբանությունը (ղեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

«Ավազ դպրոցի սովորողների քաղաքացիական կոմպետենտության ձևավորման մոդել» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Գասպարյան) հանրակրթության ոլորտում ուսումնասիրվել են հայ և ռուս ազգերի մշակութային ավանդույթներն ու արժեքները: Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի NN 1, 10, 13 ավազ դպրոցներում սովորողների հետ անցկացվել է սոցիոլոգիական հարցում, իսկ տնօրինության և ուսուցչական կազմի հետ՝ քննարկումներ: Քննարկվել են նախկինում Լոռու և Արագածոտնի մարզերում արված հարցումների վերլուծությունը և ներկայացված առաջարկությունների փաթեթը, որոնք կազմվել են ծրագրի մասնակիցների կողմից: Հենվելով դպրոցներում լրացված հարցաշարերի վրա՝ հստակեցվել են գործընթացի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները:

Հրապարակումներ

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

1. Պիպոյան Դ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Ծանր մետաղների ռիսկի գնահատում սննդամթերքում (մեթոդական ձեռնարկ), Ե., Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի հրատ., 2019, 27 էջ:
2. Պիպոյան Դ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Ընդհանուր սննդակարգային ուսումնասիրություն (մեթոդական ձեռնարկ), Ե., Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի հրատ., 2019, 41 էջ:

Հոդվածներ, զեկուցումներ

3. Բելյանա Օ.Ա., Մովսիսյան Ն.Է., Փյունկյուլյան Կ.Ի., Սաղաթելյան Ա.Կ., Cs-137 բաշխվածությունը Արագածի հողերում և չոր մթնոլորտային նստեցումներում, Ե., «Գիտություններ Երկրի մասին», N 1, հ.72, 2019, էջ 57-66:
4. Մովսիսյան Ն.Է., Բելյանա Օ.Ա., Բնական ռադիոնուկլիդների բաշխվածությունը Երևան քաղաքի հողերում, Ե., «ԵՊՀ գիտական տեղեկագիր: Երկրաբանություն և աշխարհագրություն», N 53(2), 2019, էջ 84-93:
5. Պողոսյան Գ.Ս., Գասպարյան Ա.Ս., Բաց ագրարային դպրոցի մոդելի ներմուծումը որպես գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական, էթնոմշակութային դրսևորման ձև, Ե., «Կաճառ», N 1, 2019, էջ 117-126:
6. Պիպոյան Դ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Ստեփանյան Ս.Ա., ՀՀ-ում արտադրված մեղրում նիկելի ներագդեցության գնահատում, «Կաճառ», N 1, 2019, էջ 26-34:
7. Միրեյան Լ.Ա., Պղնձի ռիսկի գնահատումը Ալավերդի քաղաքի շուկաներում իրացվող պտուղ-բանջարեղենում, Ե., «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», N (66)2, 2019, էջ 82-86:
8. Акопов А.С., Бекларян А.Л., Сагателян А.К., Саакян Л.В., Беляева О.А., Тепаносян Г.О., Система поддержки принятия решений для рационального озеленения города на примере г. Ереван, Республика Армения, М., “Программная инженерия”, N 2, 2019, с. 87-96, DOI: 10.17587/prin.10.87-96.
9. Бабалян Г.Г., Комплексная оценка качества воды рек Армении: экологический статус и пригодность воды для орошения, Мат. межд. научно-практич. конф. “Теоретические и прикладные проблемы географической науки: социальный, правовой, экономический и экологический аспекты”, Воронеж, т.1, 2019, с. 224-228.
10. Бабалян Г.Г., Закруткин В.Е., Решетняк О.С., Саакян Г.А., Гибков Е.В., Формирование химического состава речных вод Армении в зависимости от ландшафтной дифференциации территории и условий природопользования, Мат. I межд. научн. конф. “Актуальные направления сбалансированного развития горных территорий в контексте междисциплинарного подхода”, Карачаевск, 2019, с. 46-51.
11. Межунц Б.Х., Навасардян М.А., Корнеобеспеченность некоторых видов травяных растений кормовых угодий Гегамского хребта Армении, Межд. научно-практич. конф. “Экосистемные услуги и менеджмент природных ресурсов”, Тюмень, 2019, с.22-29. /utmn.ru/nauka/nauchnye-meropriyatiya/ ecosystem/.
12. Мурадян В.С., Тепаносян Г.О., Асмарян Ш.Г., Овсепян А.А. Сагателян А.К., Исследование корреляции между значениями NDVI и климатическими факторами в период вегетации на примере Сюникского региона, Армения, Мат. VI межд. науч. конф. “Региональные проблемы дистанционного зондирования земли”, Красноярск, 2019, с. 22-29.
13. Навасардян М.А., Межунц Б.Х., Продуктивность и корнеобеспеченность разных растительных ассоциаций кормовых угодий Армении, Сб. ст. по мат. XLVI межд. научно-практич. конф. “Экспериментальные и теоретические исследования в современной науке”, Новосибирск, N 16(41), 2019, с. 26-31.
14. Погосян Г.С., Гаспарян А.М., Гражданская компетентность как образовательная проблема, Мат. VIII всеросс. научно-практич. конф. по психологии, “Молодежь и будущее” Владимир, 2019, с. 25-27.
15. Погосян Г.С., Гаспарян А.М., Проектная технология в школьном обучении, Мат. VIII всеросс. научно-практич. конф. по психологии, “Молодежь и будущее”, Владимир, 2019, с. 55-59.
16. Татоян С.Р., Амирян Е.В., Погосян Г.С., Международный и местный опыт модели «открытая школа» (аналитический обзор), Мат. VIII всеросс. научно-практич. конф. по психологии, “Молодежь и будущее”, Владимир, 2019, с. 75-80.
17. Akopov A., Beklaryan L., Saghatelyan A., Agent-based modelling of interactions between air pollutants and using a case study of Yerevan, Armenia, “Environmental Modelling and Software”, v. 116, 2019, pp. 7-25, <https://doi.org/10.1016/j.envsoft.2019.02.003>

18. Asmaryan Sh., Muradyan V., Tepanosyan G., Hovsepyan A., Saghatelyan A., Astsatryan H., Grigoryan H., Abrahamyan R., Guigoz Y., Giuliani G., Paving the way towards an Armenian data cube, "Data 2019", v. 4(3), 2019, pp. 1-10, <https://doi.org/10.3390/data4030117>
19. Babayan G., Sakoyan A. Sahakyan G., Drinking water quality and health risk analysis in the mining impact zone, Armenia, "Sustainable Water Resources Management", "Springer", v. 5(4), 2019, pp. 1877-1886, DOI:10.1007/s40899-019-00333-2
20. Belyaeva O., Pyuskyulyan K., Lamont S., Movsisyan N., Saghatelyan A., Fallout and deposition of Cesium-137 in Aragats Massif, Armenia, 2nd Intern. Conf. on Radioanalytical and Nuclear Chemistry "JRNC-RANC 2019", May 5–10, Budapest, Hungary, 2019, pp. 320-321.
21. Belyaeva O., Pyuskyulyan K., Movsisyan N., Saghatelyan A., Carvalho F.P. Natural radioactivity in urban soils of mining centers in Armenia: Dose rate and risk assessment, "Chemosphere", v. 225, 2019, pp. 859-870 <https://doi.org/10.1016/j.chemosphere.2019.03.057>
22. Ghrejjyan E., Stepanyan S., Sireyan L., Risk assessment of tetracycline residues in ishkhan fish meat cultured in Armenia, Y., "Bulletin of Armenian National Agrarian University", N (65)1, 2019, pp. 66-68.
23. Hovhannisyan A., Sahakyan L., Belyaeva O., Tepanosyan G., Beglaryan M., Pipoyan D., Saghatelyan A., Studying residual pesticides in agricultural lands of the Republic of Armenia, "Annals of Agrarian Science", v. 17, N 4, 2019, pp. 409-414.
24. Hovhannisyan H., Nersisyan G., Saghatelyan A., An ecological assessment of heavy metal pollution of plant-based foods in city of Yerevan, Y., "Electronic Journal of Natural Sciences NAS RA, Ecology", v. 33, iss. 2, 2019, pp. 4-8.
25. Hovsepyan A., Tepanosyan G., Muradyan V., Asmaryan Sh., Medvedev A., Koshkarev A., Lake Sevan shoreline change assessment using multi-temporal landsat images. Geography, Environment, Sustainability, v. 12, N 4, 2019, pp. 212-229, DOI:10.24057/2071-9388-2019-46
26. Muradyan V., Tepanosyan G., Asmaryan Sh., Saghatelyan A., Fabio Dell'Acqua, Relationships between NDVI and climatic factors in mountain ecosystems: a case study of Armenia, "Remote Sensing Applications: Society and Environment", v. 14, 2019, pp. 158-169, <https://doi.org/10.1016/j.rsase.2019.03.004>
27. Pipoyan D., Beglaryan M., Hovhannisyan A., Abrahamyan A., Monitoring of sausage product adulteration in Armenia, Y., "Bulletin of Armenian National Agrarian University", N (65)1, 2019, pp. 76-78.
28. Pipoyan D., Beglaryan M., Sireyan L., Shakhnazarova Ya., Investigation of antioxidant activity of Armenian honey, Y., "Bulletin of Armenian National Agrarian University", N (65)1, 2019, pp. 63-65.
29. Pipoyan D., Stepanyan S., Beglaryan M., Stepanyan S., Asmaryan S., Hovsepyan A., Merendino N., Carcinogenic and non-carcinogenic risk assessment of trace elements and POPs in honey from Shirak and Syunik regions of Armenia, "Chemosphere", v. 239, 2019, <https://doi.org/10.1016/j.chemosphere.2019.124809>.
30. Pipoyan D., Stepanyan S., Stepanyan S., Beglaryan M., Merendino N., Health risk assessment of potentially toxic trace and elements in vegetables grown under the impact of Kajaran mining complex, "Biological trace element research", v. 192, N 2, 2019, pp. 336-344.
31. Poghosyan G., Gasparyan A., Grigoryan D., The model of open agrarian school as a means of realization of traditional habits and lifelong learning, "Science Journal of Education", v. 6, is. 6, 2019, pp. 129-133.
32. Pyuskyulyan K., LaMont S., Atoyan V., Belyaeva O., Movsisyan N., Saghatelyan A., Altitude-dependent distribution of ¹³⁷Cs in the environment: a case study of Aragats massif, Armenia, "Acta Geochim", N 39(1), 2019, pp. 127-138 <https://doi.org/10.1007/s11631-019-00334-0>.
33. Sahakyan L., Tepanosyan G., Maghakyan N., Kafyan M., Melkonyan G., Saghatelyan A., Contamination levels and human health risk assessment of mercury in dust and soils of the urban environment, Vanadzor, Armenia, "Atmospheric Pollution Research", 2019, pp. 808–816, doi: 10.1016/J.APR.2018.12.009.
34. Tepanosyan G., Sahakyan L., Belyaeva O., Beglaryan M., Pipoyan D., Hovhannisyan A., Saghatelyan A., Studying DDTs in agricultural soils of selected rural communities of Armenia, "Acta Geochim", 2019, pp. 1-10, <https://doi.org/10.1007/s11631-019-00376-4>.
35. Tepanosyan G., Sahakyan L., Zhang Ch., Saghatelyan A. The application of Local Moran's I to identify spatial clusters and hot spots of Pb, Mo and Ti in urban soils of Yerevan, "Applied Geochemistry", v. 104, 2019, pp.116-123.

Ն.Մովսիսյանը միջազգային գիտության և տեխնոլոգիայի կենտրոնի 25-րդ տարելիցի առթիվ կազմակերպված երիտասարդ գիտնականների մրցույթում արժանացել է մրցանակի (I տեղ):

Ա.ԹԱԽՏԱԶՅԱՆԻ ԱՆՎ. ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Կ.Գ.Թ. Ա.Ղուկասյան
Փոխտնօրեն՝ տնտ.գ.թ. Ս.Վարդանյան
Գիտքարտուղար՝ Կ.Գ.Թ. Լ.Մարգարյան
Էլեկտրոնային փոստ՝ botanyinst@sci.am, botinst@sci.am
Կայքէջ՝ www.botany.sci.am

Մասնագիտական խորհուրդ 035՝ «Բուսաբանություն»
Նախագահ՝ թղթ.անդ. Ժ.Վարդանյան, գիտքարտուղար՝ Կ.Գ.Թ. Ա.Ղուկասյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հայաստանի ֆլորայի կենսակարգաբանական ուսումնասիրությունների արդյունքում հաստատվել է *Convallaria transcaucasica*, *Consolida rugulosa* տեսակների առկայությունը: Որոշ տեսակների համար դիտվել է նոր տարածվածություն, հայտնաբերվել են նաև նոր գտնվելու վայրեր մի շարք հազվագյուտ տեսակների համար: Հայաստանի ազգային ագրարային համալսարանից ստացված հերբարիումի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է նոր աղվենտիվ տեսակ՝ *Solanum rostratum*, հաստատվել է *Allium convallarioides* տեսակի առկայությունը, որը Հայաստանի ֆլորայի համար հայտնի էր միայն տիպային նմուշներով: Իրականացվել են Հայաստանի բուսական ռեսուրսների ուսումնասիրման աշխատանքներ Վայոց ձորի և Սյունիքի շրջաններում ֆլորայի և բուսականության էթնոբուսաբանական որոշ ասպեկտների ուղղությամբ (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Մ.Հովհաննիսյան):

Հերբարիումի տիպային հավաքածուն համալրվել է 8 ընտանիքի և 8 ցեղի պատկանող, 20 տեսակի և ենթատեսակային կարգի 6 տաքսոնի 35 ավթենտիկ նմուշներով, որոնք պարունակում են 2 հոլոտիպ, 8 իզոտիպ, 8 սինտիպ, 8 պարատիպ, 2 ավտենտիկ նմուշ և 1 հնարավոր տիպ: 2 չիրապարակված տաքսոն տիպիֆիկացվել են որպես ավթենտիկ նմուշներ: Հավաքածուի մեջ ընդգրկվել են նաև 6 տոպոտիպեր: Հերբարիումի տիպային հավաքածուն հարստացել է նոր ընտանիքով, 2 նոր ցեղով, նոր տեսակներով և ենթատեսակային կարգի 5 նոր տաքսոնով:

Հերբարիումի տեղական բաժնի հավաքածուն համալրվել է ավելի քան 20 ընտանիքի պատկանող բուսատեսակների շուրջ 1660 նմուշով: Հավաքածուն համալրվել է 1 նոր ընտանիքով՝ *Ruppiaceae*, 1 նոր ցեղով՝ *Ruppia*, 5 նոր տեսակով (*Fumaria densiflora*, *Ruppia maritima*, *Solanum rostratum*, *Solanum tuberosum*, *Potamogeton filiformis*): *Dianthus* ցեղի 24 տեսակի շուրջ 1500 նմուշի և *Carex* ցեղի շուրջ 250 նմուշի տվյալները ներմուծվել են JACQ միջազգային տվյալների բազա և արդեն ունեն բաց մուտք (<http://herbarium.univie.ac.at/database/search.php>):

Հերբարիումի ընդհանուր բաժնի հավաքածուն համալրվել է 18 նմուշով, որոնցից հերբարիումի համար 10 նոր տեսակը պատկանում են 3 ընտանիքի (*Fabaceae*, *Lamiaceae*, *Onagraceae*) և 4 ցեղի (*Astragalus*, *Epilobium*, *Nepeta*, *Satureja*) (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Մ.Ասատրյան):

Անատոմիական ուսումնասիրությունների շրջանակում բուսական համակեցությունների տարբեր տիպերում աճող տարբեր կենսաձև ունեցող ցեղերի ընձյուղային համակարգի մորֆոլոգաանատոմիական կառուցվածքի հետազոտության նպատակով ֆիքսացիայի են ենթարկվել *Potentilla* sp. ցեղի միամյա տեսակն Արարատի շրջանի ճահճուտներից, Ամուլսարից Սևանի բուսաբանական այգի տեղափոխված բազմամյա բարձրլեռնային պետրոֆիտ *Potentilla porphyra* Juz. տեսակը և Ստեփանավանի շրջակայքի մարգագետնում աճող *P. reptans* L. և *P. recta* L. մեզոֆիլ տեսակները: Հայաստանում աճող *Scilla* ցեղի տեսակների առանձին օրգանների կառուցվածքի, փոշեհատիկների չափսերի ուսումնասիրության արդ-

յունքում բացահայտվել են կարգաբանական նշանակության մի շարք նոր հատկանիշներ, իրականացվել է *S. armena* տեսակի պոպուլյացիոն փոփոխականության ուսումնասիրություն, պարզաբանվել են Հայաստանում աճող *Scilla* ցեղի տեսակների կառուցվածքային յուրահատկությունները, էվոլյուցիոն փոփոխականության և տեսակառաջացման առանձնահատկությունները (ղեկ.՝ կ.գ.դ. Գ.Օգանեզովա):

Պալինոլոգիական ուսումնասիրությունների շրջանակում շարունակվել են «Հայաստանի ծառերի և թփերի ծաղկափոշու ատլաս»-ին վերաբերող ուսումնասիրությունները: Լուսային և սկաներային էլեկտրոնային մանրադիտակի մակարդակով ամփոփվել են 16 ընտանիքի (*Platanaceae, Polygonaceae, Punicaceae, Ranunculaceae, Rhamnaceae, Salicaceae, Sapindaceae, Smilacaceae, Solanaceae, Staphyleaceae, Tamaricaceae, Thymeleaceae, Tiliaceae, Ulmaceae, Vitaceae, Zygophyllaceae*) 24 ցեղի 60 տեսակի ծաղկափոշու մորֆոլոգիական առանձնահատկությունների տվյալները: ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված Հայաստանի ֆլորայի էնդեմիկ տեսակների ծաղկափոշու ուսումնասիրության արդյունքում ստացվել են նոր տվյալներ *Rosaceae* ընտանիքի ներկայացուցիչների ծաղկափոշու մորֆոլոգիական առանձնահատկությունների վերաբերյալ, որոնց հիման վրա տվյալ ընտանիքի սահմաններում կկազմվեն բանալիներ:

Լուսային մանրադիտակի մակարդակով շարունակվել են *Salsoloideae* ենթաընտանիքի (ընտանիք *Chenopodiaceae*) ցեղերի ծաղկափոշու նյութերի հավաքը, *Chenopodiaceae* ընտանիքի, մասնավորապես *Salsola* s.l. ցեղի՝ *Caroxylon* Thunb., *Kaviria* Akhani et E. H. Roalson և *Kali* Mill. ցեղերի ներկայացուցիչների ծաղկափոշու մորֆոլոգիայի ուսումնասիրությունները: Հիմնական տարբերակիչ հատկանիշների ցանկում ընդգրկված են փոշեհատիկների և ծլանցքների չափսերը, քանակը: Ստացված տվյալների հիման վրա անցկացվել է վիճակագրական անալիզ նշված հատկանիշների փոփոխականության աստիճանը և շեղումների ստանդարտները բացահայտելու նպատակով (ղեկ.՝ կ.գ.դ. Ա.Հայրապետյան):

Հնէաբուսաբանական ուսումնասիրությունների շրջանակում հետազոտվել են Գեղարքունիքի մարզի Օռվինար գյուղի շրջակայքի հոլոցենյան հասակի տորֆային նստվածքները: Բրածո ծաղկափոշու և բույսերի մակրոմնացորդների ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են մի շարք տեսակներ, հնէաբուսաբանական ուսումնասիրություններ են տարվել նաև հոլոցենյան հասակի տորֆային նստվածքներից լվացված սերմերի և պտուղների որոշման նպատակով: Գերմանական կողմի հրավերով մեկ ամիս Ն.Հայրապետյանը վերապատրաստվել է Ֆրանկֆուրտ-Մայն քաղաքի Սենկենբերգի ինստիտուտ-թանգարանում հնէապալինոլոգիական ուսումնասիրությունների նոր մեթոդների յուրացման նպատակով: Հնէաբուսաբանական խմբի կողմից շարունակվել են բուսաբանական թանգարանի կառուցման աշխատանքները: Մի շարք հավաքածուների համար ստեղծվել է տվյալների էլեկտրոնային բազա: Մշակվել է թանգարանում էթնոբուսաբանության մասի ցուցադրության հայեցակարգը (ղեկ.՝ կ.գ.թ. Ի.Գաբրիելյան):

Երկրաբուսաբանական ուսումնասիրությունների շրջանակում կատարվել է Հայաստանի բուսական համակեցությունների փոփոխությունների ուսումնասիրություն և 2016թ. հրատարակված հանրապետության բնակմիջավայրերի և էկոհամակարգերի դասակարգման սխեմայի ճշգրտում: Ուսումնասիրությունները կատարվել են հյուսիսային և կենտրոնական Հայաստանում: Եվրասիական չոր խոտաբուսային էկոհամակարգերի խմբի (EDGG) հետ համատեղ կազմակերպված գիտարշավի ընթացքում տեղադրվել և նկարագրվել է խոտաբուսային էկոհամակարգերի ավելի քան 100 փորձահրապարակ, որոնցից մոտ 50-ը կենսաբազմազանության փորձահրապարակներ են ֆլորայի և բուսականության մանրամասն նկարագրով: Տվյալներն ընդգրկվել են տեղական տվյալների բազայում, իսկ ամփոփվելուց հետո կընդգրկվեն միջազգային տվյալների բազայում:

Շարունակվել են Հայաստանում Էմերալդ Էկոլոգիական ցանցի գիտական հիմնավորման աշխատանքները, կատարվել են լրացուցիչ նկարագրություններ, վերլուծվել է նպատակային բույսերի ու կենդանիների տեսակների և Էկոհամակարգերի ներկայացվածությունն ընտրված տարածքներում:

Ամփոփվել են Արագածոտնի և Շիրակի մարզերի դեգրադացված Էկոհամակարգերի ուսումնասիրությունները, գնահատվել են վերականգնման և իրականացված անտառապատման միջոցառումների արդյունքներն ու արդյունավետությունը, մասնավորապես պիլոտային տարածքներում կատարվել է բուսական ծածկույթի ու տեսակային կազմի մշտադիտարկում՝ ելնելով տարբեր բնակլիմայական պայմաններից և իրականացված միջոցառումներից:

Շարունակվել է ենթալպյան գոտու տիպիֆիկացիայի և դասակարգման հարցերի և Հայաստանի ենթալպյան գոտու ֆլորայի և բուսականության վերաբերյալ գրականության ուսումնասիրությունը: Անցկացվել են դաշտային աշխատանքներ Փամբակի և Բազումի լեռնաշղթաների ենթալպյան գոտու ֆլորայի և բուսականության հետազոտության նպատակով:

Իրականացվել է Հացենի սովորական և Սոսի արևելյան ծառատեսակների՝ փոշուկարծր մասնիկների տարբեր ֆրակցիաների՝ PM₁₀; PM_{2.5}; PM_{0.2} կլանման պոտենցիալի ուսումնասիրություն: PM էլեմենտալ-անալիզի (EDX) նպատակով կատարվել է 50 μ m մեծությամբ 150 նկարի վերծանում, ստացված տվյալների հիման վրա ստեղծվել է տվյալների բազա (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Տայվուշ):

Շարունակվել են Հայաստանի բույսերի Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ տեսակների, որոնք աճում են Արարատյան հարթավայրի աղակալված ճահճուտներում, Էկոֆիզիոլոգիական ուսումնասիրությունները (ղեկ.՝ կ.գ.թ. Ժ.Հովակիմյան):

Ամփոփվել են *Spiraea* L. ցեղի ներմուծված տեսակների ուսումնասիրությունների արդյունքները: Ասպիրակ (*Spiraea* L.) ցեղի գույքագրման, ներմուծման և աճեցման, հարմարողականության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքում առանձնացվել է 30 գեղազարդ տեսակ, որոնք պիտանի են Հայաստանի բուսաբանական այգիներում, դենդրոպարկերում և տարբեր տիպի ու ֆունկցիոնալ նշանակության կանաչ տնկարկներում լայնորեն օգտագործելու համար, կազմվել է ասպիրակների գեղազարդության գնահատման սանդղակ: Դենդրոկլիմայական տարբեր պայմաններում ուսումնասիրվել են ասպիրակ ցեղի (*Spiraea* L.) ներմուծված որոշ տեսակների Էկոֆիզիոլոգիական մի շարք ցուցանիշներ՝ ֆոտոսինթեզի ու տրանսպիրացիայի ինտենսիվություն, ջրային անբավարարություն և ջրի տարբեր ձևերի պարունակություն: Ստացված ցուցանիշները տարբեր են՝ պայմանավորված գոյության նոր պայմաններում դրանց տարաստիճան հարմարողականությամբ: Ուսումնասիրվել են տարբեր բուսաաշխարհագրական ծագման ասպիրակների բազմացման առանձնահատկությունները, սահմանվել են ուսումնասիրվող տեսակների սերմերով բազմացման և կտրոնավորման արդյունավետ ժամկետներն ու առանձնահատկությունները:

Ամփոփվել են Երևանի կանաչապատման մեջ օգտագործվող ծառաբույսերի տեսակային կազմի և դրանց գեղազարդությանը վերաբերող ուսումնասիրությունների արդյունքները: Տրվել է 25 ընտանիքի և 46 ցեղի պատկանող շուրջ 65 տեսակի ծառերի ու թփերի գեղազարդության և նպատակային օգտագործման գնահատականը: Բացահայտվել են մայրաքաղաքի կանաչապատման պրակտիկայում լայնորեն օգտագործվող տարբեր աշխարհագրական ծագման և տաքսոնոմիական խմբերի պատկանող ծառաբույսերի գեղազարդության համեմատական ցուցանիշները և պիտանիությունը: Կատարվել է նաև կանաչ տնկարկներում օգտագործվող ներմուծված և աբորիգեն ծառաբույսերի հարաբերակցության վերլուծություն, մշակվել են դրանց օպտիմալ զուգակցման հեռանկարները և աբորիգեն դենդրոֆլորայի գեղազարդ ներկայացուցիչների հնարավոր հարուստ կազմով ներկայացվածության

հիմնավորումը մայրաքաղաքի կանաչապատման պրակտիկայում (ղեկ.՝ կ.գ.դ. Ժ.Վարդանյան):

Գեղազարդ խոտաբույսերի գիտական հավաքածուի գույքագրման արդյունքում պարզվել է, որ ներկայումս բուսաբանական այգու ծաղկային բույսերի հավաքածուն հաշվում է ավելի քան 200 տեսակ և սորտ, որոնք պատկանում են 31 ընտանիքի: 62%-ը *Iridaceae*, *Asteraceae*, *Primulaceae* ընտանիքներին պատկանող բազմամյա տեսակներ են, որոնք ներկայացված են մի քանի ենթախմբերով՝ գեղազարդ ծաղկող, գեղազարդ տերևավոր, գորգային, բորոյուրային, սոխուկավոր, 33%-ը՝ միամյա տեսակներ, 5%-ը՝ երկամյաններ (ղեկ.՝ կ.գ.թ. Լ.Մարտիրոսյան):

Մերձարևադարձային և արևադարձային բույսերի գիտական հավաքածուի տեսականորեն ընդլայնման նպատակով շարունակվել են գեղազարդ, տնտեսապես արժեքավոր նոր տեսակների ներմուծման գիտափորձական աշխատանքները: Հավաքածուն համալրվել է 35 նոր տեսակով, որոնք պատկանում են 24 ընտանիքի և 30 ցեղի: Հավաքածուն ընդլայնվել է 11 նոր ընտանիքով և 24 նոր ցեղով: Բուսատեսակները երկրագնդի տարբեր տարածաշրջաններից են, 7-ը՝ Էնդեմիկներ են՝ 2 տեսակ Մեքսիկայի, 4՝ Նոր Զելանդիայի, 1 Չինաստանի: Կատարվել է հավաքածուի գույքագրում, այն ներկայումս ընդգրկում է 769 տեսակ, որոնք պատկանում են 137 ընտանիքի և 355 ցեղի (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Ալեքսանյան):

«Հայաստանի ֆլորայի և բուսականության» էքսպոզիցիոն հողամասում շարունակվել են հավաքածուի պահպանման ու հարստացման աշխատանքները: Կատարվել են *Alliaceae*, *Apiaceae*, *Asteraceae*, *Campanulaceae*, *Chenopodiaceae*, *Fabaceae*, *Iridaceae*, *Juncaceae*, *Lamiaceae*, *Liliaceae*, *Linaceae*, *Papaveraceae*, *Poaceae*, *Rosaceae* ընտանիքներին պատկանող 45 բուսատեսակի տնկման և ցանքային աշխատանքներ, իրականացվել է վերատնկված բույսերի խնամք: Շարունակվել են «Արարատյան հարթավայրի աղակալված ճահիճներ» էքսպոզիցիոն հողամասի համալրման աշխատանքները: Արարատի մարզի աղակալված ճահիճներից հավաքվել և վերատնկվել են *Iris musulmanica*, *Merendera sobolifera*, *Cirsium alatum*, *Inula ausheriana*, *Linum barsegianii*, *Falcaria falcarioides*, *Sphaerophysa salsula*, *Juncus acutus*, *Microcnemum coralloides* ssp. *anatolicum*, *Aeluropus littoralis*, *A. pungens* և այլն, որոնց հիմնական մասն ընդգրկված է ՀՀ Կարմիր Գրքում: «Անտառների ֆլորա» հավաքածուի համալրման նպատակով իրականացվել են *Cerasus avium*, *Padus racemosa*, *Populus tremula*, *Sorbus aucuparia*, *Viburnum lantana*, *V. opulus* ծառա- և թփատեսակների տնկումներ: Վայրի պտղատու բույսերի հավաքածուն համալրվել է *Amelanchier ovalis* և *Sorbus orbicularis* տեսակներով: *Pyrus* L. ցեղի *ex situ* հավաքածուն, որտեղ ընդգրկված է եղել 18 տեսակ, համալրվել է տանձենու 3 նոր տեսակով՝ Վայոց ձորի նեղ լոկալ Էնդեմիկ *Pyrus browiczii* Mulk. (տնկիների միջոցով), *P. hyrcana* Fed. և *P. pseudosyriaca* Gladkova (սերմերի միջոցով): *Pyrus browiczii* Mulk. և *P. hyrcana* Fed. տեսակներն ընդգրկված են ՀՀ Կարմիր գրքում (ղեկ.՝ կ.գ.դ. Ժ.Հակոբյան):

Երկարաժամկետ *ex situ* պահպանության նպատակով կազմակերպվել և իրականացվել է Հայաստանի ֆլորայի 33 ընտանիքի, 57 ցեղի պատկանող 99 տեսակի սերմերի հավաք: 132 նմուշ մշակվել և նախապատրաստվել է երկարատև *ex situ* պահպանության համար: Հավաքների զգալի մասը պատկանում է *Rosaceae* ընտանիքին՝ 68 նմուշ, 42 տեսակ, 11 ցեղ: *Sorbus hajastana*, *Crataegus ulotricha*, *Crataegus zangezura*, *Iris sibirica*, *Rhododendron caucasicum* տեսակները գրանցված են ՀՀ Կարմիր Գրքում:

Գերմանիայի Բեռլին-Դախլեմի Բուսաբանական այգու և Բուսաբանական թանգարանի (BGBM Berlin-Dahlem) հետ համատեղ «Հարավային Կովկասի բույսերի բազմազանության պահպանության կատարելագործման մեխանիզմները» ծրագրի շրջանակում «Հայաստանի կենսաբազմազանության պահպանության կենտրոնի» «Սևան», «Զանգեզուր», «Վայոց ձոր» և «Երևանի ֆլորիստիկ շրջան» բիոտոպերի մոդելները համալրվել են 10 տեսակով, այդ թվում՝

հազվագյուտ և էնդեմիկ *Cotoneaster hajastanicus* և *C. assadii* տեսակներով: Հոկտեմբերին Ա.Ներսեսյանը Բեռլինում (Գերմանիա) մասնակցել է ծրագրի ավարտական հավաքին:

«*Sorbus hajastana*՝ Հայաստանի միջին լեռնային և ենթալպյան գոտիների հազվագյուտ ռելիկտ տեսակի պահպանություն» BGCI-ի (Մեծ Բրիտանիա) հետ համատեղ ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ա.Ներսեսյան) ավարտվել են *Sorbus hajastana* տեսակի՝ Ապարանի և Գեղարքունիքի մարզերի պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրությունները: Կազմվել են ծիլերի աճեցման արձանագրությունները և կենդանի հավաքածուի զարգացման խորհուրդների ցանկը: Իրականացվել է Սևանի թերակղզու պոպուլյացիայի մի մասի հավելյալ պահպանության ուժեղացում:

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Հայաստանի ֆլորայի որոշ վտանգված տեսակների *ex situ* պահպանությունը միկրոբազմացման և սերմերի հավաքածուների ստեղծման եղանակներով» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ Կ.Գ.Թ.Ա. Ներսեսյան) իրականացվել են գործուղումներ Սյունիք, Լոռի, Գեղարքունիք, Շիրակ և Վայց ձոր մարզեր, ուսումնասիրվել են *Dianthus martuniensis*, *Centaurea erivanensis*, *Cercis griffithii*, *Gundelia aragatzi*, *Cotoneaster hajastanicus* և *Gypsophila takhtadzhanii* տեսակների պոպուլյացիաները, հավաքվել են տվյալներ դրանց անհետացման հավանականությունը գնահատելու նպատակով: Իրականացվել է տեսակների *ex situ* պահպանություն կլոնային միկրոբազմացման և սերմերի երկարաժամկետ պահպանության միջոցով, մշակվել են *Centaurea erivanensis* (*Asteraceae*), *Cercis griffithii* (*Caesalpinaceae*) և *Gypsophila takhtadzhanii* (*Caryophyllaceae*) տեսակների կլոնալ միկրոբազմացման պայմանները:

«Ինվազիվ բուսատեսակների կողմից Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներին հասցվող վտանգների գնահատում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ Կ.Գ.Դ. Գ.Ֆայվուշ) աշխատանքների առաջին փուլում հայտնաբերվել է, որ դրանք առկա են բոլոր 3 արգելոցների (Խոսրովի անտառ, Շիկահող, Էրեբունի) և 4 ազգային պարկերի (Արփի լիճ, Արևիկ, Սևան, Դիլիջան) տարածքներում, ինչպես նաև այն 23 հատուկ բնապահպանական նշանակություն ունեցող տարածքներում, որոնք նախատեսվում է ընդգրկել Հայաստանում ստեղծվող Էմերալդ Էկոլոգիական ցանցում: Պետք է նշել, որ ինվազիվ և էքսանսիվ տեսակների շարքում ընդգրկվել է մի քանի տեսակ, որոնք ինտենսիվ տարածվում են ողջ հանրապետության տարածքում, սակայն դեռ չեն ներթափանցել բնության հատուկ պահպանվող տարածքներ: Դրանք շատ շուտ կարող են գրանցվել նաև այդ տարածքներում և վերածվել բնական էկոհամակարգերի համար մեծագույն վտանգի: Դրանք են՝ *Grindelia squarrosa* (հայտնաբերվել է նոր պոպուլյացիա Արփի լիճ ազգային պարկին մոտ շրջանում ստեղծվող Էմերալդ Էկոլոգիական ցանցի մի քանի պոտենցիալ տարածքներում), *Astragalus galegiformis* (անմիջապես Արփի լիճ և Դիլիջան ազգային պարկերի սահմանների մոտ), *Silybum marianum* (հայտնի էին պոպուլյացիաներ Արևիկ ազգային պարկի, Շիկահողի արգելոցի տարածքներում, իսկ ներկայումս նաև տարածվում է Դիլիջան ազգային պարկի տարածքում), *Helianthus tuberosus* (ինտենսիվ տարածվում է դեպի Դիլիջան ազգային պարկ), *Solidago canadensis* (հայտնաբերվել է Սևանա լճի ավազանի մերձտնային հողամասերից մեկում, անհրաժեշտ է այս տեսակի առանձին ուսումնասիրություն և մշտադիտարկում նաև մասնավոր տարածքներից դուրս հայտնաբերելու համար), *Clematis vitalba* (գրանցվել է Դիլիջան ազգային պարկի սահմանների մոտ):

«Ինվազիվ տեսակների ազդեցությունը Հայաստանի տարբեր էկոհամակարգերում ածխածնի կուտակման վրա» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ա.Ալեքսանյան) կատարվել են Հայաստանի տարբեր էկոհամակարգերում ածխածնի կուտակման վրա ինվազիվ տե-

սակների ազդեցության գնահատման նոր ուսումնասիրություններ, առաջին դաշտային աշխատանքները, ընտրվել են թիրախային տեսակները, տեղադրվել են 7 մշտական փորձա-հրապարակ, որոնք շարունակաբար ուսումնասիրվելու են հաջորդ 2 տարիների ընթացքում:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Оганезова Г.Г., Проблемы рода *Colchicum* L. *Colchicum sensu lato* или *Colchicum sensu stricto* в свете категорий прерывности и непрерывности», Ер., Изд. «Гитутюн», 176 с.
2. Akopian J., Ghukasyan A., Hovakimyan Zh., Martirosyan L., Zaroyan G. 2019. Experience of Wild Perennial Pea *Vavilovia formosa* Cultivation in the Botanical Gardens of Armenia. Yerevan, Institute of Botany after A. Takhtajyan of NAS RA. 14 p.
3. Piwowarczyk R., Pedraja O., Moral G., Fayvush G., Zakaryan N., Kartashyan N., Aleksanyan A. (2019) Holoparasitic Orobanchaceae (*Cistanche*, *Diphelypaea*, *Orobanche*, *Phelipanche*) in Armenia: distribution, habitats, host range and taxonomic problems // Phytotaxa, 386, 106 p. ISBN 978-1-77670-578-8 (paperback), ISBN 978-1-77670-579-5 (Online edition).

Հոդվածներ, զեկուցումներ

4. Գաբրիելյան Ի.Գ., Պապիկյան Ա.Ս., Խաչատրյան Ս.Է., Հնէաբուսաբանական գիտությունը Հայաստանում. նորաստեղծ Բուսաբանական թանգարանի հնէաբուսաբանության հատվածը, Ե., Հ.Կարապետյանի անվ. երկրաբանական թանգարանի 80-ամյակին նվ. միջազգ. գիտաժողովի նյութ. ժող., 2019, էջ 31-33:
5. Կորակյան Ս.Ա., Երևանի կանաչ տնկարկների դենդրոբազմազանությունը, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N2, 2019, էջ 43-47:
6. Հովակիմյան Ժ.Հ., Մուրադյան Ն.Ս., Ներմուծված ասպիրակների (*Spiraea* L.) էկոֆիզիոլոգիական հարմարողականությունը Հայաստանի բուսաբանական այգիներում և Իջևանի դենդրոպարկում, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N 4, 2019, էջ 42-46:
7. Մուրադյան Ն.Ս., Ասպիրակի (*Spiraea* L.) ներմուծված տեսակների բազմազան առանձնահատկությունները Երևանի բուսաբանական այգու պայմաններում, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», LXXI, N 1, 2019, էջ 56-59:
8. Վարդանյան Ժ.Հ., Կորակյան Ս.Ա., Զարոյան Գ.Ս., Կանաչ տնկարկների բաշխվածությունը Երևանի տարբեր վարչական շրջաններում և միկրոկլիմայական գոտիներում, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N 1, էջ 79-84:
9. Акопян Ж.А., Рецензия на книгу А.Микич "Lexicon of Pulse Crops. CRC Press, Taylor and Fransis, Зернобобовые и крупяные культуры, N 2 (30), 2019, с.161-162.
10. Варданян Ж.А., Ктракян С.А., Сравнительная оценка декоративности древесных растений различного географического происхождения и таксономических групп в зеленых насаждениях г. Еревана, Ер., ДНАН Армении, N 3, 2019, с. 281-290.
11. Варданян Ж.А., Ктракян С.А., Эколого-биологические аспекты оптимального сочетания аборигенных и интродуцированных древесных растений, применяемых в озеленении г. Еревана, Ер., ДНАН Армении, N 4, 2019, с.345-352.
12. Aglaia Szukala, Nadja Korotkova, Michael Gruenstaedl, Alexander N. Sennikov, Georgy A. Lazkov, Svetlana A. Litvinskaya, Eleonora Gabrielian, Thomas Borsch, Eckhard von Raab. Straube. Phylogeny of the Eurasian genus *Jurinea* (Asteraceae: Cardueae): Support for a monophyletic genus concept and a first hypothesis on overall species relationships // Taxon. Systematics and Phylogeny, 2019, v. 68, Issue 1, pp. 112-131.
13. Akopian J., Ghukasyan A., Hovakimyan Zh., Martirosyan L., Zaroyan, Studies on the perennial pea *Vavilovia formosa* (Fabaceae) of mountain Aknasar population (Gegham Highland) and under ex situ conditions in the Botanical Gardens of Armenia.// Ratar Povrt. 2019, 56 (1): XX-XX. doi: 10.5937/ratpov 56-19833, pp. 135-141.
14. Ali T., Munoz-Fuentes V., Buch A-K., Celik A., Dutbayev A., Gabrielyan I., Glynou K., Kachour L., Khaliq I., Kitner M., Nigrelli L., Ploch S., Runge F., Solovyeva I., Schmuker A., Vakhrusheva L., Xia X., Macia-Vicente J. G., Nowak C., Thines M. 2019. Out of Transcaucasia: Origin of Western and Central Palearctic populations of *Microthlaspi perfoliatum*// Flora (ELSEVIER), 253: pp. 127-141.
15. Asatryan A., Wild pears of Armenia: diversity, endemics and conservation, Acta Biologica Plantarum Agriensis, 7: 19-31, 2019, http://abpa.ektf.hu/uploads/papers/finalpdf/ABPA_7_from19to31.pdf

16. Beketovski D., Bakrian Ch., Mamajanyan S., Hayrapetyan A., Chemical evaluation of fruit pulp in the introduced varieties and palynological studies of *Malus domestica* Borkh in the Republic of Armenia // *Bulletin of Armenian National Agrarian University*, 1 (65), 2019, pp. 35-39.
17. Dengler J., Gehler J., Aleksanyan A., Fayvush G., Biurrun I., EDGG Field Workshops 2019 - the international research expeditions to study grassland diversity across multiple scales and taxa: Call for participation. Palearctic grasslands, 41, 2019, pp. 9-22. DOI: 10.21570/EDGG.PG.41.9-22
18. Francesco M. Raimondo, Gabrielian E., Greuter W., The genus *Aira* (*Sorbus* s.l., Rosaceae) in the Sicilian flora: taxonomic updating, re-evaluation, description of a new species and two new combinations for one Sicilian and one SW Asian species.// *Botanika chronika*. Kiato, 2019, v. 22, pp. 15-37, ISSN 0253-6064.
19. Hovakimyan J., Janjughazyan K., Fayvush G., Eco-physiological features of *Potentilla porphyrantha* (Rosaceae), NAS RA Electronic Journal of Natural sciences, 2019, 2(33), pp. 21-23.
20. Hovsepyan R., Stepanyan-Gandilyan N., Stollberg Ch., Phytomedicinal knowledge and “Official” Sources in Tatev (Armenia), *Ethnobiology Letters*, 2019, v.10, N 1, pp. 23-34.
21. Nanagulyan S., Margaryan L., Hovhannisyan Ye., Boyajyan E., New for Armenia species and genera of Basidiomycetes from Shikahogh state reserve, *Proceedings of the YSU. Chemistry and Biology*, Yerevan. – 2019, 53(1), pp. 29-32.
22. Qiu F., Khutsishvili M., Fayvush G., Tamanyan K., Atha D., Borris R., Phytochemical investigation of *Eremostachys moluccelloides* Bunge (Lamiaceae), *Biochemical Systematics and Ecology*, 2019, 84, pp. 17-20. DOI.org/10.1016/j.bse.2019.03.002
23. Szukala A., Korotkova N., Gruenstaeudl M., Sennikov A., Lazkov G., Litvinskaya S., Gabrielian E., Borsch T., von Raab-Straube E. Phylogeny of the Eurasian genus *Jurinea* (Asteraceae: Cardueae): Support for a monophyletic genus concept and a first hypothesis on overall species relationships // *Taxon. Systematics and Phylogeny*, v. 68, N 1, 2019, pp. 112-131.
24. Van Treuren R., De Groot L., Hisoriev H., Khassanov F., Farzaliyev V., Melyan G., Gabrielyan I., Van Soest L., Tulmans C., Courand D., De Visser J., Kimura R., Boshoven J. C., Kanda T., Goossens R., Verhoef M., Dijkstra J., Kik C., Acquisition and regeneration of *Spinacia turkestanica* Iljin and *S. tetrandra* Steven ex M. Bieb. to improve a spinach gene bank collection, *Genet. Resour. Crop. Evol.* 2019, pp. 1-11. RESEARCH ARTICLE. [https://doi.org/10.1007/s10722-019-00792-8\(0123456789\(\).,-volV\)\(01234567 89\(\).,-volV](https://doi.org/10.1007/s10722-019-00792-8(0123456789().,-volV)(01234567 89().,-volV)
25. Wang X., Wang D., Wang X., Khutsishvili M., Tamanyan K., Fayvush G., Atha D., Zhang Y., Borris R., Isoflavones from *Camphorosma lessingii* inhibit the organic anion transporters OAT1 and OAT3 // *Planta Med.*, 2019, 85, pp. 225-230. DOI 10.1055/a-0740-3255
Հոդվածները հրապարակվել են «Լանդշաֆտային ճարտարապետությունը բուսաբանական այգիներում և դեկորատիվ բուսերում» XI միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտ, 2019, 210 էջ:
26. Акопян Ж. А., Экспозиция флоры и растительности Армении Ереванского Ботанического сада НАН РА - принципы формирования коллекции и моделирования фитоценозов, с. 46-53.
27. Алексанян Н.Г., Перспективы практического использования субтропических и тропических растений в озеленении г. Еревана, с. 90-96.
28. Варданян Ж.А., Гатрчян Г.М., Принципы и возможности создания японского сада в Ереванском ботаническом саду, с. 65-69.
29. Варданян Ж.А., Научно-образовательные аспекты создания ландшафтных (экспозиционных) дендрокolleкций в Ереванском ботаническом саду, с. 179-181.
30. Закарян Н.А., Мартиросян Л.Ю., Адамян Р.Г., Погосян А.В., Нанагюлян С.Г., Проект по благоустройству и озеленению территории школы поселка Джрвеж Котайкского марза (Армения), с.109-115.
31. Ктракян С.А., Развитие декоративных насаждений в ландшафтной архитектуре г. Еревана, с. 15-19.
32. Мартиросян Л.Ю., Ассортимент декоративных травянистых растений для ландшафтного дизайна Ереванского ботанического сада, с.125-130.
33. Саргсян М.В., Перспективы использования некоторых ксерофильных представителей аборигенной дендрофлоры в озеленении г. Еревана, с. 142-146.
34. Степанян-Гандилян Н.П., Некоторые аспекты традиционной ландшафтной архитектуры Армении, с. 194-201.
35. Nersesyan A., Gatrchyan G., Models of natural landscapes in the center of biodiversity conservation of the Institute of Botany after A. Takhtajyan NAS RA, pp. 79-83.

Հոդվածները հրապարակվել են “Takhtajania” ամսագրում, N 5, Ե., 2019, 105 էջ:

36. Габриелян И.Г., Епремян Э.В., Акопян Е.А., Елмасакаян А.С., Айрапетян Н.А., Саакян Т.Г., Брух А.А., *Ruppiaceae* (*Magnoliophyta, Liliopsida, Alismatidae*) -- новое семейство для флоры Армении, с. 9-13.
37. Мурадян А.Г., Медоносные растения флоры Армении, с. 80-96.
38. Нерсисян А.А., Щербакова Е.Н., Мелконян Н.Г., Даниелян А.Г., *Ex situ* сохранение видов *Centaurea erivanensis* (*Asteraceae*), *Cercis griffithii* (*Caesalpiniaceae*) и *Gypsophila takhtadzhanii* (*Caryophyllaceae*) методом клонального микроразмножения, с. 76-79.
39. Оганезова Г.Г., Новинки флоры Кавказа и Армении в гербарии (ERE) Института ботаники НАН РА им. А. Тахтаджяна, с. 6-8
40. Оганесян М.Э., Новинки для флоры Армении по материалам гербария кафедры ботаники Ереванского зооветеринарного института (VIAU), с. 4 -5.
41. Степанян-Гандилян Н.П., Новые местонахождения ряда видов семейства *Lamiaceae* флоры Армении, с. 17-19.
42. Степанян-Гандилян Н.П., Флористические новинки к трибе *Anthemideae* Cass. (*Asteraceae*) флоры Армении, с. 20-26.
43. Элбакян А. А., Новые данные по распространению некоторых видов флоры Армении, с. 14-16.
44. Asatryan M., Oganessian M., Revision of the types collection of herbarium of the Institute of Botany, National Academy of Sciences, Republic Armenia (ERE), 3. (Additions). pp. 27-28.
45. Hayrapetyan A., Pollen of trees and shrubs of Armenia (Angiospermae. VI. *Platanaceae, Polygonaceae, Punicaceae, Ranunculaceae, Rhamnaceae*), pp. 29-42.
46. Hayrapetyan A., Pollen of trees and shrubs of Armenia (Angiospermae. VII. *Salicaceae, Sapindaceae, Smilacaceae, Solanaceae, Staphyleaceae, Tamaricaceae*). pp. 43-60.
47. Hayrapetyan A., Pollen of trees and shrubs of Armenia (Angiospermae. VIII. *Thymeleaceae, Tiliaceae, Ulmaceae, Vitaceae, Zygophyllaceae*), pp. 61-75.

ԿԵՆՏՐԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՂՐՈՒԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ Կ.Գ.Ռ. Բ.Գաբրիելյան

Փոխտնօրեն և գիտքարտուղար՝ Կ.Գ.Ք. Հ.Խաչատրյան

Էլեկտրոնային փոստ՝ zoohec@sci.am, gabrielb@sci.am, hasoika@yahoo.com

Կայքէջ՝ www.sczhe@sci.am

Մասնագիտական խորհուրդ 036՝ «Կենդանաբանություն»

Նախագահ՝ Կ.Գ.Ռ. Բ.Գաբրիելյան, գիտքարտուղար՝ Կ.Գ.Ք. Հ.Խաչատրյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Սևան-Հրազդան հիդրոէկոհամակարգի և հարակից տարածքների ցամաքային ֆաունայի և հիդրոբիոտների արդի վիճակի ուսումնասիրություն կլիմայի փոփոխման պայմաններում» թեմայի շրջանակներում ուսումնասիրություններ են իրականացվել Հրազդան գետի երևանյան հատվածում: Կատարվել են ողնաշարավոր և անողնաշար կենդանիների ֆաունայի, պարազիտաֆաունայի ներկա վիճակի, ինչպես նաև Հրազդան գետի ջրաքիմիական և ջրակենսաբանական համալիր հետազոտություններ և անթրոպոգեն գործոնների գնահատում: Ցամաքային ողնաշարավոր կենդանիներից հետազոտվել են կաթնասունները, թռչունները, սողունները և երկկենցաղները: Գրականության աղբյուրներում նշված 170 թռչնատեսակից գրանցվել է 105-ը, գերակշռող մասը կազմել են Corvidae և Passeridae ընտանիքների ներկայացուցիչները, որից հետո՝ ջրլող և գիշատիչ տեսակները՝ ճնճղանմաններից տնային ճնճղուկը (*Passer domesticus*) և մեծ երաշտահավը (*Parus major*), բնադրող ագռավներից մոխրագույն ագռավը (*Corvus corone*), ջրլողներից սև փարփարը (*Fulica atra*) և հայկական որորը (*Larus armenicus*), գիշատիչներից սովորական հողմավար

բազեն (*Falco tinnunculus*), իսկ միգրացիայի շրջանում գրանցվել են սև ցինի (*Milvus migrans*) մեծ երամներ: Բուսաբանական այգու տարածքում գրանցվել է փասիանը (*Phasianus colchicus*): Կաթնասուններից նշվել են ինչպես խոշոր տեսակներ (օրինակ՝ աղվեսը), այնպես էլ միջին և մանր: Հրազդան գետի ափամերձ լեռնատափաստանային լանջին՝ թփուտային, ժայռային ելուստներով բիոտոպում, գերակշռել են քարակզաքիսը (*Martes foina*) և անտառային մուկը (*Silvaemus ponticus*), քաղաքի ցածրադիր շրջաններում՝ ամայի տարածքներում և լքված շինություններում՝ սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*): Հրազդան գետի ափերի լքված այգիներում և Բուսաբանական այգու տարածքում հանդիպել է պարսկական սկյուռը (*Sciurus anomalus*): Քաղաքային շինություններում մեծ քանակություն են կազմել առնետները (*Rattus norvegicus*) և մոխրագույն համստերիկները (*Cricetulus migratorius*): Հետազոտության ողջ ընթացքում չի գրանցվել տնային մուկը (*Mus musculus*): Քանաքեռի լքված այգիներում և Դալմայի այգիներում նշվել է աքիսը (*Mustela nivalis*), գետի ափամերձ բուսականության մեջ՝ Կարմիր բլուրի հատվածում՝ շնագայլը (*Canis aureus*) (դեկ.՝ կ.գ.թ. Մ.Ղասաբյան): Երկկենցաղներից հանդիպել են կանաչ դոդոշը (*Bufo viridis*), սովորական ծառագորտը (*Hyla arborea schelkownikowi*) և լճագորտը (*Pelophilax ridibundus*): Սողուններից նշվել են կարմրափոր և կապարագույն սահնօձերը, վզնոցավոր և հայկական էրենիսները, սովորական և ջրային լորտուները, որդանման կույրօձը, կովկասյան գյուրզան, իսկ հազվագյուտ և անհետացող տեսակներից՝ առաջավորասիական մաբույան (*Trachylepis septemtaeniata*), երկարավոտ սցինկը (*Eumeces schneideri*), անդրկովկասյան սահնօձը (*Zamenis hohenackeri*), կովկասյան կատվածը (*Telescopus fallax*) (դեկ.՝ կ.գ.թ. Լ.Աղասյան):

Միջատաբանական հետազոտություններով նշվել է 370 տեսակ՝ բզեզների 297, թեփուկաթևների 20, լվիճների 6, երկթև միջատների 47: Հայաստանի տարածքից նկարագրվել է գիտության համար թերթիկաբեղավոր բզեզների 7 նոր տեսակ: Բացահայտվել է Հայաստանի ֆաունայի համար նոր ֆիտոֆագ գալամակների 2 տեսակ: Նշվել է գալամակների 20 և լվիճների 6 կերաբույս: Առաջին անգամ նկարագրվել են *Dorcadion* ցեղի երկարաբեղիկ բզեզների 4 տեսակի կարիոտիպերը, կատարվել են նույն ցեղի 20 տեսակի, *Carabus* ցեղի գնայուկների 15 և Cetoniinae ենթաընտանիքի 34 տեսակի ԴՆԹ-ի հետազոտություններ (դեկ.՝ կ.գ.թ. Մ.Քալաշյան):

Հետազոտվել է բիոհեղմիթների միջանկյալ տեր հանդիսացող ցամաքային և քաղցրահամ ջրերի փափկամարմինների տեսակային կազմը և դերը կենսացենոզներում: Գնահատվել է Հրազդան գետի ձկների վարակվածությունը մակաբույծներով: Գրանցվել է 7 տեսակի բիոհեղմիթ: Բոլոր տեսակների համար որոշվել է վարակվածության էքստենսիվությունն ու ինտենսիվությունը (դեկ.՝ ալ. Ս.Սովսեյան):

Թափառող շների արյան նմուշներից անջատվել է ԴՆԹ՝ մոլեկուլային-գենետիկական մեթոդներով տոքսոպլազմոզ և դիրոֆիլյարիոզ հիվանդությունների հարուցիչների հետազոտման նպատակով (դեկ.՝ կ.գ.թ. Ս.Աղասյան):

Մակաբույծ և վիրուսակիր նեմատոդների հայտնաբերման և ուսումնասիրության նպատակով հետազոտվել են ավելի քան 40 պտղատու և դեկորատիվ բուսատեսակներ: Հայտնաբերված մակաբույծ ֆիտոնեմատոդներից գերակշռել են վտանգավոր-վիրուսակիր *Xiphinema index* և *X. Vuittenzei* տեսակները: Ուսումնասիրված բոլոր բույսերի արմատամերձ հողում հայտնաբերվել են մեծ քանակությամբ *Dorylaimus* ցեղի ազատ ապրող նեմատոդներ (դեկ.՝ կ.գ.թ. Հ.Մկրտչյան):

Ուսումնասիրվել են մակաբույծ տիզերի տեսակային կազմը, կենսաբանական առանձնահատկությունները, տնտեսական նշանակությունը: Հայտնաբերվել են Ixodidae ընտանիքի 9, գլուղատնտեսական մշակաբույսերի վնասատու Tetranychioidea վերնաընտանիքի 7 և Phytoseiidae ընտանիքի 9 գիշատիչ տեսակներ: Երևանի 3 թաղամասերում գրանց-

վել են վարդերին վնասող լվիճներ՝ *Macrosiphum rosae*, *Chaetosiphon chaetosiphon*, *Metopolophium dirhodum*: Բացահայտվել են կենսաբանական պայքարում հեռանկարային տեսակներ (ղեկ.՝ կ.գ.դ. Կ.Դիլբարյան):

Կատարվել է լճագորտի (*Pelophylax ridibundus*) և կանաչ դոդոշի (*Bufo variabilis*) կենսաբանական և բջջագենետիկ որոշ ցուցանիշների ուսումնասիրություն: Հայտնաբերվել է քրոմոսոմային փոփոխականության 2 տիպ (25% և 35%), քրոմոսոմային հավաքակազմերում փոփոխություն չի նկատվել: Գրանցվել են էրիթրոցիտների ձևաբանական փոփոխություններ (ղեկ.՝ կ.գ.թ. Ի.Ստեփանյան):

Իրականացվել են Հրազդան գետի երևանյան հատվածի ջրաքիմիական և ջրակենսաբանական համալիր հետազոտություններ: Գետում գրանցվել են կենսածին տարրերի բարձր և լուծված թթվածնի ցածր արժեքներ: Ուսումնասիրության ողջ ընթացքում, մինչև Երևան մտնելը, նիտրատների պարունակությունը գետում եղել է բավականին բարձր, ինչը համապատասխանել է ջրերի որակի III՝ «միջին» կարգին: Երևան մտնելուց հետո, մինչև քաղաքի տարածքում աղտոտվելը՝ Հրազդանի կիրճում, ըստ կենսածին տարրերի ցուցանիշների, գետի ջուրը դասվել է II կամ «լավ» կարգի: Նիտրիտ և նիտրատ իոնների կտրուկ աճ է գրանցվել մինչև Երևանյան լիճ ընկած դիտակետում: Նիտրատ իոնների պարունակությամբ գետի ջրի որակն այստեղ համապատասխանել է IV՝ «անբավարար» կարգին: Չարբախ դիտակետում ևս ամռանը բարձր են եղել նիտրիտների և նիտրատների արժեքները, և գետի ջրի որակը այս դիտակետում եղել է III՝ «միջակ» կարգի: Լուծված թթվածնի արժեքները Երևանի տարածքում կտրուկ նվազել են և բոլոր ուսումնասիրված դիտակետերում համապատասխանել են ջրի որակի IV՝ «անբավարար» կարգին:

Ֆիտոպլանկտոնի կազմում գրանցվել է 6 հիմնական խմբերի 58 տեսակ: Գերակայել են դիատոմային ջրիմուռները, որոնց թվաքանակի և կենսազանգվածի մեծ արժեքները պայմանավորված են *Melosira varians*, *Fragilaria capucina*, *F. crotonensis*, խոշոր միաբջջի *Amphora ovalis*, *Cocconeis placentula*, *Rhoicosphenia curvata*, *Gomphonema constrictum*, ցենտրիկ ջրիմուռներ *Stephanodiscus astraea* տեսակներով: Գերակայող տեսակների մեծ մասն ունեցել է սապրոբայնության բարձր աստիճան (β և α - β): Ենթադոմինանտ կապտականաչ ջրիմուռների կազմում քանակական բարձր արժեքներով աչքի են ընկել *Oscillatoria limnetica* և *Oscillatoria chlorina* պոլիսապրոբ տեսակները: Կանաչ ջրիմուռների կազմում գրանցվել են խոշոր գաղութային *Dictiosphaerium pulchellum*, *Pandorina morum*, շղթայական *Binuclearia lauterbornii* տեսակները: Համեմատաբար մեծ թվաքանակ է գրանցվել *Scenedesmus* ցեղի *S. opolensis* և *S. Armatus* տեսակների համար: Էվգլենային ջրիմուռներից արձանագրվել է միայն *Trachelomonas volvocina* տեսակը: Փոքր քանակական արժեքներով արձանագրվել են նաև դինոֆիտային *Peridinium willei* և դեղնականաչ *Tribonema monochloron* տեսակները:

Չոռպլանկտոնի կազմում գրանցվել է 3 խմբին պատկանող 21 տեսակ: Գերակշռել են էվտրոֆ ջրամբարներին բնորոշ տեսակները: Տեսակային բազմազանությամբ աչքի են ընկել Երևանյան լիճ և Գետամեջ դիտակետերի չոռպլանկտոնային համակեցությունները: Նախորդ տարիների համեմատ գրանցվել է քանակական ցուցանիշների աճ: Տրոֆայնության մակարդակի ավելացման մասին վկայում է նաև այն փաստը, որ դիտակետերում չափերով ավելի խոշոր տեսակները փոխարինվել են ավելի մանր տեսակներով, ինչն օրգանական նյութի պարունակության աճի ցուցանիշ է:

Հրազդան գետի բենթիկ ֆաունայի հետազոտությունները ցույց են տվել, որ նախքան Երևանի տարածք մտնելը գետի էկոլոգիական վիճակը համեմատաբար ավելի լավ է: Ջրի որակն այստեղ գնահատվել է որպես «լավ»: Երևանի տարածքում՝ Գետամեջից մինչև Չարբախ, գետի բենթիկ ֆաունան որակապես և քանակապես զգալիորեն փոփոխվել է. օլիգոսապրոբ կենդանիները փոխարինվել են մեզոսապրոբ կենդանիներով: Բենթիկ

ֆաունայում միջավայրի օրգանական աղտոտվածության նկատմամբ առավել զգայուն անողնաշարներ են գրանցվել միայն Հրազդան գետի մինչև Երևանի տարածք և Երևանի Դավիթաշեն կամրջի հարևանությամբ ընկած հատվածում: Երևանի տարածքում գետի հատակային ֆաունայում բացակայում են Rhyacophilidae և Limnephilidae ընտանիների թավաթների թրթուրները, որոնք ջրի որակի մաքրության ցուցանիշ են:

Մակրոֆիտային համակեցության կազմում բացահայտվել է 17 տեսակ, որոնցից 7-ն իսկական հիդատոֆիտներ են, 5-ը հելոֆիտ, 3-ը հիգրոհելոֆիտ, իսկ 2-ը հիգրոֆիտ տեսակներ: Հանդիպման հաճախականությամբ գերիշխել են *Lemna minor* L., *Cladophora glomerata* L., *Phragmites australis* L. տեսակները: Կենսազանգվածով և մակրոֆիտների տեսակային բազմազանությամբ աչքի է ընկել Գետամեջ դիտակետը: Համեմատաբար բարձր աղտոտման մակարդակ է գրանցվել մինչև Երևանյան լիճն ընկած դիտակետում, որտեղ սապրոբայությունը հավասարվել է 2-ի:

Հրազդան գետի ձկնաշխարհը երևանյան հատվածում ներկայացված է կուրի կողակ (*Capoeta capoeta* Guldenstadt 1772), կուրի բեղաձուկ (*Barbus lacerta cyri* De Filippi 1985), արևելյան տառեխիկ (*Alburnoides bipunctatus eichwaldii* De Filippi 1863) և արծաթափայլ կարաս (*Carassius auratus gibelio*, Bloch 1782) ձկնատեսակներով: Գետամեջ և Կիևյան կամուրջ դիտակետերում գերակայել է արևելյան տառեխիկը, Հրազդան գետ (մինչև Երևանյան լիճ թափվելը) և Երևանյան լիճ դիտակետերում հանդիպել են միայն արծաթափայլ կարասի առանձնյակներ, իսկ Երևանյան լճից հետո (Չարբախ) դիտակետում հետազոտությունների ժամանակ որևէ ձկնատեսակ չի հանդիպել:

Այսպիսով, հիդրոքիմիական և ջրակենսաբանական հետազոտությունները ցույց են տվել, որ Հրազդան գետի ջուրը մինչև Երևան մտնելը ենթարկվում է ինքնամաքման և Գետամեջ գյուղի տարածքում, ըստ էկոլոգասանիտարական գնահատման, դասվում է «բավարար մաքուր» ջրերի շարքին: Երևանի տարածքում կենցաղային և արդյունաբերական հոսքաջրերի ազդեցության հետևանքով գետը խիստ աղտոտվում է և արդեն Դավիթաշենի կամրջի հարակից տարածքում և Վերին Չարբախում գետի ջուրը դասվում է «աղտոտված», իսկ մինչև Երևանյան լիճ լցվելը՝ «կեղտոտ» ջրերի դասին (ղեկ.՝ կ.գ.դ. Բ.Գաբրիելյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Սևանա լճի լճախորշերի էկոլոգիական առանձնահատկությունները ջրի մակարդակի տատանման պայմաններում» թեմայի (ղեկ.՝ կ.գ.դ. Բ. Գաբրիելյան) նպատակն է բացահայտել Սևանա լճի լճախորշերի էկոլոգիական առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը լճային ողջ էկոհամակարգի ու կենսատեսությունների ձևավորման վրա:

Սևանա լճի Արտանիշ, Լճաշեն, Ծովագարդ և Լիճք-Ծակքար լճախորշերում լճի «ծաղկման» գործընթացին նախորդող և հաջորդող ժամանակահատվածում իրականացվել են համալիր հիդրոէկոլոգիական հետազոտություններ:

Սևանա լճի լճախորշերի ջրի ջերմաստիճանը մակերևույթին տատանվել է 18-ից 23⁰ C-ի սահմաններում: Թթվածնային անբավարարություն է դիտվել հուլիս ամսին, Լճաշենի լճախորշում, ինչը պայմանավորված էր ինչպես լճի «ծաղկմամբ», այնպես էլ նախորդ ամիսների ընթացքում հատակում կուտակված բուսականության քայքայմամբ, հաջորդած ժամանակահատվածում կուտակված ջրիմուռների քայքայմամբ: Լուծված թթվածնի պարունակությունն այստեղ կազմել է 2.4 մգ/դմ³: ԹԿՊ5-ի արժեքները լճախորշերի ջրերում ձկնատնտեսական սահմանային թույլատրելի նորմերը գերազանցել են 1.13-1.5 անգամ, պերմանգանատային օքսիդացման ցուցանիշը՝ 1.2-1.4 անգամ: Պերմանգանատային օքսիդացման ցուցանիշի բարձր արժեքներ են դիտվել Լճաշեն և Ծովագարդ լճախորշերի փորձանմուշներում:

Լճախորշերի էկոլոգասանիտարական վիճակը գնահատվել է բորբոսասնկերի, սպրոֆիտ և կոլիֆորմ բակտերիաների քանակի հիման վրա: Հետազոտությունները ցույց են տվել, որ ջրի «ծաղկման» ժամանակ ջրիմուռների ինտենսիվ աճը ճնշել է բակտերիաների աճը, իսկ «ծաղկումից» հետո ջրիմուռների մահացած բջիջները քայքայվելով՝ նպաստել են օրգանական նյութի, հետևաբար նաև սապրոֆիտ բակտերիաների քանակի ավելացմանը:

Ուսումնասիրված լճախորշերից օրգանական նյութով համեմատաբար քիչ է աղտոտված եղել Արտանիշի լճախորշը: Ռոմանենկոյի մակերևութային ջրերի էկոլոգասանիտարական գնահատման համաձայն, ըստ սապրոֆիտ և կոլիֆորմ բակտերիաների թվաքանակի, Արտանիշի լճախորշում ջուրը դասվել է «մաքուր» ջրերի դասին: Այդ դասից են նաև Ծովագարդի լճախորշը և Ծովագարդի լճային հատվածը հուլիս ամսին: Լճաշենի լճախորշում գրանցվել է սապրոֆիտ (8600 ԳԱՄ/մլ) և կոլիֆորմ (15600 ԳԱՄ/լ) բակտերիաների առավելագույն թվաքանակ: Նշված լճախորշում ջուրը դասվել է «բավարար մաքուրից-աղտոտված» ջրերի դասին: Լիճքի լճախորշը դասվել է «բավարար մաքուր» ջրերի դասին:

Սևանա լճի լճախորշերի ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է մակրոֆիտների 30 տեսակ, որոնցից 13-ը՝ հիդատոֆիտ տեսակներ են, 7-ը՝ հելոֆիտներ, 4-ը՝ հիգրոհելոֆիտներ, 4-ը՝ հիգրոֆիտներ և 2-ը՝ հիգրոմեզոֆիտներ: Մակրոֆիտների առավելագույն կենսազանգված գրանցվել է Լճաշենի և Ծովագարդի խորշերում, որոնք ավելի շատ խորացած լինելով ցամաքի մեջ՝ պաշտպանված են ուժեղ ալիքների ազդեցությունից: Ըստ մակրոֆիտների սապրոբայնության գործակցի՝ Սևանի լճախորշերում բացահայտված մակրոֆիտները β-մեզոսապրոբ տեսակներ են, որոնք համապատասխանում են «բավարար մաքուր» ջրերի դասին: Համեմատաբար բարձր գործակցից գրանցվել է (2.3) Լճաշենի լճախորշում հուլիս ամսին, ինչը պայմանավորված է եղել լճի «ծաղկումից» հետո ջրիմուռների քայքայման գործընթացով, որի հետևանքով ակտիվացել են տիղմը գերադասող տեսակները (*Lemna minor*, *Ceratophyllum demersum*):

Յուրաքանչյուր դիտակետի համար հաշվարկվել են զոոբենոթսի կենսազանգվածը, թվաքանակը, Շենոն-Վայների կենսաբանական ինդեքսը և Հալսենհոֆի ձևափոխված բիոթիկ ինդեքսի (MHBI) արժեքները:

Գարնանը հատակային ֆաունան լճախորշերում աչքի է ընկել տեսակային բազմազանությամբ: Ամռանը տեսակային բազմազանությունը կրճատվել է՝ հավանաբար լճի «ծաղկման» և ծաղկմանը հաջորդող ջրիմուռների քայքայման արդյունքում: Ջրի որակը համապատասխանել է «միջին» դասին: Ավելի մեծ խորություններում ջրի որակը համապատասխանել է «միջինից ցածր» դասին: Հատակային անողնաշարների ամենամեծ քանակական ցուցանիշները և տեսակային բազմազանությունը գրանցվել է Լճաշենի և Ծովագարդի լճախորշերում, ամենափոքր ցուցանիշները՝ Լիճք-Ծակքար լճախորշում:

Լճախորշերում իրականացված ձկնաբանական հետազոտությունների արդյունքում լճում հանդիպող 8 ձկնատեսակից հայտնաբերվել է 6-ը, որոնք պատկանում են ծածանագլիների ընտանիքին՝ կողակ, բեղլու, արծաթափայլ կարաս, թեփուկավոր ծածան, արևելյան տառեխիկ, ամուրյան նրբաձկնիկ: Հետազոտված լճախորշերում գերակայող է եղել արծաթափայլ կարասը, կողակը, բեղլուն և թեփուկավոր ծածանը հանդիպել են միայն Արտանիշի հատվածում: Սևանա լճի լճախորշերում հանդիպող վերոնշյալ 6 ձկնատեսակից երբևէ արդյունագործական նշանակություն ունեցել են կողակը, բեղլուն և կարասը: Տարիների ընթացքում լճի էկոհամակարգի փոփոխությունը հանգեցրել է արդյունագործական ձկնատեսակների պաշարների զգալի փոփոխության: Ներկայումս կողակը և բեղլուն թեպետ համարվում են արժեքավոր ձկնատեսակներ, սակայն Սևանա լճում նրանց պաշարները խզված են և հազվադեպ են հանդիպում: Նրբաձկնիկը և տառեխիկը համարվում են ինվազիվ տեսակներ և չունեն արդյունագործական նշանակություն: Թեփուկավոր ծածանը լճում ևս հազվադեպ է հանդիպում, կարասի պաշարները զգալիորեն նվազել են:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Gabrielyan B. et al., The book: IPBES Global Assessment on Biodiversity and Ecosystem Services, Chapter 2.2 Status and Trends – Nature IPBES Global Assessment on Biodiversity and Ecosystem Services, 2019, <https://www.ipbes.net/global-assessment-report-biodiversity-ecosystem-services>

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

2. Հայրապետյան Վ.Տ., Հովհաննիսյան Վ.Ս., Ողնաշարավորների կենդանաբանություն. ձկներ, երկկենցաղներ, սողուններ, ԼՂՀ, «Աձ Գազիկ Բաղրյան» հրատ., 2019, 299 էջ:

Հոդվածներ, գեկուցումներ

3. Ստեփանյան Լ.Գ., Մարմարիկ գետի ֆիտոպլանկտոնային համակեցության որակական, քանակական ցուցանիշները և էկոլոգոաշխարհագրական բնութագիրը, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N3 (71), 2019, էջ 32-38, <http://biology.asj-oa.am/11606/1/32.pdf>.
4. Ստեփանյան Լ.Գ., Խաչիկյան Թ.Գ., Համբարյան Լ.Ռ., Սևանա լճի ջրհավաք ավազանի հիմնական գետերի և Հրազդան գետի ֆիտոպլանկտոնի որակական ցուցանիշների վերլուծություն, Ե., «ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու», 2019, էջ 119-127: <https://publications.gsu.am/wp-content/uploads/2019/09/gitajoxov2019.pdf>.
5. Վարդանյան Հ.Ս., Ղուկասյան Է.Խ., Կոբեյան Հ.Հ., Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերի ջրերի որակի գնահատումն ըստ մանրէաբանական ցուցանիշների, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N2 (71), 2019, էջ 6-11, <http://biology.asj-oa.am/11568/1/6.pdf>.
6. Акопян С.А., Калашян М.Ю., Новые обнаружения редких жаброногих ракообразных (Crustacea: Branchiopoda) *Leptestheria dahalacensis* (Ruppel, 1837) (Spinicaudata) и *Branchipodopsis terpogossiani* Smirnov, 1936 (Anostraca) в Армении, Ер., «Биолог.ж. Армении», т. 71, N4, 2019, с. 56-60.
7. Варданян Т.В., Барсегян Н.Э., Агасян А.Л., Сравнительный анализ некоторых морфометрических и пластических признаков севанской форели из оз. Иссык-Куль и озера Севан, Ер., «Биолог. ж. Армении», N2 (71), 2019, с. 37-42, <http://biology.asj-oa.am/11574/1/37.pdf>.
8. Варданян Т.В., Барсегян Н.Э., Морфоэкологические особенности амурского чебачка *Pseudorasbora parva* (Temminck et Schlegel, 1846) оз. Севан, Ер., «Биолог.ж. Армении», N3 (71), 2019, с. 25-31, <http://biology.asj-oa.am/11605/1/25.pdf>.
9. Габриелян Б.К., Геворкян С.А., Крапивин В.Ф., Мкртчян Ф.А., Разработка информационно-моделирующей инструментальной технологии диагностики водных объектов на примере оз. Севан, Мат. межд. симп., Серия: Инженерная экология, вып.Х, М., 2019, с. 113-120.
10. Габриелян И.Г., Епремян Э.В., Акопян Е.А., Елмасакая А.С., Айрапетян Н.А., Саакян Т.Г., Брух А.А., RUPPIACEAE (MAGNOLIOPHYTA, LILIOPSIDA, ALISMATIDAE) Новое семейство для флоры Армении, Ер., «Takhtajania», N 5, 2019, с. 9-13, www.serials.flib.sci.am/Publications/takhtajania1/book/content.html, www.botany.sci.am.
11. Гукасян Э.Х., Мелконян Г.Ф., Степанян Л.Г., Бадалян Н.С., Особенности развития популяции длиннопалого рака (*Pontastacus leptodactylus* Eschscholtz, 1823) в оз. Севан в период 1996–2018 гг., М., «Трансформация экосистем», N2 (3), 2019, с. 85-93, <http://www.ecosysttrans.com/upload/iblock/a53/a530e91982699adce6de024a89b319c2.pdf>.
12. Калашян М.Ю., Два новых вида златок рода *Endelus* Deyrolle, 1864 (Coleoptera, Buprestidae) из Вьетнама, М., «Энтомологическое обозрение», т. 98, N1, 2019, с. 152-158.
13. Калашян М.Ю., Креджян Т.Л., Караган Г.А., Экспансия божьей коровки арлекин *Harmonia axyridis* Pall. (Coleoptera, Coccinellidae) в Армении, «Российский Журнал Биологических Инвазий», N1, 2019, с. 56-60.
14. Крылов А.В., Айрапетян А.О., Цветков А.И., Герасимов Ю.В., Малин М.И., Габриелян Б.К., Межгодовые изменения количественных показателей и структуры беспозвоночных литоральной зоны и пелагиали оз. Севан (Армения) при колебаниях метеорологических условий и биомассы рыб. II Осенний зоопланктон, М., «Биология внутренних вод», N4 (1), с. 41-49. DOI: 10.1134/S0320965219040090
15. Манасерян Н., Армения: костные остатки животных из поселений и погребений эпохи бронзы. Евразия в Кайнозой. Стратиграфия, палеоэкология, культуры, N 7, Иркутск, 2019, с. 298-303.
16. Мовсесян С.О., Теренина Н.Б., Воронин М.В., Жизнь и научная деятельность академика К.И. Скрябина (к 140-летию со дня рождения), М., «Зоол. журнал РАН», т. 96, N 2, 2019, с. 238-242, Doi: 10.1134/80044513419020132.

17. Степанян, Л.Г., Гукасян, Э.Х., Численность и сезонная динамика сообщества фитопланктона среднего течения реки Раздан (Армения) в 2018, М., “Трансформация экосистем”, N2 (2), 2019, с. 53-61.
<http://www.ecosysttrans.com/upload/iblock/104/1043c190424587de52538fedb879b24b.pdf>
18. Aghayan S., Gevorgyan H., Ebi D., Atoyan H.A., Addy F., Mackenstedt U., Romig T., Wassermann M., Fasciola spp. in Armenia, Genetic diversity in a global context, «Vet. Parasitol.», 268, 2019, pp. 21-31.
<https://doi.org/10.1016/j.vetpar.2019.02.009>
19. Aghayan S., Gevorgyan H., Rukhkyan M. and all, Evidence of Crimean-Congo haemorrhagic fever virus occurrence in ixodidae ticks of Armenia, «Journal of Arthropod-Borne Diseases (Quarterly)», Iran, 2019, pISSN: 1735-7179, eISSN: 2322-2271. DOI: <https://doi.org/10.18502/jad.v13i1.928>
20. Alekseev V., Fiks B., Jenderedjian K., Hakobyan S., The model of dynamics of population number of the plankton cyclop *Mesocyclops leucarti* (Copepoda), Based on Photoperiodism // In: Dormancy in Aquatic Organisms. Theory, Human Use and Modeling. Alekseev, Victor, Pinel-Alloul, Bernadette (Eds.), Monographiae Biologicae book series (MOBI, v. 92, Springer: pp.247-258. DOI <https://doi.org/10.1007/978-3-030-21213-1>
21. Amouei A., Sarvi S., Sharif M., Aghayan S., Javidnia J., Mizani A., Moosazadeh M., Shams N., Hosseini S., Hosseininejad Z., Nayeri Chegeni T., Badali H., Daryani A., A systematic review of *Toxoplasma gondii* genotypes and feline: Geographical distribution trends. Transbound. Emerg. Dis., 2019a.
<https://doi.org/10.1111/tbed.13340>
22. Amouei A., Sharif M., Sarvi S., Nejad R.B., Aghayan S., Hashemi-Soteh M., Mizani A., Hosseini S.A., Gholami S., Sadeghi A., Sarafrazi M., Daryani A., Aetiology of livestock fetal mortality in Mazandaran province, Iran, PeerJ 2019b, p. 5920. <https://doi.org/10.7717/peerj.5920>
23. Anvari D., Sharif M., Sarvi S., Aghayan S., Gholami S., Pagheh A.S., Hosseini S.A., Saberi R., Chegeni T.N., Hosseininejad Z., Daryani A., Seroprevalence of *Toxoplasma gondii* infection in cancer patients: A systematic review and meta-analysis, «Microb Pathog.», 129, 2019a, pp. 30-42. <https://doi.org/10.1016/J.MICPATH.2019.01.040>
24. Arakelyan M., Harutyunyan T., Aghayan S., Carretero M., Infection of parthenogenetic lizards by blood parasites does not support the “Red Queen hypothesis” but reveals the costs of sex, «Zoology», 136, 2019, p.125709. <https://doi.org/10.1016/j.zool.2019.125709>
25. Asatryan V., Dallakyan M., The rapid biological assessment of ecological status of Arpa River (Armenia), Proceedings of the IWA 11th Eastern European Young Water Professionals Conference, Prague, 2019, pp. 23-30.
26. Bezděk A., Kalashian M., Ghrejjan T., On the identity of *Cyphonoxia maljuzhenkoi* Zaitzev, 1928 (Coleoptera: Scarabaeidae: Melolonthinae), «Zootaxa», v. 4671, N 3, 2019, pp. 439-445.
27. Bulysheva N., Shokhin I., Aroutiounian R., Asatryan V., Amphibiotic and aquatic insects of the Lake Sevan and their role in the recolonization of the coastal area, Proceedings of the 7th all-Russian scientific symposium (with international participation) on amphibiotic and aquatic insects “The issues of aquatic entomology in Russia and adjacent countries”, Vladikavkaz, 2019, pp. 18-22.
28. Gevorgyan G., Boshyan T., Investigation of river macrozoobenthos community in the Debed River catchment area under the risk of mining impact, Yerevan, “Electronic Journal of Natural Sciences of NAS RA”, N 32(1), 2019, pp. 9–11. <http://www.ecosysttrans.com/upload/iblock/094/094be2b0e6dce1507183e20251d2dcb4.pdf>
29. Chegeni T., Sharif M., Sarvi S., Moosazadeh M., Montazeri M., Aghayan S., Balalami N., Gholami S., Hosseininejad Z., Saberi R., Anvari D., Gohardehi S., Daryani A., Is there any association between *Toxoplasma gondii* infection and depression? A systematic review and meta-analysis, PLoS One 14, 2019, p. e0218524.
<https://doi.org/10.1371/journal.pone.0218524>
30. Ghukasyan E., Melkonyan H., Stepanyan L., Badalyan N., The features of narrow-clawed crayfish (*Pontastacus leptodactylus* Eschscholtz, 1823) population development in Lake Sevan during 1996–2018, Moscow, “Ecosystem transformation”, N 2(3), 2019, pp. 24-31. <http://www.ecosysttrans.com/upload/iblock/094/094be2b0e6dce1507183e20251d2dcb4.pdf>
31. Dodangeh S., Daryani A., Sharif M., Aghayan S., Pagheh A., Sarvi S., Rezaei F., A systematic review on efficiency of microneme proteins to induce protective immunity against *Toxoplasma gondii*, «Eur. J. Clin. Microbiol. Infect.», Dis. 38, 2019a, pp. 617–629. <https://doi.org/10.1007/s10096-018-03442-6>
32. Dodangeh S., Daryani A., Sharif M., Aghayan S., Pagheh A., Sarvi S., Rezaei F., A systematic review on efficiency of microneme proteins to induce protective immunity against *Toxoplasma gondii*. Eur. J. Clin. Microbiol. Infect. Dis. 38, 2019b. <https://doi.org/10.1007/s10096-018-03442-6>

33. Gevorgyan H., Grigoryan G., Atoyan H., Rukhkyan M., Hakobyan A., Zakaryan H., Aghayan S., Evidence of Crimean-Congo haemorrhagic fever virus occurrence in Ixodidae Ticks of Armenia, «J. Arthropod. Borne.», Dis. 13, 2019, pp. 9-16.
34. Hambaryan L., Gevorgyan G., Investigations of formation phytoplankton community in the Arpa river (ARMENIA) and its main tributaries Yerevan, «Proceedings of the Yerevan State University, Chemistry and Biology», N 53(1), 2019, pp. 46-52.
http://www.ysu.am/files/8_Hambaryan.pdf
35. Hovsepyan A., Mamyan A., Khachikyan T., Tikhonova I., Sorokovikova E., Belykh O., Gevorgyan G., Monitoring of phytoplankton status in Lake Sevan (Armenia) in 2018, «Proceedings of the Yerevan State University», N 53(3), 2019, pp. 207-212.
36. Hosseini S., Sharif M., Sarvi S., Abediankenari S., Hashemi-Soteh M., Amouei A., Montazeri M., Aghayan S., Gholami S., Shaker D., Mizani A., Shabanzadeh S., Daryani A., Genetic characterization of *Toxoplasma gondii* in Iranian HIV positive patients using multilocus nested-PCR-RFLP method, «Parasitology», 2019, pp. 1-7.
<https://doi.org/10.1017/S0031182019001598>
37. Kalashian M., A new species of *Aphanisticus* Latreille, 1810 (Coleoptera: Buprestidae: Agrilinae) from Indonesia, «Acta Entomologica Musei Nationalis Pragae», 2019, v. 59, N 2, 2019, pp. 463-466. DOI: 10.2478/aemnp-2019-0035
38. Kalashian M., Ghrejyan T., Karagyan G., Expansion of *Harlequin Ladybird Harmonia axyridis* Pall. (Coleoptera, Coccinellidae) in Armenia, «Russian Journal of Biological Invasions», v. 10, N 2, 2019, pp.153-156, ISSN 2075-1117, DOI: 10.1134/S2075111719020073
39. Kalashian M., Two new species of the buprestid genus *Endelus* Deyrolle, 1864 (Coleoptera, Buprestidae) from Vietnam, «Entomological Review», v. 99, N 2, pp. 203-208, DOI: 10.1134/S0367144519010131
40. Kobelyan H., Gevorgyan G., Hydroecological investigation of the Hrazdan River and “Yerevanyan Lich” Reservoir, Armenia, Yerevan, «Biological Journal of Armenia», N 71(4), 2019, pp. 6-13.
41. Krylov A., Hayrapetyan A., Tsvetkov A., Gerasimov Yu., Malin M., Gabrielyan B., Interannual changes in the quantitative parameters and structure of invertebrates in the littoral and pelagic zones of Lake Sevan (Armenia) with fluctuations in meteorological conditions and fish biomass. I. Summer Zooplankton, Moscow, «Inland Water Biology», N 12(3), 2019, pp. 298-305. DOI: <https://doi.org/10.1134/S1995082919030088>
42. Mamyan A., Stepanyan L., Hambaryan L., Varagyan V., Gevorgyan G., Investigation of phytoplankton community in the Hrazdan River and “Yerevanyan Lich” Reservoir in the conditions of algal bloom, «Proceedings of the Yerevan State University», N 53(3), 2019, pp. 201-206.
43. Movsesyan S., Nikogosyan M., Petrosyan R., Voronin M., Kuznetsov D., Species diversity of nematodes in domestic and wild ruminants of Armenia, «Annals of Parasitologi», Polish Parasitological Society, v. 65, N 2, 2019, pp. 113-120.
44. Movsesyan S., Petrosyan R., Nikogosyan M., Terenina N., Gomez-Morales M., Voronin M., Plasmagenesis dynamics in experimental *Trichinella* infection, «Scientia Parasitologica», v. 20, 2019, pp. 33-39. www.scientia.zooparaz.net
45. Pilot M., Moura A., Okhlopkov I., Manaseryan N. et al., (16), Global phylogeography and admixture patterns in grey wolves and genetic legacy of an ancient lineage, «Nature. Scientific Reports», v. 9, 2019, pp. 1-28.
46. Raković M., Neto J.M., Lopes R., Koblik E., Fadeev I., Lohman Y., Aghayan S., Boano G., Pavia M., Perlman Y., Kiat Y., Dov A., Ben Martin Collinson J., Voelker G., Drovetski S.V., Geographic patterns of mtDNA and Z-linked sequence variation in the Common Chiffchaff and the ‘chiffchaff complex’ PLoS One 14, 2019 e0210268. <https://doi.org/10.1371/journal.pone.0210268>
47. Rezaei F., Sarvi S., Sharif M., Hejazi S.H., Pagheh A. Sattar, Aghayan S., Daryani A., A systematic review of *Toxoplasma gondii* antigens to find the best vaccine candidates for immunization, «Microb. Pathog.», 2019. <https://doi.org/10.1016/j.micpath.2018.11.003>
48. Spangenberg V., Arakelyan M., Galoyan E., Pankin M., Petrosyan R., Stepanyan I., Grishaeva T., Danielyan F., Kolomiets O., Extraordinary centromeres: differences in the meiotic chromosomes of two rock lizards species *Darevskia portschinskii* and *Darevskia raddei*, PeerJ, 7, 2019, p. e6360. (PubMed 30723630)
ID - https://peerj.com/articles/6360/?utm_source=TrendMD&utm_campaign=
49. Stepanyan, L., Ghukasyan, E., The abundance and seasonal dynamics of phytoplankton community of the middle course part of Hrazdan River in 2018, Moscow, «Ecosystem transformation», N 2(2), 2019, pp. 3-11.
<http://www.ecosysttrans.com/upload/iblock/5bf/5bf37c245f0602dc43e749e27644bdb5.pdf>

50. Troeger C., Blacker B., Khalil I., Zimsen S., Albertson S., Abate D., Abdela J., Adhikari T., Aghayan S., Agrawal S., Mortality, morbidity, and hospitalisations due to influenza lower respiratory tract infections, 2017: an analysis for the Global Burden of Disease Study 2017, «Lancet Respir. Med.», 7, 2019, pp. 69-89. [https://doi.org/10.1016/S2213-2600\(18\)30496-X](https://doi.org/10.1016/S2213-2600(18)30496-X)
51. Vardanyan T., Barseghyan N., Asatryan V., Gabrielyan B., Species composition of ichthyofauna of Vorotan river (Armenia), Yerevan, "Electronic Journal of Natural Sciences of NAS RA", N 32(1), 2019, pp. 12-16.
52. Uspensky A., Bukina I., Odoevskaya I., Movsesyan C., Voronin M., The epidemiology of trichinelosis in the Arctic territories of a Far Eastern district of the Russian Federation, «Journal of Helminthology», Cambridge, 2019, pp. 42-49. DOI:10.1017/80022149x18000020
53. Zarikyan N., Benyamini D., Long-term pupal diapause of the Southern Swallowtail – *Papilio alexanor orientalis* Romanoff, 1884 in Armenia, and *P. a. maccabaeus* Staudinger, 1881 in Israel, «News of the Israeli Lepidopterists Society», v. 36, N 2, 2019, pp. 18-24.
54. Zarikyan N., Dilbaryan K., Gasparyan B., Tick remains from Areni-1 (Birds' Cave, Armenia) Association for Near Eastern and Caucasian Studies, Yerevan, Oxford 2019, «Archaeopress Journals», v. 13, i. 1, 2019, pp. 144-152, ISSN 1829-1376.
55. Zarikyan N., Khachatryan H., Kalashyan M., High Altitude Papilionoidea (Lepidoptera) of Tsaghkunyats mountains in Armenia and their diversity along the altitudinal gradient, «International Journal for Research in Applied and Natural Science», v. 5, N 9, 2019, pp. 15-26. ISSN: 2208-2085
Статьи опубликованы в «Материалах XXI Международной научной конференции «Биологическое разнообразие Кавказа и Юга России», Магас, Типография ООО «КЕП», 2019, 498 с., ISBN 978-5-4482-0061-8, ID - <https://cloud.mail.ru/stock/amhkLVAoRLurHUj9eoBenwU2>.
56. Акопян Н.Х., Бадалян Дж., Аветисян А.А., К фауне медведиц (Lepidoptera, Arctiidae) и пядениц (Lepidoptera, Geometridae) Тавушского марза Армении, с. 273-275.
57. Арутюнян Р.Г., Арутюнян Г.А., Марджанян М.А., Новые данные о вредителях-чешуекрылых (Insecta, Lepidoptera) некоторых голосеменных растений Армении, с. 267-269.
58. Калашян М.Ю., Марджанян М.А., Оганесян В.С., Арутюнова Л.Дж., Хачатрян А.Г., Арутюнян Р.Г., Мирумян Л.С., Караган Г.А., Магомедова М.З., Креджан Т.Л., Аветисян А.А., Акопян Н.Х., Предварительные данные по фауне беспозвоночных животных городского ландшафта (Mollusca, Insecta), с. 341-342.
59. Магомедова М.З., Магомедова П.Д., Арутюнова Л.Д., Гаджиев А.А., Магомедов М.Д., Зоогеографический анализ *Cecilioides Asicula* (Muller, 1774) в Горном Дагестане по результатам собственных сборов в 2015-2018гг., с. 364-367.
60. Магомедова М.З., Магомедова П.Д., Арутюнова Л.Д., Гаджиев А.А., Магомедов М.Д., Особенности распределения *Zonitoides Nitidus* (Muller, 1774) на территории Республики Дагестан, с. 367-369.
61. Манасерян Н., Багоян А., Фауна из раскопок археологических памятников Сотк и Норабак, Армения, с. 371-377.
62. Хачатрян Э.А., Степанян И.Э., Пипоян С.Х., Изменчивость эритроцитов восточной быстрянки *Alburnoides eichwaldii* (Cypriniformes, Actinopterygii) в зависимости от концентраций загрязнителей в среднем и нижнем течении реки Гегануш (Армения), с. 453-456.
Статьи опубликованы в Сборнике научных статей по мат. межд. конф. «Теория и практика борьбы с паразитарными болезнями», М., Издательский дом «Наука», вып. 20, 2019, 758с.
63. Барсегян Р.Э., Петросян Р.А., Никогосян М.А., Дудукчян З.М., О зараженности кроликов породы Великан разными видами эймерий в лабораторных условиях, с. 80-85, [https://vniigis.ru/1_dlya_failov/Conferences%20and%20meetings/conference-2019/%D0%9C%20-%20%D0%A1%20\(49%20%D1%81%D1%82%D0%B0%D1%82%D0%B5%D0%B9\)/433-437](https://vniigis.ru/1_dlya_failov/Conferences%20and%20meetings/conference-2019/%D0%9C%20-%20%D0%A1%20(49%20%D1%81%D1%82%D0%B0%D1%82%D0%B5%D0%B9)/433-437) DOI:10.31016/978-5-9902 34 0- 8-6.2019.20.80-85.
64. Мовсесян С.О., Никогосян М.А., Теренина Н.Б., Воронин М.В., Жизненные циклы цестод отряда *Cyclophillidae* van Beneden, 1900, с. 358-363.
65. Мовсесян С.О., Петросян Р.А., Никогосян М.А., Арутюнова Л.Д., Ваданян М.В. и др., Формирование биоразнообразия паразитофауны в условиях предгорной системы Раздан-Мармарик Армении, с.364-370.
66. Мочалова Н.В., Теренина Н.Б., Крещенко Н.Д., Яшин В.А. и др., *Dicrocoelium lanceatum* (Трематода: *Dicrocoelidae*): исследование нервной и мышечной системы, с. 379-383.
67. Оганесян Р.Л., Рухкян М.Я., Исследование видового состава гельминтов рыб среднего течения р. Раздан, Армения, с. 433-437.
68. Рухкян М.Я., Оганесян Р. Л., Мониторинг иксодовых клещей в центральной части Армении, с. 518-522.

Статьи опубликованы в Материалах XII Всеросс. научн. конф. «Актуальные Проблемы химии, биологии и биотехнологии», Владикавказ, 2019, Изд. Владикавказ, с.273.

69. Акопян А.С., Степанян И.Э., Дилбарян К.П., Видовой состав и сезонная динамика численности тлей (Aphididae, Insecta) на декоративных розах в урбанизированных территориях – в городе Ереване, 2019, с. 6-8.
70. Степанян И.Э., Варданян Т.В., О полиморфизме кариотипов восточной быстрянки *Alburnoides eichwaldii* (Filippi, 1863) (Cypriniformes, Leuciscinae) в водоемах Армении, 2019, с. 84-88.
Հոդվածները հրատարակվել են The International Conference “Rufford Foundation and conservation of biodiversity of Cental Asia”, Aksu-Jabaghly Reserve Proceedings, Shymkent, March 16-17, 2019, Издат.”Shymkent”, ISBN 978-601-72877-19-1., ID - <http://docplayer.net/160562207-The-conference-report.html>.
71. Karagyan G., Kalashian M., Ghrejjan T., Danchenko A., Some endangered insects of Armenia: proposals for renovation of the country’s red book and development of the system of especially protected nature areas, I.12, 2019, pp. 56-68. <http://www.ecosysttrans.com/upload/iblock/094/094be2b0e6dce1507183e20251d2dcb4.pdf>
72. Kuznetsova V., Maryańska-Nadachowska A., Khabiev G., Karagyan G., Krivokhatsky V., Variation in the number of testicular follicles and ovarioles among 18 lacewing species of the families Myrmeleontidae, Ascalaphidae, and Nemopteridae (Insecta, Neuroptera, Myrmeleontiformia), ZooKeys, v. 894, 2019, pp. 33-51.
73. Stepanyan I., Nikoghosyan G., Pipoyan S., Threatened Ommatotriton ophryticus Berthold, 1846 in Armenia: state of populations, habitats conditions, threats and conservation activities, pp. 99-103.
74. Манасерян Н.У., Остатки животных из поселений и захоронений Ширакской области, Мат. X межд. конф. “Историко-культурное наследие Ширака: современные проблемы Арменоведения», Гюмри, 2019, с. 52-54.
Հոդվածները հրատարակվել են “Закономерности формирования и воздействия морских, атмосферных опасных явлений и катастроф на прибрежную зону РФ в условиях глобальных климатических и индустриальных вызовов” միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում, Ռոստով-Դոն, «ЮНЦ РАН» հրատ., 2019, էջ 404:
75. Гамбарян Л.Р., Мамян А.С., Хачикян Т.Г., Гукасян Э.Х., Развитие видов-индикаторов фитопланктона в литорали оз. Севан (Армения) и оценка современного статуса водоема, с. 223-224, https://www.researchgate.net/publication/334150950_Lake_Sevan_Armenia
76. Asatryan V., Dallakyan M., The changes of ecological status of the Hrazdan River under the impact of Aghbyurak dam, pp. 257-260.

Պաշտպանվել են 1 դոկտորական, 3 թեկնածուական ատենախոսություններ:

«ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ ակ. Ա.Սաղյան
Փոխտնօրեն՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան
Գիտքարտուղար՝ կ.գ.դ. Ն. Վարդանյան
Էլեկտրոնային փոստ՝ armbiotech@gmail.com
Կայքէջ՝ www.armbiotech.am

Մասնագիտական խորհուրդ 018՝ «Միկրոբիոլոգիա, կենսատեխնոլոգիա»
Նախագահ՝ ակ. Ա.Սաղյան, գիտքարտուղար՝ կ.գ.դ. Գ.Ավետիսովա

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Կլոնավորման համար *Pectobacterium carotovorum subsp. carotovorum* PC1-ի գենոմի ամբողջական սեքվենսից (NC_012917) ընտրվել են ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների գեները (“GeneID:8132725” և “GeneID:8134484”) *E.coli*-ի ուժեղ էքսպրեսիայով վեկտորների կազմում ընդգրկելու համար: Հետազոտվել են համապատասխան ամինատրանսֆերազների գեների նուկլեոտիդային հաջորդականությունները IIS տիպի BsaI

ռեստրիկտագին հարմարեցված ռեստրիկցիոն տեղամասերով պրայմերային զույգերի ընտրության համար:

Նախկինում ստացված *P.carotovorum*-ի պրայմերների (P1 – *P.carotovorum* MDC 8690, P2 – *P.carotovorum* MDC 8694, P3 – *P.carotovorum* MDC 8700, P4 – *P.carotovorum* MDC 8713, P5 – *P.carotovorum* MDC 8720, P6 – *P.carotovorum* MDC 8726, P7 – *P.carotovorum* MDC 8727, P8 – *P.carotovorum* MDC 8756, P9 – *P.carotovorum* MDC 8758, P10 – *P.carotovorum* MDC 8771) կիրառմամբ Golden Gate Assembly մեթոդով P6, P7 և P8 շտամների ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների գեները կլոնացվել են pET28 (GG_CD-LacZ) պլազմիդի կազմում և ստացված վեկտորներով տրանսֆորմացվել են *E. coli* BL21 (DE2) շտամի բջիջները:

Ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների գեները կրող ռեկոմբինանտ *E.coli*-ի շտամներից անջատվել, մասնակիորեն մաքրվել և բնութագրվել են P6, P7 և P8 շտամների համապատասխան ամինատրանսֆերազները: Ցույց է տրվել, որ բոլոր երեք շտամներից անջատված արոմատիկ և ասպարտատ ամինատրանսֆերազների ջերմաստիճանային օպտիմումները գտնվում են 50°C ջերմաստիճանի տիրույթում: Արոմատիկ ամինատրանսֆերազների օպտիմալ pH-երը գտնվում են 7.5-9.0 տիրույթում, իսկ ասպարտատ ամինատրանսֆերազներինը՝ 6.5-9.0 տիրույթում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Համբարձումյան):

Իրականացվել է *G. stearothermophilus* և *T.neapolitana* բակտերիաների հետերոլոգ *argJ* գեների մոլեկուլային կլոնավորում *E.coli*-ի բջիջներում, ինչպես նաև ստացված ռեկոմբինանտ պլազմիդների կառուցվածքային վերլուծություն: Դրանց հիման վրա ստեղծվել են *L*-արգինինի նոր շտամ-արտադրիչներ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան):

Երասխահուն և Ջրառատ գյուղերի (Արարատի մարզ) աղակալած հողերից սելեկտիվ մեթոդներով մեկուսացվել են մի շարք բակտերիալ շտամներ՝ օժտված ազոտի ֆիքսման ակտիվությամբ: Հարուստ և մինիմալ սննդամիջավայրերի վրա ուսումնասիրվել են դրանց հիմնական մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական, կուլտուրալ և կենսաքիմիական հատկությունները: Արդյունքում ընտրվել է 13 առավել ակտիվ ազոտֆիքսող շտամ և ուսումնասիրվել է դրանց կայունությունը NaCl-ի տարբեր կոնցենտրացիաների (3-7%) նկատմամբ էջրի և Բուրկ մինիմալ սննդամիջավայրերի վրա: Լաբորատոր պայմաններում ուսումնասիրվել է աղակալած հողերում նոր շտամների ազդեցությունը փորձարարական բույսերի աճի վրա (ղեկ.՝ կ.գ.թ. Ս.Քելեշյան):

10լ կենսառեակտորում ուսումնասիրվել է *L*-հիստիդինի կենսասինթեզը *Brevibacterium flavum* LGS6 շտամ-արտադրիչի կիրառմամբ ֆերմենտացիոն սննդամիջավայրում, որը պարունակում է ամոնիակի 25%-ոց ջրային լուծույթ pH-ի կայունացման նպատակով: Փորձնականորեն ցույց է տրվել, որ KLa-ի զանգվածափոխանակման արժեքը, սկսած կենսասինթեզի lag փուլից մինչև էքսպոնենցիալ փուլի ավարտը (0-28 ժ), պետք է պահպանել 135-145 ժ⁻¹ սահմաններում, իսկ pH-ի և ջերմաստիճանի արժեքները՝ համապատասխանաբար 7.6-7.8 և 33-34°C սահմաններում: Ստացված արդյունքները ցույց են տվել, որ մշակված և օպտիմալացված տեխնոլոգիական ցուցանիշների կիրառման դեպքում *L*-հիստիդինի կենսասինթեզն իր հիմնական ցուցանիշներով՝ նպատակային նյութի 25-26 գ/լ կոնցենտրացիայով, շաքարի և ազոտի յուրացման դինամիկայով, կենսասինթեզի 60-62 ժ տևողությամբ, 0.65 գ/լ*ժ արտադրողականությամբ, շաքարի 35% կոնվերսիայով, ուղեկցող ամինաթթուների նվազագույն (8-9%) քանակությամբ զգալի գերազանցում է ստուգիչ փորձի արդյունքները: Ստացիոնար փուլի սկզբից մինչև կենսասինթեզի ավարտը (29-62 ժամ) KLa-ի օպտիմալ արժեքը կազմում է 230-250 ժ⁻¹, իսկ pH-ի և ջերմաստիճանի արժեքները՝ համապատասխանաբար 6.8-7.0 և 30-32°C սահմաններում: pO₂-ի և pCO₂-ի կոնցենտրացիաները հավասարակշռվում են ըստ ռացիոնալ տեխնոլոգիական ցուցանիշների դինամիկայի:

Ստուգիչ փորձի պարագայում ֆերմենտացիոն սննդամիջավայրը պարունակել է 5.0% կալցիումի կարբոնատ, որը նպաստել է կենսասինթեզի գործընթացում pH-ի արժեքի պահպանմանը 6.2-7.8-ի սահմաններում, իսկ KLa-ի և ջերմաստիճանի գործակիցները՝ համապատասխանաբար 220 Ժ^{-1} և $30\text{-}32^\circ\text{C}$ սահմաններում: Կուլտուրալ հեղուկում L-հիստիդինի կոնցենտրացիան հասել է $16\text{-}18 \text{ գ/լ}$, ուղեկցող ամինաթթուների կոնցենտրացիան կազմել է 18-20%, իսկ կենսասինթեզի տևողությունը՝ 78-80 Ժ (ղեկ.՝ տ.գ.թ. Ա.Վարդանյան):

Իրականացվել է կաթը մակարդող ֆերմենտի՝ բակտոռենինի *Bacillus mesentericus* շտամ-արտադրիչի աճեցման սննդամիջավայրի և կուլտիվացման ջերմաստիճանի օպտիմալացում: Կատարվել են պատրաստուկի մաքրման, խտացման և չորացման աշխատանքներ: Հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակվել է բակտոռենին ֆերմենտային պատրաստուկի ստացման արդյունավետ և մրցունակ տեխնոլոգիա, որը կարող է լայն կիրառություն ունենալ պանրագործության ոլորտում (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Ղուչիկյան):

Ուսումնասիրել են Հայաստանում և Արցախում աճող քիչ հետազոտված բույսերից (կարմիր երեքնուկ, կապառ, բոխի) ստացված սպիրտաջրային լուծամզվածքների հակաօքսիդանտային հատկությունները, մշակվել են այդ պատրաստուկների վավերացված նմուշների ստացման լաբորատոր տեխնոլոգիաներ: Կալիումի պերմանգանատի լուծույթի տիտրման մեթոդով հաստատվել է, որ բոլոր բույսերի դեպքում էլ առավել շատ քանակի հակաօքսիդանտներ լուծամզվել են 96% էթանոլով: Ցույց է տրվել, որ ի տարբերություն կապառի, կարմիր երեքնուկի և բոխու լուծամզվածքները պարունակում են առավելագույն քանակի հակաօքսիդանտներ: Ուսումնասիրվող բույսերի հակաօքսիդանտային հատկությունները գնահատվել են նաև հիմնային միջավայրում՝ ադրենալինի աուտոօքսիդացումը ճնշելու իրենց ունակությամբ *in vitro* պայմաններում: Ստացված արդյունքների համաձայն՝ կարմիր երեքնուկն ու բոխին օժտված են առավել բարձր հակաօքսիդանտային հատկությամբ, քան կապառը: Հետազոտությունների արդյունքները վկայում են, որ հայկական ֆլորայի էնդեմիկ կարմիր երեքնուկը, բոխին և կապառը պարունակում են բավարար քանակի հակաօքսիդանտային հատկությամբ օժտված միացություններ, ինչի հիման վրա դրանցից ստացված լուծամզվածքները, որպես կանխարգելիչ միջոցներ, կարելի է օգտագործել օրգանիզմի օքսիդացիոն և հակառադիկալային ծերացման դեմ պայքարի գործընթացներում (ղեկ.՝ ք.գ.դ. Մ.Դադայան):

Իրականացվել է (S)-2-N-(N-բենզիլպրոլիլ) ամինաբենզոֆենոն քիրալային օժանդակ ռեագենտի և պրոպարգիլգլիցինի Շիֆի հիմքի հետ Ni^{II} իոնի առաջացրած հարթ քառակուսային կոմպլեքսի սինթեզ $[\text{Ni}^{II}\text{-(S)-BPB-(S)-PGly}]$: Նշված միացությունը կիրառվել է որպես ելային ամինաթթվային սինտոն Գլայդերի հետերոհամակցման ռեակցիայում: Մշակվել են պրոպարգիլգլիցինային կոմպլեքսի Գլայդերի ռեակցիայի օպտիմալ պայմանները: Փորձարկվել են բազմաթիվ հիմքեր, լուծիչներ, լավագույն արդյունք արձանագրվել է հետևյալ պայմաններում՝ կոմպլեքս/ CuI 1/1 հարաբերությունը 1.4-դիօքսանում եռթիլամին հիմքի ներկայությամբ 120°C ջերմաստիճանում: Ալիֆատիկ պենտինի հետ ռեակցիայի լավագույն պայման համարվել է կոմպլեքս/ CuI 1:1 հարաբերությունը 1.4 դիօքսանում, պիպերիդինի առկայությամբ, ազենտ 2 էկվ. սենյակային ջերմաստիճանում: Ռեակցիայի ընթացքին հետևել ենք ՆՇՔ մեթոդով՝ ըստ ելային կոմպլեքսի հետքերի անհետացման և արգասիքի կոմպլեքսի հետքերի առաջացման: Ստացված արդյունքների հիման վրա հետազոտվել է 4 ալկին ռեագենտի հետ Գլայդերի համակցման ռեակցիան և ստացվել է 4 նոր ամինաթթու (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Մկրտչյան):

Ոչ սպիտակուցային ամինաթթուների ((S)- β -[4-ալլիլ-3-պրոպիլ-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]- α -ալանին, (S)- α -պրոպարգիլգլիցին (S)- α -ալիլգլիցին) հենքի վրա կատարվել է նոր, գրականության մեջ չնկարագրված դի- և տրիպեպտիդների՝ N-t-Boc-Gly-(S)-allyGly, N-t-Boc-Gly-(S)-allyGly-(S)-Ala, Fmoc-Gly-(S)- β -[4-allyl-3-propyl-5-thioxo-1,2,4-triazol-1-yl]- α -

Ala, N-t-Boc-Gly-(S)-β-[4-allyl-3-propyl-5-thioxo-1,2,4-triazol-1-yl]-α-Ala, N-t-Boc-Gly-(S)-propargyl-Gly և N-t-Boc-Gly-(S)-β-imidazolyl-Ala սինթեզ: Արդյունքում սինթեզվել է 8 պեպտիդ, որոնց կառուցվածքը և քիմիական մաքրությունը որոշվել է ժամանակակից ֆիզիկա-քիմիական եղանակների կիրառմամբ: Ստացված պեպտիդները մի շարք ֆերմենտների պոտենցիալ արգելակիչներ են, ինչպես նաև կարող են կիրառվել որպես ազդանյութ լորձաթաղանթի բորբոքումների բուժման ժամանակ (ղեկ.՝ ք.գ.թ. Զ.Մարդիյան):

Հետազոտվել են բուսական և կենդանական հումքի թափոններից (կենդանիների և մարդու մազեր, խաղողի մզվածք) ջրալույծ մեկանինի ստացման արդյունավետ տեխնոլոգիական ցուցանիշները: Ֆիզիկաքիմիական եղանակների կիրառմամբ կատարվել է պատրաստուկների նույնականացում և հաստատվել է ստացված պիգմենտի պատկանելությունը մեկանիններին: Հաշվի առնելով Կենտրոնում հետազոտված ջրալույծ մեկանինի հակաօքսիդանտային և ռադիոպրոտեկտոր հատկությունները՝ առաջարկվում է այն օգտագործել որպես սննդային ներկանյութ և բույսերի աճի խթանիչ (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան):

Հիմք ընդունելով ուսումնասիրված մորֆոլոգիական, կուլտուրալ, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական և մոլեկուլային-գենետիկական հատկությունները՝ վերահաստատվել է, որ «Նարինե» *Lactobacillus acidophilus* ՄԱԿ 9602 կաթնաթթվային բակտերիան պատկանում է *L.helveticus* տեսակին: Ցույց է տրվել, որ *L. helveticus*-ը կարող է աճել համեմատաբար բարձր ջերմաստիճանում՝ ~55°C: Լինելով 14 ամինաթթուների հանդեպ աուքսոտրոֆ, բայց ունենալով բարձր պրոտեոլիտիկ ակտիվություն՝ լավ աճում է կաթի մեջ, գրեթե չի պարունակում ազատ ամինաթթուներ: *L. helveticus*-ի կիրառմամբ խմորված կաթի մեջ առաջանում է համասեռ ծորուն մակարդուկ 154,6±2.4 մՊա ց մածուցիկությամբ, որն անձեռնմխելի վիճակում դրսևորում է ոչ նյութոսոնյան հեղուկներին յուրահատուկ պահվածք, բայց ինտենսիվ խառնումից հետո անդառնալիորեն վերածվում է նյութոսոնյան հեղուկի:

Ցույց է տրվել, որ *L. delbrueckii* ՄԱԿ 9617 և *L. acidophilus* ՄԱԿ 9613 շտամները սինթեզում են ջրածնի պերօքսիդ, որը ճնշում է պաթոգեն և սնունդը փչացնող (նեխող) մանրէների աճը: Նշված կուլտուրաներն առաջարկվում է օգտագործել աղացած մսի պիտանելիության ժամկետի երկարացման և թռչնամսի վարակազերծման նպատակներով:

Հետազոտվել է *Lactobacillus* և *Enterococcus* ցեղերին պատկանող 98 շտամ, որոնք սինթեզում են էկզոբազմաշաքարներ: Ցույց է տրվել, որ բազմաշաքարների սինթեզի ամենամեծ ելքն ապահովել են էշի կաթից մեկուսացված շտամները: Պարզվել է, որ հակամանրէային ակտիվությունը կախված է կաթնաթթվային բակտերիաների աճեցման պայմաններից: Միաժամանակ հաստատվել է, որ ոչ բոլոր էկզոբազմաշաքարներն են հավասար չափով ցուցաբերում հակամանրէային հատկություն:

Ուսումնասիրվել է արգինին սինթեզելու ունակությունը 19 կաթնաթթվային բակտերիայի շտամների կողմից: Արգինինի սինթեզի ամենամեծ քանակությունը դիտվել է *L. rhamnosus* 20-12 շտամի մոտ (2,5 մգ/մլ), կաթի մեջ աճեցման ժամանակ: Օրական 2 անգամ 200մլ տվյալ մթերքի օգտագործումը բավարարում է մարդու օրական պահանջը նշված ամինաթթվի նկատմամբ: Շտամները, որոնք սինթեզում են 1 մգ/մլ -ից ավել արգինին, ընտրվել են կոնսորցիումում, որը պետք է օգտագործվի ֆունկցիոնալ սննդի կաթնաթթվային մթերքներում: Կաթնաթթվային բակտերիաների հարաբերակցության ազդեցությունը կոնսորցիումում ազդում է պատրաստի արտադրանքի օրգանոլեպտիկ ցուցանիշների վրա (ղեկ.՝ կ.գ.թ. Կ.Զիտյան):

Բազային և թանկարժեք մետաղների ստացման կարևոր աղբյուր են ցածրորակ հանքաքարերը, որոնց մշակման արդյունավետ և տնտեսապես շահավետ եղանակ է կենսատարրալուծումը: Ուսումնասիրվել է պղնձի մանրէաբանական կորզման գործընթացի արդյունավետությունը Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի ցածրորակ սուլֆիդային և օքսիդացած հանքաքարերից: Հանքանմուշների կենսատարրալուծման նպատակով

օգտագործվել են նույնանուն հանքավայրերից մեկուսացված ծծումբ և երկաթ օքսիդացնող մանրէների հիման վրա ստեղծված «Կաշեն» և «Կավարտ» մանրէային կոնսորցիումները: Պղնձի կենսալուծակորզման գործընթացն ուսումնասիրվել է՝ կախված հանքաքարի մասնիկների չափերից, պուլպի խտությունից, սննդամիջավայրից և մանրէային կոնսորցիումից: Պղնձի կենսակորզման ամենաբարձր արդյունավետությունն ինչպես սուլֆիդային, այնպես էլ օքսիդացած հանքանմուշների դեպքում դիտվել է մասնիկների 45 մկմ չափի դեպքում: Պղնձի մանրէաբանական կորզման համար պուլպի օպտիմալ խտությունը կազմել է 20%: Սուլֆիդային հանքաքարի դեպքում պղնձի կենսակորզման առավել բարձր ակտիվություն է ցուցաբերել «Կաշեն» կուլտուրան: Օքսիդացած հանքաքարի դեպքում պուլպի 10% խտության պայմաններում պղնձի լուծակորզման առավել բարձր ակտիվություն է ցուցաբերել «Կաշեն» կուլտուրան, 20%-ի դեպքում՝ «Կավարտ» կուլտուրան: «Կաշեն» և «Կավարտ» ադապտացված կուլտուրաների կիրառումը թույլ է տվել մոտ 5 անգամ ավելացնել սուլֆիդային հանքաքարից պղնձի կորզման աստիճանը՝ հասցնելով 94-98%-ի 12 օրվա ընթացքում: Օքսիդացած հանքանմուշի դեպքում պղնձի կորզումն ադապտացված կուլտուրաների միջոցով ավելացել է մոտ 2 անգամ՝ հասնելով 100% 2 օրվա ընթացքում: Գործընթացի արդյունավետությունը գնահատելու նպատակով հանքանմուշների մանրէաբանական տարրալուծումն իրականացվել է 35 մմ տրամագծով և 220-230 մմ բարձրությամբ ապակյա աշտարակներում (պերկոյատորներում): Հետազոտությունները ցույց են տվել, որ աշտարակային կենսատարրալուծման դեպքում հանքաքարից պղնձի կորզման աստիճանը մեծապես կախված է մասնիկների չափերից, որոնց չափերի փոքրացումը 1.6-3.0մմ-ից մինչև 0.8-1.6մմ մոտ 3 անգամ ավելացնում է պղնձի կորզումը՝ 9 օրվա ընթացքում հասցնելով 100%-ի ստուգիչի 84%-ի համեմատությամբ: Իրականացված հետազոտությունները և աշտարակային փորձարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ Քաջարանի պղնձամոլիբդենային ցածրորակ հանքաքարի մանրէաբանական տարրալուծումը պղնձի կորզման նպատակով կարող է արդյունավետորեն իրականացվել «Կաշեն» ադապտացված կուլտուրայի կիրառմամբ (դեկ.՝ կ.գ.դ. Ն.Վարդանյան):

Ուսումնասիրվել է *Neochloris oleoabundans* և *Desmodesmus* sp. միկրոօրգանիզմների աճեցման հնարավորությունը զարեջրի արտադրության արդյունքում առաջացած թափոնաջրերի վրա: Ցույց է տրվել, որ միկրոօրգանիզմները ցուցաբերում են աճի ունակություն բոլոր սուբստրատների վրա: Հայտնաբերվել է, որ *N. Oleabudans*-ի կենսազանգվածի վերջնական արտադրողականությունը ($0.052 \text{ գ/լ}^{-1}\text{օր}^{-1}$) Տամիյայի միջավայրում 1.19 անգամ է գերազանցել *Desmodesmus* sp.-ի արտադրողականությանը ($0.044 \text{ գ/լ}^{-1}\text{օր}^{-1}$), մինչդեռ խառը կուլտուրայինը կազմել է $0.0583 \text{ գ/լ}^{-1}\text{օր}^{-1}$: Գարեջրի արտադրության մանրէազերծված թափոնաջրերում *N. oleoabundans* շտամը և խառը կուլտուրան աչքի են ընկել աճի ավելի բարձր տեմպերով, քան *Desmodesmus* sp. կուլտուրան: *N.oleabudans*-ի և խառը կուլտուրայի կենսազանգվածի արտադրողականությունը կազմել է համապատասխանաբար $0.133 \text{ գ/լ}^{-1}\text{օր}^{-1}$ և $0.175 \text{ գ/լ}^{-1}\text{օր}^{-1}$, որը 1.6-2.2 անգամ բարձր է, քան *Desmodesmus* sp.-ինը: Միևնույն ժամանակ մանրէազերծ վերնստվածքային հեղուկում *N.oleabudans*-ի կենսազանգվածի արտադրողականությունը կազմել է $0.111 \text{ գ/լ}^{-1}\text{օր}^{-1}$, *Desmodesmus* sp.-ինը՝ $0.106 \text{ գ/լ}^{-1}\text{օր}^{-1}$, իսկ խառը կուլտուրայինը՝ $0.119 \text{ գ/լ}^{-1}\text{օր}^{-1}$:

Գնահատվել է *Parachlorella kessleri* միկրոօրգանիզմի կենսատեխնոլոգիական ներուժը կենսադիզելի արտադրության նպատակով: Ազոտի աղբյուրի սահմանափակման պայմաններում ստացվել է *P.kessleri*-ի կենսազանգվածը և որոշվել լիպիդների ճարպաթթուների կազմը: Ցույց է տրվել, որ կենսազանգվածում առավել տարածված ճարպաթթուներից են պալմիտինաթթուն, ստեարինաթթուն, օլեինաթթուն, լինոլաթթուն և α -լինոլենաթթուն: Միևնույն ժամանակ փոքր քանակներով հայտնաբերվել են ունդեցիլանաթթու, միրիստինաթթու, պենտադեցիլիկ թթու և ստեարինաթթու: Գնահատված ճարպաթթուների գումարային կոնցենտ-

րացիան կազմել է 31.22%, այդ թվում՝ հազեցածներինը 10,02%, մոնոչհազեցածներինը 5.47% և չհազեցածներինը 15.72%: Հազեցած և չհազեցած ճարպաթթուների հարաբերակցությունը կազմել է 0.63:

Ուսումնասիրվել են *P.kessleri* և *Chlorella vulgaris* միկրոօրգանիզմների ամինաթթվային կազմերը: Արդյունքում, *P. kessleri* միկրոօրգանիզմի կենսազանգվածում հայտնաբերվել է 7 L-ամինաթթու, որոնք կազմել են ամինաթթուների ընդհանուր քանակի 79.6%-ը, ընդ որում, ամենաշատ քանակով հանդիպել են ասպարազինաթթուն (7.4%) և գլուտամինաթթուն (6.6%): Միևնույն ժամանակ *Ch.vulgaris*-ի կենսազանգվածում հայտնաբերվել է 15 L-ամինաթթու, որոնք կազմել են ամինաթթուների ընդհանուր քանակի 96.2%-ը, որոնցից վալինը (2.08%), լեյցինը (4.7%), լիզինը (2.7%), մեթիոնինը (1.7%), թրեոնինը (1.1%) և ֆենիլալանինը (3.9%) անփոխարինելի են:

ԿԱՄ-երի մաքրման և սերտիֆիկացման լաբորատորիայի հետ համատեղ առաջարկվել է ԲԱՀՔ-ի մեթոդ՝ ծիրանագույն ոչ ծծմբային ֆոտոսինթեզող բակտերիաների կուլտուրալ հեղուկներում 5-ամինալևուլինաթթվի կոնցենտրացիաների որոշման համար (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան):

Առաջին անգամ մեկուսացվել է էկզոինուլինազ սիթեզող հալոալկալաֆիլ ֆոտոսինթեզող բակտերի *Ectothiorhodospira nobilis* AI-2: Մշակվել է էկզոինուլինազի անջատման մեթոդ: Ստացված արդյունքների ինքնատիպությունն այն է, որ նշված շտամի էկզոինուլինազը հիմնային է, մինչդեռ ներկայումս նկարագրված ինուլինազները բոլորը թթվային են: Պարզվել է, որ ուսումնասիրված էկզոինուլինազը ցույց է տվել ինուլինի նկատմամբ առավելագույն հիդրոլիտիկ ակտիվություն pH 9.0-ի 50°C պայմաններում և պահպանել է 100% ակտիվություն pH 7.0-10 և 20-50°C ինկուբացիայի պայմաններում: Հատկանշական է, որ ինկուբացիոն միջավայրում NaCl-ի 4-6% կոնցենտրացիան նպաստել է համեմատաբար ավելի բարձր կատալիտիկ ակտիվության: Նմանատիպ տվյալներ են ստացվել նաև այլ հալոֆիլ բակտերիաների էկզոինուլինազի համար, որոնք, ըստ երևույթին, պայմանավորված են բակտերիաների հալոֆիլային բնությամբ (ղեկ.՝ կ.գ.թ. Լ.Մարկոսյան):

Գեղարքունիքի մարզում ջրառի բացակայության պայմաններում իրականացված փորձերի արդյունքում պարզվել է, որ Rhizomix կենսապարարտանյութը զգալիորեն նպաստում է սիսեռի բույսերի աճին (*Cicer arietinum*): Սիսեռի ինոկուլացված բույսերը ստուգիչից տարբերվել են հիմնական և երկրորդային ճյուղերի թվով՝ համապատասխանաբար 2.0-2.6 և 5.7-7.4 (ստուգիչ 1.8 և 4.6): Մոնոկուլտուրայով վարակված բույսերի բերքատվությունը կազմել է 279-339 կգ/հա, իսկ Rhizomix-ի կենսապարարտանյութի կիրառման դեպքում՝ 479-554 կգ/հա: Սպիտակուցային զանգվածի լրացուցիչ աճը կազմել է 5.3-6.5%: Նման արդյունքներ են ստացվել ոլոռի (*Pisum sativum*) աճեցման ժամանակ: Փորձնարարական բույսերը տարբերվում են բարձրությամբ, կանաչ զանգվածի քաշով և առաջացած պալարների քանակությամբ: Ոլոռի բերքատվությունը մոնոկուլտուրայով վարակելիս կազմել է 3500 կգ/հա, իսկ Rhizomix կենսապարարտանյութը օգտագործելիս՝ 4000 կգ/հա. արդյունավետությունը 85կգ/հա է: Սպիտակուցային զանգվածի լրացուցիչ աճը կազմել է 4.9% (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Հակոբյան):

Ստուգվել է կաթնաթթվային բակտերիաների (680 շտամ) և շաքարասնկերի (570 շտամ) վերարտադրողականությունն ու կենսունակությունը կոնսերվացիայից հետո՝ կիրառելով կուլտուրալ հեղուկ և գլիցերինի 4:6 հարաբերությամբ խառնուրդ -20°C պայմաններում: Հաստատվել է տվյալ եղանակի արդյունավետությունը կաթնաթթվային բակտերիաների և շաքարասնկերի պահպանման համար: Կատարվել է կովի մաճնից մեկուսացված 25 կաթնաթթվային բակտերիայի կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրություն: Ուսումնասիրված 16 ածխաջրերից թույլ են յուրացվել միայն ռամնոզը, քսիլոզը, սորբոզը և մաննոզը: Կուլտուրաները գլյուկոզի խմորումից զազ չեն առաջացրել, կատալազ չեն

սինթեզել, կարողացել են աճել մինչև 1% լեղու, ինչպես նաև 4% NaCl-ի առկայությամբ: Աճը 15°C-ի և 45°C-ի պայմաններում դրական է: Ստուգվել է կաթնաթթվային բակտերիաների կայունությունը հակաբիոտիկների նկատմամբ: Ուսումնասիրված 16 հակաբիոտիկից բակտերիաները կայունություն են ցուցաբերել ցեֆեպիմ, ցեֆտիբուտեն, ցեֆիկսիմ, ցեֆտազիդիմ և ազտրեոնամ հակաբիոտիկների նկատմամբ: Նշված մանրէները հատկապես բարձր կայունություն են ցուցաբերել ռիֆամպինի, ցիպրոֆլոկսացինի, էրիտրոմիցինի, կլինդամիցինի, պեֆլոկսացինի, ցեֆոպերազոնի և լևոֆլոկսացինի նկատմամբ:

Ուսումնասիրվել են *Aspergillus* ցեղի միտոսպորիկ սնկերի 25, սպորասառաջացնող բակտերիաների 26 և ոչ սպորավոր բակտերիաների 47 շտամների ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունները: Ուսումնասիրվել է *Aspergillus* ցեղի 25, *Pseudomonas* ցեղի 30, ֆիտոպաթոգենների 30 և այլ տեսակների ոչ սպորավոր բակտերիաների 20 շտամների լիպազային ակտիվությունը: Հետազոտվել են ոչ սպորավոր բակտերիաների 80 շտամների պրոտեոլիտիկ հատկությունները: Միջատներից մեկուսացվել և դասակարգվել է էնտոմոպաթոգեն բակտերիաների 30 նոր շտամ: Ուսումնասիրվել է դրանց միջատասպան ակտիվությունը բնական պայմաններում կոլորադյան բզեզի, ծիրանի, խնձորենու և խաղողի վնասատուների նկատմամբ (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Հ.Զարգարյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Բուսահումքերի համալիր մշակման եղանակ էկոլոգիապես մաքուր սննդամթերքի, կերային հավելումների և հալենային պատրաստուկների ստացման համար» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Դադայան) Հայաստանի և Արցախի ֆլորայում աճող սպունդուկ, բոխի, կապառ, չիչխան և ճահճային լուծաղեղ դեղաբույսերի ֆիտոքիմիական հետազոտության արդյունքներից պարզվել է, որ դրանք պարունակում են բազմաֆունկցիոնալ կենսաբանորեն ակտիվ միացությունների բարձր պարունակություն՝ օժտված հակաօքսիդանտային, իմունակարգավորիչ, հակաբորբոքային և վերքամոքիչ բարձր ակտիվությամբ: Կաթնափուշի սերմերի համալիր մշակման արդյունքում առաջին անգամ երկրորդային արգասիք քուսպից անջատվել և նույնականացվել է բնական ծագման լավագույն լյարդապաշտպան միջոց հանդիսացող բյուրեղային սիլիմարին:

«Ծիրանագույն ֆոտոսինթեզող բակտերիաների կարգաբանության և տաքսոնոմիայի պատկանելության ուսումնասիրություն» թեման (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան) ծիրանագույն ծծմբային և ոչ ծծմբային ֆոտոսինթեզող բակտերիաների դասակարգման հարցերի ուսումնասիրությունն է: 16S ռԻՆԹ գենի անալիզի հիման վրա իրականացվել է նշված մանրէների 26 շտամի նույնականացում և տաքսոնոմիական պատկանելիության հաստատում: Կատարվել է ներտեսակային և միջտեսակային բազմազանության ուսումնասիրություն, պոպուլյացիայի մակարդակով ներտեսակային տարբերությունների գնահատում:

««Click» ռեակցիաների կիրառմամբ կողմնային շղթայում տեղակալված 1,2,3-տրիագոլային խմբեր պարունակող նոր էնանտիոմերապես հարստացված ամինաթթուների սինթեզ» ծրագրի շրջանակներում սինթեզվել և բնութագրվել է ելային ամինաթթվային 11 նոր կոմպլեքս (α-պրոպարգիլգլիցինի, α-պրոպարգիլալանինի, α-մեթիլ-β-(2-բրոմֆենիլ)-α-ալանինի) և նրանց համապատասխան α-ամինաթթուներ:

«Ցածրմոլեկուլային զանգվածով պոլիիոնների միջև էլեկտրաստատիկ և ջրածնական փոխազդեցությունների հիման վրա ասիմետրիկ սինթեզի կատալիտիկ համակարգերի ծրագրավորում և կառուցում» ծրագրի շրջանակներում սինթեզվել են ելային Շիֆի հիմքերը, ստացվել են կոմպլեքս-կատալիզատորները, որոնք փորձարկվել են մոդելային ռեակցիայում (ղեկ.՝ ակ. Ա.Սաղյան):

«*Bacillus thuringiensis*-ի հիման վրա կենսապատրաստուկների ստացումը և կիրառումը բույսերի աճի խթանման և վնասատուներից պաշտպանման համար» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան) կատարելագործվել է *B. thuringiensis* K1 շտամի հիման վրա ստացված մանրէային մեկանիին անջատման և մաքրման տեխնոլոգիան, որի շնորհիվ 21.7%-ով բարձրացել է կուլտուրալ հեղուկից նպատակային նյութի ելքը: Ցույց է տրվել պատրաստուկի կենսախթանիչ ազդեցությունը հացահատիկային բույսերի և կերաբույսերի համար: *B.thuringiensis* մեկանինոգեն շտամների հիման վրա ստացվել են բարձր ակտիվությամբ և շրջակա միջավայրի համար անվնաս միջատասպան պատրաստուկներ:

«Աղակալման ազդեցությունը Հայաստանի և Բելառուսի հողերի ազոտֆիքսող միկրոֆլորայի վրա. աղակալած հողերի վերամշակման համար նոր շտամների ստացում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ կ.գ.թ. Ս.Քելեշյան) ստացվել են *Agrobacterium salinitolerans* և *Agrobacterium* sp. բակտերիաների օսմոկայուն մուտանտներ՝ օժտված ազոտի ֆիքսման բարձր ակտիվությամբ: Բացահայտվել է նրանց ակնհայտ խթանիչ ազդեցությունն աղկալած հողերի պայմաններում աճող բույսերի աճի և զարգացման վրա:

«Գարեջրի արտադրության թափոնների վերամշակումը միաբջիջ կանաչ միկրոօրգանիզմների կիրառմամբ» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան) գնահատվել է գարեջրի արտադրության արդյունքում առաջացած թափոնների վերամշակման արդյունավետությունը *Parachlorella kessleri*, *Chlorella vulgaris*, *Ch. protothecoides* և *Neochloris oleoabundans* միկրոօրգանիզմների կիրառմամբ:

«Կուլագենազ ֆերմենտի պոտենցիալ արգելակիչներ հանդիսացող ոչ սպիտակուցային ամինաթթուների և պեպտիդների մոդելավորումը, նպատակային սինթեզը և ազդեցության *in vitro* հետազոտումը» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ ք.գ.թ. Տ.Սարգսյան) AutoGrid 4 և AutoDock 4 ծրագրերի կիրառմամբ մոդելավորվել և որոնվել են պոտենցիալ կենսաբանորեն ակտիվ նոր ամինաթթուներ և պեպտիդներ:

Հրապարակումներ

Հոդվածներ, գեկուցումներ

1. Аветисян С.В., Азарян К.Г., Агаджанян А.Е., Колоян А.О., Паронян М.Г., Аганянц О.А., Чижик О.В., Овсеян А.С., Экологически безопасные инсектицидные препараты и стимулятор роста растений на основе меланиногенных штаммов *Bacillus thuringiensis*, Мат. V межд. научно-практич. конф. «Эколого-биологические проблемы использования природных ресурсов в сельском хозяйстве», Екатеринбург, 2019, с. 65-72.
2. Акопян Е.И., Синтез новых дипептидов с использованием 4,5,6,7-тетрагидро-бензотиофенсодержащих аналогов (S)- α -аланина, Ер., «Хим. ж. Армении», v.72, N1-2, 2019, с. 150-158.
3. Бабаян Б.Г., Оганесян Н.А., Саргсян А.С., Мелкумян М.А., Различия в действии ЭДТА на резистентные и чувствительные почвенные непатогенные штаммы *Pseudomonas maltophilia* (*Stenotrophomonas maltophilia*), Ер., «Лрабер НПУА, Сборник научных статей», N 2, 2019, с. 690-695.
4. Бабаян Б.Г., Саргсян А.С., Багдасарян С.А., Мелкумян М.А., Давидян Т.С., Оганесян Н.А., Оганесян А.М., Исследования стабильности плазмид антибиотикорезистентности у почвенных условно-патогенных штаммов *Stenotrophomonas* и *Pseudomonas*, Камерово, Мед. ж. «Авиценна», N 38, 2019, с. 13-17.
5. Дадаян А.С., Степанян Л.А., Петросян А.Р., Погосян А.С., Дадаян С.А., Безотходная технология комплексной переработки плодово-ягодного растительного сырья, Химия биологически активных веществ, Саратов, Межвуз. сб. научн. тр., «ХимБиоАктив-2019», с. 242-244.
6. Калантарян Н.К., Молекулярно-генетическая идентификация одноклеточных зеленых микроводорослей семейства *Chlorellaceae*, Ер., «Биолог. ж. Армении», т. 71, N 3, 2019, с. 6-13.
7. Келешян С.К., Карапетян Ж.В., Топлакалян А.Г., Аветисова Г.Е., Мелконян Л.О., Кочилян В.Т., Характеристика микрофлоры засоленных почв Армении, М., Хранение и переработка сельхозсырья, N1, 2019, с. 76-85.

8. Матевосян Ф.С., Арутюнян С.А., Степанян Т.У., Акопян В.П., Возможность применения клубеньковых бактерий, хранившихся на различных субстратах, с целью улучшения экологического баланса почв, Сб. мат. IV межд. научно-практич. конф. Екатеринбург, 2019, с. 125-133.
9. Мелкумян И.Е., Получение лимонной кислоты из клубней топинамбура в процессе жизнедеятельности плесневого гриба вида *Aspergillus niger*, *Ер., "Биолог.ж. Армении"*, т. 71, N 1, 2019, с. 12-16.
10. Мкртчян Л.Н., Чичоян Н.Б., Цатурян А.О., Меристема корня переступня белого (*Brionya alba* L.) и его физико-химическое изучение, *Ер., "Медицина, наука и образование"*, N 27, 2019, с. 18-24.
11. Aghajanyan A., Saribekyan Zh., Saghyan A., Development of the efficient technology for isolating proline from culture liquid, *Separation Science and Technology*, v. 54, 2019, pp.1-8.
12. Babakhanyan M., Hovhannisyan L., Simonyan K., Isoyan A., Zakaryan Sh., Ghochikyan V., Ghukasyan A., The production tets, physiological influence and introduction of strategic cultured plant *Stevia rebaudiana* Bertoni in Armenia and Artsakh, *Electronic Journal of Natural Sciences of NAS RA*, v. 32, N 1, 2019, pp. 22-26.
13. Babayan B., Multiple antibiotic resistance of soil strains of *Pseudomonas chlororaphis*, *"European Science Review"*, N 5-6, 2019, pp. 3-6.
14. Babayan B., The plasmid differences in multi-drug resistant opportunistic pathogenic soil strains of *Pseudomonas* and *Stenotrophomonas*, *European Journal of Medicine and Natural Sciences (EJMN)*, v. 3, N 1, 2019, pp. 23-28.
15. Babayan B., Hovhannisyan N., Hovhannisyan A., Sargsyan A., Davidyan T., Resistance to β -lactam antibiotics in some soil *Stenotrophomonas* and *Pseudomonas*, *"The Scientific-Heritage"*, v. 2, N 34, 2019, pp. 32-38.
16. Babayan B., The plasmid differences in multi-drug resistant opportunistic pathogenic soil strains of *Pseudomonas* and *Stenotrophomonas*, *Proceedings, 4th International Conference on Medicine and Natural Sciences Amsterdam, Amsterdam, 2019*, pp. 5-10.
17. Balabekyan T., Tkhruni F., Karapetyan K., Development and application of biological preparations against infectious diseases of cattle and poultry, *Journal of Dairy and Veterinary Sciences*, v. 11, N 5, pp. 001-002.
18. Delegan Y., Sargsyan A., Hovhannisyan N., Babayan B., Petrikov K., Vainstein M., Analysis of genome sequence and trehalose lipid production peculiarities of the thermotolerant *Gordonia* strain, *J Basic Microbiol.*, v. 59, N 11, 2019, pp. 1-7.
19. Ferreira A., Ribeiro B., Ferreira A.F., Tavares M., Vladic J., Vidovic S., Cvetkovic D., Melkonyan L., Avetisova G., Goginyan V., Gouveia L., *Scenedesmus obliquus* microalga-based biorefinery - from brewery effluent to bioactive compounds, biofuels and biofertilizers - aiming a circular bioeconomy, *Biofuels, Bioproducts and Biorefining*, 2019, 13, pp. 1169-1186.
20. Goginyan V., Eusébio A., Neves A., Marques I., Harutyunyan B., Hovhannisyan R., Andreasyan N., Purple non-sulphur photosynthetic bacteria in brewery wastewater during anaerobic digestion, *Book of proceedings, 5th International Conference «WASTES: Solutions, Treatments and Opportunities»*, Guimarães, Portugal, 2019, pp. 87-89.
21. Hayriyan L., Synthesis of a new enantiomerically enriched α -amino acid using the Glaser reaction, *Chemical Journal of Armenia*, v. 72, N 1-2, 2019, pp. 60-65.
22. Iradyan M., Iradyan N., Hulin Ph., Hambardzumyan A., Gyulkhandanyan A., Alves de Sousa R., Hessani A., Roussakis Ch., Bollot G., Bauvais C., Sakanyan V., Targeting Degradation of EGFR through the allosteric site leads to cancer cell detachment-promoted death, *Cancers*, N 11, 2019, 23pp. Suppl. 17pp.
23. Kalantaryan N., Stepanyan L., Dadayan A., Minasyan E., Goginyan V., Comparative characteristics of green microalgae *Parachlorella kessleri* and *Chlorella vulgaris* as a protein additive, *Chemical Journal of Armenia*, v. 72, N 3, 2019, pp. 249-255.
24. Khachatryan A., Influence of Fe²⁺ and Fe³⁺ on the growth of *Leptospirillum ferriphilum* CC and oxidation of Fe²⁺, *Biological Journal of Armenia*, v. 71, N 3, 2019, pp. 83-88.
25. Koloyan H., Avetisyan S., Paronyan M., Aganyants H., Hovsepyan A., Application of the vector PEC-XK99E for the construction of recombinant strain-producers of L-arginine based on *Brevibacterium flavum*, *Proceedings of the YSU, Chem. and Biol. Sciences*, v. 53, N 2, 2019, pp. 131-137.
26. Markosyan L., Badalyan H., Vardanyan N., Vardanyan A., Study of colloidal polysaccharides produced by iron oxidizing bacteria *Leptospirillum ferriphilum* CC, *Geomicrobiology Journal*, v. 36, N 2, 2019, pp. 188-193.
27. Mikaelyan A., Babayan B., Asatryan N., Soghomonyan T., Karadjyan S., Melkumyan M., The influence of tartaric acid derivatives to the growth of antibiotic resistant *Pseudomonas* and other non-pathogenic and conditional pathogenic soil microorganisms, *"Lraber NPUA Buletin. Collection of Scientific Papers"*, N 2, 2019, pp. 696-701.

28. Minasyan E., Tsaturyan A., Kalantaryan N., Harutyunyan B., Determination of 5-aminolevulinic acid in liquid cultures of purple non-sulfur photosynthesizing bacteria by high performance liquid chromatography, *Chemical Journal of Armenia*, v. 72, N 3, 2019, pp. 243-248.
29. Paronyan M., Koloyan H., Avetisyan S., Aganyants H., Hovsepyan A., Study of the possible development of bacterial resistance to photodynamic inactivation, *Biological Journal of Armenia*, v.71, N 1, 2019, pp.17-22.
30. Petrosyan H., Determination of antioxidant activities of water-alcoholic extracts from red clover (*Trifolium pratense*), caper (*Capparis spinosa*) and bokhi (*Hippomarathrum crispum*), *Oxidation Communications*, 2019, v. 42, N 1, pp. 33-38.
31. Saghyan A., Mkrtchyan A., Mardiyan Z., Hayriyan L., Belokon Yu., Langer P., Synthesis of enantiomerically enriched non-proteinogenic α -amino acids using the Suzuki reaction, *Chemistry Select*, v.4, N 16, pp.4686-4688.
32. Simonyan K., Hovhannisyan L., Ghochikyan V., Simonyan R., Babakhanyan M., Studies on new sweetening resource plant hydroponic *Stevia rebaudiana* Bertoni in Armenia, *NeuroNutri, Nutrition, Brain and Behavior*, Brazil 30 October – 01 November, 2019, pp. 159-176.
33. Tkhruni F., Aghajanyan A., Balabekyan T., Khachatryan T., Karapetyan K., Characteristic of bacteriocins of *Lactobacillus rhamnosus* BTK 20-12 potential probiotic strain, *Probiotics and Antimicrobial Proteins*, First Online: 23 July 2019, pp. 1-9.
34. Vardanyan A., Ioannis V., Effect of organics to acidophilic bioleaching microorganisms in various process (sludge, solvent extraction) and strategies to alleviate, *Minerals Engineering*, 2019, v. 143.
35. Vardanyan A., Vardanyan N., Khachatryan A., Zhang R., Sand W., Adhesion to mineral surfaces by cells of *Leptospirillum*, *acidithiobacillus* and *Sulfobacillus* from Armenian sulfide ores, *Minerals*, v. 9, N 2, 69, 2019, pp. 1-13.
36. Babayan B., Mikaelyan A., Asatryan N., Bagdasaryan S., Melkumyan M., The effect of tartaric acid new derivatives against the multidrug resistant opportunistic pathogenic soil strains of *Pseudomonas fluorescens*, 2nd International Conference on research in science, engineering and technology, Oxford, United Kingdom, November 8-10, 2019.
37. Babayan B., Mikaelyan A., Soghomonyan T., Asatryan N., Antimicrobial effect of tartaric acid new derivatives on antibiotic resistant bacteria, “Regional workshop: Alternative approaches to combating anti-microbials resistance”, Almaty, Kazakhstan, April 18-19, 2019, p. 32.
38. Babayan B., Sargsyan A., Bagdasaryan S., Melkumyan M., Hovhannisyan A., Hovhannisyan N., Antibiotic resistance genes of *Pseudomonas* and *Stenotrophomonas* isolated from soil, “Regional workshop: Alternative approaches to combating anti-microbial resistance”, Almaty, Kazakhstan, April 18-19, 2019, p. 31.
39. Hayriyan L., Mkrtchyan A., Saghyan A., Asymmetric synthesis of new enantiomerally enriched unsaturated α -amino acids by promotion of cross-coupling reactions, VI Scientific Conference of the Armenian Chemical Society (with international participation) “Challenges of the XXI Century”, October 7-11, 2019, Yerevan, p. 103.
40. Hovhannisyan N., Babayan B., Sargsyan A., Bagdasaryan S., Hovhannisyan A., Study on stability of soil *Pseudomonas* and *Xanthomonas* plasmids possessing antibiotic resistance genes, 2nd Annual Congress on Microbiology and Microbiologists and 6th International Conference on Mycology and Fungal Infections”, Madrid, Spain, October, 2019, p. 24.
41. Kalantaryan N., Microalgae as a potential source for biorefinery, FEMS International Conference “Microbes: Biology & Application”, 9-11 October, 2019, Yerevan.
42. Karapetyan A., Tovmasyan A., Mkrtchyan A., Saghyan A., Asymmetric synthesis of new optically active non-protein α -amino acids containing unsaturated bond in the side chain, VI Scientific Conference of the Armenian Chemical Society (with international participation) “Challenges of the XXI Century”, October 7-11, 2019, Yerevan, p. 93.
43. Mikaelyan A., Asatryan N., Bagdasaryan S., Babayan B., Antimicrobial activity of newly synthesized derivatives of tartaric acid against the multidrug resistant soil strains of *Pseudomonas* and *Stenotrophomonas*, Applied Research International Conference on “Pure & Applied Sciences” Cambridge, UK, November 18-19, 2019, pp. 1-2.

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսությամբ:

Գ.ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎ. ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱՅԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Կ.Գ.Թ. Խ.Մայրապետյան

Փոխտնօրեն՝ Կ.Գ.Թ. Ա.Թադևոսյան

Գիտքարտուղար՝ Կ.Գ.Թ. Ա.Կարապետյան

Էլեկտրոնային փոստ՝ hydrop@netsys.am, hydropinstitute@gmail.com

Կայքէջ՝ www.sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Առաջին անգամ բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում ուսումնասիրվել է անտոցիանների պարունակությունը բուրավետ կալիզիայի (*Callisia fragrans*) կողային ընձյուղներում՝ կախված միջհանգուցային տարածությունների քանակից: Պարզվել է, որ անտոցիանների կենսասինթեզն ակտիվանում է մոտավորապես 4-րդ միջհանգուցի ձևավորման փուլում, այնուհետև փոփոխության չի ենթարկվում: Արձանագրվել է, որ օրգանական պարարտանյութերի կիրառման 4-րդ տարում նվազել է դրանց ազդեցությունը հազարի (*Lactuca sativa* L.) բերքատվության վրա. լավագույն 4գոմադր+3օրգանոմիքս տարբերակը թարմ քաշով զիջել է հողային մշակույթին 1.7, իսկ տերևներում վիտամին C-ի և β-կարոտինի պարունակությամբ 1.3 և 1.6 անգամ:

Վայրի և հիդրոպոնիկ ալեհեր մարիամախոտի (*Teucrium polium*) եթերայուղի հակասնկային ակտիվության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այն զգալիորեն ճնշում է *Cladosporium linicola* սնկի աճը և բարձր ֆունգիցիդ ակտիվություն ցուցաբերում *Rhizopus stolonifer* սնկի նկատմամբ: Հիդրոպոնիկ *T. polium*-ի հակասնկային ակտիվությունը համեմատելի է կետոկոնազոլ դեղի ակտիվության հետ:

In vitro մշակությամբ ուսումնասիրվել է նեղատերև նարդոսի (*Lavandula angustifolia* L.) կլոնալ միկրոբազմացման, կալուսագեն և մորֆոգեն հնարավորությունը: ՄՄ-ի սննդամիջավայրում 0.5մգ/լ α-ՆԲԹ և 1.0մգ/լ ԲԱՊ-ի առկայությունը կալուսային հյուսվածքներում խթանել է օրգանոգենեզը միջինում 7 ադվենտիվ ընձյուղների գոյացմամբ: Կլոնալ միկրոբազմացման համար սննդամիջավայրում 2 անգամ միկրո- և մակրոտարրերի նվազեցումը և ԻԿԹ-ի 0.3մգ/լ խտությունը խթանել է միկրոկտրոնների 66.7% ռիզոգենեզը: Պարզվել է, որ ՌԴ ներմուծված բույսերում գումարային ֆլավոնոիդների, ֆենոլաթթուների գումարի, դաբաղանյութերի, ծաղիկներում եթերայուղի պարունակությունը համապատասխանաբար 1.5, 1.5, 1.3 և 1.1 անգամ գերազանցել է ԱՄՆ-ից ներմուծված բույսերին:

Սովորական եղերդակի (*Cichorium intybus* L.) աճման ու զարգացման համար առավել օպտիմալ պայմաններ է ապահովել հրաբխային խարամ լցանյութը, որտեղ բույսերն աչքի են ընկել 1.4-1.5 անգամ տերևային, 2.1-2.9 անգամ արմատային չոր զանգվածի մեծ կուտակմամբ, ինուլինի բարձր պարունակությամբ (1.3-4.5 անգամ) և ելով (3.3-12.0 անգամ): Չինական կաղամբի կամ պակ-չոյի (*Brassica rapa subsp. Chinensis*) համար լավագույն աճեցման միջավայր է գլաքարի և հրաբխային խարամի խառնուրդը, որտեղ դիտարկվել է C վիտամինի 10-30%-ով բարձր պարունակություն նաև տերևներում: Սակայն պետք է նշել, որ հիդրոպոնիկ բույսերը գումարային ֆենոլային միացությունների պարունակությամբ 1.9, իսկ հակառադիկալային ակտիվությամբ 1.4 անգամ զիջել են հողային բույսերին:

Միզունայի (*Brassica juncea* var. *Japonica*) և ռուկոլայի (*Eruca sativa* Mill.) հանքային սննդառության օպտիմալացման ուղղությամբ տարված փորձերը ցույց են տվել, որ միզունայի բույսերը լավագույն բերքատվություն են ապահովել ավելի խիտ սննդալուծողում (0.75Ն), մինչդեռ մշակովի ռուկոլայի բույսերը գերադասել են սննդանյութերի ավելի ցածր խտություն (0.5Ն): Նշված տարբերակներում դիտվել է նաև բուսահումքում C վիտամինի առավելագույն պարունակություն: Հիդրոպոնիկական միզունայի հակառադիկալային ակ-

տիվությունը 2.2 և գումարային ֆենոլային միացությունների պարունակությունը 1.3 անգամ գերազանցել է հողային ստուգիչին:

Հետազոտվել են մեր կողմից ինտրոդուցված, միջազգային լայն ճանաչում ստացած մեդրախոտի (*Stevia Rebaudiana* Bertoni), տիբեթյան հազագի (*Lycium barbarum* L.) բուսակազմերը, դրանց և 7 այլ բուսատեսակների համակցման արդյունքում ստացված ֆիտոհավելումը, որն օժտված է հակադիաբետիկ, հակաօքսիդանտ, հակասթրեսային և այլ դրական ֆիզիոլոգիական ներգործություններով: Հիդրոպոնիկ մեդրախոտում դիտերպենային գլիկոզիդների գումարային պարունակությունը 1.4 անգամ գերազանցել է հողային տարբերակին, իսկ հողային հազագի պտուղներում β -կարոտինի պարունակությունը գերազանցել է հիդրոպոնիկ տարբերակին մոտ 25%-ով:

Մեդրախոտի տաք ջրային էքստրակտը ցույց է տվել բարձր հակաբակտերիային ակտիվություն և գրամ-բացասական (*Escherichia coli* BW 25113), և գրամ-դրական (*Staphylococcus aureus* MDC 5233, *Enterococcus hirae* ATCC 9790) բակտերիաների նկատմամբ (դեկ.՝ թղթ. անդ. Ս.Մայրապետյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ուսումնասիրվել են հանրապետության տարբեր բնակլիմայական գոտիներում՝ Արարատյան դաշտում և Դիլիջանի անտառային գոտում, վիրգինյան գիհու (*Juniperus virginiana* L.) բուսակների կաչողականությունը, աճը և արդյունավետությունը սննդալուծության խտության փոփոխության պայմաններում: Պարզվել է, որ այդ վայրերում գիհու բուսակները ցուցաբերել են 100%-անոց կաչողականություն: Արարատյան դաշտում աճի առավելագույն ցուցանիշներ գրանցվել են Դավթյանի 1.5 Ն սննդալուծությո կիրառելիս, որի դեպքում բույսերի բարձրությունը հասել է 81.9 սմ, բնի տրամագիծը՝ 12.1սմ: Միննույն ժամանակ Արարատյան դաշտի պայմաններում գիհու բուսակների աճը 1.0 Ն լուծույթի օգտագործման դեպքում 2.4 անգամ գերազանցել է անտառային գոտու պայմաններում աճեցված բուսակներին (դեկ.՝ կ.գ.թ. Խ.Մայրապետյան):

Առաջին անգամ ուսումնասիրվել է Հայաստանի կլիմայական պայմաններում աճող վայրի և մշակովի (հողային և հիդրոպոնիկ), ինչպես նաև Չինաստանից ներմուծված միամյա օշինդրի դեղահումքը: Պարզվել է, որ միամյա օշինդրի չոր բուսահումքում ջրալուծ ֆենոլային միացությունների 1.2-2.6 անգամ բարձր պարունակությամբ, ինչպես նաև 1.4-2.4 անգամ բարձր հակառադիկալային ակտիվությամբ առանձնանում են հողային և վայրի բույսերը: Միննույն ժամանակ հիդրոպոնիկ բույսերն իրենց բարձր բերքատվության շնորհիվ ապահովել են ֆենոլային միացությունների 1.5-2.6 անգամ բարձր ել: Բացառությամբ չինական բույսերի՝ մնացած բոլոր տարբերակներում դիտվել է դրական կորելյացիա ֆենոլային միացությունների պարունակության և հակառադիկալային ակտիվության միջև (դեկ.՝ Թ.Գասպարյան):

Հրապարակումներ

Հոդվածներ, զեկուցումներ

1. Ղալաչյան Լ.Մ., Թադևոսյան Ա.Հ., Թովմասյան Ա.Հ., Ալեքսանյան Զ.Ս., Վարդանյան Ա.Պ., Դարյադար Մ.Խ., Ռադիոնուկլիդների կուտակումը դեղատու պատրիճում Արարատյան դաշտում հիդրոպոնիկական տարբեր համակարգերի և հողի պայմաններում, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N 71 (4), 2019, էջ 6-11:
2. Ղալաչյան Լ.Մ., Թադևոսյան Ա.Հ., Վարդանյան Ա.Պ., Ա.Ա. Հակոբջանյան Ա.Ա., Բանջարաբույսերի և դեղաբույսերի բետա-ռադիոակտիվությունը Արարատյան հարթավայրի բացօթյա հիդրոպոնիկ և հողային մշակության պայմաններում, Ե., «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», N (67) 3, 2019, էջ 65-68:

3. Մայրապետյան Ա.Խ., Թովմասյան Ա.Հ., Ալեքսանյան Ջ.Ս., Թադևոսյան Ա.Հ., Ղալաչյան Լ.Ս., Ստեփանյան Բ.Թ., Ասատրյան Ա.Զ., Դարյադար Մ.Խ., Կալեի (*Brassica Oleracea* Var. *Sabellica* L.) բերքատվությունը և դեղաբիմիական մի շարք ցուցանիշները ջրաշիթային հիդրոպոնիկայի տարբեր մոդուլներում, «Հայաստանի կենսաբանական հանդես», N 71 (3), 2019, էջ 14-19:
4. Нагапетян Х.О., Бабаханян М.А., Аветисян Р.А., Небогова К.А., Аветисян Л.Г., Оганесян Л.Э., Экспериментально-клиническое изучение влияния фитосбора Арцаха и диабетона в комплексном лечении сахарного диабета, Ер., “Мед. наука Армении”, т. LIX, N1, 2019, с. 95-101.
5. Avetisyan L., Sukiasyan L., Babakhanyan M., Hovhannisyan L., Simonyan K., Nahapetyan Kh., Isoyan A., Avetisyan R., Avetisyan Z., Chavushyan V., Effects of phytotherapy on the cardiovascular changes induced by fructose overload, "Electronic Journal of Natural Sciences", Physiology, 33 (2), 2019, pp. 14-20.
6. Babakhanyan M., Hovhannisyan L., Simonyan K., Isoyan A., Zakaryan Sh., Ghochikyan A., Ghukasyan A., The production test, physiological influence and introduction of strategic cultured plant *Stevia rebaudiana* Bertoni in Armenia and Artsakh, "Electronic Journal of Natural Sciences", Physiology, 32 (1), 2019, pp. 22-26.
7. Daryadar M., Mairapetyan Kh., Tovmasyan A., Aleksanyan J., Tadevosyan A., Kalachyan L., Stepanyan B., Galstyan H., Asatryan A., Productivity of leafy green vegetable kale in soilless cultivation conditions,"J Agri Sci Food Res", 7(3), 2019, pp. 95-98, doi: 10.35248/2593-9173.19.10.260
8. Hovsepyan A., Mayrapetyan Kh., Poghosyan G., Eloyan S., Eghiazaryan A., The efficiency of planting stock of some tree-shrubs in Armenia in open-air hydroponics conditions, Academic journal of life sciences, 5(6), 2019, pp. 38-42.
9. Mairapetyan S., Tadevosyan A., Aleksanyan J., Tovmasyan A., Stepanyan B., Galstyan H., Productivity and content of pharmaceutical indices of sedum aizoon L. at different ratios of N,P,K, "Agri Res & Tech", Open Access J, 20(3), 2019, pp.154-157, ARTOAJ.MS.ID.556131.
10. Simonyan K., Hovhannisyan L., Ghochikyan V., Simonyan R., Babakhanyan M., Studies on new sweetening resource plant hydroponic *Stevia rebaudiana* Bertoni in Armenia- Proceedings of III Northeastern Symposium on neuroscience «Neuronutri 2019: Nutrition, Brain and Behavior», Conference book, 30.10.2019-01.11.2019, Recife, PE, Brazil, 2019, pp. 159-176.

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ կ.գ.թ. Ա.Առաքելյան
 Փոխտնօրեն՝ կ.գ.թ. Գ.Ցականովա
 Գիտքարտուղար՝ կ.գ.թ. Զ.Խաչատրյան
 Էլեկտրոնային փոստ՝ aarakelyan@sci.am, imb@sci.am
 Կայքէջ՝ www.molbiol.sci.am

Մասնագիտական խորհուրդ 042՝ «Կենսաբիմիա» (Գ.00.03)
 Նախագահ՝ կ.գ.դ. Ս.Չախլյան, գիտքարտուղար՝ կ.գ.թ. Գ.Մկրտչյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ցույց է տրվել, որ քրոնիկ միելոիդ լեյկոզի ժամանակ էպիգենետիկական խանգարումներն արտահայտվում են ԴՆԹ-ի հիդրօքսիմեթիլացման մակարդակի բարձրացմամբ: Ի տարբերություն առողջ անձանց՝ հիվանդների ԴՆԹ-ի հիդրօքսիմեթիլացման աստիճանը կապված չէ տարիքի և սեռի հետ (դեկ.՝ կ.գ.թ. Ն.Բաբայան):

Ցույց է տրվել, որ քրոնիկ լիմֆոցիտար լեյկեմիայի ժամանակ նեոպլաստիկ բջիջների միգրացիան պերիֆերիկ արյան և ոսկրածուծի միջև կարգավորվում է CXCR4-CXCL12 ռեցեպտոր-լիգանդ փոխազդեցությամբ (դեկ.՝ կ.գ.թ. Գ.Մանուկյան):

β-տուբուլինի և կոլխիցինի փոխազդեցության *in silico* մոդելավորման հետազոտությունները ցույց են տվել, որ տուբուլինի գենետիկական պոլիմորֆիզմները, որոնք սպիտակուցում առաջացնում են A248T և M257V ամինաթթվային մնացորդների փոփոխություն,

կարող են կոլիսիցինի նկատմամբ կայունության պատճառ հանդիսանալ (դեկ՝ կ.գ.դ. Կ.Նա-
գարյան):

Կլոնավորվել են ԴՆԹ կոդավորող K_v6.3, K_v6.4 և K_v8.2 սպիտակուցները՝ Zn²⁺ դոմենի
ֆունկցիոնալ վիճակից կախված K_v2.1 և K_v2.2 լարում-կախյալ անցուղիների հետ փոխազ-
դեցության հնարավոր փոփոխություններն ուսումնասիրելու համար (դեկ՝ կ.գ.թ. Վ.Վար-
դանյան):

Ցույց է տրվել, որ հետտրավմատիկ սթրեսային խանգարման ժամանակ լեյկոցիտոնե-
րում նկատվում է թելոմերների միջին երկարության նվազում, իսկ թելոմերազ ֆերմենտի
սպիտակուցային միավորը կոդավորող *TERT* գենի rs2736100*T միևնույնիսկ ալելը հիվան-
դության զարգացման գենետիկական ռիսկի գործոն է: Ամբողջական գենոմի սեքվենա-
վորման տվյալների կենսահնթորմատիկական վերլուծությամբ ցույց է տրվել հակա-
քաղցկեղային դեղամիջոցների նշանակման համար կենսամարկեր հանդիսացող *RRM1*
գենի նոր ֆունկցիոնալ կապը թելոմերների երկարության հետ (դեկ՝ կ.գ.թ. Ա.Առաքելյան):

Ամբողջական միտոքոնդրիումային ԴՆԹ-ի հայկական տոհմագծերի ֆիլոաշխարհա-
գրական վերլուծության արդյունքում բացահայտվել է ընդհանուր նախնիների առկայություն
Արևմտյան Ասիայի, Անդրկովկասի, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ժողովուրդների
հետ: Հետազոտված ենթահապլոխմբերի մեկ երրորդը բնորոշ է հայկական պոպուլյացիա-
յին, քանի որ գրեթե չի հանդիպում ուսումնասիրված էթնիկական մյուս խմբերում (դեկ՝
կ.գ.դ. Լ.Եպիսկոպոսյան):

Ցույց է տրվել, որ շիգելոզի (բակտերիալ դիզենտերիա) հետազոտված դեպքերի մեծ
մասը պայմանավորված է դեղերի նկատմամբ բազմակայունությամբ օժտված *Shigella sonnei*
հարուցիչներով (դեկ՝ կ.գ.թ. Ա.Մեղրակյան):

In silico սկրինինգի արդյունքում հայտնաբերվել է երեք միացություն, որոնք ոչ տոքսիկ
կոնցենտրացիաների տիրույթում ճնշում են խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի
բազմացումը: Հայտնաբերվել է նաև միացություն, որը, արգելակելով տուբուլինի պոլի-
մերիզացիան, խաթարում է վիրուսային մասնիկների տեղաշարժը միկրոխողովակիկներով
(դեկ՝ կ.գ.թ. Հ. Զաքարյան):

Աֆրիկյան ժանտախտի վիրուսով խոզերի վարակի հնարավոր աղբյուրներ հայտնաբե-
րելու նպատակով ուսումնասիրվել են վիրուսի գոյատևման պայմանները *H. Medicinalis*
տզրուկների օրգանիզմում: Ցույց է տրվել, որ երկարատև կուլտիվացումից հետո անջատ-
ված վիրուսն ունակ է վարակել խոզերի ավելուլային մակրոֆագերը, ինչը մատնանշում է, որ
տզրուկները կարող են հանդիսանալ տվյալ վիրուսի հնարավոր շտեմարան (դեկ՝ կ.գ.դ.
Զ.Կարապյան):

Մելեկցիոն ներուժի գնահատման նպատակով իրականացվել է վայրի խաղողի նմուշ-
ների մոլեկուլազենետիկական նույնականացում: Արդյունքում հայտնաբերվել են դեռևս
չնկարագրված գենետիկական նիշեր, գնահատվել է վայրի խաղողի շուրջ 80 սորտերի
կայունությունն աբիոտիկ և բիոտիկ սթրեսի նկատմամբ: Կարտոֆիլի տեղական և ոչ
տեղական 30 սորտերում և կլոններում ալելային պոլիմորֆիզմի մոլեկուլազենետիկական
հետազոտության արդյունքում բացահայտվել են ադակալման նկատմամբ դիմակայուն
OPAA-03 և FDK1-05 գենետիկական նիշեր պարունակող գենոտիպեր (դեկ՝ կ.գ.թ.
Կ.Մարգարյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ցույց է տրվել, որ գերարագ/գերկարճ էլեկտրոնային ճառագայթումը դոզակախյալ
կերպով հանգեցնում է ԴՆԹ-ի չվերականգնվող երկշղթա կտրվածքների բջջային ցիկլի խա-
թարման և ապոպտոզի խթանման գենոմային անկայունության բացակայության պայման-

ներում: Ստացված արդյունքները վկայում են ռենտգենյան ճառագայթման համեմատ էլեկտրոնային ճառագայթման արդյունավետության մասին և կարող են կիրառվել էլեկտրոնային լազերային արագացուցիչների դոզաչափական բնութագրերի բարելավման նպատակով, ինչպես նաև հետագա ռադիոկենսաբանական նախակլինիկական հետազոտությունների ժամանակ (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Բաբայան):

Ցույց է տրվել, որ Կովկասյան աշխարհագրական պատմեշի դեր է խաղացել Եվրասիական տափաստանի արևմտյան շրջաններից դեպի հարավ գենային հոսքերի համար, ինչի արդյունքում լեռնաշղթայի երկայնքով բաժանված Հյուսիսային և Հարավային Կովկասի պոպուլյացիաները գենետիկորեն տարանջատված են: Հյուսիսարևմտյան և հյուսիսարևելյան խմբերի համեմատ Հարավային Կովկասի պոպուլյացիաները գենետիկորեն ավելի մոտ են մերձավորարևելյան պոպուլյացիաներին, ինչպիսիք են նեոլիթյան լևանտացիները և անատոլիացիները (ղեկ.՝ կ.գ.դ. Լ.Եպիսկոպոյան):

Իրականացվել է խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի p72 գենի իՌՆԹ-ն թիրախավորող օլիգոնուկլեոտիդների դիզայն, սինթեզ և համակցում SiO_2 նանոմասնիկների հետ (ղեկ.՝ կ.գ.թ. Հ. Զաքարյան):

Բացահայտվել է, որ խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի կոդմից հարուցված ալվեոլային մակրոֆագերի ակտիվացումը տարբերվում է լիպոպոլիսախարիդով, գամմա-ինտերֆերոնով և վիրուսի BA71V ավիրուլենտ շտամով ակտիվացումից, ինչը վկայում է, որ էվոլյուցիայի ընթացքում վիրուսի վիրուլենտության նվազումը պայմանավորված է բջիջներում հակավիրուսային պատասխանի կարգավորման փոփոխությունների հետ (ղեկ.՝ կ.գ.դ. Զ. Կարալյան):

Ցույց է տրվել, որ $\beta 2\text{GPI}$ հակաֆոսֆոլիպիդային հակամարմինները, անկախ դրանց կառուցվածքից, խթանում են մոնոցիտների ակտիվացումը: Ցույց է տրվել նաև հակադոմեն $\beta 2\text{GPI}$ հակամարմինների վերականգնող ազդեցությունն էնդոթելային բջիջների վրա (ղեկ.՝ կ.գ.թ. Գ. Մանուկյան):

Պիրինային ինֆլամասոմի կառուցվածքի մոլեկուլային մոդելավորման *in silico* հետազոտությունների արդյունքում ստացվել է այդ մակրոմոլեկուլային համալիրի նախնական մոդելը (ղեկ.՝ կ.գ.թ. Գ. Առաքելով):

Անջատվել են բակտերիոֆագերի կլոններ, որոնք ցուցաբերել են քայքայող ակտիվություն *Pseudomonas aeruginosa*, *Staphylococcus aureus* և ոչ տիֆոիդ *Salmonella* տեսակներին պատկանող մանրէների նկատմամբ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա. Մեդրակյան):

In vitro պայմաններում kV և MV ռադիոթերապիայի համակցումը պղինձ պարունակող ամինաթթուների ածանցյալ Շիֆֆի հիմքերի հետ ավելի արդյունավետ է կանխում լյարդի քաղցկեղային բջիջների աճը և նվազեցնում է դրանց կենսունակությունը, ինչը թույլ է տալիս վերջիններս դիտարկել որպես ռադիոնուժեղացնող գործոններ (ղեկ.՝ կ.գ.թ. Գ. Ցականովա):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Arabyan E., Kotsinyan A., Hakobyan A., Zakaryan H., African swine fever virus, In: Zakaryan H. (Ed), Porcine viruses: From pathogenesis to strategies for control, UK, “Caister Academic Press” publishing house, 2019, pp. 1-20.

Հոդվածներ, գեկուցումներ

2. Нерсесова Л.С., Петросян М.С., Каралова Е.М., Аветисян А.С., Аброян Л.О., Акопян Л.А., Каралян З.А., Акопян Ж.И., Оценка радиомодифицирующего действия креатина на выживаемость, креатин-креатинкиназную систему печени, ядерно-ядрышковый аппарат гепатоцитов и клетки периферической крови крыс, М., “Радиационная биология. Радиоэкология”, т. 59, №6, 2019, с. 599-609.
3. Нерсесова Л.С., Петросян М.С., Бабаян Н.С., Тадевосян Г.Л., Хонджарян Л.Г., Акопян Ж.И., Радиозащитный эффект креатина при повреждении ДНК моноклеарных клеток периферической

- крови и адаптационные возможности креатин-креатинкиназной системы мозга и печени крыс, Обнинск, "Радиация и риск", т. 28, N 3, 2019, с. 119-131.
4. Овсепян Л.М., Казарян Г.С., Зангинян А.В., Захарян Г.В., Анализ уровня экспрессии генов Т-клеток и окислительные процессы при инсульте, С-Пб, "Медицинская иммунология", т. 21, N 2, 2019, с. 251-256.
 5. Петросян М.С., Нерсесова Л.С., Адамян Н.А., Газарянц М.Г., Акопян Ж.И., Влияние ионизирующего излучения на креатин-креатинкиназную систему мозга крыс и противолучевое действие креатина, М., "Нейрохимия", т. 36, N 3, 2019, с. 246-253.
 6. Тананян А.Г., Баласанян М.Г., Байков А.В., Овсепян Л.М., Казарян Г.С., Влияние меседина на содержание биомаркеров оксидативного стресса в мозговой ткани при ишемии, М., "Нейрохимия", т. 36, N 1, 2019, с. 78-83.
 7. Antonosyan M., Seersholm F., Greal A., Barham M., Werndly D., Margaryan A., Cieslik A., Stafford T., Allentoft M., Bunce M., Yepiskoposyan L., Ancient DNA shows high faunal diversity in the Lesser Caucasus during the Late Pleistocene, "Quaternary Science Reviews", v. 219, 2019, pp. 102-111.
 8. Arabyan E., Kotsynyan A., Hakobyan A., Zakaryan H., Antiviral agents against African swine fever virus, "Virus Research", v. 270, 2019, pp. 197669(1-7).
 9. Arakelyan A., Nersisyan L., Nikoghosyan M., Hakobyan S., Simonyan A., Hopp L., Loeffler-Wirth H., Binder H., Transcriptome-Guided Drug Repositioning, "Pharmaceutics", v. 11, N 12, 2019, pp. 677(1-22).
 10. Arleevskaya M., Aminov R., Brooks W., Manukyan G., Renaudineau Y., Editorial: Shaping of Human Immune System and Metabolic Processes by Viruses and Microorganisms, "Frontiers in Microbiology", v. 10, 2019, pp. 816 (1-8).
 11. Arzumanyan H., Karalova E., Voskanyan H., Saroyan D., Nersisyan N., Karalyan Z., The influence of the African swine fever on porcine industry in an isolated region of Armenia for a period of seven years, "Porcine Research", v. 9, N 1, 2019, pp. 1-6.
 12. Atshemyan S., Zakharyan R., Arakelyan A., Evaluation of functional effect of genes and their variants associated with schizophrenia, "Proceedings of the Yerevan State University: Chemistry and Biology", v. 53, N 2, 2019, pp. 126-130.
 13. Avetyan D., Zakharyan R., Petrek M., Arakelyan A., Telomere shortening in blood leukocytes of patients with posttraumatic stress disorder, "Journal of psychiatric research", v. 111, 2019, pp. 83-88.
 14. Babayan N., Grigoryan B., Khondkaryan L., Tadevosyan G., Sarkisyan N., Grigoryan R., Apresyan L., Aroutiounian R., Vorobyev N., Pustovalova M., Grekhova A., Osipov A., Laser driven ultrashort pulsed electron beam radiation at doses of 0.5 and 1.0 Gy induces apoptosis in human fibroblasts, "International Journal of Molecular Sciences", v. 20, 2019, pp. 5140(1-10).
 15. Babayan N., Tadevosyan G., Khondkaryan L., Grigoryan R., Sarkisyan N., Haroutiounian R., Stopper H., Ochratoxin A induces global DNA hypomethylation and oxidative stress in neuronal cells in vitro, "Mycotoxin Research", 2019, pp. 1-9.
 16. Derenko M., Denisova G., Malyarchuk B., Hovhannisyan A., Khachatryan Z., Hrechdakian P., Litvinov A., Yepiskoposyan L., Insights into matrilineal genetic structure, differentiation and ancestry of Armenians based on complete mitogenome data, "Molecular Genetics and Genomics", v. 294, N 6, 2019, pp. 1547-1559.
 17. Eichmeier A., Penazova E., Nebish A., First report of Grapevine Pinot gris virus on grapevines in Armenia, "Plant Disease", 2019, pp. 1-5.
 18. Gevorgyan H., Grigoryan G., Atoyan H., Rukhkyan M., Hakobyan A., Zakaryan H., Aghayan S., Evidence of Crimean-Congo Haemorrhagic Fever Virus Occurrence in Ixodidae Ticks of Armenia, "Journal of Arthropod-Borne Diseases", v. 13, N 1, 2019, pp. 9-16.
 19. Ghazaryan H., Zakharyan R., Petrek M., Navratilova Z., Chavushyan A., Novosadova E., Arakelyan A., Expression of micro-RNAs miR-31, miR-146a, miR-181c and miR-155 and their target gene IL-2 are altered in schizophrenia: a case-control study, "F1000Research", v. 8, 2019, pp. 2077(1-12).
 20. Hakobyan A., Arabyan E., Kotsinyan A., Karalyan Z., Sahakyan H., Arakelov V., Nazaryan K., Ferreira F., Zakaryan H., Inhibition of African swine fever virus infection by genkwanin, "Antiviral Research", v. 167, 2019, pp. 78-82.
 21. Harutyunyan K., Balayan K., Tadevosyan G., Hayrapetyan M., Musayelyan R., Grigoryan R., Sarkisyan N., Khondkaryan L., Babayan N., Genotoxic potential of selected medicinal plant extracts in human whole blood cultures, "Journal of Herbmmed Pharmacology", v. 8, N 2, 2019, pp. 160-162.
11. Саркисян Г.П., Саркисян А.Г., Даниелян А.М., Математическое описание диффузионной природы набухания и сморщивания эритроцитов при радиационном поражении, “Известия НАН Армении, Физика”, т. 54, N 3, 2019, с. 436-445.
12. Саркисян Г.П., Саркисян А.Г., Даниелян А.М., Решение четырехпараметрической задачи лазерной дифрактометрии в рамках модели двух длин волн, “Известия НАН Армении, Физика”, т. 54, N 2, 2019, с. 293-300.
13. Aghajanyan N., Dolukhanyan S., Ter-Galstyan O., Mnatsakanyan N., Influence of chemical composition on crystal structure of multicomponent carbides, Carbohydrides and Carbonitrides of Transition Metals, Ceramics in Modern Technologies, TCMT - Ceramics in Modern Technologies, v. 1, 2019, pp. 44-50.
14. Aghoyan A., Davtyan D., Mnatsakanyan R., The catalytic properties of supported Mo₂C synthesized by microwave irradiation in hydrazine hydrate decomposition reaction, Chemical Journal of Armenia, v. 72, N 4, 2019, pp. 419-426.
15. Arakelyan V., Balasanyan R., Minasyan S., Kostanyan R., The influence of mechanical vibrations with the acoustic frequency on the properties of ordinary water., Y., Armenian Journal of Physics, v.12, N 1, 2019, pp.17-22.
16. Davtyan D., Mnatsakanyan R., Liu Le, Aydinyan S., Hussainova I., Microwave synthesis of B₄C nanopowder for subsequent spark plasma sintering, Journal of Materials Research and Technology”, 2019, pp. 5823-5832. <https://doi.org/10.1016/j.jmrt.2019.09.052> ,
17. Gevorkyan A., Aleksanyan A., Alaverdyan S., On homeomorphism between Euclidean Subspace and conformally Euclidean manifold., Mathematical Problems of Computer Science, v. 51, 2019, pp. 98-106.
18. Gevorkyan A., Quantum Vacuum: The structure of empty space-time and quintessence with gauge symmetry Group SU(2)xU(1), Particles, v. 2, N 2, 2019, pp. 281-308.
19. Gevorkyan A., The three-body problem in Riemannian geometry. Hidden irreversibility of the classical dynamical system., Lobachevskii Journal of Mathematics, v. 40, N 8, 2019, pp.1058–1068.
20. Gorban A., Sargsyan H., Wahab H., The cell-jump formalism of multicomponent nonlinear diffusion., Armenian Journal of Physics, v. 12, N 1. 2019, pp .45-50.
21. Grigoryan R., Aloyan S., Arutyunyan V., Arsentev S., Tavadyan L., Dry reforming of methane over nanosized tungsten carbide powders obtained by mechanochemical and plasma-mechanochemical methods, Petroleum Chemistry, v. 59, N 11, 2019, pp. 1256–1263.

22. Kharatyan S., Chatilyan H., Manukyan Kh., Kinetics and mechanism of nickel oxide reduction by methane, *The Journal of Physical Chemistry C*, v. 123, N 35, 2019, pp. 21513-21521.
23. Liu L., Aydinyan S., Minasyan T., Baronins J., Antonov M., Kharatyan S., Hussainova I., Spark plasma sintering of combustion synthesized TiB₂-Si composit, *Ceramics in Modern Technologies*, N 1, 2019, pp. 59-66.
24. Mahmoudi H., Abovyan L., Aydinyan S., Kharatyan S., SHS reprocessing of copper oxide waste into copper powder, *International Journal of SHS*, v. 28, N 4, 2019, pp. 233-238.
25. Mahmoudi H., Vardapetyan V., Abovyan L., Kharatyan S., Combustion in copper (I) oxide waste-NiO-NH₄NO₃ system and synthesis of Cu-Ni alloys, *Chemical Journal of Armenia*, 2019, v. 72, N 4, pp. 409-418.
26. Mantashyan A., Makaryan E., Arakelyan L., Investigation of the chain reaction of hydrogen oxidation by sulfur dioxide, *Combustion, Explosion, and Shock Waves*, v. 55, N 2, 2019, pp. 125-135.
27. Mantashyan A., Makaryan E., Charchyan A., Kinetic analysis of the oxidative conversion of methane in slow combustion. I. Key Steps of the Chemical Mechanism, *Combustion, Explosion, and Shock Waves*, v. 55, N 5, 2019, pp. 513-525.
28. Muradyan G., Dolukhanyan S., Aleksanyan A., Ter-Galstyan O., Mnatsakanyan N., Regularities and mechanism of formation of aluminides in the TiH₂-ZrH₂-Al system, *Russian Journal of Physical Chemistry B*, 2019, v. 13, N 1, pp. 86-95.
29. Tavadyan L., Minasyan S., Synergistic and antagonistic co-antioxidant effects of flavonoids with trolox or ascorbic acid in a binary mixture., *Journal of Chemical Science*, v.131, N 40, 2019, pp. 1-11.
30. Zakaryan M., Aydinyan S., Kharatyan S., Combustion synthesis and consolidation of Ni-W nanocomposite material. *Ceramics in Modern Technologies*, v. 1, 2019, pp. 67-74.
31. Zakaryan M., Niazyan O., Aydinyan S., Kharatyan S., Reaction pathway in the WO₃-NiO-Mg-C system. DTA/TG study, *Chemical Journal of Armenia*, v. 72, N 3, 2019, pp. 223-232.
32. Zakaryan M., Reduction of silver tungstate in combustion mode & synthesis of W-Ag pseudoalloy, *Chemical Journal of Armenia*, 2019, v. 72, N 4, pp. 401-408.

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

Ս.Այդինյանը ստացել է Մենդելեևի պարբերական աղյուսակի 118-րդ «Օգանեսոն» տարրի մրցանակ:

Մ.ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ԱՆՎ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ տ.գ.թ. Կ.Գրիգորյան
Փոխտնօրեն՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան
Գիտքարտուղար՝ տ.գ.թ. Գ.Մանուկյան
Էլեկտրոնային փոստ՝ ionx@sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Առաջին անգամ մշակվել են ջրային միջավայրում կայուն երկաթ (III)-ի պոլիօքսի-վոլֆրամատի β-միջուկի սինթեզի պայմանները: Հաստատվել է, որ երկաթ (III)-ի պոլիօքսի-վոլֆրամատը, ըստ վոլֆրամի 6-րդ շարքի, կոմպլեքսային միացություն է, որին, ըստ հետա-զոտությունների արդյունքների, համապատասխանում է (HO)₆[H₃Fe^{III}W₆O₁₈] բաղադրու-յունը: Համաձայն նախորդ հետազոտությունների՝ ենթադրվում է, որ մեր կողմից սինթեզ-ված Fe^{III}-ի պոլիօքսիվոլֆրամատը, նման իր դասի այլ միացությունների, պետք է օժտված լինի մեծ կենսաբանական ակտիվությամբ (դեկ.՝ ք.գ.թ. Է. Հայրիյան):

Շարունակվել են զոլ-ժել տեխնոլոգիայի կիրառմամբ ցածր զծային ընդարձակման գոր-ծակցով տեխնիկական խեցեղենի ստացման ուսումնասիրությունները Li₂O-TiO₂-Al₂O₃-SiO₂

և $\text{MgO-TiO}_2\text{-Al}_2\text{O}_3\text{-SiO}_2$ համակարգերում մակերևութային ակտիվ նյութերի, ջրալուծ պոլի-վինիլ սպիրտի և իոնիզացնող պոլիմեր պոլիակրիլաթթվի առկայության պայմաններում: Ալմաստային խեցեղենի հատկություններն ուսումնասիրելիս արձանագրվել է ածխածնի ֆազերից մեկի՝ կարբինի առաջացումը: Ալմաստային խեցեղենային տափօղակի մակերեսի հետ ինտենսիվ լազերային ճառագայթի փոխազդեցության ժամանակ (որը ստացվել է 9 ԳՊա ճնշման և $\sim 2000^\circ\text{C}$ ջերմաստիճանի պայմաններում, 10/7 միկրոն ալմաստի փոշուց) առաջանում են մարզեր, որոնք պարունակում են ալմաստ-գրաֆիտ-կարբին, որը հաստատված է էլեկտրոնային մանրադիտակով և ռենտգեն ֆազային հետազոտություններով (դեկ.՝ տ.գ.թ. Ա. Կոստանյան):

Քարամշակման թափոնների, փքած պեռլիտի և հանքային կապակցող նյութի հիման վրա միկրոալիքային սինթեզի եղանակով մշակվել են էկոլոգիապես մաքուր կոմպոզիտային նյութեր 750-900 կգ/մ³ միջին խտությամբ: Որոշվել են ջերմամշակման ռեժիմները: Նյութի կառուցվածքը հետազոտվել է սպեկտրի ինֆրակարմիր տիրույթում՝ հումքի և կոմպոզիտի սպեկտրների փոփոխությամբ, արդյունքում պարզվել է հումքի և կապակցող նյութի միջև եղած կապը: Հետազոտվել են ստացված կոմպոզիտների ֆիզիկամեխանիկական հատկությունները (դեկ.՝ տ.գ.թ. Ն. Գուրգենյան):

Ուսումնասիրվել են $\text{MeO (Me-Mg,Ca,Ba)-Al}_2\text{O}_3\text{-B}_2\text{O}_3\text{-SiO}_2$ համակարգերի միկրոլիքվա-ցիոն տիրույթները, անընդհատ շարքի $\text{Ca}_2\text{Mg(Si}_2\text{O}_7)\text{-Ca}_2\text{Al(AlSiO}_7\text{)}$ և $\text{CaSiO}_3\text{-MgSiO}_3$ պինդ լուծույթների առաջացման դաշտերը, ապակիների աստիճանային բյուրեղացումը: Բացահայտվել է ապակեբյուրեղների սինթեզի պրոցեսում ապակեֆազի մոլյար ծավալի և ընդարձակման գործակցի հակադարձ փոխկապվածությունը: Պարզվել է կորդիերիտային ապակեբյուրեղներում կատիոն-անիոնային $\text{Al}^{3+}+\text{O}^{2-}\rightarrow\text{Mg}^{2+}+\text{F}^-$ տեղակալման հնարավորությունը և B_2O_3 պարունակող ցածր ԳԸՋԳ-ով ($\leq 25\cdot 10^{-7}\text{K}^{-1}$) էլեկտրատեխնիկական սիտալների ստացումը: Ուսումնասիրվել է $\text{CaO-CaF}_2\text{-Al}_2\text{O}_3\text{-SiO}_2$ և $\text{CaO-CaF}_2\text{-B}_2\text{O}_3\text{-V}_2\text{O}_5$ համակարգերում արագ ամրացող կապակցվողների և որոշակի ջերմաստիճանային տիրույթում հաղորդականության տիպի փոփոխությամբ ապակեբյուրեղների սինթեզը (դեկ.՝ տ.գ.դ. Ն. Կնյազյան):

Ուսումնասիրվել են սերպենտինային միներալների խմբից ստացված հիդրոսիլիկա-ժելի (ՀՄԺ) և հողակալիական մետաղների կատիոններով պայմանավորված միացությունների փոխազդեցությունները լայն կիրառություն ունեցող սիլիկատային միացությունների ստացման համար: Երկփուլ սինթեզի պայմաններում՝ սուսպենզիայի եռման գործընթաց և ձևավորված միջանկյալ միացություններից ցածր ջերմաստիճանային ($t < 850^\circ\text{C}$) սինթեզ, իրականացվել է β -վոլաստոնիտի առաջացումը՝ անմիջական փոխազդեցության մեջ դնելով ՀՄԺ-ը Ca(OH)_2 -ի հետ: Բացի այդ, NaOH -ի ներկայությամբ ՀՄԺ-ը փոխազդեցության մեջ դնելով $\text{SrCl}_2\cdot 6\text{H}_2\text{O}$ -ի և $\text{BaCl}_2\cdot 2\text{H}_2\text{O}$ -ի հետ՝ ստացվել են համապատասխանաբար Sr_2SiO_4 , BaSiO_3 և Ba_2SiO_4 միացությունները, որոնք լայն կիրառություն ունեն լյումինաֆորների արտադրությունում (դեկ.՝ ք.գ.դ. Ն. Զուլումյան):

Միկրոալիքային եղանակով ստացվել են վանադիում-դիոպսիդ, երկաթ-դիոպսիդ, կոբալտ-դիոպսիդ, ինչպես նաև նիկել-մուլիտ, կոբալտ-մուլիտ կերամիկական պիզմենտներ: Ուսումնասիրվել են պիզմենտների ստացման պրոցեսները և մշակվել են ստացման օպտիմալ պայմանները: Խոշոր լաբորատոր սարքավորումներում ստացվել են նշված պիզմենտների փորձական նմուշներ, որոնց հատկություններն ուսումնասիրվել են ֆիզիկաքիմիական անալիզի մեթոդներով: Հաստատվել է, որ միկրոալիքային եղանակը թույլ է տալիս 2-3 անգամ կրճատել վերոնշյալ պիզմենտների ստացման ժամանակը, ինչպես նաև $200\text{-}250^\circ\text{C}$ աստիճանով իջեցնել դիոպսիդային և մուլիտային կառուցվածքի ձևավորման ջերմաստիճանը (դեկ.՝ տ.գ.թ. Վ. Բադրամյան):

Ցույց է տրվել, որ ածխաջրածինների օքսիդացման գազաֆազ շղթայական ռեակցիաների ազդեցությամբ (ՇՌԱ-ռեժիմ) պղնձի անջուր սուլֆատը՝ (II) CuSO_4 -ը, ենթարկվում է

արդյունավետ քիմիական փոխարկման՝ ընդհուպ մինչև մանրահատիկ փոշեձև տեսքով մետաղական պղնձի վերականգնումը: Փորձերն իրականացվել են հետերաֆազ պրոցեսի որոշիչ չափորոշիչների (ռկ, $RH:O_2$, T, t) փոփոխման լայն տիրույթում: ՇՌԱ-մեթոդով պրոցեսի իրականացումը բնորոշվում է էականորեն ցածր ջերմաստիճաններով և ռեակցիաների ընթացքի բարձր արագություններով (ղեկ.՝ ք.գ.թ. Կ.Մանթաշյան):

Շարունակվել են պղնձամոլիբդենային խտանյութերի և դրանց ստացման պրոցեսներում առաջացող թափոնների վերամշակման աշխատանքները: Մշակվել են նոր տեխնոլոգիական ուղղություններ, որոնք թույլ են տվել պղնձի խտանյութը վերամշակել՝ բացառելով ծծմբային գազերի արտանետումը մթնոլորտ, նշված նյութերից կորզել բոլոր պիտանի բաղադրամասերը (ղեկ.՝ տ.գ.թ. Ս.Մահարունյան):

Խոնավ պայմաններում և օդում կավագիպսի ամրությունը բարձրացնելու նպատակով կատարվել են փորձեր, որտեղ որպես հավելանյութ օգտագործվել է բարձրջերմաստիճանային (1000°C) թրծած գիպսային կապակցանյութ մինչև 15%: Այդ հավելանյութը, խոնավ միջավայրում պնդացման ժամանակ, նպաստում է կավագիպսի ամրության մեծացմանը: Առաջացած նյութերի ամրության մեծացումը պայմանավորված է ինչպես անլուծելի անջուր գիպսի պնդացման ակտիվացմամբ, այնպես էլ CaO -ի և կավագիպսի ոչ սուլֆատային մասի փոխազդեցությունից առաջացած կալցիումի հիդրոսիլիկատներով և հիդրոսուլֆոալյումինատներով: Ցելյուլոզային եթերի (0.1-0.2%) ավելացումը նպաստել է երկջուր գիպսի նպատակային բյուրեղացմանը լավ ձևավորված պրիզմատիկ բյուրեղների առաջացմամբ, ինչը մեծացրել է նրա ամրությունը (ղեկ.՝ տ.գ.թ. Կ.Գրիգորյան):

Հետազոտվել են պղնձի օքսիդացած միներալների մակերևութային խորը սուլֆիդացման տեսական և տեխնոլոգիական հիմունքները, որը ներառում է ազուրիտի, մալախիտի, կուպրիտի և տենորիտի սիլիցիումի սուլֆիդով (SiS_2) և նրա նատրիումի թիոկոմպլեքսով մշակումն աղացման գործընթացում: Բացահայտվել են պղնձի օքսիդացած միներալների նատրիումի թիոկոմպլեքսով սուլֆիդացման ռեակցիաների թերմոդինամիկան, կինետիկան և մեխանիզմը: Որոշվել են աղացման գործընթացում պղնձի օքսիդացած միներալների սուլֆիդացման օպտիմալ պայմանները, որոնք ապահովում են $\sim 63\%$ սուլֆիդացում (ղեկ.՝ տ.գ.թ. Ա.Հովսեփյան):

Ուսումնասիրվել են հանքային նյութերից և մրգերի կորիզների կճեպներից մի շարք օքսիդիչներով և թթուներով մշակման արդյունքում որոշ ծանր մետաղների կատիոնիտների ու ռադիոակտիվ իզոտոպների նկատմամբ բարձր ընտրողականությամբ օժտված իոնափոխանակիչների և անհրաժեշտ սորբցիոն-ծակոտկենային բնութագրերով ադսորբենտների սինթեզման պրոցեսները: Հետազոտվել են ստացման օպտիմալ պայմանները, ֆիզիկաքիմիական, սորբցիոն-ծակոտկենային, իոնափոխանակման հատկությունները և դրանց վրա ազդող գործոնները (ղեկ.՝ տ.գ.թ. Վ.Մարտիրոսյան):

Հետազոտվել են ՀՀ Սյունիքի մարզի Փխրուտի և Կոտայքի մարզի Հանքավանի հանքային դաշտերը՝ նպատակ ունենալով կազմել լիթոերկրաքիմիական և երկրաքիմիական քարտեզներ ու առանձնացնել ծանր մետաղներով հագեցած, աղտոտված տարածքները: Տարբեր հատվածների փխրուն հողերից նմուշարկվել է մոտ 250 նմուշ, կատարվել է մոտ 30 նմուշի սպեկտրալ անալիզ: Կազմվել են ուրանի, պղնձի, ցինկի, նիկելի համար երկրորդային ցրման պսակների քարտեզներ, որոնցում հստակ երևում են էլեմենտների կուտակումների տարածքները. նշված տարածքները չեն ընդգրկում բնակավայրեր և արտավայրեր (ղեկ.՝ ե.գ.թ. Լ.Հարությունյան):

Ուսումնասիրվել են հիդրոֆոր ֆիլտրող փոշիների ստացման գործընթացները փքած պեռլիտի և բազմաէթիլհիդրոսիլօքսանի համատեղ մանրացման պայմաններում: Ստացված մոդիֆիկացված ֆիլտրող փոշին հնարավոր է վերականգնել և օգտագործել նավթամթերքներից մաքրելուց հետո (ղեկ.՝ տ.գ.թ. Ռ.Մանուկյան):

Ուսումնասիրվել են $\text{LiPO}_3\text{--B}_2\text{O}_3\text{--NaF}$ և $\text{LiPO}_3\text{--Fe}_2\text{O}_3\text{--NaF}$ համակարգերի ապակեգոյացման տիրույթները և ստացված ապակիների ֆիզիկաքիմիական հատկությունները: Մշակվել են էլեկտրոնիկայում կիրառելի բարձր մազնիսական հատկություններով դյուրահալ ապակիներ, ինչպիսին է մագնետրոնիկական կամ սպինտրոնիկական (ղեկ.՝ տ.գ.թ. Մ.Պողոսյան):

Շարունակվել են պլազմոնեխանաքիմիական եղանակով մետաղական Ni, Co, ինչպես նաև վոլֆրամի, կարբիտի, նանոչափ փոշիների ստացման ուսումնասիրությունները և դրանց կատալիտիկ ազդեցությունը մեթանի ածխաթթվային կոնվերսիայի վրա (ղեկ.՝ տ.գ.թ. Ա.Թաթարյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հետազոտվել են ապակեկերպ բորոսիլիկատներով և նիտրատներով կազմված ալմաստ պարունակող կոմպոզիտների որոշ ջերմային հատկություններ: Պարզվել է, որ մեկուսացված NO_3^- խմբերի ներդրումը բորոսիլիկատային ապակիների եռաչափ կառուցվածք՝ հնարավորություն է ընձեռում ստանալ օքսիդային ապակիների նմանօրինակ ապակիներ՝ բարձր մածուցիկությամբ և ապակեացման միջակայքի առկայությամբ: Ցույց է տրվել տարբեր բաղադրության ապակիներով կազմված կոմպոզիտների հեռանկարայնությունը որպես կապակցող ալմաստ պարունակող գործիքների ստացման ժամանակ և դրանց ունակությունը բարձր ջերմաստիճաններում անջատել թթվածին, որը կնպաստի մշակվող նյութի մակերևույթի ջերմաօքսիդացմամբ իրականացնել ալմաստի ադիեզիոն-քիմիական մշակումը (ղեկ.՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան):

Ուսումնասիրվել է հանքանյութի արժեքավոր բաղադրիչների հանքային կազմի փոփոխությունը՝ մանրացման գործընթացում նատրիումի պոլիսուլֆիդներով օքսիդացած հանքանյութի մակերևույթի ավելի խորը սուլֆիդացմամբ: Մանրացման ժամանակ սուլֆիդացման պրոցեսը թույլ է տալիս ակտիվացնել գործընթացը և զգալիորեն բարձրացնել սուլֆիդացման աստիճանը համեմատած խառնման ժամանակ սուլֆիդացման հետ: Սահմանվել են սուլֆիդացման գործընթացի պարամետրերն ու ռեժիմները (ղեկ.՝ տ.գ.թ. Ս.Հարությունյան):

Հրապարակումներ

Հոդվածներ, գեկուցումներ

1. Агамалян Н.Р., Кафадарян Е.А., Нерсисян М.Н., Смбалян Г.А., Баграмян В.В., Kohút M., Milovská S., Основные физические свойства полурозрачного обсидина из месторождения Артени, Ер., “Изв. НАН Армении, Физика”, 54, N 4, 2019, с. 502–512.
2. Арутюнян В.В., Алексанян Э.М., Бадалян А.О., Петросян Л.А., Баграмян В.В., Саргсян А.А., Манукян Х., Структура и радиационная стойкость модифицированных терморегулирующих материалов, Тр. XXIX межд. конф. «Радиационная физика твёрдого тела», Севастополь, 2019, с. 363–370.
3. Бегларян А.А., Меликян С.А., Зулумян Н.О., Терзян А.М., Исаакян А.Р., Исследование образования ортосиликата стронция на основе гидросиликагеля, выделенного из серпентинов, Ер., “Хим. ж. Армении”, т. 72, N 1-2, 2019, с. 34–42.
4. Бегларян А.А., Зулумян Н.О., Исаакян А.Р., Меликян С.А., Терзян А.М., Взаимодействие гидроксида кальция с аморфным кремнеземом, полученным из серпентинитов, М., “Журнал физической химии”, т. 93, N 5, 2019, с. 730–737.
5. Гиносян А.В., Бадалян Г.Г., Довлатян А.К., Квантово-химическое моделирование системы йод-декстрин., М., “Химическая технология”, т. 20, N 3, 2019, с. 128–134.
6. Кузей А.М., Филимонов В.А., Князян Н.Б., Манукян Г.Г., Механохимическое шлифование монокристаллов алмаза, Межд. симп. «Перспективные материалы и технологии», Брест, 2019, с. 636–639.

7. Пашаян Р.А., Арутюнян Л.В. "Современные изменения геодинамики земной коры территории Армении", Ер., "ДНАН Армении", т. 119, N 3, 2019, с.249-257.
8. Пашаян Р.А., Арутюнян Л.В., Товмасын К.Г., Геодинамика территории Армении по результатам комплексных наблюдений, "Российский сейсмологический журнал", т. 1, N 1, 2019, с. 101-109.
9. Сагарунян С.А., Арустамян А.Г., Назарян Э.М., Агамян Э.С., Исследование процессов переработки медных сульфидных концентратов, М., "Химическая технология", N 6, 2019, с. 242-246.
10. Beglaryan H., Melikyan S., Zulumyan N., Terzyan A., Isahakyan A., Influence of colloid synthesis techniques on barium silicates formation using silica hydrogel derived from serpentine minerals, *Journal of Molecular Liquids*, 2019, v. 291, N 10, pp. 1-6.
11. Galstyan M., Yeritsyan S., Grigoryan K., Pagliari P., Opportunities of getting ecologically safe yield in the technogenic soils contaminated with heavy metals under the influence of the complex fertilizer produced from alumo-silicates, *Agriscience and technology, Armenian National Agrarian University*, N (68) 4, 2019.
12. Grigoryan R., Aloyan S., Harutyunyan V., Arsentev S., Tavadyan L, Dry reforming of methane over nanosized tungsten carbide powders obtained by mechanochemical and plasmamechanochemical methods, *ISSN 0965-5441, Petroleum Chemistry*, 2019, v. 59, N 11, pp. 1256–1263.
13. Pashayan R., Harutyunyan L.. Graphic representation of the parameters of hydrogeochemical composition of mineral water in central Armenia, Y., *Electronic Journal of Natural Sciences*, 2019, 2(33), pp. 9-19.
14. Sargsyan A., Baghramyan V., Knyazyan N., Synthesis by hydrothermal method of complex charge of Yttrium-Aluminum-Silicate glass for radiotherapy, Y., *Armenian Journal of Physics*, 2019, 12 (1), pp. 23-27.
15. Yeganyan J., Knyazyan N., Obtaining nanostructured materials based on segregating aluminoborosilicate system, *International School-Conference "Applied Nanotechnology and Nanotoxicology,(ANT-2019), Sochi, Russia*, 2019, pp. 32-33.
16. Zulumyan N., Isahakyan A., Beglaryan H., Melikyan S., Terzyan A., The development of a new route to the synthesis of strontium orthosilicate, M., *J Therm Anal Calorim*, v. 137 N 4, 2019, pp. 1471-1481.
Հողվածները հրապարակվել են «Քիմիա և քիմիական տեխնոլոգիաներ» VI միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում, Ե., «Շոմպար» հրատ., 2019, 306 էջ:
17. Алоян С.Г., Григорян Р.Р., Арутюнян В.Р., Арсентьев С.Д., Плазмомеханохимический метод получения нанопорошков металлов Ni, Co, их сплава и карбита вольфрама и их каталитическая активность в углекислотной конверсии метана, с. 205-207.
18. Баграмян В.В., Саргсян А.А., Хостоян Ф.А., Сухудян Г.А., Асланян А.М., Тороян В.П., Арутюнян В.Р., Микроволновой синтез железо-муллитовых пигментов, с. 183-186.
19. Григорян К.Г., Хачатрян А.А., Багинова Л.Г., Айрапетян С.М., Арутюнян Г.А., Взаимодействие дацитового туфа с обожженным доломитом в гидротермальных условиях, с. 279-281.
20. Гургенян Н.В., Григорян А.Е., Костандян М.Ф., Варданян Н.К., Карапетян К.А., Хачанова И.Б., Сааков А.С., Получение композиционных материалов из нерудного сырья с помощью СВЧ-нагрева, с. 210-215.
21. Гургенян Н.В., Хачанова И.Б., Влияние плотности перлитовой породы на ее деформационные свойства, с. 215-218.
22. Казарян А.А., Оганесян Р.М., Джавадян В.Г., Оганесян М.Р., Бегларян А.А. , Князян Н.Б., Тороян В.П., Получения висмут-теллуридных оксидных покрытий путем низкотемпературного окисления, с. 59-61.
23. Князян Н.Б., Кумкумаджян Е.В., Оганесян М.Р., Галоян К.К., Синтез и исследование технических и биологических ситаллов с оксидами магния и кальция в бороалмосиликатных системах, с. 14-17.
24. Кумкумаджян Е.В., Галоян К.К., Тороян В.П., Князян Н.Б., Композиционные материалы и ситаллы на основе алюмоборосиликатных оксифторидных стекол, с. 65-68.
25. Манукян Г.Г., Гаспарян Л.А., Матевосян А.Б., Григорян Т.В. Кочарян Г.Л., Князян Н.Б., Исследование стекол и ситаллов на основе легкоплавких бороалюминатных систем, с. 87-90.
26. Манукян Р.В., Арсенян Н.М., Получение термостойкого фильтрующего порошка, с. 90-92.
27. Манукян А.Г., Дериватографический метод анализа для исследования механизма известковой обработки диатомитов, с. 92-94.
28. Манташян К.А., Манташян С.Г., Есаян А.Р., Высокоэффективная гетерофазная химическая переработка и модификация природных кварцитов армении под воздействием цепных газофазных реакций, с. 81-83.
29. Манташян К.А., Манташян С.Г., Абрамян М.М., Запросян А.В., Гетерофазное химическое превращение диоксида титана под воздействием различных цепных газофазных реакций, с. 84-87.
30. Мартиросян В.Г., Саркисова Ю.С., Синтез и исследование адсорбционных свойств угольных сорбентов на основе ореховой скорлупы. с. 95-97.

31. Меликян С.А., Терзян А.М., Исаакян А.Р., Овсепян Т.А., Бегларян А.А., Зулумян Н.О., Влияние длительности осаждения интермедиантов в растворе на выход β -волластонита в конечном термообработанном продукте, с. 103-106.
32. Меликян С.А., Терзян А.М., Исаакян А.Р., Казанчян А.М., Бегларян А.А., Зулумян Н.О., Влияние «старения» на гидросиликагель, выделенный из серпентиновых минералов, и на выходы получаемых из него силикатов кальция, с. 185-187.
33. Меликян С.А., Терзян А.М., Исаакян А.Р., Казанчян А.М., Бегларян А.А., Зулумян Н.О., Влияние степени гидратации катионов бария на формирование силикатов бария, с. 224-226.
34. Овсепян А.О., Шолинян Г.Г., Арутюнян С.А., Ванян Т.А., Акопян А.Р., Гаспарян Р.М., Использование сульфида кремния в качестве сульфидизатора окисленных минералов меди, с. 159-161.
35. Сагаруныан С.А., Арустамян А.Г., Назарян Э.М., Агамян Э.С., Исследование процессов переработки медных сульфидных концентратов, с. 164-166.
36. Сагаруныан С.А., Назарян Э.М., Арустамян А.Г., Макарян И.М., Исследование процессов переработки сынныритов каустической содой, с. 166-169.
37. Саргсян А.А., Баграмян В.В., Князян Н.Б., Арутюнян В.В., Григорян Н.Е., Алексанян Э.М., Бадалян А.О., Оптические свойства и радиационная стойкость силиката магния, полученного микроволновым методом, с. 201-205.
38. Саркизова Ю.С., Казинян А.А., Изучение возможностей улучшения физико-химических свойств монтмориллонитовых глин (бентонитов) с целью повышения их адсорбционных свойств, с. 128-129.
39. Yeritsyan S., Ayvazyan S., Grigoryan K., Theoretical and ecological justification of the complex fertilizer application of alumo-silicates and its testing results. VI International Conference on Chemistry and Chemical Technology, pp. 282-284.
40. Martirosyan V., Kazinyan A., Puskulyan K., The ion-exchange properties of the carbon ion-exchangers synthesized on the basis of walnuts shells, pp. 97-99.
41. Melikyan S., Terzyan A., Isahakyan A., Hovsepyan T., Beglaryan H., Zulumyan N., Temperature-induced phase transformations inside the intermediates precipitated by the interaction of silica hydrogel derived from serpentine minerals and calcium hydroxide $\text{Ca}(\text{OH})_2$, pp. 109-111.

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ ք.գ.դ. Ա.Հարությունյան
Փոխտնօրեն՝ Մ.Հարությունյան
Գլխավոր տնօրեն՝ ք.գ.դ. Ա.Գյուլնազարյան
Էլեկտրոնային փոստ՝ nanraifok54@mail.ru
Կայքէջ՝ www.stcopc.sci.am

Մասնագիտական խորհուրդ 010՝ «Քիմիա»

Նախագահ՝ թղթ. անդ. Վ.Թովուրյան, գլխավոր տնօրեն՝ ք.գ.թ. Ա.Հասարայան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Սաթաթթվի մեթիլէթերի քլորանհիդրիդի և 3,4-դիմեթօքսիֆենիլցիկլոպենտիլ-1-մեթիլամինի փոխազդեցությամբ սինթեզվել է ամփոփեթեր, դրա փոխարկումները բերել են պիրոլոտետրահիդրոփոքինոլին-3-ոնի, որը վերականգնվել է մինչև համապատասխան պիրոլոտետրահիդրոփոքինոլինը: 1-(4-մեթօքսիֆենիլ)տետրահիդրոպիրան-1-կարբոնաթթվի քլորանհիդրիդի հիման վրա սինթեզվել են երկտեղակալված հիդրազիդներ, իսկ դրանց ցիկլացմամբ՝ սիմետրիկ և ոչ սիմետրիկ 2,5-երկտեղակալված 1,3,4-օքսադիազոլներ: Սինթեզվել է երկու ֆունկցիոնալ խմբով թիոֆենոբենզո-դիօքսան, որի հիման վրա սինթեզվել է ամփոփեթերների շարք: Սինթեզվել են N-ամինոմեթիլթիոններ, որոնք տրիազոլային

օղակի 2-րդ դիրքում պարունակում են նիտրիլային, եթերային, թթվային և ամիդային խմբեր (դեկ.՝ ք.գ.թ.՝ Ա.Ադեկյան):

Եռակումպոնենտ միափուլային եղանակով սինթեզվել են նոր 5-արիլտեղակալված տետրափոքրապիրիմիդո[4,5-*b*]խինոլինդիոններ, բենզոխրոմենո[2,3-*d*]պիրիմիդիններ: Ստացվել են նաև 1-ալկիլ-, 1-ալիլտեղակալված օքսոփոքրապիրիններ: Սինթեզվել են պոտենցիալ հակաքաղցկեղային՝ տիրոզինկինազայի ռեգեպոտների վրա ներագոյող և ուռուցքային ԴՆԹ-ի մեթիլացումը կանխարգելող ազդների հիբրիդային և բիս-կառուցվածքով նոր ածանցյալներ (դեկ.՝ ք.գ.դ.՝ Ա.Հարությունյան):

Սինթեզվել է N4-(4-ացետիլֆենիլ)-2-ֆենիլամինո-4-խինոլինկարբօքսամիդ, որի հիման վրա ստացվել են նոր N-4 տեղակալված 2-ֆենիլամինո-4-խինոլինկարբօքս-ամիդներ: Իրականացվել են 2,6-դիփոքրապիրիլտետրափոքրապիրան-4-ոնի տարբեր ածանցյալների սինթեզը և դրանց հետագա փոխարկումները: Սինթեզվել են դեղամիջոցներ հանդիսացող էտոսուկցիմիդի և պուֆեմիդի N-ամինամեթիլ ածանցյալներ: Իրականացվել է 2-պիրրոլիդոն-5-կարբոնաթթվի և ֆտալիմիդի N-ամինամեթիլ ածանցյալների սինթեզ: Սինթեզված միացությունների գերակշռող մասն օժտված է միջին կամ բարձր հակաօքսիդանտային ակտիվությամբ (դեկ.՝ ք.գ.թ.՝ Ա.Բսախանյան):

Նկատի ունենալով α - և β -ամինաթթուների ալկիլ էսթերների կարևորությունը ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների, այդ թվում պեպտիդների սինթեզում՝ մշակվել է α - և β -ամինաթթուներից դրանց մեթիլ էսթերների սինթեզի արդյունավետ եղանակ: Վերջինիս դեպքում որպես դեհիդրատացնող ագենտ կիրառվել է դիմեթիլդիքլորսիլանը: Պրոցեսն ընթացել է սենյակային ջերմաստիճանում և հանգեցրել է նպատակային միացությունների բարձր ելքերի (95-100%): Նույն եղանակը կիրառվել է նաև N-տեղակալված ամինաթթուների մեթիլ էսթերների սինթեզի համար (դեկ.՝ թղթ.անդ.՝ Վ.Թովուկյան):

Մշակվել է ճարպայուղում ճարպաթթուների չհագեցվածության գնահատման եղանակ: Կատարվել է ԳԱԱ հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի կողմից տրամադրված մի քանի բույսերի նմուշներից ստացված ճարպայուղում օմեգա-3 ճարպաթթուների քանակական որոշում, որոշվել են այդ նմուշներից անջատված հանուկների հակառադիկալային ակտիվությունները (դեկ.՝ ք.գ.թ.՝ Հ.Անանիկյան):

Մշակվել է պիրանո[3,4-*c*]պիրիդինների դիամինոածանցյալների սինթեզի նոր արդյունավետ եղանակ Սմայլսի տիպի նոր վերախմբավորմամբ: Մշակվել են քլորքացախաթթվի ամիդներով 3-ցիանպիրիդին-2(1H)-ոնների ռեգեոսելեկտիվ ալկիլացման պայմանները, որոնք բերում են O-ալկիլացված արգասիքների առաջացման: Մշակվել են մատչելի եղանակներ թիենո[2,3-*b*]թիոպիրանո[3,4-*e*]պիրիդինի ածանցյալների ստացման համար: Ուսումնասիրվել են 3-ամինո-7,7-դիմեթիլ-2-էթօքսիկարբոնիլ-7,8-դիհիդրո-5H-թիենո[2,3-*b*]թիոպիրանո[3,4-*e*]պիրիդինների ռեակցիաները օ-մրջնաթթվի տրիէթիլէսթերի և տարբեր իզոցիանատների հետ: Սինթեզվել են իզոմեր տրիագոլո[4,3-*c*]- և [1,5-*c*]պիրիմիդիններ: Ուսումնասիրվել են ազիդ-տետրագոլային փոխարկումների պայմանները: Սինթեզվել են քառացիկլիկ պիրիդո[3',2':4,5]թիենո(ֆուրո)[3,2-*d*]պիրիմիդինի նոր ամինո և S-ալկիլածանցյալներ: Ստացվել են նոր հետերոցիկլիկ համակարգեր՝ պիրիդո[3',2':4,5]թիենո(ֆուրո)[3,2-*d*][1,3]թիագոլո[3,2-*a*]պիրիմիդիններ և պիրիդո[3'',2'':4',5']թիենո(ֆուրո)[3',2':4,5]պիրիմիդո-[2,1-*b*][1,3]թիագլիններ: Շարունակվել են 2,7-նաֆթիրիդինների շարքում նոր վերախմբավորման մեխանիզմի ճշգրտման հետազոտությունները: Ուսումնասիրվել է առաջին դիրքի ամինի ազդեցությունը վերախմբավորման ելքերի և արագության վրա (դեկ.՝ ք.գ.դ.՝ Ե.Պարոնիկյան):

Սինթեզվել են N-տեղակալված սուկցինիմիդի նոր ածանցյալներ: Նշված ամինները փոխազդելով սաթաթթվի անհիդրիդի հետ՝ առաջացրել են համապատասխան ամինոթթուներ, որոնք բուտանոլում տաքացնելիս ցիկլվել են սուկցինիմիդի ֆրագմենտ պարունակող

դիագնոստիկական նպատակներ: Նախկինում սինթեզված α -ամինոնիտրիլներն ագիլվել են ֆենիլ-քացախաթթվի քլորանհիդրիդով, ապա հիմնային միջավայրում ենթարկվել ներմուկեկուլային ցիկլման՝ բերելով 4-ամինո-1,3,5-տրիարիլ-1H-պիրրոլ-2(5H)-ոնների: 2-(3-քլորոպրոպիլ-ամինո)-2-ֆենիլացետոնիտրիլը մի դեպքում ագիլացնելով ֆենիլքացախաթթվի քլորանհիդրիդով և հետագա ներմուկեկուլային ցիկլմամբ՝ բերել է 7-ամինո-6,7a-դիֆենիլ-2,3-դիհիդրո-1H-պիրրոլիզին-5(7aH)-ոնի, իսկ 3-քլորոպրոպիոնաթթվի քլորանհիդրիդի հետ ագիլմամբ և հետագա ՄՖԿ պայմաններում ներմուկեկուլային ցիկլմամբ՝ 2-ֆենիլ-1-(2-ֆենիլացետիլ) պիրրոլիզին-2-կարբոնիտրիլի (դեկ.՝ ք.գ.դ. Ս.Գասպարյան):

Ելնելով 4-ամինո-2,2-դիմեթիլտետրահիդրո-2H-պիրանից՝ մշակվել է 4-իզոթիոցիանատ-2,2-դիմեթիլտետրահիդրո-2H-պիրանի սինթեզի եղանակ: Սինթեզվել է էթիլ 2-(1-բենզիլ-ցիկլոհեպտիլ)-2-ցիանոացետատ, որի ցիկլման արդյունքում ստացվել է էթիլ-4'-ամինո-1'H-սպիրո[ցիկլոհեպտան-1,2'-նավթալին]-3'-կարբոքսիլատ: Ամինոէսթերի և վերոհիշյալ իզոթիոցիանատի փոխազդեցությունից ստացված թիոուրեիդո ածանցյալը ցիկլվել է 3-(2,2-դիմեթիլտետրահիդրո-2H-պիրան-4-իլ)-2-թիոքսո-2,3-դիհիդրո-1H-սպիրո[բենզո[հ]խինազոլին-5,1'-ցիկլոհեպտան]-4(6H)-ոնի, որից ստացվել են 2-սուլֆանիլտեղակալված սպիրո[բենզո[հ]խինազոլիններ: 2-թիոքսո[բենզո[հ]խինազոլինից անցում է կատարվել 2-հիդրազինածանցյալի, որի հիման վրա սինթեզվել են բենզո[հ]խինազոլինային շարքի ազոմեթինային միացություններ, հիդրազոններ, թիոսեմիկարբազիդներ և բենզո[հ][1,2,4]տրիազոլո[4,3-a]խինազոլիններ (դեկ.՝ ք.գ.դ. Ա.Մարկոսյան):

Իրականացվել են Կենտրոնի լաբորատորիաներում սինթեզված, տարբեր քիմիական խմբերի պատկանող 300 միացության առաջնային հետազոտություններ, այդ թվում՝ հակամանրէային 180, հակաբորբոքային և ցավազրկող 10, հակաօքսիդանտային 25, հակաուռուցքային 39 միացություններ, ինչպես նաև *in vitro* պայմաններում ուսումնասիրվել է 46 միացության ազդեցությունն ուռուցքային ԴՆԹ-ի մեթիլացման մակարդակի վրա: Ուսումնասիրված միացությունները հիմնականում չեն ցուցաբերել արտահայտված ակտիվություն հետազոտությունների նշված ուղղություններում: Երեք ակտիվ միացություն ընտրվել է *in vivo* հակաուռուցքային ակտիվության ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով: Պարբերաբար կատարվել են Կենտրոնում արտադրվող դեղանյութերի և պատրաստի դեղաձևերի որակի կենսաբանական հսկում՝ թունականության, արդյունավետության և մանրէազերծության դեղագրքային փորձարկումներ (դեկ.՝ կ.գ.թ. Ռ.Մուրադյան):

Ուսումնասիրվել են Կենտրոնի մի շարք լաբորատորիաներում սինթեզված թվով 317 քիմիական միացության բժշկականաբանական հատկությունները, այդ թվում՝ հակացնցումային և հոգեմետ հատկությունների հայտնաբերման ուղղությամբ պիրանոպրիմիդինների, պիրանոթիենոպրիմիդինո կարբոքսամիդի, պիրանոտրի-ազոլոպիրիդինո կարբոնիտրիլների, տեղակալված ամինոթթուների N-դիֆենիլացետիլ ածանցյալներ և այլն, թվով 152 միացություն: Առավել ակտիվ միացությունները (60-80%) ենթարկվել են խորը հետազոտության՝ «բաց դաշտ», «բարձրացված խաչաձև լաբիրինթ», «հարկադրված լող» թեստերով: Ուսումնասիրվել է 99-ից ավելի քիմիական միացություն՝ պարզելու նրանց հակամոնօսիդազային ակտիվությունը: Առանձնացվել է 5 ակտիվ միացություն խորը ուսումնասիրությունների համար: Ուսումնասիրվել է վեգետատիվ և ադրենոտեղակալ նյարդային համակարգի վրա ազդող թվով 20 միացություն, 3 միացություն առանձնացվել է հետագա ուսումնասիրությունների համար: Իրականացվել են ամփոփողային մանրաթելերի, տարբեր պոլիմերային կրիչների և առանձին կենսաբանական նմուշների էլեկտրոնամանրադիտակային ուսումնասիրություններ: Մշակվել է թոքերի մեզոթելիոմայի, լյարդի հեպատոզի, երիկամների ամփոփողի հիստոլոգիական լուսային պատրաստուկների թիրախային էլեկտրոնամանրադիտակային նույնականացման մեթոդիկա: Ուսումնասիրվել են ֆոսֆոլիպիդների որակական և քանակական փոփոխությունները, լիպիդների գերօքսիդացման պրոցեսները

և արյան մակարդեղիության տարբեր ցուցանիշները, թվով 46 միացություն: Կատարվել են «Թիոդին» դեղանյութի պիրոզեն հատկությունների հետազոտություններ, Անթառամ կարմրավուն (H. Rubicundum) և Կաթնափուշ պուտավոր (S.Marianum) բույսերից անջատված ակտիվ միացությունների հեպատոպրոտեկտիվ հատկությունների ուսումնասիրություն լյարդի տոքսիկ ցիռոզի պայմաններում, առնետի շիճուկային ալբումինի ստանդարտ լուծույթի էլեկտրոֆորետիկ ցուցանիշների ուսումնասիրում մազանոթային զոնային էլեկտրոֆորեզի եղանակով: Ներդրվել է ընդհանուր սպիտակուցների քանակական որոշման մեթոդն ըստ Բիուրետի: Ներդրվել է բջջային կուլտուրաների վրա տարբեր միացությունների ցիտոպրոտեկտոր և ցիտոտոքսիկ հատկությունների ուսումնասիրության in vitro ժամանակակից մեթոդը (ղեկ.՝ կ.գ.թ. Հ.Գասպարյան):

Իրականացվել է N-նիկոտինիլ-ε-ամինակապրոնաթթվի, N-պ-իզոպրոպոքսի- և N-պ-պրոպոքսիբենզոիլ-DL-տրենոնինների N-ο-քլոր-բենզոիլ-γ-ամինակարագաթթվի հիդրազիդի, սալիցիլիդեն-β-ֆենիլ-β-ալանինի հիդրազիդի, N-պարապրոպոքսիբենզոիլ-DL-տրիպտոֆանի մ-նիտրոբենզիլիդենային ածանցյալի, N^α,N^ω,N^ω,-եռաբենզիլօիքսի կարբոնիլ-L-արգինինի, N^α, N^ω-երկբենզիլօքսիկարբոնիլ-L-օրնիտինի, N-բենզիլօքսի-կարբոնիլ-β-ալանիլ-β-ալանինի էթերի, N-դիֆենիլացետիլ-DL-β-ֆենիլ-α-ալանինի սինթեզ: Համապատասխան N-պաշտպանված ամինաթթուների և պեպտիդների ածանցյալները համապատասխանաբար վերածվել են Li, Zn(II) աղերի (ղեկ.՝ ք.գ.թ. Ս. Ղազարյան):

Հաստատվել է, որ դիալկիլ-4-հիդրօքսիբուր-2-ինիլ[3-(4-բրոմֆենիլպրոպ-2-ինիլ)]-ամոնիում քլորիդները հիմնային միջավայրում ռեցիկլվում են՝ առաջացնելով 4-դիալկիլամինոմեթեիլ-8-բրոմ-1,3-դիհիդրոնավթո[1,2-ց]ֆուրաններ: 4-հիդրօքսիբուր-2-ինիլ[3-(4-բրոմֆենիլպրոպ-2-ինիլ)]պիպերիդինիում և մորֆոլինիում քլորիդները նույն միջավայրում ինքնատաքացմամբ ենթարկվում են ցիկլացման՝ հանգեցնելով 2,2-պենտամեթիլեն-6-բրոմ-բենզո[*f*]իզոինդոլինիումային և [սպիրո-4-հիդրօքսիմեթիլ-6-բրոմբենզո[*f*]իզոինդոլին-2,4'-մորֆոլինիում)] քլորիդների առաջացման: Վերջիններս հեշտությամբ ենթարկվում են ներմուկեկուլային ռեցիկլացման՝ հանգեցնելով 4-պենտա-մեթիլենամինոմեթիլ-8-բրոմ-1,3-դի-հիդրոնավթո[1,2-ց]ֆուրանների: Հաստատվել է, որ դիալկիլ(4-հիդրօքսիբուր-2-ինիլ) (3-ֆենիլ-2,3-դիքլորալիլ)ամոնիում քլորիդները հիմնային պայմաններում ենթարկվում են ցիկլման և ապա դեհիդրոքլորացման՝ բերելով 2,2-դիմեթիլ-, -դիէթիլ-4-հիդրօքսիմեթիլ-9-քլորբենզո[*f*]իզոինդոլինիում քլորիդների, որոնց ճեղքման արդյունքում ստացվում են 4-դիալկիլամինոմեթիլ-5-քլոր-1,3-դիհիդրոնավթո- [1,2-ց]ֆուրաններ: Բացահայտվել է, որ 6-բրոմ[սպիրո(բենզո[*f*]իզոինդոլին)-2,4'-մորֆոլինիում և դիէթիլ-4-ֆենիլ-3ա,4-դիհիդրոնավթո [*f*]իզոինդոլինիում բրոմիդները ցուցաբերում են ուժեղ արտահայտված ցավազրկող հատկություններ: Ցույց է տրվել, որ -(3-ֆենիլպրոպ-2-ենիլ)[3-(4-բրոմֆենիլ)(մեթիլ)պրոպ-2-ինիլ] ամոնիում բրոմիդներն ինքնատաքացմամբ ենթարկվում են ստիվենսյան վերախմբավորման՝ առաջացնելով համապատասխան ամինոմիացություններ: Վերջիններս վակուում թորման ժամանակ ենթարկվում են դեամինացման՝ բերելով տերֆենիլների՝ 4-ֆենիլ-4-պ-բրոմֆենիլ- և 4-ֆենիլ-պ-մեթիլբենզոլների (ղեկ.՝ ք.գ.դ. Է.Չուխաջյան):

Հետազոտվել է դիէթիլ-2-(պրոպ-2-ինիլ) մալոնատի փոխազդեցությունը տարաբնույթ նուկլեոֆիլների հետ սնդիկի (II) ագետատի ներկայությամբ: Դիկարբոնիլային միացության բնույթից և միջանկյալ սնդիկօրգանական միացությունների վերականգնման պայմաններից կախված՝ ստացվել են չհագեցած կետոններ և ցիկլոպենտադիենի ածանցյալ: Առաջարկվել է արևելյան պտղակերի (*Grafolita molesta*) սեռական ֆերոմոն (Z)-դոդեց-8-ենիլացետատի սինթեզի C₈ բաղադրամաս հանդիսացող (Z)-օկտ-4-ենիլացետատի ստացման նոր ճանապարհի տեսրահիդրոֆուրիլ քլորիդի հիման վրա (ղեկ.՝ ք.գ.թ. Հ.Սարգսյան):

Ուսումնասիրվել է 2-րդ դիրքում ակտիվ մեթիլենային խումբ պարունակող պիրիմիդինիումային աղերի փոխազդեցությունը C- և N-ազոլիլտեղակալված կարբոնաթթուների

հիդրազիդների հետ: Ռեցիկլացման արդյունքում ստացվել են նոր պիրազոլո[1,5-a]պիրիմիդիններ: Ապացուցվել է նուկլեոֆիլի առաջնային գրոհի ուղղությունը: Մերիլպիրիմիդինների և արոմատիկ ալդեհիդների փոխազդեցությամբ սինթեզվել են մի շարք պիրազոլո- և 1,2,4-տրիազոլո[1,5-a]պիրիմիդիններ, որոնք ազինային հատվածում պարունակում են արիլէթենային խումբ: Սինթեզված համակարգերը, որոնք մոլեկուլում համատեղում են էլեկտրոնադոնորային և էլեկտրոնասկզբատորային հատվածներ, միացած π -գուգորդված կապերի շղթայով, կարող են ցուցաբերել ֆոտովոլտային և լյումինեսցենս հատկություններ (ղեկ. թղթ.անդ. Գ.Դանագուլյան):

Մշակվել է պրոպ-1- և ցիկլոհեքս-1-ենիլ-դիֆենիլֆոսֆինօքսիդների սինթեզի եղանակ համապատասխան պրոպ-1- և ցիկլոհեքս-1-ենիլ-տրիֆենիլֆոսֆոնիում բրոմիդների հիմնային հիդրոլիզով: Վերջիններիս, ինչպես նաև դիֆենիլվինիլֆոսֆինօքսիդի բրոմացմամբ ստացվել են համապատասխան 1,2-դիբրոմաձանցյալներ: Ստացված 1,2-դիբրոմէթիլ- և 1,2-դիբրոմպրոպիլդիֆենիլֆոսֆինօքսիդների դեհիդրոբրոմացմամբ սինթեզվել են համապատասխան 1-բրոմվինիլ- և 1-բրոմպրոպ-1-ենիլ-դիֆենիլֆոսֆինօքսիդներ: Չտեղակալված և տեղակալված թիոմիզանյութերը (E)-(3-արիլ-3-օքսոպրոպ-1-են-1-իլ)տրիֆենիլֆոսֆոնիում բրոմիդների հետ փոխազդում են որպես S-նուկլեոֆիլներ: Առաջարկվել է ընթացող ռեակցիայի այլընտրանքային սխեմա, ըստ որի, ռեակցիան սկսվում է կարբոնիլային ածխածնի ատոմի վրա նուկլեոֆիլի հարձակումով՝ հետագա փոխակերպման արդյունքում բերելով [2-ամինո-5-արիլ -թիազոլ(1,3)-4-իլմեթիլ]տրիֆենիլֆոսֆոնիում բրոմիդների առաջացման: Վերոհիշյալ չորրորդային ֆոսֆոնիումային աղերը թթվային միջավայրում փոխազդում են արիլհիդրազինների հետ և միջանկյալ հիդրազոնների ներմոլեկուլար հետերոցիկլացմամբ բերում (2,5-դիարիլ-2,3-դիհիդրո-1H-պիրազոլ-3-իլ)տրիֆենիլֆոսֆոնիում-բրոմիդների (ղեկ. ք.գ.դ. Մ.Հովակիմյան):

Ելնելով մորֆոլինի և հատկապես նրա ածանցյալների լուծելիության բարձր աստիճանից՝ ուսումնասիրվել է երկրորդային ամինների (դիէթիլամին, դիմեթիլամին, մորֆոլին, պիպերիդին) ֆորմիլացման ռեակցիան ջրահիմնային միջավայրում N-մեթիլմորֆոլին-N-օքսիդի ներկայությամբ: Եթե դիքլորկարբենի միացումը երկրորդային ամինների NH-կապին միջֆազ կատալիզի(ՄՖԿ) պայմաններում բերում է համապատասխան N-ֆորմիլաձանցյալների առաջացմանը որպես հիմնական պրոդուկտ, ապա ի տարբերություն ՄՖԿ-ի, N-մորֆոլին-N-օքսիդի ջրային լուծույթում առաջացող դիքլորկարբենը բերում է ֆոսգենի առաջացման, որը հետագայում (insitu) ռեակցում է երկրորդային ամինների հետ՝ առաջացնելով դժվարամատչելի պոլիակիլմիզանյութ (ղեկ. ք.գ.դ. Գ.Հասարթյան):

Սինթեզվել են պոլիստիրոլային ինքնակայունացվող լատեքսներ, որոնց կոլոիդային պարամետրերը երեք ամսվա ընթացքում մնացել են անփոփոխ: Ստացված տոպոլոգիական ուսումնասիրության արդյունքներից ելնելով՝ սկսվել են աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են հետերոֆազ պոլիմերման քանակական տեսության զարգացմանը (ղեկ. ք.գ.դ. Ա.Հովհաննիսյան):

2-քլորմեթիլդիօքսուլանի հիման վրա սինթեզվել են համապատասխան պիպերիդինիումային և մորֆոլինիումային ամիններ: Վերջիններիս չորրորդայնացմամբ ստացվել են մեթիլ- և պրոպորգիլ խումբ պարունակող ամոնիումային աղեր: Պիպերիդինիումային նմանակի բրոմացումը բերել է, բացի դիբրոմալկենիլլամբից, թթվային միջավայրում տեղի ունեցող ացետոլիզի հետևանքով առաջացող գլիկոլային խումբ պարունակող ամոնիումային աղի: Վերջինիս կառուցվածքը հաստատվել է ինչպես ՄՄՌ սպեկտրոսկոպիայի, այնպես էլ ռենտգենկառուցվածքային անալիզի եղանակներով: Ըստ ՌԿԱ տվյալների, այն հանդես է գալիս բյուրեղիդրատի ձևով (ղեկ. ք.գ.դ. Ա.Գյուլնազարյան):

Ցույց է տրվել, որ ացետոքացախաթթվի արիլամիդների և արիլդեն-ացետիլացետոնի փոխազդեցությունն էթանոլում տրիէթիլամինի կամ պիպերիդինի ներկայությամբ ընթա-

նում է սենյակային ջերմաստիճանում և, համաձայն ՄՄՌ և ՌԿԱ սպեկտրոսկոպիայի տվյալների, առաջացնում է մեկ ռեզիդուումներ՝ 3-ացետիլ-4-հիդրօքսի-4-մեթիլ-6-օքսո-2, N-դիարիլցիկլոհեքսանկարբօքսամիդներ: Սա ցույց է տալիս, որ փոխազդեցության ընթացքում գոյացած միջանկյալ ադուկտի կարբոցիկլման ժամանակ որպես էլեկտրոֆիլ հանդես է գալիս այն ացետիլ խումբը, որը գտնվում է ացետիլացետոնային ֆրագմենտում: Մշակվել է էթիլ 5-(արիլ-կարբամոիլ)-6-մեթիլ-2-օքսո-1,2-դիհիդրոպիրիդին-3-կարբօքսիլատների ստացման եղանակ ացետոքացախաթթվի արիլամիդների և էթօքսիմեթիլիդեն-ցիանքացախաթթվի էթիլէսթերի փոխազդեցությամբ, պիպերիդինի կատալիտիկ քանակների ներկայությամբ: Այս դեպքում միջանկյալ ադուկտի հետերոցիկլմանն անսպասելիորեն մասնակցում են ացետիլ- և ցիան-խմբերը (դեկ.՝ ք.գ.դ. Մ.Սարգսյան):

Ցույց է տրվել, որ եռմեթիլֆոսֆինի (PMe_3) փոխազդեցությունը Co-մեզոտետրաֆենիլ-պորֆիրինի նիտրոկոմպլեքսի ($\text{Co}(\text{TPP})\text{NO}_2$) հետ ընթանում է երկու փուլով: Առաջին փուլում (120-170 K) դիտվում է Co-պորֆիրինի տրանսեռ-մեթիլֆոսֆին պարունակող նիտրոկոմպլեքսի՝ (PMe_3)Co(TPP)(NO₂) գոյացում: Ֆոսֆինի նոր չափաբաժինները և տաքացումը հանգեցնում է իոնային զույգի առաջացման՝ բաղկացած երկ-եռմեթիլֆոսֆին պարունակող կատիոնից և նիտրիտ անիոնից: Այդպիսով, PMe_3 դուրս է մղում նիտրո լիգանդը նիտրիտ անիոնի տեսքով: Co-պորֆիրինների նիտրո կոմպլեքսներն ընդունակ են մասնակցել կոորդինացված նիտրո խմբից թթվածնի ատոմի տեղափոխման ռեակցիաներում: Ուսումնասիրված համակարգը չի դրսևորում այդպիսի ունակություն թե՛ 6-կոորդինացված նիտրո խմբից, թե՛ նիտրիտ անիոնից, ի տարբերություն եռֆենիլֆոսֆինի (դեկ.՝ ք.գ.դ. Տ.Կուրտիկյան):

Կատարվել են ՆՕՔԻ-ի, ՕՔԻ-ի և ԵՊՀ քիմիական ֆակուլտետի գիտնականների կողմից տրամադրված միացությունների ռենտգեն-կառուցվածքային հետազոտություններ: Հետազոտվել է 11 նոր միացության ատոմական կառուցվածքը և իրականացվել են կոնֆորմացիոն հաշվարկներ դրանց համար: Կատարվել է 30 GC/MS հետազոտություն: Նույն ժամանակահատվածում կատարվել է նաև 60 TG/MS (թերմոգրավիմետրիկ մասս-սպեկտրոմետրիկ) հետազոտություն, ինչպես նաև որոշվել է 7 նյութի ծակոտկենությունը (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Թամազյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

In vitro պայմաններում ուսումնասիրվել են առնետների նյարդային հյուսվածքներում նեյրոնների կենսունակության աստիճանը, նեյրոդեգեներատիվ փոփոխությունների մորֆոլոգիական, հիստոքիմիական, իմունոցիտոքիմիական և մորֆոմետրիական բնութագրերը նոր սինթեզված խոլինեստերազային ինհիբիտորների՝ N-բենզոիլ-DL-վալինի 2-դիմեթիլամինոէթիլամիդ յոդմեթիլատի (TVA) և 1-(2-դիէթիլամինոէթիլ)-2-ֆենիլբենզիլիդեն-5-իմիդազոլինի (TVS) ազդեցության տակ, Ալցհեյմեր հիվանդության առկայության պայմաններում: Որոշվել են TVA և TVS միացություններով Aβ(1-42) պեպտիդի ագրեգացիայի ընկճման աստիճանները և IC₅₀ գործակիցները: Ապացուցվել է, որ այդ միացությունները դեագրեգացնում են նաև պեպտիդի արդեն ձևավորված ագրեգատները: Որոշվել է նոր սինթեզված խոլինեստերազային ինհիբիտոր-2-ֆենիլ-4-(պ-տոլուոլ սուլֆոնիլօքսիբենզիլիդեն)-5-իմիդազոլինի (TVV) տոքսիկությունը (դեկ.՝ թղթ.անդ. Վ.Թոփուզյան):

Մշակվել են պիրանի, պիրիդինի, տրիագուլի, պիրագուլի ու թիոֆենի օդակներ պարունակող բազմակորիզ հետերոցիկլիկ համակարգերի սինթեզի և համակցված տրիագուլի[4,3-a]- ու [1,5-a]պիրիդինների ֆունկցիոնալ տեղակալված ածանցյալների սինթեզի եղանակներ: Թիօքստտրիագուլի[4,3-a]- պիրիդինների ակիլացմամբ ստացվել են S-ակիլ տեղակալված ածանցյալներ: Կենսաբանական ուսումնասիրությունների արդյունքում

գտնվել են բարձր հոգեմետ ազդեցությամբ օժտված միացություններ, որոնց ակտիվությունը հաստատվել է համակարգչային մոդելավորման մեթոդով: Իրականացվել են հոգեմետ ազդեցություն ունեցող նյութերի հիսթոպատոլոգիական ուսումնասիրություններ (ղեկ.՝ ք.գ.դ. Ե.Պարոնիկյան):

Սինթեզվել են պիրանո[3,4-*c*]պիրիդինների նոր ածանցյալներ: Պիրանոպիրիդինների չորս հնարավոր իզոմերներից հայտնաբերվել և նույնականացվել են երեքը: Հաջողվել է բարձրացնել նպատակային պիրանո[3,4-*c*]պիրիդինների ելքերը մոտ 60%-ով: Շարունակվել են հետազոտությունները Սմայլսի տիպի նոր վերախմբավորման բնագավառում: Իրականացվել է նոր հնգացիկլիկ հետերոցիկլիկ համակարգերի սինթեզ, որոնք ցուցաբերել են բարձր ներդրող ակտիվություն (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Սիրականյան):

Սինթեզվել են 5-րդ դիրքում ցիկլոպենտանի, ցիկլոհեքսանի և ցիկլոհեպտանի հետ սպիրոհամակցված բենզո[*h*]խինազոլինային շարքերի տրանս կառուցվածքի ստիլբեններ և ուսումնասիրվել են վերջիններիս հակառուռոցային հատկությունները սարկոմա 180 ուռուցքի վրա *in vivo* պայմաններում (ղեկ.՝ ք.գ.դ. Ա.Մարկոսյան):

Ցույց է տրվել, որ 1,3-դիքլորբուր-2-են (*E/Z*)-ի հիդրոլիզը *N*-մեթիլմորֆոլին-*N*-օքսիդ-չուր միջավայրում նատրիումի հիդրօքսիդի ներկայությամբ ուղեկցվում է *insitu* պայմաններում առաջացած քլոր-2-բուր-2-ենոլ-4-ի ալկիլացմամբ 1,3-դիքլորբուր-2-ենոլ: Նման ռեակցիա հայտնաբերվել է 1,3-դիքլորբուր-2-ենից մոնովինիլացետիլենի ստացման տեխնոլոգիայի մշակման ժամանակ (ղեկ.՝ ք.գ.դ. Հ.Աթթարյան):

ՄՄՌ սպեկտրոսկոպիայի մեթոդով ուսումնասիրվել են յոթ իմիդազոլինային շարքի իոնական հեղուկների (ԻՀ) ջրային խառնուրդներ: Բացահայտվել են ^1H , ^{11}B , ^{13}C , ^{19}F միջուկների քիմիական շեղումների (ՔՇ) և նրանց միջև սպին-սպինային փոխազդեցությունների հաստատունների (ՍՍՓՀ) արժեքների զգալի փոփոխություններ, որոնք օգտագործվել են միջավայրի ձևաբանական և էլեկտրաստատիկ հատկությունների բնութագրման համար: Ցույց է տրվել, որ ՍՍՓՀ-ներն ավելի զգայուն են ՔՇ-ների համեմատ, ընդ որում, անիոնների ՄՄՌ պարամետրերն ավելի զգայուն են: Կառուցվել են անիոնների ՍՍՓՀ-ների կախման կորերը կապի երկայնքով գործող էլեկտրական դաշտից (ԷԴ), ինչը հնարավորություն է տալիս գնահատել ԷԴ-ների գործող արժեքներն ԻՀ-չուր խառնուրդներում: ԻՀ-ում լուծված այլ միացությունների ՄՄՌ պարամետրերի ուսումնասիրությունը (ացետոնիտրիլ, գլիցին, ալանին, գլյուկոզ) ցույց է տվել դրանց փոխկապվածությունը միջավայրի պարամետրերի հետ, ինչը հնարավորություն է ընձեռում ԻՀ-ների մոլեկուլների առավել զգայուն ՄՄՌ պարամետրերն օգտագործել որպես միջավայրերի վիճակի բնութագրեր՝ նրանցում քիմիական ռեակցիաներ անցկացնելիս: Ացետիլացետոնի տաուտոմերման մոդելային ռեակցիայի օրինակի վրա ցույց է տրվել այդ ՄՄՌ պարամետրերի օգտագործման նպատակահարմարությունը և բացվող լրացուցիչ հնարավորություններն ԻՀ-ներում ընթացող քիմիական ռեակցիաների ուսումնասիրման համար (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Մամյան):

ՄՄՌ սպեկտրասկոպիայի եղանակով NaOD և CF_3COOD բուֆերային լուծույթներով տիտրմամբ ուսումնասիրվել են գլիցին (GLY) և ալանին (ALA) ամինաթթուների, դրանց ացետիլային ածանցյալների և դիպեպտիդների (GLY-GLY , GLY-ALA , ALA-GLY և ALA-ALA) քիմիական շեղումները (ՔՇ) և սպին-սպինային փոխազդեցությունների հաստատունները (ՍՍՓՀ) տարբեր pH -ներով ջրային լուծույթներում: Օգտագործելով տիտրման կորերը՝ հաշվարկվել են pK_α և իզոէլեկտրիկ կետերը pI , ինչպես նաև հաշվարկվել են էլեկտրական դաշտերի (ԷԴ) գործող արժեքները CH և CC կապերի վրա: Ուսումնասիրված բոլոր մոլեկուլների համար պարզվել է, որ $\text{J}(\text{CH})$ և $\text{J}(\text{CC})$ ՍՍՓՀ-ների կախվածությունը հաշվարկված ԷԴ-ների արժեքներից կրում է գծային բնույթ (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Շահխաթունի):

Fe -պորֆիրինների ամորֆ թաղանթների վրա DMSO -ի տարբեր չափաբաժիններ տալով՝ նկարագրվել են ծծմբի ատոմի միջոցով կապված բարձրալինային 5- և ցածրալինային

6-կոորդինացված $\text{Fe}(\text{Por})(\text{DMSO})_{1,2}$ կոմպլեքսները: NO-ի միջոցով հաջողվել է ստանալ 6-կոորդինացված նիտրոզիլային կոմպլեքս՝ $\text{Fe}(\text{Por})(\text{DMSO})(\text{NO})$: Մատրիցային մեկուսացման F^4 սպեկտրոսկոպիայի միջոցով, օգտագործելով իզոտոպային միացությունների հավասար քանակներ պարունակող խառնուրդ ($\text{CO} + \text{CO}^{18}$), միանշանակ ցույց է տրվել, որ նույնիսկ 15 K ջերմաստիճանում և Ar մատրիցայում առաջանում է միայն մոնոկարբոնիլային $\text{Co}(\text{TPP})(\text{CO})$ կոմպլեքս: Fe-մոնոպիրիդիլ-3-տրետոլիբուտիլֆենիլպորֆիրինի ($\text{Fe}^{\text{II}}\text{MPy3treddiBuP}$) սուբլիմված թաղանթներում ընթանում են օլիգոմերիզացիոն պրոցեսներ՝ ի հաշիվ մեկ մոլեկուլի պիրիդիլ խմբի կոորդինացիայի հարևան մոլեկուլի երկաթի իոնի հետ: Սենյակային ջերմաստիճաններում FeMPy3treddiBuP սուբլիմված թաղանթների փոխազդեցությունը O_2/CO խառնուրդի հետ հանգեցնում է 6-կոորդինացված կարբոնիլային կոմպլեքսի առաջացմանը: FeMPy3treddiBu սուբլիմված թաղանթները կարող են հանդիսանալ թթվածինը CO-ի հետքային քանակություններից մաքրող համակարգեր: Ուսումնասիրվել է նաև ազոտի օքսիդի դիօքսիդենացման (UO_2) ռեակցիան FeMPy3treddiBuP սուբլիմված թաղանթներում: Այն նույնպես հանգեցնում է նիտրատային կոմպլեքսի առաջացման՝ առանց որևէ միջանկյալ միացության բացահայտման (դեկ.՝ ք.գ.թ. Գ.Մարտիրոսյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Ղազարյան Է.Մ., Թոշնյան Ա.Հ., Դանագուլյան Գ.Հ., Մելիքյան Գ.Գ., Մախլյան Ս.Ս., «Հետաքրքիր շարժ բնագիտություն», Ե., «Աստղիկ» գրատուն, 2019, 144 էջ:

Հոդվածներ, զեկուցումներ

2. Агекян А.А., Вартамян С.О., Авакян А.С., Саргсян А.Б., Стенпанян Г.М., Пароникян Р.В., Мурадян Р.Е., Синтез и антибактериальные свойства новых сульфонамидов на основе замещенных арилалкил-1,4-бензлдиоксан-2-алкил изохроман-1-метиламинов и 6,7-диметокси-1-метил-1,2,3,4-тетрагидро-изохинолина, Ер., «Хим. ж.Армении», т. 72, N 1-2, 2019, с. 51-59.
3. Агекян А.А., Мкрян Г.Г., Цатинян А.С., Гаспарян Г.В., Синтез и биологическая активность аминокэфиров арилциклопентан-1-карбоновых кислот, СПб., «ЖОХ», т. 89, вып. 5, 2019, с. 812-816.
4. Агекян А.А., Мкрян Г.Г., Паносян Г.А., Синтез новых 2'-(2-и 3-аминопропаноил)-6',7'-диметокси-2',3'-дигидро-1'H-спиро[изохинолин1,4'-циклопентан]-1'-карбоксамидов, СПб., «ЖорХ», т. 55, вып. 3, 2019, с. 360-366.
5. Айоцян С.С., Саргсян А.А., Конькова С.Г., Хачатрян А.Х., Бадасян А.Э., Авагян К.А., Саргсян М.С., Синтез замещенных 1,2-дигидропиридинов на основе взаимодействия этоксиметилиденциануксусного эфира и ариламидов ацетоуксусной кислоты, СПб., «ЖорХ», т. 55, вып. 2, 2019, с. 321-325.
6. Айоцян С.С., Саргсян А.А., Конькова С.Г., Хачатрян А.Х., Бадасян А.Э., Авагян К.А., Паносян Г.А., Айвазян А.Г., Саргсян М.С., Синтез этил 5-(арилкарбамоил)-6-метил-2-оксо-1,2-дигидропиридин-3-карбоксилатов, СПб., «ЖорХ», т. 55, вып.5, 2019, с. 561-565.
7. Айрапетян К.К., Синтез, противоопухолевая и антибактериальная активность новых производных дигидронафталина и дигидро[h]хиназолигна, Ер., «Хим. ж.Армении», т. 72, N 1-2, 2019, с. 74-85.
8. Акопян Р.М., Синтез симметричных бис-изохинолинов, СПб., «ЖорХ», т. 55, N 8, 2019, с. 1296-1299.
9. Арустамян Ж.С., Маркарян Р.Э., Агекян А.А., Мурадян Р.Е., Мкртчян Г.С., Минасян Н.С., Синтез и изучение антиаритмической активности ряда амидов, аминокамидов и диамидов на основе 4-(3,4-диметоксифенил)тетрагидро-2Н-пиран-4-карбоновой кислоты, Ер., «Хим. ж.Армении», т. 72, N 3, 2019, с. 330-339.
10. Арустамян Ж.С., Маркарян Р.Э., Агекян А.А., Назарян И.М., Акобян А.Г., Пароникян Р.Г., Минасян Н.С., Синтез и противосудорожная активность аминокамидов и аминокэфиров на основе 1-(2,3-дигидробензо[В][1,4]диоксин-6-ил)циклопентан-1-карбоновой кислоты, СПб., «ЖорХ», т. 55, вып. 6, 2019, с. 896-900.
11. Арутюнян А.А., Гукасян Г.Г., Геворкян К.А., Арутюнян А.Д., Данагулян Г.Г., Синтез 2-[(Е)-арил-1-этилен]-6-йод-3-фенилэтил-3,4-дигидро-4-хиназолинов, Ер., «Хим. ж.Армении», т. 72, N 3, 2019, с. 256-259.

12. Арутюнян А.А., Израелян С.Г., Паносян Г.А., Акопян М.Р., Овсепян Т.Р., Однореакторные реакции 2-замещенных 6-аминопиримидин-4(3*h*)-онов: новые 5-арил-5,8,9,10-тетрагидропиримидо-[4,5-*b*]хинолин-4,6(3*h*,7*h*)-дионы и 5,5'-(арилметил)бис(6-амино-2-метилпиримидин-4(3*h*)-оны, СПб., "ЖорХ", т. 55, вып. 12, 2019, с. 1909-1915.
13. Арутюнян А.А., Гукасян Г.Т., Паносян Г.А., Тамазян Р.А., Айвазян А.Г., Данагулян Г.Г., Замещенные 2-(2-арил-1-этил)хиназолины: синтез и строение, СПб., "ЖорХ", т. 55, вып. 9, 2019, с. 1453-1460.
14. Арутюнян А.А., Паносян Г.А., Гукасян Г.Т., Данагулян Г.Г., Бис-стирилхиназолины, связанные гибкими линкерами, СПб., "ЖорХ", т. 55, вып. 7, 2019, с. 1069-1074.
15. Асратян А.Г., Алкилирование фенола галогеналканами в условиях межфазного катализа в системе N-метилморфолин N-оксид/вода, Ер., "Хим. ж.Армении", т. 72, N 3, 2019, с. 321-329.
16. Асратян А.Г., Получение комплекса 1-винил-1,2,4-триазола с хлоридом золота и изучение его термических и биологических свойств. Ер., "Хим. ж.Армении", т. 72, N 4, 2019, с. 463-468.
17. Асратян А.Г., Сукоян А.А., Данагулян Г.Г., Аттарян О.С., Алкилирование имидазола дихлорэтаном и дегидрохлорирование *in-situ* полученного 1-(2'-хлорэтил)имидазола до 1-винилимидазола в водно-щелочной среде в системе N-метилморфолин N-оксида с использованием катализатора межфазного переноса, Ер., "Хим. ж.Армении", т. 72, N 4, 2019, с. 517-522.
Գիտաուսումնական աշխատանքներ

Համաձայն ՀՀ գլխավոր դատախազության և կազմակերպության միջև կնքված պայմանագրի՝ փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների 301 աշխատակցի հետ անցկացվել են կատարելագործման և վերապատրաստ-

ման ուսուցողական դասընթացներ:

Ստորև ներկայացվում են 2019թ. դասընթացներին մասնակցած ունկնդիրների վերաբերյալ ամփոփ տվյալները.

N	Տարեթիվ	Գիտաուսումնական աշխատանքների շրջանակներում իրականացված ուսուցողական դասընթացներին մասնակցած ունկնդիրների քանակային տվյալներն ըստ մարմինների													Ընդ.
		ՀՀ ԿԱ ՊԵԿ	ՀՀ ՊՆ	ՀՀ ոստիկանություն	ԼՂՀ ոստիկանություն	ՀՀ ՊՆ ՌՈ	ՀՀ ԱԲՆ	ԼՂՀ ՊՆ	ՀՀ քննչ. կոմիտե	ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչություն	ՀՀ դատախազություն	ՀՀ ԿԱ ԱԱԾ	ԼՂՀ քննչ. կոմիտե	ԼՂՀ ԱԲՆ	
1	2019	-	54	108	20	21	-	-	20	22	23	8	23-	2	301

2019թ. հաստատվել են 19 ուղղությամբ (թվով 24 թեմա) նոր ծրագիր-սեղմագրեր, իրականացվել են արտադրական պրակտիկայի դասընթացներ ԵՊՀ, ՀՊՏՀ, Հայկական բժշկական ինստիտուտի, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի 90 ուսանողի համար, 71 ուսանողի համար տարբեր ժամկետներում անցկացվել են մեկօրյա ճանաչողական այցեր կազմակերպության փորձագիտական բաժիններ և բաժանմունքներ, դատական փորձագետի որակավորման դասընթացներ է անցել 20 մասնագետ, 95 փորձագետ ստացել է դատական փորձագետի որակավորման վկայական:

Գիտափորձնական-վերլուծական աշխատանքներ

2019թ. հաստատվել են «Ձգաբանական փորձարկման լաբորատորիայի որակի ձեռնարկը» և «Սննդամթերքի փորձարկման լաբորատորիայի որակի ձեռնարկը»:

Իրականացվել են կենսաբանական օբյեկտների մեջ (մազ, մեզ, արյուն) թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դեղամիջոցների, որոշ թունավոր նյութերի՝ ժամանակակից գործիքային եղանակներով հայտնաբերման ու որոշման գիտաուսումնական և փորձնական հետազոտություններ:

Իրականացվել են ծավալուն գիտագործնական ուսումնասիրություններ «ՀՀ տարածքում թմրամիջոցներ գործածած անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները և վերջին տասնամյակում փորձաքննության ենթարկված անձանց ներգրավվածությունը թմրամիջոցներ գործածողների շարքում» ըստ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում իրականացված դատաթունաբանական արդյունքների» թեմայով: 2007-2019թթ. ընթացքում կենդանի անձանց վերաբերյալ իրականացված տոքսիկոքիմիական փորձաքննությունների արդյունքների վիճակագրությունից պարզվել է, որ մեր տարածաշրջանում թմրամոլների մոտ անհամեմատ առավել շրջանառվում է կանաբիս թմրամիջոցը, որի պատճառ կարող է հանդիսանալ դրա ձեռքբերման դյուրինությունը և գնային մատչելիությունը:

«55 AA» մոդելի բոցային և «200 AA» գրաֆիտային ատոմային աբսորբցիոն սպեկտրոմետրերի համար ուսումնասիրվել և տեղայնացվել են հողերի, ջրերի և այլ օբյեկտներում ծանր մետաղների նմուշառման, նմուշապատրաստման և հետազոտությունների իրականացման նոր մեթոդներ, կատարվել է դրանց մշակում և օպտիմալացում:

Ուսումնասիրվել են «Niton XL3T 980» մոդելի ռենտգեն ֆլուորեսցենտային անալիզատորներով աշխատելու մեթոդի և ընթացակարգի հիման վրա մետաղների և դրանց համաձուլվածքների, մետաղադրամների, թանկարժեք մետաղների, հողերի հանքային բաղադրակազմների փորձագիտական հետազոտությունների առանձնահատկությունները, իրականացվել են ձուլման եղանակով մետաղական խառնուրդը համասեռ համաձուլվածքի վերածելու մեթոդի ներդրման աշխատանքներ:

Իրականացվել են հիշողության կրիչներում (այդ թվում՝ բջջային հեռախոսների ներքին հիշողության կրիչներում) պարունակվող տեղեկատվության հետազոտություններ

«EnCase Forensic v8.05» ծրագրային ապահովման միջոցով, «Tableau Forensic USB 3.0 SATA/IDE Bridge (T35u)» սարքերով և բջջային սարքերի փորձագիտական հետազոտության նպատակով կիրառվող «Cellebrite UFED Cloud Analyzer» ծրագրային ապահովումով:

Նմուշառումներ և հետազոտություններ են կատարվել ՀՀ տարբեր մարզերի տարածքներից կտրված և կանգուն ծառերից: «Lintab» սարքի և «TSAP-Win» ծրագրի միջոցով ստեղծվել է տվյալների բազա ծառերի տեսակային կազմի, աճի ինտենսիվության վերաբերյալ և այլն: Կատարվել է Հայաստանում գիտական հետազոտությունների նոր ճյուղի ներդրում և կիրառում, որը թույլ է տալիս ծառերի տարեկան օղակների հետազոտության միջոցով ստանալ բնության համար կարևոր տվյալներ և կիրառել դրանք հետագա տնտեսական հաջողություններ ապահովելու նպատակով:

Շարունակվել են տվյալների շտեմարանների համալրման աշխատանքները՝ փամփուշտների և պարկուճների (196), սառը գեներների նմուշների (428), տարբեր մակնիշի մեքենաների անվադողերի և դրանց գծանախշերի (72), կեղծ մետաղադրամների բաղադրությունների (436), կեղծ թղթադրամների (ՀՀ, ՌԴ, ԱՄՆ, Եվրո, 1702), գրելագործիքների (1258), պայթուցիկ նյութերի արգասիքների (27), պարենային և ոչ պարենային ապրանքների, անշարժ գույքի արժեքների, հայտնի հեղինակների ոճային և կենսագրական տվյալների (32), ինչպես նաև GC-7890A MSD-5975C մոդելի մասս-սպեկտրոմետրի համար նոր Cayman Spectral Library.new (CSL) գրադարանի ներդրում (1571 անվանում նյութերի տեսականի) և GC-7890A MSD-5975C մոդելի մասս-սպեկտրոմետրի համար նոր SWGDRUG.3.5L գրադարանի ներդրում (3046 անվանում նյութերի տեսականի):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Դատափորձագիտական գործունեության արդի հարցերը, դատական փորձագիտության և քրեագիտության ժամանակակից խնդիրները, զարգացման միտումներն ու հեռանկարները (միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութերի ժողովածու), Ե., «Էդիտ պրինտ» հրատ., 2019, 187 էջ:
2. Դատական փորձաքննություն և քրեագիտություն հայկական հանդես, N1, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2019, 155 էջ:
3. Դատական փորձաքննություն և քրեագիտություն հայկական հանդես, N2, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2019, 141 էջ:
4. Մամիկոնյան Կ.Հ., Ձեռնարկատիրական գործունեություն և ֆինանսներ, Ե., հեղինակ. հրատ., 2019, 138 էջ:
5. Мамиконян К.О., Пути совершенствования методологии финансово-экономической экспертизы: Методическое пособие, "LAP LAMBERT" Academic Publishing, 2019, 88 с..

Հոդվածներ, զեկուցումներ

6. Ասատրյան Ե.Ռ., Թմրամիջոցների ապօրինի շրջանառության և թմրամոլության պատճառների ու դրանց կանխարգելման որոշ հարցեր, Ե., «Դատական իշխանություն», N3-4/237-238, 2019, էջ 51-55:
7. Թորոսյան Ռ.Լ., Ապրանքների շուկայական արժեքի որոշման ընթացքում համեմատման օբյեկտների ընտրության հարցերը, Ե., «ԼՂՀ դատական իշխանություն», N2(30), 2019, էջ 36-41:
8. Ղուկասյան Ա.Պ., Թերզյան Ա.Մ., Մանուկյան Գ.Ա., ՀՀ-ում կին դատապարտյալների սոցիալ-հոգեբանական որոշ առանձնահատկությունների պարզաբանման հիմնախնդիրները (հետազոտության արդյունքներ), Ե., «Օրինականություն», N 109, 2019, էջ 30-35:
9. Մխիթարյան Կ.Գ., Կիրակոսյան Ն.Ա., Առաքելյան Ա.Գ., Թմրամիջոցների և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի հայտնաբերման նպատակով մազի նմուշի հետազոտության առավելությունը այլ կենսամիջավայրերի համեմատությամբ՝ դատաթունաբանական փորձաքննություններում, Ե., «Դատափորձագիտական գործունեության արդի հարցերը, դատական փորձագիտության և քրեագիտության ժամանակակից խնդիրները, զարգացման միտումներն ու հեռանկարները» (միջազգ. գիտագործն. գիտաժող. նյութ. ժող.), 2019, էջ 112-115:

10. Մովսիսյան Շ.Ա., Ոչ ամբողջապես ուսկուց պատրաստված զարդերի արժեքային ցուցանիշների պարզման ապրանքագիտական փորձաքննության անանձնահատկությունները, Ե., «Դատական իշխանություն», N 3-4/237-238, 2019, էջ 66-72:
11. Վարդանյան Ա.Ռ., Զինծառայողների ինքնասպանությունների և ինքնասպանության փորձերի հոգեբանական հիմնախնդիրները ՀՀ զինված ուժերում, Ե., «Արդի հոգեբանություն» հանդես N 2, 2019, էջ 378-382:
12. Арутюнян А.А., Восканян П.С., Мовсисян Ш.А., Некоторые аспекты проведения судебных экспертиз интеллектуальной собственности в РА, Проблемы теории та практики судової експертизи з питань інтелектуальної власності, («Крайнэвськи читання»), Мат. III міжд. Научно-практич. конф., К., 2019, с. 77-81.
13. Варданян А.Р., Маргарова З.Р., Особенности психологического и лингвистического анализа почерка в контексте психолого-лингвистических экспертиз, К., "Актуальные вопросы судебной психологической экспертизы и комплексной экспертизы с участием психолога", Перспективы научного и прикладного исследования почерка», Сб. мат. III міжд. научно-практич. конф., 2019, с. 88-93.
14. Восканян П.С., Новые подходы к научно-методическому обеспечению судебно-экспертных исследований, Б., "Судебная экспертиза Беларуси", N 1(8), 2019, с. 9-14.
15. Восканян П.С., Титанян Э.Л., Некоторые аспекты квалификации судебного эксперта, "Концептуальные основы современной криминалистики: Теория и практика, Мат. міжд. научно-практич. конф., Б., 2019, с. 168-172.
16. Восканян П.С., Тадевосян А.В., Багдасарян Т.С., Галстян А.С., Абгарян А.А., Затикян А.С., Оценка влияния хвостохранилищ на объекты окружающей среды, Т., Сб. научн. тр. Грузинского Технического Университета", N 4(514), 2019, с. 101-105.
17. Восканян П.С., Амбарян Г.А., Галстян А.С., Абгарян А.А., Оценка загрязнения ирригационных земель и вод пеки Дебед тяжелыми металлами, Т., Сб. научн. тр. Грузинского Технического Университета", N 4(514), 2019, с. 95-100.
18. Лидорова Ю.Г., Мамиконян К.О., Маркина О. А., Сравнительный анализ методов по определению неплатежеспособности компании при проведении финансово-экономических экспертиз, Теорія та практика судової експертизи і криміналістики : зб. наук. пр. Харьков, Право, вып. 19, 2019.
19. Мамиконян К.О., Исследование некоторых особенностей распределения прибыли предприятия при проведении финансово-экономической экспертизы, К., "Криминалистика и судебная экспертиза", N 64, 2019, с. 738-747.
20. Мамиконян К.О., Особенности оценки рыночной стоимости объектов интеллектуальной собственности при проведении судебных экспертиз, М., "Теория и практика судебной экспертизы", N 14, 2019, с. 128-135.
21. Мамиконян К.О., Финансовые исследования и фундаментальные методы экономической экспертизы, К., "Актуальные вопросы судебной экспертологии криминалистики и криминального працеса", 2019, с. 672.
22. Мекинян Л.Н., Особенности и аномалии в дактилоскопии, "Вісник Ондісе» одеський науково-дослідний інститут судових експертиз", N 5, 2019, с. 118-126.
23. Мхитарян К.Г., Овсепян А.Н., Ованесян Р.А., Структура дефектов медицинской помощи по данным Национального бюро экспертиз НАН РА с учетом медицинских ошибок и упущений в лечебно-диагностическом процессе, Ե., «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես», N 1, 2019, էջ 27-32.
24. Овсепян А.Н., Ованесян Р.А., Мхитарян К.Г., Структура дефектов медицинской помощи с учетом ошибок и упущений, К., "Криминалистика и судебная экспертиза", N 64, 2019, с. 851-857.
25. Овсепян А.Н., Ованесян Р.А., Мхитарян К.Г., Сравнительная оценка частоты дефектов медицинской помощи с учетом вероятности развития синдрома эмоционального выгорания у врачей, Теорія та практика судової експертизи і криміналістики, Харьков: Право, вып. 19, 2019.
26. Овсепян А.Н., Национального бюро экспертиз НАН РА, WORLD SITY, N 15, 2019, с. 10-15.
27. Товмасян А.Г., Валидация метода газовой хроматографии объектов, содержащих метадон в соответствии с требованиями ISO/IEC 17025:2005, К., "Актуальные вопросы судебной экспертологии криминалистики и криминального працеса", 2019, с. 544-548.

28. Hovsepyan A., Voskanyan P., National bureau of expertises Of the national academy of sciences Of the republic of armenia turned 15 years of age, K., "Эксперт: Парадигмы юридических наук I государственного управления Expert: paradigm of law And public administration, N 3(5), 2019, pp. 44-59.
Հոդվածները հրատարակվել են "Актуальные вопросы судебной экспертизы и криминалистики" միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Խարկով, 2019, 507 էջ:
29. Аветисян Т.О., Цаканян А.В., Андреасян Н.А., О некоторых особенностях судебной экспертизы специй и пряностей в Республике Армения, с. 270-273.
30. Будагян М.С., Определение механизма наезда на пешехода по характеру повреждений одежды и транспортного средства, с. 474-477.
31. Тадевосян А.В., Багдасарян Т.С., Сафарян А.А., Восканян П.С., Галстян А.С., Абгарян А.А., Анализ влияния хвостохранилищ горно-обогатительного комплекса на окружающую среду, с. 351-354.
Հոդվածները հրատարակվել են "Анализ статической поперечной устойчивости грузового автотранспортного средства, "Круглый стол (Судебная экспертиза: современность и будущее)" միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Լվով, 2019, 150 էջ:
32. Агаян Р.С., Агаян С.Р., Анализ статической поперечной устойчивости грузового автотранспортного средства, с. 19-23.
33. Мамиконян К.О., Факторы, препятствующие развитию предпринимательской деятельности в РА, с. 86-88.
34. Овсепян А.Н., Ованесян Р.А., Мхитарян К.Г., Дефекты оказания медицинской помощи по материалам комиссионных судебно-медицинских экспертиз с. 95-98.
35. Kirakosyan Nelly, On several features of toxicological expertise conducted in the National Bureau of Expertises of the Republic of Armenia, с. 13-16.
Հոդվածները հրատարակվել են "The international scientific conference "Environmental protection and sustainable devorment" dedicated to profesor victor eristavi's memory" միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Թբիլիսի, 2019, 179 էջ:
36. Восканян П.С., Тадевосян А.В., Багдасарян Т.С., Галстян А.С., Абгарян А.А., Затикян А.С., Оценка влияния хвостохранилищ на объекты окружающей среды, с. 101-105.
37. Восканян П.С., Амбарян Г.А., Галстян А.С., Абгарян А.А., Оценка загрязнения ирригационных земель и вод пеки Дебед тяжелыми металлами, с. 99-100.
Հոդվածները հրատարակվել են «Դատական փորձաքննություն և քրեագիտություն» հանդեսում, N 2, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2019, 141 էջ:
38. Ավետիսյան Թ.Հ., Մարտիրոսյան Ս.Թ., Անդրեասյան Ն.Ա., Կոնյակների, օղիների, գինիների նույնականացման նպատակով կատարվող փորձաքննությունների ժամանակ առաջացող խնդիրները, էջ 102-105:
39. Ալոյան Ս.Հ., Բակլաչյան Ա.Վ., Դիտավորյալ փոփոխված ձեռագրով կատարված նմուշների հետազոտության և անփոփոխ ձեռագրով կատարված նմուշների ու հետազոտելի գրառման հետ դրանց համադրության որոշակի առանձնահատկություններ, էջ 96-101:
40. Դաբադյան Վ.Ռ., Մխիթարյան Կ.Գ., Չախոյան Հ.Ա., Սրտամկանի սուր իշեմիկ հիվանդության ձևաբանական դրսևորումները և դրանց զարգացման ժամանակագրությունը, էջ 106-111:
41. Թադևոսյան Ծ.Թ., Ֆիզիոլոգիական և կուլուրյատիվ աֆեկտի հոգեբանական առանձնահատկությունները և իրավական նշանակությունը, էջ 111-116:
42. Հարությունյան Ա.Ա., Սահրադյան Ս.Բ., Բնական սորբենտ խիտոզանի ստացումը, հատկությունները և կիրառումը գինեգործության մեջ, էջ 116-122:
43. Հմայակյան Թ.Ս., Հայաստանի Հանրապետության անշարժ հուշարձանների վտանգվածության պատճառները, էջ 123-127:
44. Մխիթարյան Ս.Ա., Հանցանք կատարած կանանց սոցիալական առանձնահատկությունները Հայաստանում, էջ 128-132:
45. Վարդանյան Ա.Ռ., Ձեռագրի հոգեբանական վերլուծության առանձնահատկությունները դատահոգեբանական փորձաքննությունների շրջանակներում, էջ 133-136:
46. Гарибян Г.Р., Амбарцумян А.Ф., Восканян П.С., Фото-разложение Метиленового синего в присутствии TiO2, используемого в качестве пигмента для производства бумаги, с. 15-22:
47. Мамиконян К.О., Методические рекомендации для определения признаков неплатежеспособности компании при проведении финансово-экономических экспертиз, с. 42-51:
48. Мазманиян С.В., Саргсян А.А., Манасян А.Р., Папаян Г.Б., Гарибян Г.Р., Исраелян В.Р., Ускорители схватывания и твердения в составе сухих строительных смесей, «Քիմիա և քիմիական տեխնոլոգիաներ» միջազգ. գիտաժող. նյութ. Ժող., Ե., 2019, с. 70-74.

Ա.Հովսեփյանը պարգևատրվել է ՀՀ դատախազության «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալով, Ս.Գրիգորյանը, Կ.Մխիթարյանը, Հ.Գաբրիելյանը, Մ.Ալոյանը՝ «Համագործակցության ամրապնդման համար» մեդալով, Զ.Ղահրամանյանը՝ «Հայաստանի Հանրապետության դատախազություն» կրծքանշանով, Ա.Հովսեփյանը, Ա.Թովմայանը, Ն.Կիրակոսյանը, Ա.Բաղդասարյանը, Ս.Օլեյանը՝ ՀՀ ոստիկանության «Համագործակցության ամրապնդման համար» մեդալով, Վ.Հովհաննիսյանը, Հ.Այվազյանը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության շնորհակալագրով, Դ.Մելքումյանը, Վ.Ֆրանգյանը՝ ՀՀ ԱԻՆ «Համագործակցություն հանուն փրկության» մեդալով, Ա.Միրաքյանը՝ ԱԻՆ պատվոգրով, Մ.Կարապետյանը, Հ.Զախոյանը, Շ.Մովսիսյանը և Ա.Հարությունյանը՝ ԱԱԾ պատվոգրով:

ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

Հաշվետու տարում անց է կացվել 2 ընդհանուր ժողով:

Փետրվարի 13-ի ընդլայնված ընդհանուր ժողովը նվիրված էր ակադեմիկոս Վ.Համբարձումյանի անվան միջազգային մրցանակի հանձնման արարողությանը: Բացման խոսքում ԳԱԱ նախագահ Ռ.Մարտիրոսյանը նշել է, որ մրցանակը տրվում է աշխարհի ականավոր գիտնականներին աստղաֆիզիկայի և հարակից ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ոլորտում նշանակալի գիտական ներդրումների համար 2 տարին մեկ անգամ: Մրցանակը նպատակ ունի հավերժացնել Վ.Համբարձումյանի հիշատակը, աշխարհին ներկայացնել Հայաստանի գիտությունը և նպաստել աստղաֆիզիկայի զարգացմանը մեր երկրում: Միջազգային հանձնաժողովի որոշմամբ մրցանակը հանձնվել է պրոֆ. Էդվարդ Վան Դեն Հոյվել (Ամստերդամի համալսարանի Ա.Պանեկուկի անվ. աստղագիտության ինստիտուտ, Նիդեռլանդներ), պրոֆ. Ալեքսանդր Տուտուկով (ՌԴ ԳԱ աստղագիտության ինստիտուտ, ՌԴ), պրոֆ. Լև Յունգելսոն (ՌԴ ԳԱ աստղագիտության ինստիտուտ, ՌԴ) գիտնականների խմբին՝ «Զանգվածեղ կրկնակի աստղերի, հատկապես ռելատիվիստական կրկնակիների և գրավիտացիոն ալիքների աղբյուրների ձևավորման ոլորտում առաջնային ուսումնասիրությունների համար»: Հաղթողներին շնորհավորել և մրցանակները հանձնել է ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը: Իր ելույթում նա ասել է. «Մենք հասկանում ենք, որ դեռևս շատ անելիքներ կան մեր երկրում գիտնականի արդյունավետ աշխատանքն ու արժանավայել կյանքն ապահովելու, գիտական հիմնարկները ժամանակակից սարքավորումներով հագեցնելու, երիտասարդ կադրերի ներհոսքն ապահովելու, ընդհանրապես գիտության զարգացման ուղղությամբ: Որպես երկրի ղեկավար, պիտի փորձեմ բոլոր ջանքերս ներդնել գիտության և գիտության մշակների նկատմամբ հարգանքն ու գնահատանքը բարձրացնելու համար: Որպես օրինակ կարելի է նշել, որ մրցանակի նկատմամբ վստահությունն ավելացնելու նպատակով այս տարվանից ՀՀ կառավարության որոշմամբ մրցանակի բոլոր ծախսերը ներառվել են ՀՀ պետական բյուջեի մեջ»:

Մարտի 26-ի տարեկան ընդհանուր ժողովը բացել և ԳԱԱ 2018թ. գիտական գործունեության արդյունքների մասին զեկուցմամբ հանդես է եկել ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանը: Ակադեմիայի 2018թ. գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցել է ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար թղթակից անդամ Հ.Մաթևոսյանը: Ժողովը քննարկել և հավանություն է տվել ԳԱԱ 2018թ. գործունեությանը:

Ժողովում լսվել է ԳԱԱ թղթակից անդամ Ռ.Հարությունյանի «Հայ ժողովրդի գենետիկա» գիտական զեկուցումը:

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում անց է կացվել նախագահության 10 նիստ, քննարկվել է շուրջ 30 հարց:

Նախագահությունը հաստատել է 2019թ. ԳԱԱ արտադրությունից կտրված և հեռակա ասպիրանտուրայի ընդունելության, առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության թափուր տեղերի վերաբաշխման արդյունքները, քննարկել է 2019թ. ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ֆինանսավորման հարցը:

Նախագահության նիստերում ընտրվել են ԳԱԱ Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության, Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի, Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի, Մ.Մանվել-

յանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի, Արվեստի, Մաթեմատիկայի ինստիտուտների, Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեններ:

Նախագահության որոշմամբ նշանակվել են Բուսաբանության, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի, Քիմիական ֆիզիկայի ինստիտուտների գիտական ղեկավարներ:

Հաստատվել է ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների՝ ըստ մասնագիտությունների առավելագույն թափուր տեղերի թիվը:

Նախագահության որոշմամբ հիմնադրվել է ԳԱԱ «Հայկական տնտեսագիտական հանդես» պարբերականը:

Նախագահությունը քննարկել է ԳԱԱ համակարգում ներառված պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների աշխատանքի վարձատրության, ԳԱԱ համակարգի կազմակերպությունների աշխատողների պարգևատրման հարցերը:

ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում է շնորհվել պատմաբան և բանասեր Մարկո Բայսին (Իտալիա) և անվանի պատմաբան Եղիկ Ճերեճյանին (Լիբանան) հայագիտության բնագավառում վաստակաշատ գործունեության համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՑԱՆՑ (ASNET-AM)

Ակադեմիական գիտահետազոտական կոմպյուտերային ցանցը (ASNET-AM) GEANT համաեվրոպական գիտակրթական ցանցային միջավայրում ներկայացնում է Հայաստանը որպես ազգային գիտակրթական ցանց և նույն ծրագրերի շրջանակում մասնակցում Արևելյան գործընկերության (EaPConnect) նախագծին, որի արդյունքում ստեղծվել է գիտության և կրթության ոլորտի համար տարածաշրջանային գերաբազ ինտերնետային ցանցը: Ցանցը շարունակել է կիրառական հետազոտական աշխատանքները, բարելավել է ցանցի կապուղիների ապահովման և զարգացման, վստահության, ինքնության և անվտանգության ծառայությունների ընդլայնման, ամպային ծառայությունների ներդրման և առցանց իրական ժամանակի ծառայությունների ընդլայնման աշխատանքները:

Ցանցի կապուղիների սպասարկում և զարգացում: Սպասարկվել և զարգացվել է ցանցի ընդհանուր կապուղու թողունակությունը (10Գբ/վրկ), ապահովվել է ցանցի միացումը համաեվրոպական գիտակրթական GEANT ցանցին (1Գբ/վրկ): Վերականգնվել է Աշտարակ-Բյուրական ռադիոկապը՝ ապահովելով 50Մբ/վրկ երկրորդ պահուստային կապուղի: Գիտության կոմիտեի հանգույցում փոխարինվել է RB2011iLS երթուղիչն ավելի հզոր և օպտիկամալուխային միացումներ ապահովող CCR1036-12G-4S երթուղիչով: ՀՀ ՊԿԱ և ԲՈԿ օգտվողների օպտիկամանրաթելային միացումներն իրականացվել են առանց դանդաղագործ փոխարկիչների: Եվրոպական համալսարանի հանգույցում Ֆրանսիական համալսարանի օպտիկամանրաթելային միացումն առանց դանդաղագործ փոխարկիչների իրականացնելու համար տեղադրվել է RB2011iLS օպտիկամալուխային միացումներ ապահովող երթուղիչը: Վերակազմավորվել են Բաղրամյան 24դ շենքում օգտվողների ցանցի ենթակառուցվածքները՝ վերահասցեավորման և երթուղիչների տեղադրման միջոցով: Նախագահության հանգույցում ամբողջովին վերափոխվել է VoIP ծառայությունն ապահովող 11 Cisco սարքերի աշխատանքը, արդյունքում հնարավոր է դարձել ապահովել հանգույցի անխափան աշխատանքը: Պլանավորված և նախագծված աշխատանքներն ավարտվել են: ASNET-AM ցանցի 7 հանգույցում գործարկվել է IPv6 ինտերնետ-հաղորդակարգը: ASNET-AM

ցանցի անդամ է դարձել Հայաստանում Ամերիկյան համալսարանը, կատարվել են ԵՊՀ և Մատենադարանի միացման աշխատանքներ:

Վստահության, ինքնության և անվտանգության ծառայությունների զարգացում: Շարունակվել է GEANT ցանցի eduroam (educational roaming) ծառայության զարգացումը: Մշակվել և ստեղծվել է eduroam WiFi անլար միջավայրում freeradius IMAP փոխարկիչների ավտոմատացված լուծում, որը թույլ է տալիս eduroam ծառայության ակտիվացման գաղտնաբառի ստուգումն իրականացնել IMAP սերվերների միջոցով: Այս լուծումը նպաստել է կազմակերպություններում eduroam ծառայության արագ ընդլայնմանը, քանի որ այն չի պահանջում գրանցել հավելյալ օգտագործողներ և նրանց առանձին գաղտնաբառ տրամադրել: Օգտագործողների անվտանգությունն ապահովվում է eduroam Configuration Assistant Tool (CAT) համակարգի միջոցով, որտեղ յուրաքանչյուր կազմակերպության համար ստեղծվում են հատուկ հավաստագրեր: Իրականացվել է «eduroam log-analysis ELK Dashboard» համակարգը, որի օգնությամբ հնարավոր է վերլուծել eduroam WiFi անլար միջավայրում գործող ASNET-AM ցանցի freeradius սերվերների աշխատանքը: Մշակվել և ստեղծվել է LetsEncrypt սերվերային SSL հավաստագրերի wildcard տարբերակի ավտոմատացված կարգավորումը մի քանի դոմենների համար: 2019թ. հունիսից համակարգը գործում է ASNET-AM ցանցի 20-ից ավելի սերվերներում: Հաշվի առնելով այն փաստը, որ LetsEncrypt-ի SSL հավաստագրերը տրամադրվում են անվճար՝ այս լուծումը զգալիորեն կրճատել է համապատասխան ոլորտի տարեկան ծախսերը: Նախատեսվում է ընդլայնել համակարգը ASNET-AM ցանցի անդամ-կազմակերպություններին որպես ծառայություն (Certificate-as-a-Service) տրամադրելու նպատակով: Eduroam ծառայության իրազեկման հատուկ նյութը թարգմանվել է հայերեն և տեղադրվել eduroam.org կայքում (<https://www.eduroam.org/wp-content/uploads/eduroam-leaflet-armenian.pdf>): ASNET-AM ցանցում մշակվել և ներդրվել են վեբ-կայքերի և վեբ-սերվերների պաշտպանության առաջադեմ մեթոդներ: 2019թ. ընթացքում, բացի ընթացիկ պաշտպանությունից, հետ է մղվել ԳԱԱ պաշտոնական կայքի վրա 2 մեծ հարձակում, հայտնաբերվել են մի շարք կազմակերպությունների կայքերի ներքին կառուցվածքի մեջ ներթափանցման փորձեր:

Ամպային ծառայությունների ներդրում: Շարունակվել են ենթակառուցվածքը որպես ծառայություն (Infrastructure as a Service) ամպային ծառայության զարգացման աշխատանքները: Ծառայությունը հնարավորություն է տալիս վեբ-միջավայրում մեկ հպումով կառավարել վիրտուալ մեքենաները, այդ թվում՝ ոչնչացնել կամ կապակցել վիրտուալ միջավայրերը: Ստեղծվել և ներդրվել է ASNET-AM միասնական վեբ-փոստ միջավայրի նոր տարբերակ (Rainloop փաթեթի հիման վրա), որն ունի ավելի հարմարավետ ինտերֆեյս և հավելյալ հնարավորություններ: Միջավայրը գործում է փորձնական վիճակում, նախորդի հետ զուգահեռ:

Առցանց իրական ժամանակի ծառայությունների ընդլայնում: Կատարվել է CSIT2019 և EaPEC2019 գիտաժողովների հեռարձակում և ուղեկցում: EaPEC2019 շրջանակներում ցածր հապաղման տեսաձայնային համակարգի LoLa միջոցով անցկացվել է «Կապը մշակույթի հետ» համերգ առանց սահմանների Երևանի «Հովեր» պետական կամերային երգչախմբի և Վենետիկի Cappella Marciana-ի մասնակցությամբ: Ցանցում գործող մեդիա հոսքերի ծառայությունը հեռարձակել է ԳԱԱ ԻԱՊԻ հոկտեմբերին կազմակերպած «Գիտության և տեխնոլոգիաների մերձեցում» ամենամյա գիտաժողովը: Մշակվել է հեռաուսուցման ծրագրային հարթակի edu.asnet.am նոր վեբ-կայքը (front page):

Առցանց իրական ժամանակի մշտադիտարկման ծառայությունների և log ֆայլերի կառավարման ծառայությունների բարելավում: Շարունակվել են ցանցի մշտադիտարկման ծառայության աշխատանքները: NFDump հիմքի վրա ստեղծվել է փորձնական ահազանգման համակարգ: The Dude հիմքի վրա փորձարկվել է Mikrotik երթուղիչների ծրագրային

թարմացման խմբակային տարբերակը, կարգաբերվել և գործարկվել է PerfSonar համակարգը: Կատարվել է viewmon.asnet.am վիճակագրական համակարգի զարգացում՝ ընթացիկ պահպանություն և թարմացում (այդ թվում՝ SSL սերտիֆիկացում), ինչպես նաև viewmon2.asnet.am նոր վիճակագրական համակարգի ստեղծում: Նոր համակարգում ավելացվել է տարեկան կտրվածքով կազմակերպությունների բոլոր IP հասցեների գումարային ներբեռնած և վերբեռնած տվյալների ծավալը տեսնելու հնարավորությունը: Այժմ վերոնշյալ 2 համակարգերը համեմատության համար գործում են զուգահեռ:

ASNET-AM ցանցի ծառայություններից 2019թ. օգտվել են հանրապետության 5 քաղաքում տեղակայված հանգույցներից օգտվող գիտնականներ, գիտատեխնիկական աշխատողներ, ասպիրանտներ, ուսանողներ և այլ օգտագործողներ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Հաշվետու տարում ԳԱԱ-ն առավել աչքի է ընկել միջազգային կառույցներում միջոցառումներին իր ակտիվ մասնակցությամբ, կնքվել և վերակնքվել են հուշագրեր և համաձայնագրեր:

Գիտության բնագավառում համագործակցության հնարավորությունների խթանման, երկու երկրների գիտական հետազոտությունների հետագա զարգացման, ակադեմիական համայնքների փոխշահավետ հարաբերությունների ամրապնդման նպատակով մայիսին ԳԱԱ-ի և Չեխիայի գիտությունների ակադեմիայի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր:

Նոյեմբերին ԳԱԱ-ի և Թաթարստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի միջև կնքվել է համագործակցության համաձայնագիր, որի շրջանակներում կողմերը կիրականացնեն համատեղ հետազոտական աշխատանքներ հումանիտար, բնական և տեխնոլոգիական գիտությունների ոլորտներում, կկատարվի տեղեկատվության փոխանակում: Միջակադեմիական համագործակցությունը շարունակվում է նաև նախկինում կնքված պայմանագրերի հիման վրա Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Մոլդովայի, Ուզբեկստանի, Չինաստանի, Լիտվայի, Ռումինիայի, Ավստրիայի, Տաջիկստանի, Թուրքմենստանի գիտությունների ակադեմիաների, Ուկրաինայի, Բելառուսի, Ղազախստանի, Դրոգստանի գիտությունների ազգային ակադեմիաների ու գիտական կառույցների հետ: Առկա համագործակցություններն ակտիվ պահելու և նոր համագործակցություններ նախաձեռնելու նպատակով ԳԱԱ-ի տարբեր պատվիրակություններ 2019թ. այցելել են համագործակից ակադեմիաներ և այլ միջազգային կառույցներ:

Մարտին Դուշանբեում (Տաջիկստան) ԳԱԱ ներկայացուցիչը մասնակցել է «Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի» (ԳԱՄԱ) կազմակերպատեխնիկական խմբի աշխատանքներին, որտեղ քննարկվել են ԳԱՄԱ գիտական տարբեր ոլորտներին վերաբերող խորհուրդների ստեղծման և աշխատանքների համակարգման հարցեր:

Ապրիլին ԳԱԱ ներկայացուցիչը Պեկինում (Չինաստան) մասնակցել է «Մեկ գոտի և ճանապարհ» միջազգային համագործակցության II համաժողովին, հանդես է եկել ելույթներով՝ «Ինչու՞ Հայաստան. Հայաստան-Չինաստան համագործակցության շնորհանդեսը խաղողի գենետիկայում», «Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիա»: Մայիսին ԳԱԱ ներկայացուցիչը Պեկինում մասնակցել է «Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինքի» (ՄԳԿԴ) աշխատանքային խմբի 1-ին հանդիպմանը և ՄԳԿԴ ռազմավարական պլանի նախագծի վերաբերյալ աշխատաժողովին:

Շարունակվում է համագործակցությունը Չինաստանի Հասարակական գիտությունների ակադեմիայի հետ, որի շրջանակներում միջազգային կապերի վարչության միջնորդությամբ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրենն օգոստոս-սեպտեմբերին մասնակցել է Չինաստանում կազմակերպված «Տնտեսական զարգացման հիմնախնդիրները» միջազգային սեմինարին:

Մայիսին ԳԱԱ պատվիրակությունը նախագահ Ռ.Մարտիրոսյանի գլխավորությամբ Բեռնում (Շվեյցարիա) մասնակցել է ALLEA-ի Գլխավոր ասամբլեային, որի շրջանակներում անցկացվել են ALLEA-ի 25-րդ տարեդարձին նվիրված միջոցառումներ, «Կապելով գիտությունն ու հասարակությունը» և «Գիտությունը և հասարակությունը ներկայիս Եվրոպայում» գիտական սիմպոզիումներ:

Նոյեմբերին ԳԱԱ նախագահ Ռ.Մարտիրոսյանը Մոսկվայում (ՌԴ) մասնակցել է ԱՊՀ անդամ երկրների հիմնարար գիտության բնագավառում համագործակցության խորհրդի 7-րդ նիստին:

Միջպետական և միջգերատեսչական համագործակցություններից են տնտեսական միջկառավարական հանձնաժողովի կողմից իրականացվող հայ-լիտվական, հայ-լատվիական, հայ-թուրքմենական, հայ-հնդկական, հայ-չեխական, հայ-չինական, հայ-եգիպտական, հայ-տաջիկական համագործակցությունները: Հայ-ռուսական տնտեսական միջկառավարական համագործակցության շրջանակներում շարունակվել է Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանի և ՌԴ «Ռոսկոսմոսի», ՌԳԱ հատուկ աստղաֆիզիկական աստղադիտարանի հետ տիեզերական տարածության հետազոտման և խաղաղ նպատակներով օգտագործման ասպարեզում համագործակցությունը: Բյուրականի աստղադիտարանը, համաձայն «Ռոսկոսմոսի» կապալառու կազմակերպություն հանդիսացող ԱԳԿ ԲԲԸ-ի հետ կնքված պայմանագրի, վերջին 5 տարիների ընթացքում Սարավանդի բազայում տեղակայված ռուսական ՃՕՈՒ -1 դիտողական կայանի օգնությամբ իրականացնում է մերձերկրյա տարածության մշտադիտման ծրագիր:

Հաշվետու տարում ԳԱԱ-ում անցկացվել են մի շարք միջազգային գիտաժողովներ, սիմպոզիումներ և միջոցառումներ: Ապրիլին ԳԱԱ փոխնախագահ ակ. Յու.Շուքրոսյանը և Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի տնօրեն ԳԱԱ պատվավոր դոկտոր Մ.Դայդեն ամփոփել են ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի և Ֆրանսիայի Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի 15-ամյա համագործակցության արդյունքները: Ապրիլին ԳԱԱ-ում տեղի է ունեցել հայ-իտալական գիտական համագործակցությանը նվիրված հանդիպում, ամփոփվել են գիտության ոլորտում հայ-իտալական համագործակցության ձեռքբերումները, քննարկվել է Ռեյատիվիստական աստղաֆիզիկայի միջազգային կենտրոն ցանցի՝ ԻԿԴԱՆԵՏ միջազգային կազմակերպության գործունեությունը ՀՀ-ում:

Հուլիսին ԳԱԱ նախագահությունում մեկնարկել է «Հայաստանի հնագիտությունը տարածաշրջանային համատեքստում» միջազգային 2-րդ գիտաժողովը՝ նվիրված Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 60-ամյակին, որին մասնակցել են գիտնականներ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Լեհաստանից, Իտալիայից, Ռուսաստանից, Վրաստանից:

Սեպտեմբերին ԳԱԱ-ում մեկնարկել է «Քիմիա և քիմիական տեխնոլոգիաներ» 6-րդ միջազգային գիտաժողովը: Գիտաժողովի նպատակն էր վերլուծել ու քննարկել քիմիայի և քիմիական տեխնոլոգիաների բնագավառում տեսական և կիրառական հետազոտությունների գիտատեխնիկական տեղեկատվության արդի վիճակն ու առաջընթացը: Գիտաժողովին մասնակցել են անվանի քիմիկոսներ, տեխնոլոգներ, երիտասարդ մասնագետներ՝ Հայաստանից, ՌԴ-ից, Ուկրաինայից, Վրաստանից, Բելառուսից, Ուզբեկստանից, Իսրայելից: Սեպտեմբերին ԳԱԱ-ում անցկացվել է «Կոմպյուտերային գիտություն և

ինֆորմացիոն տեխնոլոգիաներ» CSIT-2019 12-րդ միջազգային գիտաժողովը, որի նպատակն էր խրախուսել կոմպյուտերային գիտության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում գիտական և տեխնոլոգիական տեղեկատվության փոխանակումը, որը հնարավորություն կտա հայ և արտասահմանցի գիտնականներին ներկայացնել և քննարկել իրենց գիտական գաղափարները, հետազոտությունների արդյունքները և զարգացման հեռանկարները, ինչպես նաև հարթակ ծառայել՝ աջակցելու Արևելյան գործընկերության տարածաշրջանի և ԵՄ անդամ պետությունների միջև էլեկտրոնային ենթակառուցվածքների համայնքային կայացմանը: Երկօրյա գիտաժողովում քննարկվել են Եվրոպայում բաց գիտության համար էլեկտրոնային ենթակառուցվածքների օգտագործման խնդիրները:

Հոկտեմբերին ԳԱԱ-ում մեկնարկել է «Բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում լանդշաֆտային ճարտարապետություն» 11-րդ միջազգային գիտաժողովը, որին մասնակցել են 120-ից ավելի գիտնականներ ՌԴ-ից, Բելառուսից, Ուկրաինայից, Հարավային Կորեայից, Մոլդովայից, Ղազախստանից, Լիտվայից: Հոկտեմբերին ԳԱԱ-ում անցկացվել է «Բնագիտական թանգարանները որպես գետտորիզմի զարգացման գործոն» միջազգային գիտաժողովը:

Ելնելով իր ռազմավարությունից՝ ԳԱԱ-ն ապահովում է երիտասարդ գիտնականների մասնակցությունը գիտության տարբեր ոլորտներում իրականացվող միջազգային հանդիպումներին և միջոցառումներին: Համաձայն ԳԱԱ-ի, Լինդաուում Նոբելյան մրցանակակիրների հանդիպումների Խորհրդի և Լինդաուում Նոբելյան մրցանակակիրների հանդիպումների հիմնադրամի միջև փոխըմբռնման հուշագրի՝ ԳԱԱ-ից ներկայացված երիտասարդ գիտնականը մասնակցել է ֆիզիկայի բնագավառի 69-րդ հանդիպմանը:

ՀՀ ԳԱԱ-ն շարունակում է մասնակցել և իրականացնել տարբեր միջազգային գիտական ծրագրեր, այդ թվում՝ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC), Եվրոպական համալսարանական կրթության ՏԵՄՊՈՒՍ համաեվրոպական շարունակական (TEMPUS) այլն: ԳԱԱ կազմակերպություններն ակտիվորեն մասնակցում են նաև ԱՄՆ ծրագրերին՝ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների (CRDF Global), Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ANSEF), ՆԱՏՕ-ի, Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության (BMBF) գերմանական Շտիֆտունգ Ֆոլքսվագեն հիմնադրամի (Volkswagen Stiftung Foundation) և այլ հիմնադրամների ծրագրերին:

2019թ. արտասահմանյան երկրներ գործուղման է մեկնել ԳԱԱ 700 գիտաշխատող. գիտական միջոցառումների մասնակցել է 362, համատեղ աշխատանքներ է կատարել 233, բանակցություններ է վարել և կոնսուլտացիաների մասնակցել 105 գիտաշխատող: Արտասահմանից ժամանել է 850 գիտնական. գիտական միջոցառումներին մասնակցել է 438, համատեղ աշխատանքներ է կատարել 282, բանակցություններ է վարել և կոնսուլտացիաների մասնակցել 130 գիտաշխատող: 2018թ. համեմատ գործուղված գիտնականների թիվն աճել է 8-ով, իսկ հրավիրյալ գիտնականների թիվը՝ 61-ով:

Վարչությունը 2019թ. ընթացքում աջակցել է ԳԱԱ ինստիտուտներին ու կենտրոններին՝ տրամադրելով հավելյալ տեղեկություններ:

ԳԱԱ գիտական կազմակերպությունների դրամաշնորհներ

N	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., ռուբ., GBP, CHF)		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2019թ. համար	
1	Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ	Տրանսֆերինի և կատիոնային պորֆիրինների հիման վրա մոլեկուլային կոմպլեքսներ քաղցկեղային բջիջների վրա նպատակաուղղված ազդեցության համար	Հայբելառուսական հիմնադրամ	2017-2019		9 000000 դրամ	1 680000 դրամ	Գ.Գյուլխանդանյան
2		Հեմոքսինի ազդեցության ուսումնասիրումը ստրեպտոգոտոցինով խթանված դիաբետիկ առնետների մոտ հակաօքսիդանտային կարգավիճակի վրա	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2018-2019		5000 \$	500 \$	Ֆ.Սարուխանյան
3		Ադենոզին դեամինազի կուտակումը և ցիտրուիլնացումը ռևմատոիդ արթրիտի ժամանակ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2019-2020		5000 \$	3750 \$	Ա.Անտոնյան
4		Լիզոսոմային կենսաբանությունն ավտոֆագիայի մեջ. լիսոզոմներում DPPII-ի և ADA-ի փոխազդեցության առանձնահատկությունները	Դրամաշնորհների ֆինանսավորում ԱՊՀ տարածաշրջանի դրամաշնորհային պայմանագրով SFG 1407 (Շվեյցարիա)	02.05-2019 02.07.2019		2500 շվ. ֆրանկ	2500 շվ. ֆրանկ	Ա.Անտոնյան
5		Բնական և ցիտրուլինացված ադենոզին դեամինազի փոխազդեցությունը դիպեպտիդի պեպտիդազ IV-ի հետ	Կամերինոյի համալսարան (Իտալիա)	25.09-2019 23.10.2019		320 €	320 €	Ա.Անտոնյան
6		Բնական և ցիտրուլինացված Ադենոզին դեամինազի փոխազդեցությունը Դիպեպտիդի պեպտիդազի հետ	Գյուլբենկյան հիմնադրամ	25.09-2019 20.11.2019		1000 €	1000 €	Լ.Կարապետյան
7		Ադենոզին դեամինազի ակտիվության խոչընդոտումը սինթեզված պիպերազինի դասի միացությունների կողմից	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	06.06-2019 11.06.2019		700 \$	700 \$	Լ.Կարապետյան
8	Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ	Անդրկովկասի բույսերի բազմազանության պահպանության կատարելագործման մեխանիզմները (շարունակ)	Ֆոլքսվադեն Շտիֆտունգ հիմնադրամ	2016-2019		9000 €	-	Ն.Այվազյան

9		Վիպերիդա օձերի ֆոսֆոլիպազները՝ Ա2-ը և $\text{Ca}^{2+} / \text{Mg}^{2+} + \text{ATPase}$ և $\text{Na}^{+} / \text{K}^{+} + \text{ATPase}$ գործունեության տարբերությունները մարդու արյան կարմիր բջիջների մեմբրանում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2019	5000 \$	5000 \$	Գ.Կիրակոսյան
10		Իժերի թույնի դեզինտեգրիների կարգավորիչ ակտիվությունն ինտեգրիների վրա ուռուցքային բջիջների անկանոն աճի և տրոմբոցիտների ագրեգացիայի ժամանակ	Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամ	2018-2020	8 988400 դրամ	5 059200 դրամ	Ն.Այվազյան
11		Գլուրգայի թույնի A2 ֆոսֆոլիպազների և դեզինտեգրիների կառուցվածքաֆունկցիոնալ հետազոտությունները	Հայ-բելառուսական հիմնադրամ	2018-2020	9 000000 դրամ	5 130000 դրամ	Գ.Կիրակոսյան
12		Օրբելու ֆենոմենը	Ներո առցանց նախագծերի պատմություն	2017-2019	1500 \$	-	Լ.Ղուլիկյան
13		Ֆունկցիոնալ մագնիսային նանոմասնիկները չարորակ ուռուցքների մագնիսային հիպերթերմիայի համար	ՌԴ կրթության նախարարություն	2018-2020	-	-	Ն.Այվազյան, Ա.Հովհաննիսյան, Ա.Մանուկյան
14		Բազմաբաղադրիչ ալոգեն բջիջների կենսահամատեղելիությունը լյարդի ապաբջջայնացված սքաֆոլդի հետ	ԿԳՄՄԸ ԳԿ, Հայ-բելառուսական ծրագիր	2018-2019	-	809000 դրամ	Զ.Կարաբեկյան
15	Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ	Կենսաբանական ուղիների պաթոլոգիական վիճակների քարտեզավորում	ԿԳՄՄԸ ԳԿ, Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարություն (BMBF)	2017-2019	6271920 դրամ	1953000 դրամ	Ա.Առաքելյան
16		Պղինձ պարունակող նոր ճառագայթապաշտպանիչ միացությունները որպես հակաքաղցկեղային միջոց	ԿԳՄՄԸ ԳԿ, Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարություն (BMBF)	2017-2019	6 271920 դրամ	290194 դրամ	Գ.Յականովա
17		Հայաստանի խաղողի գենետիկական ելանյութի բազմակողմանի բնութագրումը սելեկցիոն ներուժի բացահայտման նպատակով	ԿԳՄՄԸ ԳԿ, Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարություն (BMBF)	2017-2019	6 271920 դրամ	1 197000 դրամ	Ք.Մարգարյան

18		Հայաստանում սուր լեյկեմիայի հիվանդացության համաճարակաբանական հետազոտությունը և ռիսկի գործոնները	Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարություն (BMBF)	2017-2019	132516 €	8910 €	Ն. Բաբայան
19		Գործընկեր նախաձեռնություն կենսաինֆորմատիկայի ոլորտում, համակարգված բժշկություն և առողջություն (FFE-034)	Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարություն (BMBF)	2017-2019	150000 €	11000 €	Հենրի Լոֆֆլեր-Վիրց, Ա.Առաքելյան
20		PPARP ինհիբիտորների նկատմամբ կայունության զարգացման մեխանիզմների ուսումնասիրությունը BRCA1 մուտացիաներից կախյալ ձվարանների քաղցկեղի ժամանակ	ԿԳՄՄՆ ԳԿ, Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամ	2018-2020	8 970000 դրամ	5 382000 դրամ	Ա.Առաքելյան
21		Նուկլեոտիդային և օլիգոնուկլեոտիդային անալոգներից կազմված նանոհամալիրները որպես խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի դեմ հակավիրուսային նյութեր	ԿԳՄՄՆ ԳԿ, Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամ	2018-2020	8 990000 դրամ	4 495000 դրամ	Հ.Զաքարյան
22		Օքսիդատիվ սթրեսային համակարգերի և T2DM-ի բորբոքումների գեների ակտիվության մոդուլյացիայի էպիգենետիկ մեխանիզմներ	ՌԴ ԿԳՆ, Հայ-ռուսական համալսարան	2018-2019	10 000000 դրամ	3 000000 դրամ	Գ.Մանուկյան
23		Կենսաբանական ուղիների մոդելավորման հիման վրա դեղերի փոխակերպման համար բիոինֆորմատիկ հարթակի մշակում	ՌԴ ԿԳՆ, Հայ-ռուսական համալսարան	2018-2019	11 980000 դրամ	6 000000 դրամ	Ա.Առաքելյան
24		Գենետիկական բազմազանություն, բնակչության կառուցվածքը և էթնիկապես համասեռ բնակչության ժողովրդագրական պատմությունը	ՌԴ ԿԳՆ, Հայ-ռուսական համալսարան	2018-2019	12 800000 դրամ	6 500000 դրամ	Լ.Եպիսկոպոսյան
25		Մակրոյարդային համալիրի գործունեության ձևավորման և կարգավորման ուսումնասիրություն	ՌԴ ԿԳՆ, Հայ-ռուսական համալսարան	2018-2019	12 120000 դրամ	6 060000 դրամ	Կ.Նազարյան
26		Kv2 և KCNQ1 լարումկախյալ կալիումական անցուղիների ֆունկցիոնալ կարգավորումը ներբջջային երկվալենտ կատիոններով	Ֆոլքսվադեն Շտիֆտունգի հիմնադրամ	2016-2019	90000 €	16560 €	Վ.Վարդանյան

27		Բազմակայուն սալմո- նելների թիրախային վե- րացումը բակտերիա- ֆագերի միջոցով	Միջազգային գիտատեխնի- կական կենտ- րոն (ISTC)	2016-2019	212766 \$	7008 \$	Ա.Սեդրակ- յան
28		Ամինաթթուների շիֆ- բազային ածանցյալնե- րը որպես ինսուլտնե- րի հավանական նյար- դապաշտպան բուժում	Ֆուլբրայթ	2019	23045 \$	23045 \$	Գ.Յականովա
29		Բիոինֆորմատիկայի դասի վերականգնում և կենսաբանական գործընթացների հաշ- վարկային մոդելա- վորման լաբորատո- րիան որպես Հայաս- տանում կենսաինֆոր- մատիկայի նոր հնա- րավորություն	«Հայաստան» հիմնադրամ	2018-2019	8678 €	6 913 €	Կ.Նազարյան
30		<i>In silico</i> պիրինի ինֆլա- մատոնի մակրոմոլեկու- լային կոմպլեքսի ձևա- վորման ուսումնասի- րություն	Հորիզոն 2020 (HPC17M0PAK)	2019	4800 €	4800 €	Գ.Առաքելով
31		Բույսերի մոդիֆիկա- ցիա՝ ինտերֆերող ՌՆԹ արտադրելու համար (CA15223)	Եվրոպական համագործակ- ցություն գիտու- թյան և տեխնո- լոգիաների ոլոր- տում (COST Action)	2019	590 €	590 €	Ք.Մարգար- յան
32		Տվյալների ինտեգրումը՝ խաղողի բարելավման գործում օմիկայի ազդե- ցությունը առավելա- գույն դարձնելու հա- մար (CA17111)	Եվրոպական համագործակ- ցություն գիտու- թյան և տեխնո- լոգիաների ոլոր- տում (COST Action)	2019	5000 €	5000 €	Ք.Մարգար- յան
33		Բույսերի գենոմի խմբագրում՝ տրանս- ֆորմատիվ ներուժ ունեցող տեխնոլոգիա (CA18111)	Եվրոպական համագործակ- ցություն գիտու- թյան և տեխնո- լոգիաների ոլոր- տում (COST Action)	2019	550 €	550 €	Ք.Մարգար- յան
34		Խաղողի հայկական անհայտ և վտանգված սորտերի գենետիկա- կան ուսումնասիրու- թյունը և առողջական ստատուսի գնահա- տումը	Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայություն (DAAD)	2019	5800 €	5800 €	Ա. Նեբիշ
35		Համալիր հիվանդու- թյունների զարգացման կանխատեսում՝ օգտա- գործելով մեքենայա- կան ուսուցումը	Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայություն (DAAD)	2019	5750 €	5750 €	Մ. Նիկողոս- յան

36		Մվլայս-տարբերակների համապարփակ տեսակետ և դրանց ֆունկցիոնալ հետևանքները մեխանոմայում	Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայություն (DAAD)	2019	8150 €	8150 €	Ս.Հակոբյան
37		Հաջորդ քայլ. ֆագոթերապիայի ռիսկերի գնահատում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2019	5000 \$	5000 \$	Մ.Մկրտչյան
38		Կապանի տարածաշրջանի հանքավայրերի մոտ ապրող պոպուլյացիայում ծանր մետաղների գենոտոքսիկ ազդեցության գնահատում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2018-2019	5000 \$	2500 \$	Ա.Ստեփանյան
39		Շիզոֆրենիայի ժամանակ հոգեմետ բուժման գենետիկական ասպեկտների բացահայտում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2019	5000 \$	2500 \$	Ա.Զավուլյան
40		Պոլիամինների դերն Աֆրիկյան ժանտախտի վիրուսի վարակի մեջ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2019	5000 \$	5000 \$	Հ.Զաքարյան
41		Դաբադի վիրուսի 3C պոլիմերազի նկատմամբ հակավիրուսային նյութերի հայտնաբերում և հետազոտում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2019	5000 \$	5000 \$	Ա.Հակոբյան
42		IL-1β և դրա անտագոնիստ IL-1ra-ի միջև համալիր փոխազդեցությունը դիաբետիկ մոդելում	Գյուլբենկյան հիմնադրամ	2019	1060 \$	1060 \$	Ս.Մարգարյան
43		Կարճաժամկետ գիտաժողով և ճանապարհորդական դրամաշնորհ ՀՀ ուսանողների և երիտասարդ գիտնականների համար	Գյուլբենկյան հիմնադրամ	2019	1000 €	1000 €	Վ.Առաքելով
44		Լայն տարածում ունեցող մսակեր կենդանիների կլիմայի փոփոխման պայմանների նկատմամբ պատասխանի գենետիկական ուսումնասիրություն . Արցախ	Գյուլբենկյան հիմնադրամ	2019	1035 €	1035 €	Մ.Անտոնոսյան
45		Տրանս-եվրասիական կորեկներ և լոբի, լեզու և գեներ	Մաքս-Պլանկի ինստիտուտ	2019	788 €	788 €	Ա.Հովհաննիսյան
46		Եվրոպական հանձնաժողովի Համատեղ հետազոտական կենտրոնի ազգային ներկայացուցիչների տարեկան հանդիպում	ԵՀ Համատեղ հետազոտական կենտրոն	2019	750 €	750 €	Ա.Հովհաննիսյան

47		Հայերի պոպուլյացիոն կառուցվածքի և ժողովրդագրական պատմության ուսումնասիրում գենոմի ամբողջական հաջորդականության հիման վրա	Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ (FAST)	2019	6000 \$	6000 \$	Ա.Հովհաննիսյան
48		Պալեոլիթյան մարդկային բնակելի միջավայրի վերակառուցում. Արցախ	Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ (FAST)	2018-2019	7000 \$	3500 \$	Մ.Անտոնոսյան
49		Կենսատեխնոլոգիական մոտեցում՝ սումատիկ էմբրիոգենեզի կիրառամբ խաղողի հայկական վտանգված սորտերի պահպանման համար	Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ (FAST)	2019	2500 \$	2500 \$	Ա.Նեբի2
50		Ճանապարհորդական դրամաշնորհ	Եվրոպական մոլեկուլային կենսաբանության կազմակերպություն (EMBO)	2019	500 €	500 €	Մ.Անտոնոսյան
51		Արցախի ուշ պլեիստոցենի շրջանի կլիմայի փոփոխության գենետիկ ապացույցներ. Հարավային Կովկաս	Ձեռնարկությունների հնկուրատոր հիմնադրամ (EIF)	2019	3 400000 դրամ	3 400000 դրամ	Մ.Անտոնոսյան
52		Գիտաժողովի մասնակցություն	Ձեռնարկությունների հնկուրատոր հիմնադրամ (EIF)	2019	750 €	750 €	Ա.Մարտիրոսյան
53	«Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ	Կողային շղթայում չհագեցած խմբեր պարունակող նոր սերնդի օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային α-ամինաթթուների, պեպտիդների և պոլիմերների սինթեզ և զննում	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2017-2020	120000 \$	35000 \$	Ա.Սադյան
54		Մարդիկ Եվրոպայի կենսաէներգետիկայի համար	Հորիզոն 2020	2015-2019	153000 €	18930 €	Վ.Գոգինյան
55		«Մանրէներ. կենսաբանություն և կիրառում» միջազգային գիտաժողով	FEMS, VIPECO	2019	4 200000 դրամ	4 200000 դրամ	Ն.Վարդանյան
56		Հակաբիոտիկների նկատմամբ կայուն պսևդոմոնասի շտամներից ստացված պլազմիդների գենետիկական ուսումնասիրություն ՄԻԿՐՈԲԻՈ-5133	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2019	5000 \$	5000 \$	Ա.Սարգսյան
57	Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն	Բնության հետ քաղաքների զարգացման, ինովացման և կառավարման համար համատեղ արտադրություն	Հորիզոն 2020	2017-2022	190000 €	38000 €	Շ.Ասմարյան

58		Էրազմուս+ դասախոսների շարժունություն	Էրազմուս+ KA -107 Կրակովի մանկ.համալս. Շարժունության ծրագիր	2019	4020 €	4020 €	Դ.Պիպոյան, Վ.Մուրադյան, Գ.Ներսիսյան
59		Հետազոտական այց Մարտին Լութերի համալսարան	Մարտին Լութերի համալսարան	2019	1330 €	1330 €	Վ.Մուրադյան, Գ.Տեփանոսյան
60		«Հեռագնման ռեզիդենտ խնդիրներ» միջազգային 6-րդ գիտաժողով	«Հեռագնման ռեզիդենտ խնդիրներ» միջազգային 6-րդ գիտաժողովի կազմակերպիչ	2019	484000 դրամ	484000 դրամ	Վ.Մուրադյան
61		Կովկասյան լեռնային համաժողով 2019	Գիտական ցանց Կովկասյան լեռների տարածաշրջանի համար	2019	1480 €	1480 €	Վ.Մուրադյան, Գ.Տեփանոսյան
62		Ռադիոնալիտիկ և միջուկային քիմիայի II միջազգային գիտաժողով	CRDF Գլոբալ	2019	2 888566 դրամ	2 888566 դրամ	Օ.Բեյլան, Կ.Փյունկյուլյան
63		«Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար	MENVIPRO Էրազմուս+ CBHE	2019	11460 €	11460 €	Օ.Բեյլան, Գ.Տեփանոսյան, Դ.Պիպոյան, Մ.Բեգլարյան, Շ.Ասմարյան
64		«Բնական ռադիոնուկլիդների մոնիթորինգում կիրառվող չափողական տեխնիկա» ուսումնական կուրս	Հորիզոն 2020 Ռադիացիոն պաշտպանության հետազոտությունների ինտեգրման Եվրոպական համատեղ ծրագիր	2019	600 €	600 €	Ն.Մովսիսյան
65		Օքսֆորդի սեմինար՝ «Ռադիոակտիվ ժառանգության տեղամասերում ռիսկերի գնահատման ընթացքում անորոշ տեղեկատվության լավագույն ներկայացում»	Հորիզոն 2020 ճառագայթման ազդեցության գնահատման շրջանակներում անորոշությունների նվազմանն ուղղված և մարդու ու վայրի բնության վրա ազդեցության գնահատման մեջ շահառուների ընդգրկման ծրագիր	2019	1500 GBP	1500 GBP	Ն.Մովսիսյան

66		Ճանապարհորդական դրամաշնորհ	Երիտասարդ երկրաբանների V միջազգային «ՅԵՍ» կոնգրես	2019	500 €	500 €	Գ.Մելքոնյան
67		Գիտաժողովի մասնակցության դրամաշնորհ	Գյուլբենկյան հիմնադրամ	2019	1000 €	1000 €	Գ.Մելքոնյան
68		«Շրջակա միջավայրի պաշտպանություն (Բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար	MENVIPRO Էրազմուս+ (CBHE)	2019	3000 €	3000 €	Ա.Սադաթելյան
69		Էրազմուս+ KA107 կրեդիտային շարժունություն ծրագիր	Էրազմուս+ KA-107 Տուշայի համալսարան	2019	29020 €	29020 €	Դ.Պիպոյան, Մ.Բեգլարյան, Ս.Ստեփանյան, Ք.Յարմալոյան, Գ.Տեփանոսյան, Լ.Սահակյան, Գ.Տեփանոսյան, Ն.Մադաթյան, Դ.Գևորգյան, Տ.Բսահակյան, Գ.Մելքոնյան
70		Մենդամթերքի անվտանգության միջազգային գիտաժողով	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (WHO) և պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO)	2019	1640 \$	1640 \$	Դ.Պիպոյան
71		Մենդամթերքի անվտանգության համար վերապատրաստման դասընթաց (BTSE)	ԵՄ հանձնաժողով	2019	2800 \$	2800 \$	Դ.Պիպոյան, Է.Ղեջյան
72		Ձեռնարկատիրության դպրոց: Նորարարական լուծումներ սննդի արդյունաբերության կողմնակի հոսքերի համար	Նորարարության և տեխնոլոգիայի եվրոպական ինստիտուտ (EIT)	2019	1370 \$	1370 \$	Ս.Բեգլարյան
73		Ընդհանուր արժեքների խթանում կրթության միջոցով	ԵՄ հանձնաժողով	2019	583 \$	583 \$	Դ.Պիպոյան
74		ԵՄ-ՖՈՒԱ ռիսկի գնահատման ծրագրի վերապատրաստման դասընթաց	ԵՄ սննդամթերքի անվտանգության լիազոր մարմին (EFSA)	2019	3257 €	3257 €	Ս.Բեգլարյան
75		Աշխատաժողով Արևելյան գործընկերության	ԵՄ սննդամթերքի ան-	2019	1396 €	1396 €	Դ.Պիպոյան, Ս.Բեգլարյան

		երկրների համար՝ «Քիմիական և մանրէաբանական ռիսկի գնահատում»	վտանգության լիազոր մարմին (EFSA)				
76		Աշխատաժողով՝ «Հակամանրէային կայունությունը ԵՀՔ գործընկեր երկրներում»	ԵՄ հանձնաժողով	2019	2880 €	2880 €	Դ.Պիպոյան, Մ.Բեգլարյան
77		Բմունդֆերմենտային անալիզի և բարձր արդյունավետության հեղուկ քրոմատոգրաֆի կիրառումը սննդամթերքում հակաբիոտիկների մնացորդային քանակների որոշման համար	Սպառողների իրավունքների պաշտպանության և մարդու բարեկեցության դաշնային ծառայության «Հիգիենայի և համաճարակաբանության դաշնային կենտրոն»	2019	1618 \$	1618 \$	Ա.Հովհաննիսյան
78	Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն	Ձկնային հանրային խտության և աբիոտիկ հատկանիշների փոփոխության ազդեցությունը լիմնոհամակարգի էկոլոգիական վիճակի և սննդային ցանցերի ձկնաբերության վրա ՀՀ խոշոր բարձրադիր Սևանա լճի օրինակով	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-ռուսական ծրագիր	21.03.2018 21.03.2020	9 901600 դրամ	5 386000 դրամ	Բ.Գաբրիելյան
79		Ասիայի խոշորագույն լճերի՝ Բայկալի և Սևանի պլանկտոնի միկրոբային հանրային բազմազանության համեմատական վերլուծություն տրոֆիկ վիճակի և ջրի մակարդակի տարուղղված փոփոխության պայմաններում	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-ռուսական ծրագիր	01.03.2018 29.02.2020	9 000000 դր.	4 748000 դրամ	Գ.Գևորգյան
80		Վնասատու միջատների պոպուլյացիաների գենետիկական կարգավիճակի գնահատումը և դրանց թվաքանակի կարգավորման համար նոր նյութերի մշակումը	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-բելառուսական ծրագիր	03.12.2018 30.11.2020	9000000 դր.	4740000 դր.	Գ.Կարապետյան
81		Արբովիրուսային և մակաբուժային վարակներ փոխանցող արյունածուծ հողվածոտանիների բազմազանությունը, տարածվածությունը և համաճարակաբանական կարգավիճակը Հայաստանում և Բելառուսում	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-բելառուսական ծրագիր	01.07.2019 30.06.2021	9 000000 դրամ	2 250000 դրամ	Ս.Աղայան

82		Սևանա լճի մոդելի մշակում նրա էկոլոգիայի ավելի լավ ըմբռնման համար և որպես նրա բնական պաշարների կայուն կառավարման և օգտագործման գործիք	Գերմանիայի կրթության և հետազոտության դաշնային նախարարություն (BMBF)	01.06.2017 31.05.2019	34020 €	13020 €	Գ.Գևորգյան
83		Գետերի ինքնամաքրման կարողության գնահատման մեթոդի մշակում	«Էմի ընդ Էյ» ընկերության հայաստանյան մասնաճյուղ	01.05.2019 30.04.2020	3 577000 դրամ.	1 025000 դրամ	Հ.Կոբեղյան
84		Պրոցեսոր (Կարաբիդ, Կարաբուս) գնայով բզեզների կարգաբանական կոմպլեքսի բնապահպանական կարգավիճակի հետազոտությունը և պահպանության միջոցառումների մշակումը Հայաստանում	Ռուֆֆորդի հիմնադրամ	04. 2018 04. 2019	4999 €	1250 GBP	Տ.Ղուկասյան
85		Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակ Սևանի իշխանի բնական պուլյացիայի փորձարարական մեթոդների փորձարկում	Ռուֆֆորդի հիմնադրամ	07. 2018 07. 2019	4794 GBP	-	Ն.Բարսեղյան
86	Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ	Բնապահպանական հոսքերի հաշվարկման եղանակի հաստատում և ջրային էկոհամակարգերի բնութագրերի որոշումն ըստ տարածքային զոնաների	Եվրամիության ջրային նախաձեռնության արևելյան գործընկերության ծրագիր	04.2019 12.2019	24370 €	24370 €	Ս.Մինասյան
87		Հրազդանի ավազանի կառավարման պլանի կազմում	Եվրամիության ջրային նախաձեռնության արևելյան գործընկերության ծրագիր	04.2019 06.2019	29660 €	7415 €	Ս.Մինասյան
88		Բարձր ջերմաստիճանային ինքնատարածվող սինթետիկ եղանակով Ti6Al4V համաձուլվածքի ստացում 3D կոմպակտավորման համար	ANSEF	17.04.2019 17.04.2020	5000 \$	3750 \$	Հ.Կիրակոսյան
89	Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ	Ալյումինիդներից դանդաղ գործող պարատանյութերի ստացման եղանակի մշակում	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2015-2019	235610 \$	28199,14 \$	Կ.Գրիգորյան
90	Երկրաբանական գիտությունների ինստիտուտ	Մեծ Կովկասի սեյսմիկ կառուցվածքը և բարձրացումը (A2334)	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	01.04.2017-48 ամիս	72000\$, որից ինստիտուտի միջոցով 2019թ. 20 100\$	Առանց ֆինանսավորման	Հ.Բաբայան

91		Բարձր լեռնային լճերը որպես լոկալ միջավայրի կարևոր բաղկացուցիչ, մարդածին և բնական ազդեցություններ (G2153)	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	01.03.2016 - 36 ամսով, 2019թ. օգոստոսին երկարացվել է ևս 6 ամսով	127 427.7\$, որից ինստիտի միջոցով 2019 թ. 11 727.7\$	2574 \$	Հ.Բաբայան
92	Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ	Երկրի գլխավոր մագնիսական դաշտի և իոնոսֆերային Sq հոսանքային համակարգի դինամիկայի ուսումնասիրությունը մագնիսական դիտակայանների տվյալների վերլուծության նոր մեթոդների կիրառմամբ	ՌԴ ԳԱ Երկրաֆիզիկական կենտրոն	2018-2020	9 000000 դրամ	5 108900 դրամ	Ա.Սիմոնյան
93		Սևանա լճի և դրա ջրատարածության համալիր ուսումնասիրությունների վերջին հազարամյակների կլիմայի և շրջակա միջավայրի փոփոխությունների վերակառուցման նպատակով	Կազանի ֆեդերալ համալսարան (ՌԴ)	2018-2020	8 994800 դրամ	5 688000 դրամ	Ս.Հայրոյան
94	Հնագիտության և ազգագրության ինստիտուտ	Իմ Հայաստան	Սմիթսոնյան հաստատություն	2019-2019	1 813900 դրամ	1 813900 դրամ	Ս.Մկրտչյան
95		Վիճարկվող տարածքների հիշողությունը	Հորիզոն 2020 (MSCA-RISE)	01.02.2019 01.02.2021	77040 €	9 050800 դրամ	Հ.Մարության
96		Սուրբ ձեռագրեր և հնատիպ գրքեր	Գյուլբենկյան հիմնադրամ	01.10.2019 30.09.2021	26000 \$	6000\$	Լ.Սիմոնյան
97	Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ	Ղազախական գրականության անթոլոգիա	ՀՀ-ում Ղազախստանի դեսպանություն	07.2019 10.2020	3 089400 դրամ	3 089400 դրամ	Վ.Դերիկյան
98	Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ	Համաեվրոպական գիտակրթական մուլտի-գիզաբիթ ցանց և հարակից ծառայություններ	Հորիզոն 2020 (GEANT)	2017-2021	100725 €	22713 €	Հ.Ասցատրյան
99		Վիրտուալ հետազոտական միջավայրեր Հարավ-արևելյան Եվրոպայում և միջերկրական տարածաշրջանում	Հորիզոն 2020 (VI-SEEM)	2015-2019	91250 €	8798 €	Հ.Ասցատրյան
100		Արևելյան համագործակցության կապուղիներ	ԵՄ ԱԼԳ կապուղիներ	2015-2020	668200 €	373188 €	Հ.Ասցատրյան
101		Հարավկովկասյան համալսարաններում մաթեմատիկական ուսումնական ծրագրերի արդիականացումն ինժեներական և բնական գիտությունների հետազո-	ՏԵՄՊՈԻՄ MathGear	2015-2019	14680 €	1297.92 €	Հ.Ասցատրյան

		տությունների համար ներառելով կրթական ժամանակակից տեխնոլոգիաներ					
102		Եվրոպայում բաց գիտության ազգային նախաձեռնություններ	Հորիզոն 2020 NI4OS	2019-2021	97100 €	1268 €	Հ.Ասցատրյան
103	Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարան	Թույլ M և C տիպի ասիմպտոտիկ հսկա ճյուղի երկարաբերական փոփոխականների որոնում և ուսումնասիրություն բարձր զալակտիկական լայնություններում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2019	5000 \$	5000 \$	Կ.Գիգոյան
104		Ia տիպի Գերնոբերի ծնող աստղերի բազմազանությունը	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2019	5000 \$	5000 \$	Ա.Հակոբյան
105		Գերմանական և հայկական աստղաֆիզիկական վիրտուալ համատեղ աստղադիտարանի ստեղծում	Հայ-գերմանական դրամաշնորհ (MES-BMBF)	2017-2019	12 000 €	3000 €	Ա.Միքայելյան
106		Տարածաշրջանային ամառային դպրոց և աշխատաժողով	Միջազգային աստղագիտական միություն	2019	5000 €	5000 €	Ս.Ֆարմանյան
107		Մեծ տվյալների դարաշրջանը երկնքի և Երկրի դիտումներում (BigSkyEarth)	ՔՈՍԹ TD1403	2015-2019			Ա.Միքայելյան
108		Ծիր Կաթինի բացահայտումը Գալա-ով (MW-Gaia)	ՔՈՍԹ CA18104	2019-2023	-	-	Ա.Միքայելյան
109	Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ	Ռենտգենյան և սինքրոտրոնային ճառագայթման բնութագրիչների ժամանակային և տարածքային կառավարման մեթոդների կատարելագործումը ռենտգենյան ճառագայթների դիֆրակցիայի ուսումնասիրման հիման վրա	ԿԳՄՄՀ ԳԿ-ՀՀՌՀ-2018	01.03.2018 29.02.2020	10 012000 դրամ	5 400000 դրամ	Վ.Քոչարյան
110	Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ	Ապագայի կոլայդերների համար նոր հաղորդանային և շիթային կալորիմետրերի առաջադեմ սցինտիլյացիոն և չերենկովյան մանրաթելերի մշակման համար միջազգային և միջդիսցիպլինար մոբիլություն	Հորիզոն 2020, 644260	2015-2019	112500 €	–	Ա.Պետրոսյան
111		Մագնիսական նանո-հիբրիդները քաղցկեղի բուժման համար	Հորիզոն 2020, 857502	2019-2022	364162.5 €	9970 €	Ա.Մանուկյան

112		Լույսի ղեկավարումը կառուցվածքավորված ոչ գծային միջավայրերում. կիրառություն ամբողջապես օպտիկական սարքի համար	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2016-2019	357285 \$	53284 \$	Ռ.Դրամիյան
113		Շրջակա միջավայրի հեռահար գնման օպտիկական համակարգ՝ ըստ շառավղի քառակուսային բացթողումով ապոդիզացնող ֆիլտրով	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2017-2020	201200 \$	67800 \$	Ա.Մարտիրոսյան
114		Ֆերմի-Հաբբարդի մոդելի քվանտային առավելությունը մոտաժամկետ քվանտային համակարգչի համար	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2019	5000 \$	5000 \$	Հ.Ավետիսյան
	Ընդամենը՝				185 123826 դրամ 1299504,7 \$ 2 465627 € 6294 GBP 2500 շվ. ֆրանկ	106 827960 դրամ 269482 \$ 667078,9 € 2750 GBP 2500 շվ. ֆրանկ	

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն իրականացրել է իր հիմնական գործառնությունները ԳԱԱ ինստիտուտների և անհատ գիտնականների ավելի ակտիվ մասնակցությունը միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին և միջազգային միջոցառումներին խթանելու ուղղությամբ՝ հիմնական շեշտը դնելով Եվրոպական Միության հետազոտությունների և զարգացման Հորիզոն 2020 (Հ2020) ծրագրի վրա: Մասնակցության խթանման գործընթացն իրականացվել է միջազգային և Եվրոպական գիտական ծրագրերի մասին տեղեկատվության լայն տարածման և իրազեկության բարձրացման, դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանն առնչվող հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրման, արտասահմանյան գործընկերների փնտրման գործում օժանդակության ցուցաբերման, տեղեկատվական միջոցառումների կազմակերպման միջոցով, ինչպես նաև հնարավորություն ընձեռելով Հայաստանի գիտնականներին մասնակցել Եվրոպայում Հ2020 ծրագրին նվիրված բոլորային միջոցառումներին:

Բաժնի կողմից ստեղծված շահառուների բազան համալրվել է նոր շահառուներով: Տարվա ընթացքում գրանցված շահառուներին էլեկտրոնային ցանցով տարածվել է մոտ 200 տեղեկատվություն Եվրոպական և այլ միջազգային դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրերի, հայտարարված բաց մրցույթների, իրականացվող նախագծերի, կայանալիք միջոցառումների մասին: Տարածվել են նաև տարբեր աղբյուրներից (Հ2020 կոնտակտային կազմակերպությունների Եվրոպական ցանցեր, ԳԱԱ մասնակցությամբ միջազգային նախագծեր) ստացված գործընկերների փնտրման տեղեկատվական թերթիկներ, որոնք ուղղված են օժանդակելու գիտնականներին գտնել գործընկերներ համատեղ նախագծերի համար: Տարվա ընթացքում տրամադրվել է մոտ 170 անհատական խորհրդատվություն միջազգային դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանն առնչվող տարբեր հարցերի շուրջ: Հ2020 ծրագրի տեղեկատվական կայքում (<http://h2020.sci.am/>) պարբերաբար տեղակայվել է ման-

րամասն տեղեկատվություն ծրագրի, կոնտակտային անձանց ցանցի, բաց մրցույթների, գործող նախագծերի, միջազգային միջոցառումների, առցանց սեմինարների և գործընկերների փնտրման առաջարկների վերաբերյալ: Այս ամբողջ տեղեկատվությունը հասանելի է եղել նաև ՀՀ 2020 ծրագրի հայաստանյան ֆեյսբուքյան էջում (<https://www.facebook.com/Horizon2020Armenia/>): Տարվա ընթացքում էջին գրանցվել է ավելի քան 125 մասնակից՝ ընդհանուր գրանցվածների թիվը հասցնելով 1155-ի:

Հանդիսանալով Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի (ՁԵՑ) հաղորդակցման կենտրոն՝ բաժինը մատուցել է նորարարության կառավարման և առևտրայնացման աջակցության ծառայություններ ՀՀ կազմակերպություններին: Պարբերաբար պատրաստվել և տարածվել է տեխնոլոգիաների առաջարկների և հարցումների, գիտատար փոքր և միջին ձեռնարկությունների համար ՀՀ 2020 ծրագրի գործընկերների որոնման տեղեկաթերթ: ՁԵՑ-ի միջազգային հիմնապաշարում տեղադրվել է հայաստանյան կազմակերպությունների տեխնոլոգիաների 1 առաջարկ, կնքվել է 3 համագործակցության պայմանագիր: Աջակցություն է ցուցաբերվել ՀՀ 2020-ի ՓՄՁ-ների համար նախատեսված մրցույթներին դիմելու համար առաջարկներ նախապատրաստելուն: Բաժնի կողմից աջակցություն ստացած ՓՄՁ-ից մեկի ՀՀ 2020 ՓՄՁ գործիքի նախագծի առաջարկը ստացել է Եվրահանձնաժողովի “*Seal of Excellence*” վկայագիր: Այս առումով բաժնի կողմից տրամադրվող ծառայություններն ուղղված են ոչ միայն ակադեմիական ինստիտուտներին, այլև բոլոր գերատեսչական գիտահետազոտական ինստիտուտներին, համալսարաններին, գիտատար գործունեությամբ զբաղվող ՓՄՁ-ին և հասարակական կազմակերպություններին:

ՀՀ 2020 ծրագրի շրջանակներում հավանության է արժանացել բաժնի կողմից նախաձեռնած *EURAXESS-AM* նախագծի առաջարկը, որի հիմնական նպատակն է նպաստել միջազգային գիտատեխնոլոգիական և կրթական ցանցերին Հայաստանի կազմակերպությունների ինտեգրմանը, միջազգային համագործակցության և Սփյուռքի գիտնականների վերաինտեգրման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, գիտնականների հետագա կարիերայի զարգացմանը: Նախագծի իրականացման արդյունքում ստեղծվելու է *EURAXESS* ցանցի հայաստանյան կայք-պորտալը: Նախագծի նպատակների իրականացման ընթացքում շահագրգիռ կազմակերպությունների հետ աշխատանքների պատշաճ համակարգման նպատակով ստեղծվել է ՀՀ տարբեր նախարարությունների և համալսարանների պատասխանատու ներկայացուցիչներից կազմված խորհրդատվական հանձնախումբ:

ԳԱԱ Կիրառական ծրագրերի բաժնի և Տնտեսագիտության ինստիտուտի հետ համատեղ նախագծի հայտ է նախապատրաստվել և ներկայացվել Գերմանիայի կրթության և գիտության նախարարության կողմից հայտարարված մրցույթին, որի նպատակն է նորարարության և առևտրայնացման ոլորտում կարողությունների զարգացումը և Բրեմենի համալսարանի նորարարական հետազոտությունների ֆակուլտետի հետ փոխանակման ծրագրի իրականացումը: Ցուցաբերվել է ՀՀ 2020 ծրագրի *Twinning* և *ERA Chair* ենթածրագրերին նախագծերի առաջարկների նախապատրաստման և ներկայացման աջակցություն, մրցույթին ներկայացվել է 10 նախագծի առաջարկ:

ՀՀ 2020 ծրագրին ՀՀ կազմակերպությունների մասնակցությամբ ներկայացվել է 202 հայտ, որոնցից հավանության է արժանացել 31 նախագիծ՝ մոտ 3.5 մլն. եվրո ընդհանուր ֆինանսավորմամբ: Հավանության արժանացած նախագծերից 21-ում ներկայացված է ԳԱԱ համակարգի 6 կազմակերպություն (շուրջ 2 մլն. եվրո ընդհանուր ֆինանսավորմամբ)՝ ԳԱԱ նախագահությունը, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը, «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ը, Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտը:

Բաժնի անմիջական նախաձեռնությամբ և ԳԱԱ նախագահության ներգրավմամբ նախագծերի շրջանակներում տարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են բարձրացնելու իրազեկությունը միջազգային ծրագրերի վերաբերյալ և նպաստել ավելի ակտիվ մասնակցությանը: Իրականացվել են գիտնականների և Հ2020 ծրագրի կոնտակտային անձանց նախագծեր գրելու հմտությունների զարգացման աշխատանքներ:

ԳԱԱ նախագահության մասնակցությամբ «Գիտության, տեխնոլոգիաների և նորարարության ոլորտում համագործակցության ցանց Արևելյան գործընկերության երկրների համար» (*H2020 EaP-Plus*) նախագծի շրջանակներում Մարի Սկլոդովսկա-Կյուրի ազգային կոնտակտային անձանց ցանցի (*Net4Mobility+*) հետ համատեղ կազմակերպվել է անհատական կրթաթոշակների հայտերի նախապատրաստման երկօրյա թրեյնինգ, որտեղ եվրոպական փորձառու փորձագետների հետ համատեղ մասնակիցներին ներկայացվել են հաջող նախագծեր գրելու հմտություններ:

Աջակցություն է ցուցաբերվել Եվրահանձնաժողովի կողմից Թբիլիսիում կազմակերպված «Նախագծեր գրելու ճամբար» միջացառման կազմակերպման և հայաստանյան 6 մասնակցի մասնակցության ապահովման հարցում:

«Հ2020 ՓՄՁ-ի և ռիսկային ֆինանսավորում» կոնտակտային անձանց ցանցի (*Access4SMEs*) և ՓՄՁ Զարգացման ազգային կենտրոնի հետ համատեղ հուլիսին անցկացվել է ֆինանսական աջակցության ԵՄ գործիքների վերաբերյալ տեղեկատվական միջոցառում, որին մասնակցել են Հայաստանի բանկերի, վարկային կազմակերպությունների, վենչուրային հիմնադրամների, բիզնեսի աջակցման կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, եվրոպական փորձագետները ներկայացրել են ֆինանսական աջակցության *InnovFin* գործիքներից օգտվելու հնարավորությունները:

Բաժնի աշխատակիցները մասնակցել և միջազգային դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ զեկուցումներով հանդես են եկել Հայաստանում կազմակերպված մի շարք միջոցառումների՝ Հ2020-ին նվիրված տեղեկատվական օրվան, Էլեկտրոնային ենթակառուցվածքներին նվիրված գիտաժողովին և *Open Media Forum* միջոցառմանը:

Տարվա ընթացքում բաժնի աշխատակիցները մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել նաև մի շարք միջազգային միջոցառումներին, միջազգային դրամաշնորհային ծրագրերին նվիրված թրեյնինգ-սեմինարներին, որոնք տեղի են ունեցել Ավստրիայում, Բելգիայում, Բուլղարիայում, Իտալիայում, Լեհաստանում, Շվեյցարիայում, Ռումինիայում, Ֆինլանդիայում և Ֆրանսիայում, ներկայացրել են ԳԱԱ տարբեր ինստիտուտների համատեղ նախագծերի առաջարկները, նոր կապեր են հաստատվել հետագա համագործակցության համար: Առաջարկություն է ներկայացվել Հ2020 ծրագրի «Գիտությունը հասարակությանը» ենթածրագրի կոնտակտային անձանց հերթական համաժողովն անցկացնել Երևանում:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի գործունեության հիմնական գործառնությունները ներառել են ԳԱԱ ինստիտուտներին տեխնոլոգիաների փոխանցման և նորարարական հետազոտական արդյունքների առևտրայնացման աջակցության տրամադրումը, խորհրդատվությունը տեխնոլոգիաների և շուկայի գնահատման, գործընկերների որոնման, ֆինանսական աջակցություն գտնելու և այլ գործընթացներում: Գործառնությունների իրականացման համար հավաքագրվել են ԳԱԱ ինստիտուտների վերջին 5 տարիների

ընթացքում ներկայացված կիրառական արդյունքները, կատարվել է գիտական հետազոտությունների վերլուծություն, միջազգային շուկայի և միջազգային պահանջարկի ուսումնասիրություն, ընտրվել են լավագույն կիրառական ներուժ ներկայացնող առաջարկները հետագա աջակցություն ցուցաբերելու նպատակով: Առաջիկայում կընդգրկվեն նաև սույն թվականի արդյունքները և կիրականացվի ընդհանուր միջազգային շուկայի հետազոտություն, առևտրայնացման բոլոր հնարավոր եղանակների ու միջոցների ուսումնասիրություն և խթանում: Տրամադրվել է խորհրդատվություն և աջակցություն նորարական առաջարկներ ունեցող անհատներին, ԳԱԱ ինստիտուտների գիտնականներին և հետազոտողներին:

Հաշվի առնելով բաժնի նորահիմն լինելու փաստը՝ կատարվել են ակտիվ գործողություններ բաժնի գոյության ու գործունեության տարածման ուղղությամբ և գործառույթների հետ առնչվող գիտական միջոցառումների մասնակցությամբ:

Բաժինը մասնակցել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունում՝ ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովի կողմից իրականացվող «Subregional Innovation Policy Outlook» ծրագրի շրջանակներում կազմակերպված քննարկումներին, կազմվել և ուղարկվել են հանձնաժողովի կողմից ստացված հարցաշարի պատասխանները: Անդրադարձ է կատարվել նորարարական քաղաքականության, գիտահետազոտական գործունեության և հիմունքների, նորարարական ռազմավարության մշակման անհրաժեշտության և հնարավոր միջոցների ստեղծմանը, գիտության, բիզնեսի և երկրի ընդհանուր տնտեսության զարգացման բացը լրացնելուն և այլ հարցերի:

Գիտական միջոցառումներին մասնակցելու և զեկուցումներով հանդես գալու նպատակով բաժնի աշխատակիցները գործուղվել են Մինսկ (Բելառուս)՝ տեխնոլոգիաների փոխանցման և առևտրայնացման վերաբերյալ թրեյնինգ-սեմինարի տվյալ ոլորտում հմտությունների զարգացման և բաժնի կողմից տրամադրվող ծառայությունների մակարդակի բարձրացման նպատակով, Փարիզ (Ֆրանսիա)՝ «IRMMW-Thz» գիտաժողովի և ցուցահանդեսի ծանոթանալու տվյալ տարածաշրջանի վերջին լավագույն նորարարություններին ու արտադրանքներին:

Բաժինը մասնակցել է Հայաստանում առաջին «Ավրորա» ֆորումին՝ սոցիալական, կրթական և գիտատեխնիկական նորարարության ոլորտների՝ աշխարհի առաջատար փորձագետներին միավորած բացառիկ հարթակին: Հաստատվել և իրականացվել են նոր գործնական ծանոթություններ և գիտական համագործակցություններ:

Իրականացվել է ԳԱԱ ինստիտուտների «Ռազմարդյունաբերության ոլորտին» առնչվող առաջարկների և հայտերի հավաքագրում, մշակում և ներկայացում ՊՆ Ռազմարդյունաբերության պետական կոմիտե և Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն:

Միջազգային գիտական և տեխնոլոգիական ծրագրերի բաժնի և Բրեմենի Բիզնեսի ու տնտեսագիտության ինստիտուտի հետ համատեղ մշակվել ու ներկայացվել է նախագիծ-առաջարկ ԳԱԱ-ում տեխնոլոգիաների փոխանցման և նորարարության ոլորտում կարողությունների զարգացման վերաբերյալ՝ հիմնվելով Արևելյան Գերմանիայի նոր համակարգի անցման փորձի վրա, որը կարևոր է համակարգային կառուցվածքային փոփոխությունների իրականացման համար: Համագործակցել ենք ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. Տնտեսագիտության ինստիտուտի և Վրաստանի հանրային կապերի ինստիտուտի հետ (մրցույթի արդյունքները կամփոփվեն 2020թ.):

ՄՓՅՈՒՌՔԻ ԲԱԺԻՆ

Բաժինն արտասահմանյան անդամների հետ պահպանելով անմիջական կապ՝ համագործակցության նրանց առաջարկների մասին իրազեկում է ԳԱԱ կազմակերպություններին, իսկ արտասահմանյան անդամներին՝ ԳԱԱ կողմից կազմակերպվող միջոցառումների մասին: Հավաքագրվում և պարբերաբար ԳԱԱ կայքէջում թարմացվում են նրանց անհատական տվյալները հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով, պարբերաբար թարմացվում են նաև արտասահմանյան անդամների անհատական տվյալները, կենսագրությունը, գիտական գործունեությունը շարունակաբար ներկայացվում է ԳԱԱ «Գիտություն» թերթում:

Ստորև բերվում է ԳԱԱ արտասահմանյան անդամների թվաքանակը՝ ըստ գիտության ուղղությունների և երկրների.

N	Երկիր	Մաթեմատիկական և տեխնիկական գիտություններ	Ֆիզիկա և աստղաֆիզիկա	Բնական գիտություններ	Քիմիա և Երկրի մասին գիտություններ	Հայագիտություն և հասարակական գիտություններ	Ընդամենը
1	ՌԴ	10	8	11	11	8	48
2	ԱՄՆ	10	7	9	4	7	37
3	Ֆրանսիա	1	5	2	2	5	15
4	Գերմանիա		5	2			7
5	Մեծ Բրիտանիա	1		1	1		3
6	Իտալիա					2	2
7	Շվեդիա	1	1				2
8	Ճապոնիա			2			2
9	Կանադա	1		1			2
10	Ուկրաինա	1			1		2
11	Ավստրալիա		1	1			2
12	Պորտուգալիա					1	1
13	Իրան	1					1
14	Հունաստան	1					1
15	Բելառուս				1		1
16	Կորեա		1				1
17	Լիբանան					1	1
Ընդամենը՝		27	28	29	20	24	128

Արտասահմանյան անդամների կողմից ներկայացված համագործակցության առաջարկները, ԳԱԱ համակարգի և ՀՀ այլ գիտակրթական կազմակերպությունների հետ ձեռք բերված պայմանավորվածություններն ընդգրկում են մի շարք կարևոր ուղղություններ՝ համատեղ հետազոտությունների իրականացում և հետազոտական նոր ծրագրերի մշակում, մասնագետների պատրաստում և վերապատրաստում, արտասահմանյան գիտական կենտրոնների և ԳԱԱ համակարգի կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի և համաձայնագրերի կնքում, համատեղ աշխատությունների պատրաստում, մասնակցություն Հայաստանում կազմակերպվող գիտակրթական և գիտագործնական միջոցառումներին, համատեղ միջազգային գիտաժողովների կազմակերպում:

ԳԱԱ արտասահմանյան անդամների իրականացրած համագործակցության և աջակցության արդյունքներից կարելի է նշել.

Համատեղ հետազոտությունների իրականացում և առաջարկներ

Արտասահմանյան անդամ Ս.Ադյանը (ՌԴ) շարունակում է համագործակցությունը ԵՊՀ-ի հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի հետ «Կոմբինատոր մեթոդներ և ալգո-

րիթմական հարցեր խմբերի տեսությունում» հայ-ռուսական համատեղ գիտական թեմայի շրջանակներում (ռուսաստանյան կողմի ղեկավար):

Արտասահմանյան անդամ Մ.Պողոսյանի (ՌԴ) նախաձեռնությամբ Մոսկվայի ավիացիոն ինստիտուտի, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի, «Այբ» դպրոցի, «Լոկատոր» ՓԲԸ-ի և «ՀՀ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների գործատուների միության» միջև ստորագրվել է համագործակցության և գործընկերության համաձայնագիր, որով նախատեսվում է աջակցել տեղեկատվական տեխնոլոգիաների և աերոտիեզերական ոլորտներում համատեղ կրթական և գիտահետազոտական նախագծերին և ծրագրերին: Հոկտեմբերին Երևանում առաջին անգամ անցկացվել է «Digital UAV Forum 2019» միջազգային ֆորումը:

Արտասահմանյան անդամ Ֆ.Մկրտչյանը (ՌԴ) և ՀՊՏՀ-ի բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ պրոֆ. Ս.Գևորգյանը մշակել են Սևանա լճի էկոհամակարգի վիճակի կանխատեսման նոր տեղեկատվական տեխնոլոգիա և մոդել, որը կնպաստի տարածաշրջանն անցանկալի փոփոխություններից պահպանելու պետական որոշումների կայացմանը: Առաջարկվել է Սևանա լճի գետէկոլոգիական տեղեկատվական-մոդելացվող համակարգի կառուցվածք՝ կատարելու էկոհամակարգի վիճակի հավասարակշռված մշտադիտարկում՝ ընդգրկելով ջրային միջավայրի որակի կանխատեսումը:

Արտասահմանյան անդամ Վ.Փամբուկչյանը (ԱՄՆ) շարունակում է համագործակցել ԵՊՀ-ի հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի պրոֆ. Յու.Մովսիսյանի հետ:

Արտասահմանյան անդամ Ա.Սեդրակյանը (Գերմանիա) Բյուրականի աստղադիտարանի տիեզերական կոմպակտ օբյեկտներ և ռելատիվիստական գրավիտացիա նորաստեղծ բաժնի ղեկավարն է (արտահաստիքային), աջակցում է նրա աշխատանքներին:

Արտասահմանյան անդամ Ժ.Ալեսյանը (Ֆրանսիա) Բյուրականի աստղադիտարանի արտասահմանյան խորհրդատուն է, համագործակցում է անկայուն երևույթների բաժնի հետ «Քիմիապես արտասովոր աստղերի վիճակագրական ուսումնասիրություն» թեմայի շրջանակներում, որի նպատակն այդպիսի աստղերի մթնոլորտներում տարբեր քիմիական տարրերի տարածվածության ավելցուկի կամ պակասի առաջացման հիմքում առկա ֆիզիկական երևույթների հայտնաբերումն ու ուսումնասիրությունն է, որի շրջանակներում Ժ.Ալեսյանը շահել է FAST հիմնադրամի դրամաշնորհը:

Արտասահմանյան անդամ Կ.Լիին (Կորեա) շարունակում է ակտիվ համագործակցությունը Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ու ԵՊՀ ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի հետ միկրոալիքային սենսորների (գլյուկոզա, կերակրաաղ և այլն), թերմոէլաստիկ մանրադիտակի միջոցով նյութերի և մետաղական նանոմասնիկներով հեղուկների ուսումնասիրությունը: Գիտափորձի փոխանակման նպատակով Մեուլի Սոգանգ համալսարանում շարունակում է սովորել և աշխատել ԵՊՀ ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի մագիստրոս Ժ.Բաղդասարյանը, Մեուլ է գործուղվել ԵՊՀ ԿԷՄ ամբիոնի վարիչ պրոֆ. Ա.Բաբաջանյանը:

Արտասահմանյան անդամ Ա.Մինասյանը (Ավստրալիա) համագործակցում է ՀԱՊՀ-ի պրոֆ. Հ.Բաղդասարյանի գիտական խմբի հետ, նաև աջակցում է Հայաստանի հանրակրթական դպրոցների համար ֆոտոնիկայի լաբորատոր աշխատանքների հավաքածուի գնմանը:

Արտասահմանյան անդամ Ռ.Միրզոյանը (Գերմանիա) համագործակցում է ԻԿՐԱՆԵՏ կենտրոնի հետ՝ ուսումնասիրելով «MAGIC» պատկերային մթնոլորտային չերենկոպյան դիտակների համակարգով տարբեր աստղաֆիզիկական աղբյուրներում տեղի ունեցող գերբարձր էներգիաների պրոցեսները: Նրա աջակցությամբ 1 գիտաշխատող 6 ամսով գործուղվել էր Մյունխեն, MAGIC միջազգային համագործակցության շրջանակում մասնակցել բլազարներից գերբարձր էներգիաների գամմա ճառագայթման մեխանիզմների ուսումնասիրության աշխատանքներին:

Արտասահմանյան անդամ Ռ.Բալյանը (Ֆրանսիա) համագործակցում է Երևանի Ա.Ալիխանյանի անվ. ազգային լաբորատորիայի հետ քվանտային տեսության հարցերի շրջանակում:

Արտասահմանյան անդամ Լ.Բուզանի (ՌԴ) համագործակցությունը Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի պինդ մարմնի ֆիզիկայի լաբորատորիայի հետ շարունակվում է հայ-ռուսական համատեղ «Նոր ֆունկցիոնալային նանոնյութերի ստեղծում» հիմնված ածխածնային պատիճով երկաթի միացությունների վրա բարձր էֆեկտիվությամբ չարորակ ուռուցքների մագնիսական գերտաքացման համար» ծրագրի շրջանակում:

Արտասահմանյան անդամ Վ.Աղաբեկովի (Բելառուս) ղեկավարած ԲԳԱ նոր նյութերի քիմիայի ինստիտուտի, Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի ու Սաուդյան Արաբիայի Աբդուլ Ազիզի անվ. համալսարանի համատեղ մշակած «Նոր թելերի և գործվածքների համար պոլիբենզիմիդազոլի սինթեզ» ծրագիրը ստացել է Սաուդյան Արաբիայի Աբդուլ Ազիզի անվ. գիտատեխնիկական կենտրոնի դրամաշնորհը:

Արտասահմանյան անդամ Վ.Սաքանյանը (Ֆրանսիա) շարունակում է համագործակցությունը «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հետ: Նա ՄԳՏԿ A-2289 նախագծի արտասահմանյան կոլաբորատորն է, ակտիվորեն մասնակցում է ոչ սպիտակուցային ամինաթթուների և պեպտիդների սինթեզին և կենսաբանական ակտիվությանը վերաբերող հետազոտություններին, ներդրել է կետային մուտագենեզի տեխնոլոգիան: Տրամադրել է նաև թանկարժեք նյութեր՝ մուտագենեզի և ՊՇՌ մաքրման լրակազմեր, ՊՇՌ-ի ֆերմենտներ, վեկտորներ, ռեստրիկտազներ, պրայմերներ, ազարոզ, մանրէների աճի սննդամիջավայրերի համար բաղադրամասեր, աֆինային քրոմատոգրաֆիայի խեժեր և այլն, խորհրդատվությամբ աջակցում է բարձրորակ գիտական աշխատանքների կատարմանը և նոր ռեկոմբինանտ շտամ արտադրիչների ստեղծմանը: Հատկապես կարևորվում է Վ.Սաքանյանի դերը երիտասարդ գիտնականների հետ տարվող աշխատանքներում: Նրա շնորհիվ երիտասարդները տիրապետում են մոլեկուլային կենսաբանության ժամանակակից մեթոդներին և մասնակցում նախագծերի իրականացմանը: Նա Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնիկական կենտրոնի հակաքաղցկեղային միացությունների սինթեզի լաբորատորիայի և «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի սպիտակուցային տեխնոլոգիաների լաբորատորիայի հետ շարունակում է էպիթելային աճի ֆակտորի ռեցեպտորի ցածրամոլեկուլային արգելակիչների փնտրտուքի աշխատանքները, համագործակցում է նաև Կենսաքիմիայի ինստիտուտի կենսաինժեներիայի խմբի հետ (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Գյուլխանյան): Համակարգչային մոդելավորման մեթոդով ուսումնասիրվել է nitro-benzoxadiazolyl (NBD) ոչ պեպտիդային բնույթի ցածրամոլեկուլային միացության կոմպլեքսավորումն օնկոլոգիական ռեցեպտոր EGFR-ի հետ:

Արտասահմանյան անդամ Պ.Լանգերը (Գերմանիա) «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հետ, հայ-գերմանական համագործակցության շրջանակներում, շարունակում է իրականացնել համատեղ գիտահետազոտական և գիտակրթական մի շարք ծրագրեր: Նա ՄԳՏԿ A-2289 ծրագրի գիտական խորհրդատուն է, համատեղ հետազոտական աշխատանքների արդյունքները հրատարակվել են բարձր ազդեցության գործակից ունեցող միջազգային ամսագրում:

Արտասահմանյան անդամ Գ.Անտրանիկյանը (Գերմանիա) ակտիվորեն համագործակցում է «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի մոլեկուլային կենսաբանության լաբորատորիայի հետ: «ՀՀ ԿԳՆ և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության միջև գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության զարգացման մասին» համաձայնագրի շրջանակներում համատեղ շարունակվում է «Հիպերթերմոֆիլ բնույթի կարբամոիլազի կիրառումը N-կարբամոիլ-D-ամինաթթուների էնզիմատիկ հիդրոլիզում» նախագիծը: Ծրագրի շրջանակներում 3 երիտասարդ գիտաշխատող գործուղվել է Համբուրգի տեխնոլոգիական համալսարան, D-կարբամոիլազ գենների որոնման նպատակով

կատարվել է մետագենոմիկ բազաների սկրինինգ: Գ.Անտրանիկյանի աջակցությամբ 1 գիտաշխատող էլ գործուղվել է Նյուքասլի համալսարան (Անգլիա) ջերմասկտիվ ցելյուլազների բյուրեղացման և կառուցվածքային-ֆունկցիոնալ անալիզին ուղղված հետազոտական աշխատանք կատարելու: Ծրագիրը նախատեսում է իրականացնել Ջերմուկի տաք աղբյուրներից ստացված մետագենոմի անալիզ և հետաքրքրություն ներկայացնող CAZy (carbohydrate active enzymes, ածխաջրերի նկատմամբ ակտիվություն ցուցաբերող ֆերմենտներ) ֆերմենտների ORF-ների (Open reading frame) կլոնավորում և բնութագրում, նշված աղբյուրների մանրէային և արքեալ կենսաբազմազանության գնահատում: Ծրագրի շրջանակներում գերմանական կողմի 3 գիտաշխատող «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ում անցկացրել է գիտական սեմինար, քննարկվել են կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքները և համագործակցության հետագա ծրագրերը:

Արտասահմանյան անդամ Ա.Կամալովի (ՌԴ) ղեկավարած Մոսկվայի պետհամալսարանի բժշկական գիտակրթական կենտրոնը համագործակցում է Երևանի բժշկական համալսարանի N 1 և «Մուրացան» հիվանդանոցային համալիրների հետ՝ նպատակ ունենալով բարձրացնել բժշկական օգնության որակն արյունաբանության և թերապիայի ոլորտներում:

Արտասահմանյան անդամ Տ.Չալիկյանը (Կանադա) ԿԳՄՄՆ ԳԿ-ի ֆինանսավորմամբ «Միզանյութի ազդեցությամբ պայմանավորված մարդու թելոմերային ԴՆԹ-ի կոնֆորմացիոն անցումները» դրամաշնորհի խորհրդատուն է, ակտիվորեն համագործակցում է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի պրոֆ. Ե.Դալյանի խմբի հետ:

Արտասահմանյան անդամ Ա.Դարգին (Մեծ Բրիտանիա) Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է, “Global Health Research Unit”-ի շրջանակներում շարունակում է համագործակցությունը ՀՀ առողջապահական կառույցների հետ:

Արտասահմանյան անդամ Տ.Դանիելյանը (Ֆրանսիա) սերտորեն համագործակցում է Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ: Նա, ֆրանսիացի նրա գործընկերները և ԵԳԻ հնէաբանության և շերտագրության լաբորատորիայի վարիչ Ա.Գրիգորյանի խումբը դաշտային աշխատանքներ են կատարել Վայոց ձորի լեռներում, որտեղ կարելի է գտնել հզոր և շարունակական Վերին Դևոնից մինչև Ստորին Քարածխայինի կարբոնատային հաջորդականության բացառիկ կտրվածքներ, որոնք պարունակում են շերտագրական կարևոր արձանագրություն: Նստվածքային կտրվածքների ուսումնասիրությամբ Վ.Սերոբյանն ատենախոսական թեզին առնչվող հետազոտական աշխատանքներ է կատարել, Տ.Դանիելյանի աջակցությամբ 5 ամիս Լիլի համալսարանում վարել համատեղ հետազոտական աշխատանքներ: Նրա աջակցությամբ ԵՊՀ 2 մագիստրոս հյուրընկալվել է Լիլի համալսարանում:

Արտասահմանյան անդամ Է.Կարախանովը (ՌԴ) շարունակում է համագործակցությունը Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետ «Անցումային շարքի մետաղների կարբիդներն ու բորիդները որպես կատալիզատորներ հիդրոպրոցեսներում» ծրագրի շրջանակներում:

Արտասահմանյան անդամ Վ.Հարությունովը (ՌԴ) շարունակում է Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետ բնական գազից՝ պրոպանից արժեքավոր պրոպիլենի և բութիլենի մոնոմերների ստացման հետազոտությունները: Ավելի վաղ այդ պրոցեսն իրականացվել է գուգորդված պրոպան և էթիլեն գազերի խառնուրդի թթվածնի օքսիդացմամբ: Այս տարի գտնվել է պրոպանի և էթիլենի խառնուրդի ջերմային քայքայման ռեժիմը թթվածնի բացակայության պայմաններում, որը թույլ է տալիս զգալիորեն բարձրացնել արժեքավոր նպատակային նյութերի ստացման արդյունավետությունը:

Արտասահմանյան անդամ Ս.Ղազարյանը (Մեծ Բրիտանիա) շարունակում է համագործակցությունը Մաշտոցի անվ. Մատենադարանի հետ՝ վերականգնման և պահպանության բաժնի հետ նախաձեռնած համատեղ նախագծի շրջանակում Լոնդոնի իր լաբորատոր-

րիայում սպեկտրոսկոպիկ հետազոտություններ կատարելով մագաղաթների ծածկույթների հատկությունների և նրանց ծերացումը կասեցնող պոլիմերային նյութերի վրա:

Արտասահմանյան անդամ Ս.Օրդանյանի (ՌԴ) համագործակցությունը Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի հետ շարունակվել է Հայաստանի լեռնային սիլիկատային ապարների և քարերի (ներառյալ տուֆեր) վերամշակման բարձր մաքրությամբ նյութերի ստացման արդյունաբերական արտադրության տեխնոլոգիաների մշակման և ներդրման ուղղությամբ՝ մեքենաշինության բնագավառում կերամիկական և գերկարծր նյութեր ստանալու համար:

Արտասահմանյան անդամ Ա.Կոստանյանը (ՌԴ) համագործակցում է Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի հետ, հետազոտում են ոչ մետաղական հանքանյութերից արժեքավոր նյութերի ստացման տեխնոլոգիաները, մշակում պղնձի կորզման և մոլիբդենիտային խտանյութերից բարձր մաքրության նանոկառուցվածքի նյութերի ստացման համալիր տեխնոլոգիաներ:

Արտասահմանյան անդամ Ա.Տերյանը (ԱՄՆ) Մաշտոցի անվ. Մատենադարանի հետ կատարել է ուսումնասիրություններ «Վաղ հայկական ձեռագրերի փաստաթղթերը 5-6-րդ դարերում» թեմայով:

Ստեղծված գիտական կապերի և համագործակցության խորացման արդյունքում հայ-ռուսական և այլ միջազգային հիմնարար գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի մրցույթին Հայաստանի գիտական խմբերի հետ, որպես մյուս կողմի գիտական խմբերի ղեկավարներ, համատեղ հայտեր են ներկայացնում նաև արտասահմանյան անդամներ:

Արտասահմանյան անդամների մի մասը շարունակում է սկսված համագործակցությունը, պարբերաբար քննարկումների արդյունքում հստակեցվում և ձևակերպվում են համատեղ նոր հետազոտությունների խնդիրները:

Շատ կարևոր է, որ գիտական կապերի և համագործակցության սերտացման շնորհիվ կիրառական բնույթի հետազոտություններում օգտագործվում են նաև արտասահմանյան անդամների լաբորատորիաների ժամանակակից սարքավորումները և հնարավորությունները միջազգային չափանիշներին համապատասխանող հետազոտություններ կատարելու համար, ինչը խրախուսելի է, քանի որ ՀՀ-ում առկա սարքավորումներով հնարավոր չէ ժամանակակից բարձր մակարդակի հետազոտություններ կատարել: Նման հետազոտությունների արդյունքների տպագրումը և գեկոցումները գիտաժողովներում նպաստում են Հայաստանի գիտության միջազգային վարկանիշի բարձրացմանը: Համատեղ հետազոտությունները նպաստում են նաև Հայաստանում միջազգային չափանիշներին համապատասխանող արդի ուղղությունների զարգացմանը:

Մասնագետների պատրաստում և վերապատրաստում

Արտասահմանյան անդամներն իրենց ուսումնական հաստատություններում և գիտական կազմակերպություններում հնարավորինս աջակցում են տարբեր ծրագրերով Հայաստանի ԳԱԱ և բուհական համակարգերի կազմակերպությունների երիտասարդ մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը, նաև ասպիրանտների գիտական ղեկավարներ և համադեկավարներ են:

Արտասահմանյան անդամներ Կարեն և Արմեն Քոչարյանները (ԱՄՆ) Ն.Քոչարյանի անվան ամենամյա միանվագ դրամաշնորհ են տրամադրում ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի 2 ուսանողի լավագույն մագիստրոսական աշխատանքի համար:

Արտասահմանյան անդամ Վ.Գրեգորյանի (ԱՄՆ) անվան ամենամյա կրթաթոշակ է սահմանվել երիտասարդ արևելագետների և պատմաբանների համար «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության կողմից:

Արտասահմանյան անդամ Մ.Պողոսյանը Երևանում դասախոսություն է կարդացել «Ժամանակակից կրթությունը. ինչպես կառուցել երազանքի կարիերան» թեմայով:

Հ.Փանոսյանի նախաձեռնությամբ ԱՐՓԱ-ն երիտասարդ մասնագետների համար կազմակերպում է նորարարության ամենամյա մրցույթ, որի նպատակն է խրախուսել նորարարական միտքը և խթանել նրա զարգացումը: ԱՐՓԱ-յի օգնությամբ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում ստեղծվել է գենոմիկայի գերազանցության կենտրոն, տրամադրվել է ԴՆԹ-ի թեստավորման ժամանակակից սարք և այլ սարքեր: ԱՐՓԱ-յի ջանքերով սարքը գործարկելու համար ԱՄՆ-ից գործուղվել է մասնագետ:

Պետք է նշել, որ արտասահմանյան անդամների առաջարկները և հնարավորությունները՝ իրենց գիտական կենտրոններում կազմակերպել հայաստանաբնակ երիտասարդ մասնագետների ասպիրանտական ուսուցումն ու վերապատրաստումն ավելին են, քան ներկայացվում է:

Համատեղ աշխատությունների հրատարակում

Արտասահմանյան անդամների և ՀՀ ակադեմիական ու բուհական համակարգերի գիտնականների համատեղ ուսումնասիրությունների հիման վրա հրատարակվել են գրքեր, նրանց հետազոտությունների արդյունքները տպագրվել են միջազգային հեղինակավոր հանդեսներում, Հայաստանի կենտրոնական պարբերականներում, զեկուցվել են բազմաթիվ միջազգային գիտաժողովներում: Համատեղ հետազոտությունների արդյունքների տպագրումը և զեկուցումները գիտաժողովներում նպաստում են Հայաստանի գիտության միջազգային վարկանիշի բարձրացմանը:

Մասնակցությունը ՀՀ-ում կազմակերպվող գիտական և գիտագործնական միջոցառումներին

Արտասահմանյան անդամներն ակտիվորեն մասնակցել են ՀՀ-ում կազմակերպվող գիտական, գիտագործնական միջոցառումներին՝ աջակցելով ծրագրային և կազմկոմիտեների աշխատանքներին, նրանց ակտիվ համագործակցության շնորհիվ ավելացել է նաև միջազգային ճանաչում ունեցող գիտնականների (ոչ հայազգի) մասնակցությունը Հայաստանում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին:

Արտասահմանյան անդամները գիտական զեկուցումներով և դասախոսություններով հանդես են եկել ինչպես ԳԱԱ համակարգի ինստիտուտներում, ՀՀ բուհերում, այնպես էլ Արցախի պետական համալսարանում: Նրանք եղել են նաև թեկնածուական և դոկտորականատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոսներ:

Արտասահմանյան անդամներից ոմանք ընդգրկված են ՀՀ գիտական կազմակերպությունների կառավարման մարմիններում և գիտական հանդեսների խմբագրական կազմերում:

ԳԱԱ հայազգի արտասահմանյան անդամները մասնակցել են Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) կազմակերպած Գլոբալ ինովացիոն ֆորումի աշխատանքներին, ոմանք նաև FAST-ի խորհրդի անդամ են:

Մասնակցությունը գիտական փորձաքննությանը

ԳԱԱ հայազգի արտասահմանյան անդամներն ընդգրկված են ԿԳՄՄՆ ԳԿ փորձագետների տվյալների շտեմարանում, մասնակցում են բյուջետային ֆինանսավորման համար մրցութային սկզբունքով կազմակերպվող գիտական հետազոտությունների նախագծերի (տեղական և համատեղ միջազգային) հայտերի գիտական փորձաքննությանը:

Արտասահմանյան անդամներ Ե.Թերզյանը և Վ.Պետրոսյանը Վ.Համբարձումյանի անվ. միջազգային գիտական մրցանակի միջազգային հանձնաժողի անդամներ են:

Արտասահմանյան անդամներից ոմանց գիտական, գիտամանկավարժական և գիտակազմակերպական գործունեությունը գնահատվել է իրենց երկրների կողմից. պարգևատրվել են պետական, կառավարական պարգևներով և մրցանակներով, ստացել են արտերկրի պետությունների գիտական կոչումներ, եվրոպական և միջազգային մրցանակներ:

ԳԱԱ արտասահմանյան անդամներ Վ.Գրեգորյանը և Ա.Դարզին մեծ ներդրում ունեն «Ավրորա» մարդասիրական մրցանակաբաշխության աշխատանքներում. Ա.Դարզին ընտրվել է «Ավրորա»-յի ընտրական հանձնաժողովի ղեկավար:

ԳԻՏԱԿԱՆ ԳԱՐԺԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Ասպիրանտուրա

Տարեկգբին ԳԱԱ ասպիրանտուրայում պետական պատվերով սովորել է 107 (47-ն առկա, 60-ը հեռակա ուսուցմամբ), վճարովի հիմունքներով՝ 4 (արտերկրացի) ասպիրանտ: Հայցորդների թիվը 200 է (75-ը վճարովի, 125-ն անվճար՝ ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

Հաշվետու տարում ասպիրանտուրան ավարտել է 46 ասպիրանտ (28-ն առկա, 16-ը հեռակա, 2-ը վճարովի հիմունքներով (արտերկրացի)), առկա ուսուցմամբ ասպիրանտուրա է ընդունվել 26 ասպիրանտ (13-ն առկա, 10-ը հեռակա, 3-ը վճարովի հիմունքներով):

Առ 01.01.2020թ. պետպատվերով սովորող ասպիրանտների ընդհանուր թիվը 95 է (32-ն առկա, 57-ը հեռակա, 6-ը վճարովի հիմունքներով, որոնցից 3-ն արտերկրացի): Հայցորդների թիվը 176 է (75-ը վճարովի, 101-ն անվճար՝ ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

2019թ. ԳԱԱ-ում պաշտպանվել է 44 թեկնածուական ատենախոսություն (23 ասպիրանտ, 15 հայցորդ և 6 արտերկրացի ասպիրանտ):

Ասպիրանտների բաշխումն ըստ բաժանմունքների

ԳԱԱ բաժանմունքները և գիտական կազմակերպությունները	2019թ. ընդունվել են ասպիրանտուրա			Ասպիրանտների թվաքանակն առ 01.01.20թ.		
	առկա	հեռ.	վճար.	առկա	հեռ.	վճար.
Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունք	4	2	0	6	5	0
Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք	3	1	1	5	2	1
Բնական գիտությունների բաժանմունք	2	3	0	5	10	0
Քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունք	1	0	0	4	1	0
Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք	3	4	2	12	39	5/3*
Ընդամենը՝	13	10	3	32	57	6/3*

* Այդ թվում՝ արտերկրից

Մագիստրատուրա

Տարեսկզբին մագիստրատուրայում սովորել է 708 մագիստրանտ (1-ին կուրսում 362, որոնցից 8-ը պետպատվերով, 2-րդ կուրսում 346, որոնցից 16-ը պետպատվերով): Միյուրքահայ և արտերկրացի մագիստրանտների թիվը 1-ին կուրսում 7 է, իսկ 2-րդ կուրսում՝ 8:

2018-19 ուստարվա առկա ուսուցմամբ շրջանավարտները 131 են (9-ը մագիստրատուրան ավարտել է գերազանցությամբ), հեռակա ուսուցմամբ շրջանավարտները՝ 104 (6-ը մագիստրատուրան ավարտել է գերազանցությամբ):

Մագիստրանտների բաշխումն ըստ մասնագիտությունների

Մասնագիտություն	Մագիստրանտների թվաքանակն առ 01.01.20թ.			
	1-ին կուրս		2-րդ կուրս	
	վճարովի	պետպատվեր	վճարովի	պետպատվեր
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	13	-	7(1*)	2
Կառավարում (առկա)/(հեռակա)	16/20	3	19(1*)/18(1*)	1
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ (առկա)/(հեռակա)	11	-	3	-
Իրավագիտություն (առկա)/(հեռակա)	36/75(1*)	2	20(2*)/48	1
Դեղագիտություն	7	1	-	-
Սոցիալական և քաղաքական հոգեբանություն (առկա)/(հեռակա)	15/29	-	21/22	1
Արևելագիտություն	7	1	7	1
Միջազգային հարաբերություններ	-	-	11	-
Գործարար վարչարարություն (առկա)/(հեռակա)	18/17	1	32/18(2*)	1
Շուկայագիտություն	13	1	-	-
Բնապահպանություն և բնօգտագործում	6(2*)	-	5	1
Սոցիալական մանկավարժություն (հեռակա)	18	-	13	-
Գրադարանային-տեղեկատվական աղբյուր (հեռակա)	8	-	9	-
Ընդհանուր և հայ լեզվաբանություն	-	-	4	-
Զբոսաշրջության կառավարում (հեռակա)	12	-	17	-
Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն (հեռակա)	27	-	33	-
Ընդամենը՝	131(2*)/217(1*)	9	126(4*)/191(5*)	8

* Այդ թվում՝ արտերկրից

Հաշվետու տարում մագիստրատուրա ընդունվածների թիվը 357 է (9-ը պետպատվերով): Տարեվերջին մագիստրանտների ընդհանուր թիվը 750 էր, (68-ը հեռակա ուսուցման 3-րդ ավարտական կուրսում):

2019թ. ԳԱԱ ԳԿՄԿ-ն իրավունք է ստացել իրականացնել առկա ուսուցմամբ «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագիր:

Շարունակվում է հրատարակվել «Կաճառ» գիտական պարբերականը:

Կենտրոնն ինտենսիվորեն զարգացնում է միջազգային կապերը և ընդլայնում ուսանողների և դասիստների միջազգային շարժունությունը: Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերում ստորագրվել են միջազգային համագործակցության համաձայնագրեր և հուշագրեր, համագործակցում ենք մի շարք միջազգային ուսումնական հաստատությունների և համալսարանների հետ, ինչպիսիք են Փոլ Սաբատիենի (Թուլուզ 3, Ֆրանսիա), Տուլայի և Բոլոնիայի (Իտալիա), Դոմբրովա-Գուրնիչա և Կրակովի մանկավարժական (Լեհաստան) համալսարանները և այլն: Կենտրոնը մասնակցում է նաև «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար կարողությունների զարգացման Էրազմուս+

ծրագրին, որի շրջանակներում արդեն իսկ ձեռք է բերվել գերժամանակակից էլեկտրոնային մանրադիտակ, գործընկեր համալսարանների հետ կատարվել է չափանիշ (բենչմարքինգ):

Հաշվետու տարում ԳԿՄԿ 37 դասախոս 30 միջազգային պայմանագրերով վերապատրաստվել և դասավանդել է օտարերկրյա բուհերում, արտասահմանից դասախոսություններով հյուրընկալել ենք 18 մասնագետ: Կենտրոնի 8 ուսանող մեկ կիսամյակ ուսանել է եվրոպական գործընկեր բուհերում «Բնապահպանություն և բնօգտագործում», «Արևելագիտություն», «Գործարար վարչարարություն» մասնագիտություններով: «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությամբ սովորում է 2 օտարերկրացի, «Իրավագիտություն» մասնագիտությամբ՝ 1 սփյուռքահայ ուսանող:

Գիտական խմբեր

Գերհաղորդականության խումբ: Ջերմաստիճանային (77-290) Կ տիրույթում ուսումնասիրվել են սինթեզից հետո 30 տարի սենյակային պայմաններում պահված բազմաբյուրեղային $YBa_2Cu_3O_x$ նմուշների էլեկտրատրանսպորտային բնութագրերի դրսևորած առանձնահատկությունները գերհաղորդչային (ԳՀ) և նորմալ վիճակներում՝ կախված 400°C -ում նրանց ջերմամշակման և մինչև սենյակային ջերմաստիճան սառեցման արագությունից: Պարզվել է, որ դանդաղ սառեցումը շեղում է ԳՀ վիճակի անցումը ցածր ջերմաստիճանների տիրույթ՝ անցման լայնությունը թողնելով անփոփոխ, իսկ ֆլուկտուացիոն տիրույթում հարուցում է դիմադրության նշանակալից աճ: Միաժամանակ դիտվել է տեսակարար դիմադրության գծային կախվածության ջերմաստիճանային տիրույթի ընդարձակում ($26,5$ Կ-ով) և նրա ջերմաստիճանային գործակցի նվազում, որն ուղեկցվել է սենյակային ջերմաստիճանում տեսակարար դիմադրության էական փոքրացմամբ (18.5%): Նմուշի կրկնակի ջերմամշակումը և արագ սառեցումը ջերմաստիճանային ամբողջ տիրույթում բերել է տեսակարար դիմադրության և ΔT_c -ի կտրուկ աճի, որոնք ուղեկցվել են անցման սկզբի T_c^{on} ջերմաստիճանի նվազմամբ ևս 2 աստիճանով, իսկ անցում գերհաղորդիչ վիճակի չի դիտվել անգամ 78 Կ-ում: Ընդ որում՝ տեսակարար դիմադրությունը սենյակայինից ցածր ջերմաստիճաններում, ընդհուպ մինչև $T^p=98$ Կ, դրսևորել է գծային կախվածությամբ կիսահաղորդչային վարքագիծ, իսկ ավելի ցածր ջերմաստիճաններում T_c^{on} -ին նախորդող տիրույթում ($T_c^{\text{on}} < T < T^p$) տեսակարար դիմադրությունը ցուցաբերել է կիսամետաղական վարքագիծ:

Կենսահնթորմատիկայի խումբ: Շարունակվել են պոլիմերային և աերոգոլ OS (UOS) միավորների կլանման առանձնահատկությունների ուսումնասիրությունները ոսկու նանոթաղանթների մակերեսին, որտեղ որպես ուսումնասիրության մեթոդ ընտրվել է մոլեկուլային դինամիկայի (ՄԴ) մեթոդը, իսկ համակարգչային փորձերն իրականացվել են GROMACS ծրագրային փաթեթի օգնությամբ:

Շարունակվել են նաև ՄԴ մեթոդով բարդ համակարգերի մոդելավորման աշխատանքների օպտիմալացման հետազոտությունները: Մշակման փուլում է համապատասխան առցանց գործիքների միջավայրը (<http://mdesigner.bioinformatics.am>): Խումբը տպագրել է 8 գիտական հոդված:

ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմը 2019թ. տպագրել է 162 գիտական հոդված, լույս է տեսել 2 ուսումնամեթոդական ձեռնարկ և 4 մենագրություն:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ տարին աննախադեպ ծանր էր հրատարակչության գործունեության համար: ՀՀ կառավարության որոշմամբ ԳԱԱ գիտական պարբերականների ֆինանսավորման եղանակը փոխելու, գիտության հետ ոչ մի աղերս չունեցող մրցութային անհասկանալի ընթացակարգ սահմանելու, ինչպես նաև ԿԳՄՍ նախարարի համապատասխան հրամանի անհարկի ձգձգումների պատճառով ԳԱԱ պարբերականներին ֆինանսավորում հատկացվեց չորս ամիս ուշացումով, որը լուրջ խնդիրներ առաջացրեց հրատարակչության բնականոն աշխատանքում: ԳԱԱ պարբերականների ավելի քան 50 աշխատակից տարեսկզբից հայտնվեց անորոշ իրավիճակում, քանի որ հարցականի տակ էր դրված ակադեմիայի համակարգում հանդեսների հրատարակչության հարցը: Այդուհանդերձ, հաղթահարելով մրցութային երեք փուլերը, անհավանական ու անտրամաբանական թղթաբանությունը՝ ԳԱԱ նախագահության աջակցությամբ իրավիճակը կայունացվեց:

Հրատարակչությունը 2019թ. հրատարակել է 105 անուն գիրք և հանդես, որոնցից 50-ը գիտական աշխատություններ են (1038 տպագրական մամուլ ծավալով), 55-ը՝ 14 ակադեմիական հանդեսների համարներ (475 տպագրական մամուլ ծավալով):

Նկատի ունենալով տնտեսության զարգացման վերաբերյալ նոր մոտեցումները և ՀՀ-ում տնտեսագիտական հետազոտությունները նոր մակարդակի բարձրացնելու հրատապությունը՝ ԳԱԱ նախագահության որոշմամբ 2019թ. հիմնադրվել է ակադեմիական գիտական նոր պարբերական՝ «Հայկական տնտեսագիտական հանդեսը», որի առաջին համարն արդեն լույս է ընծայվել:

Ինչպես նախորդ տարիներին, ընթացիկ տարում ևս գիտական աշխատությունների և հանդեսների հրատարակչությանը մեծապես աջակցել է ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը:

ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի որոշմամբ լույս տեսած գրքերի և հանդեսների ընդհանուր ծավալը կազմել է 1510 տպագրական մամուլ, տպաքանակը՝ 30400 օրինակ: Ակադեմիական գրքերից բացի պատվերային կարգով իրականացվել են նաև այլ հրատարակչություններ:

2019թ. գրահրատարակչական ցուցանիշները*

Անվանումները	Քանակը	Տպագրական մամուլը	Տպագրական թերթ-տպվածքը (հազ. օրինակ)	Տպաքանակը
Գրքեր	50	1038	340	18700
Հանդեսներ (14 անուն)	55 համար	472	100	11700
Ընդամենը՝	105	1510	440	30400

* Տվյալները վերաբերում են «Գիտություն» հրատարակչության մակնիշով լույս ընծայված գրականությանը:

«Գիտություն» հրատարակչության 2018թ. հրատարակչությունները

Գրքեր

- Վ.Հարությունյան - Հայաստանի Հանրապետության ստվերային տնտեսության պատճառների վերլուծություն
- Գ.Գևորգյան - Եգիպտոսի արտաքին քաղաքականության արաբական ուղղությունը նախագահ Հոսնի Մուբարաքի իշխանության առաջին տասնամյակում (1981-1991թթ.)
- Ա.Ասատրյան - Կենսամատենագիտություն
- Լ.Ազրոյան - Դարձ ի շրջանս յուր

5. А.Арамян - Очерки истории армяно-испанских литературных и культурных отношений V-XX вв.
6. Մ.Բարսեղյան - Տասը օր, որ ցնցեց ոչ միայն Հայաստանը
7. «Բանբեր հայագիտության», 2018թ., N3
8. ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները (2008-2018թթ.)
9. ՀՀ ԳԱԱ 2018թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքներ. հաշվետվություն
10. Основные результаты научных исследований НАН РА за 2018г. Отчёт
11. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների 2018թ. գործունեության համառոտ հաշվետվություն
12. «Լեզու և լեզվաբանություն», 2018թ., N1
13. Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու
14. E.Danielyan - Civilizational foundations of Armenia and modern challenges
15. Ս.Խաչատրյան - Ընդունակողականությունը որպես հայկական գրադաշտական և վաղ-քրիստոնեական իրավունքի սկզբունք
16. Ս.Խաչատրյան - Ամբարտավանությունը որպես հայկական գրադաշտական և վաղքրիստոնեական իրավունքի նորմ
17. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXXII (I)
18. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXXII (2)
19. «Գրականագիտական հանդես», ԺԸ
20. «Բանբեր հայագիտության», N1
21. «Բանբեր հայագիտության», N2
22. «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշները Հայաստանի Հանրապետությունում» (գիտաժողովի նյութեր)
23. Ավ. Բսահակյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.6
24. H.Harutyunyan - Mountainous Karabagh in 1918-1921
25. Արևելյան աղբյուրագիտությունը և պատմագրությունը ԻԱ դարասկզբի Հայաստանում. (միջազգային գիտաժողով՝ նվիրված հայագետ-արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանի ծննդյան 90-ամյակին)
26. Լ.Սարգսյան - Ներդրումների ներգրավման և արտահանման ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում
27. Մ.Մանուչարյան - Գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում
28. Հ.Մարկոսյան - Միջուկային էներգետիկան Հայաստանում. պատմություն, հեռանկարներ, այլընտրանքներ
29. А.Исаакян - Афоризмы
30. С.Ованесян - Жизнь Ованеса Туманяна
31. Lontemporary Eurasia, v. VIII (I)
32. «Արվեստագիտական հանդես», N1
33. А.Затикян - Актуальные проблемы и перспективы развития малого и среднего предпринимательства в РА
34. Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915-1919)
35. Ա.Ավագյան - Ակտիվ խզվածքների մերձակերևութային դրսևորումները
36. Վ.Գրիչենց - Ճշմարտություն. Արցախի մասին:
37. Հեղ. խումբ - Cilician Armenia in the perceptions of adjacent poletical enthties

38. «Ջահուկյանական ընթերցումներ (գիտական հոդվածների ժողովածու)
39. Լևոն Խաչիկյան. հարյուրամյակ (ակադեմիկոս Լ.Խաչիկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի նյութեր)
40. «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» (10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր)
41. Ա.Ադապյան - Կոմիտասը հայ նկարիչների աչքերով
42. А.Закарян - Русский композитор Фома Гартман и Комитас
43. «Հայկական տնտեսագիտական հանդես», N1
44. Ա.Ահարոնյան - Եղեգի տարածվածությունը, վնասակարությունը հանրապետությունում և պայքարի նոր տեխնոլոգիաները
45. Г.Карагезян - Нахичеван в записках европейских путешественников (XIII-XVII вв.)
46. Յու.Սուվարյան, Վ.Սարգսյան, Ա.Սուվարյան - Հանրային կառավարման մեթոդաբանական հիմնախնդիրներ
47. Հեղ. խումբ - «Կոմիտասական», հ.3
48. Էլմա Պարսամյան. գիտական գործունեությունը
49. «Գրականագիտական հանդես», ԺԹ
50. Հեղ. խումբ – Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ (գիտական հոդվածների ժողովածու)

ԳԱԱ հանդեսներ

1. «ՀՀ ԳԱԱ զեկույցներ» - NN 1,2, 3, 4
2. «Աստղաֆիզիկա» - NN 1, 2, 3, 4
3. «Պատմաբանասիրական հանդես» - NN 1, 2, 3
4. «Լրաբեր հասարակական գիտությունների» - NN 1, 2, 3
5. «Հայաստանի բժշկագիտություն» - NN 1, 2, 3, 4
6. «Հայաստանի քիմիական հանդես» - NN 1, 2, 3, 4
7. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Ֆիզիկա» - NN 1, 2, 3, 4
8. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մաթեմատիկա» - NN 1, 2, 3, 4, 5, 6
9. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա» - NN 1, 2, 3, 4
10. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Գիտություններ Երկրի մասին» - NN 1, 2, 3
11. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Տեխնիկական գիտություններ» - NN 1, 2, 3, 4
12. «Հայաստանի կենսաբանական հանդես» - NN 1, 2, 3, 4
13. «Նեյրոքիմիա» - NN 1, 2, 3, 4
14. «Գիտության աշխարհում» - NN 1, 2, 3, 4

Հաշվետու տարում լույս է ընծայվել «Բանբեր հայագիտության» հանդեսի 3 համար՝ 47 տպագրական մամուլ ծավալով, 900 օրինակ ընդհանուր տպաքանակով: Տպագրվող գիտական հանդեսներից բացի ԳԱԱ մակնիշով գիտական հանրությանն են ներկայացվել «Ֆիզիկա», «Մաթեմատիկա», «Բնական գիտություններ» և «Հիմնարար հայագիտություն» էլեկտրոնային հանդեսները: Լույս է տեսել «Գիտություն» թերթի 12 համար՝ 6000 օրինակ ընդհանուր տպաքանակով:

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԳԱԱ համակարգում գործում է 29 ակադեմիական գրադարան՝ Հիմնարար գիտական գրադարանը (ՀԳԳ) և ակադեմիական ինստիտուտների 28 ճյուղային-մասնագիտական գրադարանները:

2019թ. ԳԱԱ համակարգի գրադարաններից օգտվել է 21156 ընթերցող, սպասարկվել է 754129 գրադարանային միավոր: Ակադեմիական ինստիտուտների բոլոր գրադարանների հավաքածուներում կա 1297120 գրադարանային միավոր: Համալրման բոլոր աղբյուրներով գրադարաններն այս տարի ձեռք են բերել 14036 գրադարանային միավոր: Այսպիսով, ակադեմիական ինստիտուտների գրադարանների և ՀԳԳ-ի ընդհանուր ֆոնդը կազմում է 4356773 գրադարանային միավոր:

ՀԳԳ-ն իր հավաքածուներում ունի 3059077 գրադարանային միավոր (1667295 գիրք, 1364296 պարբերական և այլ նյութեր), որից 869685-ը եվրոպական լեզուներով: Համալրման բոլոր աղբյուրներով գրադարանն այս տարի ձեռք է բերել 4021 գրադարանային միավոր (այդ թվում՝ 2480 միավոր գիրք, 1014 միավոր պարբերական և 527 այլ նյութեր): Ստացվել և ֆոնդ է հանձնվել 1596 միավոր թերթ: 2019թ. ՀԳԳ-ն ունեցել է 16570 օգտվող: Տարեցտարի ավելանում է ՀԳԳ-ի կայքէջից առցանց օգտվողների քանակը:

ՀԳԳ-ը միջազգային գրքափոխանակության գծով հաստատված կապեր ունի արտասահմանյան և ԱՊՀ երկրների 195 կազմակերպությունների հետ, որոնցից ստացել է 212 գրադարանային միավոր (113 միավոր գիրք, 99 միավոր ամսագիր), առաքել է 253 միավոր հրատարակություն (154 միավոր գիրք, 99 միավոր ամսագիր): Քանի որ առաքվող գրականությունը հիմնականում ԳԱԱ գիտական ամսագրեր են, որոնք արդեն թվայնացված տարբերակով տեղադրվում են գրադարանի կայքէջում, 2018թ. մեր գործընկերներին առաջարկել ենք օգտվել ամսագրերի առցանց տարբերակից:

Գրադարանն աջակցում է կրթական հաստատությունների գրադարաններին և այլ կազմակերպություններին՝ տրամադրելով նրանց անհրաժեշտ գրականություն: Այսպես, օգնության կարգով Էջմիածնի քաղաքային գրադարանին տրամադրվել է 606 գր/մ գրականություն, գրքափոխանակության շրջանակներում գրքեր և ամսագրեր են ուղարկվել Մատենադարան, ԵՊՀ գրադարան և տարբեր ինստիտուտներ:

Օգտվողների տեղեկատվական սպասարկման ուղղությամբ ՀԳԳ-ը կազմակերպել է նորությունների 30 և թեմատիկ 10 ցուցահանդես, որտեղ ցուցադրվել է 1258 գրադարանային միավոր: Թեմատիկ ցուցահանդեսները նվիրված են եղել մշակույթի և գիտության նշանավոր գործիչներին, պատմության և մշակույթի արդի խնդիրներին: Դրանցից հիշատակության են արժանի «Հ.Թումանյան-150», «Կոմիտաս-150», «Ս.Սարինյան-95», «Սարգսրապատի ճակատամարտ-101», «Վ.Նալբանդյան-100», «Վ.Ֆանարջյան-90», «Մայրենի լեզու», «Մալխի 9», «Շուշիի ազատագրումը», «Մ.Դավթյան-85» ցուցահանդեսները:

